Հայկական գիտահետազոտական հանգույց

Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

- պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
- ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

- **Share** — copy and redistribute the material in any medium or format
- **Adapt** — remix, transform, and build upon the material

Ltin
1303

1999 .

# ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ

# ՀԱՏՈՒԱԾՈՅ [illegible]

# [illegible]

Ի Տպարանի Սրբոյ Էջմիածնի

Ի ՇՈՒՇԻ

1863 — ամի ։

Lեn
1303

# ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

# ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԵԱՑ

յօրինեաց

Տէր ՄԱՏԹԷՈՍ Ծայրագոյն Պատրիարք և Աստուածընտիր Կաթուղիկոս ամենայն Հայոց՝ և Ազգին

Ի Սուրբ Էջմիածին

Ի 1862 ամի ․

ՏՊԱԳՐԵՑԱՒ

Վեհափառ հրամանաւ նորին

Յառաջնորդութեան Հայոց թեմին Աստրախանայ Բարձր․ Սրբազան Ստեփաննոս Արք-Եպիսկոպոսի Վաղարշապատեցւոյ ։

Արդեամբք բարեպաշտական հոգաբարձութեան Հայոց Ճեմարանի Աղաբաբեան Աստրախանայ ։

Ի տպարանի սրբոյ Էջմիածնի

Ի ՇՈՒՇԻ ․

1863 — ամի ․

4 1303-ш
2р 1306

# ՅԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Ոչ սակաւ տաղտանաց և մեղադրանաց արժանի զատեմ զանձնս ապիկար համարձակելով իմ յայս ձեռնարկութիւն խորհրդածութեանս զվսեմագոյն գիտութեան Աստուածաբանական տարերաց, վերամբարձ եղելոց քան զհասողութիւն իմս նկնախոհ մտաց. ըստ որում յանդգնութիւն է չնկատելն զչափաւորութիւն անձին և 'ի վեր անդր քան զկարն ձգտել 'ի պաշտամունս մեծամեծ գործոց։

Օրինակ իմն. Ո՞ թէ կարկի՞ իցէ բաժակաւ միով չափել զանհուն և զլայնատարած ծովուն զջուրսն անպարունակելիս. և կամ միջամուխ լինել 'ի թուումն անհասանելի կուտակութեանց նորին կոհակաց։

Վասն որոյ մի՛ գուցէ իրաւամբ յարմարեսցի յայս իմ ձեռնարկութիւն բարոյական այն առակ, զոր Կենարարն մեր Յիսուս աւանդեաց աշակերտաց իւրոց եթէ՝ "Ո՞վ ոք 'ի ձէնջ կամիցի շինել աշտարակ, և ոչ նախ նստեալ համարիցի զծախսն՝ եթէ ունիցի բաւական 'ի կատարումն. զի գուցէ իբրև արկանիցէ հիմն՝ և ոչ կարիցէ կատարել, ամենեքեան որ տեսանիցեն, սկսանիցեն ծաղր առնել զնա և ասել. թէ այս այր սկսաւ շինել և ոչ կարաց կատարել,,. Ղուկ. ԺԴ. 28։ Այս տէրունական առակիս բարոյականն տեսութիւն խրատէր անշուշտ զիմս անբաւականութիւն չլինել ձեռնամուխ բարձրագոյն սկզբնաւորութեանս։

Վասնզի արդարև գործս այս մեծ է. զի շինութիւն է բարձրագլխած՝ Աստուածաբանական գերագոյն

գիտութեան երկնաբերձն անդուոյ հաստատեալ նո-
րա 'ի բարձրութիւնն գերագոյն և անսահման Աս-
տուածային մեծութեան, ըստ որում Աստուածա-
բանութիւնն է բան զԱստուծոյ և զԱստուածայ-
նոց. Եւ այսր բարձրաբերձ շինութեան հիմն հանդիսա-
նայ ճշմարիտ հեղինակ հաւատոյ հաստատութեանն,
այսինքն է՝ Յիսուս Քրիստոս, ըստ Սրբազան Առա-
քելոյն Պօղոսի. “Հիմն այլ՝ ոչ ոք կարէ դնել բան
զեղեալն, որ է Յիսուս Քրիստոս,, Ա. Կորն. Գ. 11:
Ապա անբաւականութիւն իմ զիա՞րդ մարթացի ձեռն
արկանել յանչափ հիմնս այս 'ի յաւելուլ պէս-
պէս շինութիւնս Աստուածաբանական սահմանաց
հաստատելով զնոսա և լուծմամբ կարեւոր խնդրոց
նոցին փաստիւք և վկայութեամբք սուրբ գրոց:

Սակայն յայս տագնապ տարամ տարակուսա-
նաց՝ ոչ սակաւ խրախոյս հանդիսանայ ինձ ամե-
նագովն բան Սրբազան Առաքելոյն Պօղոսի, որով
քաջալերէ զպաշտօնեայս եկեղեցւոյն Քրիստոսի յա-
մենայն. “Յայս մի այսպիսի ունիմք 'ի ձեռն Քրիստոսի
առ Աստուած. ոչ եթէ անձամբ բաւական եմք
խորհել ինչ իբրև 'ի մէնջ. այլ բաւականութիւն
մեր յԱստուծոյ է. որ և բաւականս արար զմեզ՝
պաշտօնեայս նորոյ կտակարանաց,, Բ. Կորն. Գ. 4. 6:
Այս զի անօթն այն ընտրութեան ոչ միայն շա-
տանայ յուսադրական բանիւս, այլ և խոստովանի
զամենակարող զօրութիւնն, որ յԱստուածային շնոր-
հաց անտի ներգործեալ էր յանձն իւր յասելն.
“Յամենայնի կարող եմ այնու՝ որ զօրացոյցն
զիս,, Փիլ. Դ. 13:
Այս ամենայն անմերձելի բանք երանելի Առաքելոյն
հաստատուն հիմն ունին զաւետարանական բանս

առատապարգև շնորհաց կենարարին Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ 'ի քաջալերութիւն հաւատարիմ պաշտօնէից իւրոց սրբազան առաքելոց հրամայեաց " Ես եմ որթ և դուք ուռ. որ հաստատեալ է յիս՝ և ես 'ի նա. նա բերէ պտուղ յոյժ. զի առանց իմ ոչինչ կարէք առնել ,, Յովհ. ԺԵ. 5։ Ուստի Տեայ իմն աստանօր հաստատուն յուսով ձայնակից լինիլ ընդ հրեշտակակերպն սուրբ վարդապետին մերոյ Գրիգորի Նարեկացւոյն. և աղերսական մաղթանօք հայցել Աստուածային վերնախնամ բարերարութենէ և յամենագէտ կարողութենէն աղաղակելով այսպէս." Զսկսեալս իմ դու կատարեա և դիցի հոգի քո խառնեալ 'ի սա. շունչ զօրութեան մեծիդ միասցի 'ի քո ինձ շնորհեալ ստեղծաբանութիւնս. զի դու տաս զօրութիւն վհատեալ սրտից, և ընդունիս փառս յամենեցունց ամէն,, Նարեկ. Գ։

Այս ընծայարանս, հոգեհարազատ որդիք Արարատեան Մայր Աթոռոյս Կաթուղիկէ Սրբոյ Էջմիածնի, զայս դուզնաքեայ գրաւոր վաստակ. " Ներածութի Ճարտասանական գիտելեաց ,, առ ձայնեալ, զոր յանձնամաշ աշխատութեան անդ իմում և 'ի ծանրակշիռ պաշտաման հոգևոր կոչմանս՝ պարտ անձին վարկայ շարադրել ամենապատուական շնորհիւ Սրբոյ Հոգւոյն յոյժ պարզ 'ի ձև հարցման և պատասխանւոյ 'ի դիւրութիւն մատուցեալ սիրելի վերծանողաց, և նուիրել առ Ձեզ յուսացեալ, զի որոճալով Ձեր յիմաստս ինչ ինչ Ճարտասանական գիտելեաց, որք 'ի սմին, մխիթարիչք ըստ կարի հոգևոր կրթութ յուղղափառ կրօնի մերս Քնական Սրբոյ եկեղեցւոյ ամին յանդիման ունելով զվկայութիւնս սուրբ գրոց և սրբոց Հարց, զորս յաճա-

Դ․

խնդացք 'ի սմա յաւելուլ բացատրութիւն իմաստից պարունակելոց և 'ի նպաստ ուղղամիտ քարոզչաց, որոց ամենեցուն բարօրութեան վասն եմ աղօթարար զամենայն աւուրս կենաց իմոց։

ՄԱՏԹԷՈՍ Կոստանդնուպօլսոյ ամենայն Հայոց։

# ԳԼՈՒԽ Ա։

## Ընդհանուր տեսման և քննութեան Աստուածաբանութեան։

1. Հ. Զի՞նչ է Աստուածաբանութիւնն և զի՞նչ տայ մեզ ուսանիլ։

Պ. Աստուածաբանութիւնն է բան զԱստուծոյ և զԱստուածայնոց, և է գերբնական գիտութիւն, որով հմտանամք Աստուծոյն անսահման կատարելութեանց, աներկբայելի ճշմարտութեանց, սքանչելի նախախնամութեանց և տնօրէնութեանց։ Ահա այս ամենայն բացայայտ երեւի 'ի սքանչելի Աստուածաբանն Սրբազան Աւետարանչին Յովհաննու, յորում Աստուածաբանէ, նախ՝ զԱստուծոյն զյաւիտենական ճշմարտութենէ, և զանսկիզբն և զանփոփոխ մշտնջենաւոր ծննդենէ Որդւոյն Աստուծոյ 'ի Հօրէն ամենակալէ. և երկրորդ՝ զնախասահմանեալն յաւիտենէ փրկագործ մարդեղութեան սքանչելի խորհրդոյն ներգործութեան յաւիտենական կենաց բանին Աստուծոյ Յիսուսի Քրիստոսի, յասելն՝ "Որ էրն 'ի սկզբանէ. զորմէ լուաքն, որում ականատեսքն իսկ եղաք. ընդ որ հայեցաքն. և ձեռք մեր շօշափեցին 'ի վերայ բանին կենաց, և կեանքն յայտնեցաւ, և տեսաք. և վկայեմք և պատմեմք ձեզ զյաւիտենական կենացն. որ էր առ Հայր՝ և երեւեցաւ մեզ,, Ա. Յովհ. Ա. 1. 2։

Զայս Աստուածաբանութենէ Սրբազան Աւետարանչիս գովաբանելով՝ գրէ Սարգիս Շնորհալի սուրբ վարդապետն մեր. "Բազում անգամ 'ի գլուխ գրոցս

յեղանակէ գրանս գայսոսիկ առ 'ի հաւատարիմ և յորդոյ ցուցանել զիւրն Աստուածաբանութիւն ,, 'ի Գլխ. Իլ. Յօհ:

Սոյն օրինակ տեսանեմք զհրաշալի Աստուածաբանութիւնն նախավկայ և անդրանիկ մարտիրոսին Սրբոյն Ստեփաննոսի, որ անվեհեր և համարձակ սկսաւ Աստուածաբանել 'ի մէջ թշնամեաց ճշմարտութեան, որք երբեք զազան կատաղի պաշարեալ էին զնա. որոյ առաջին նիւթ Աստուածաբանութեանն էր Աստուծոյն օրհնաբանել փառաց անեղրական ծնութիւնն, և երկրորդ՝ կատարեալ հնազանդութիւն նախնի նահապետաց՝ Աբրահամու, Իսահակայ, Յակոբայ և Յովսէփայ. և երրորդ՝ անընդմիջահատ Աստուծոյն զթառատ բարերարութիւնն առ ազգն Իսրայէլեան. և սոսկալի ապերախտութիւն նոցին առ Ա֊ծ և առ մարգարէս նորին: Այսպէս սկսեալ ('ի գործս Առաքելոց. Գլ. Է.) ՙՙ Ա֊ծ փառաց երևեցաւ հօր մերում Աբրահամու մինչդեռ 'ի Միջագետս էր, մինչև բնակեցուցեալ էր 'ի Խառան, և ասէ ցնա. ՙՙ Ել յերկրէ քումմէ, և եկ յերկիր՝ զոր ցուցից քեզ ,, և այլն: Եւ արդարև սուրբ Ստեփաննոս զապացոյց աստուածաբանութեան իւրոյ յաղագս Աստուծոյն անսահման փառաց՝ նաև 'ի սքանչելահրաշ յայտնութեան երկնային անճառելի փառաց, յորում յայտնի երևիր պատկերն Որդոյ Միածնի Որդին Աստուծոյ Յ֊ս Ք֊ս կացեալ ընդ աջմէ հօր փառակցին իւրոյ առ 'ի շնորհել Անդրանիկ վկային իւրոյ զլուսեղէն պսակ յաւիտենական փառաց, առնել և ժառանգ յաւերժական անմահ կենդանութեան. մին և յայտնաբարբառ քարոզեաց սրն Ստեփաննոս յանենի անդ ուրացողացն ճշմարտութե.

յաւելն. «Ահա տեսանեմ զերկինս բացեալ և զոր-
դի մարդոյ զի կայ ընդ աջմէ Աստուծոյ» Գործ. է.
55: Որպէս հրաշալի Աստուածաբանութիւն էր այս
քարոզութիւն նորա զԱ՟յ տեսեմ և զանձառելի փա-
ռացն և զմարդասիրական բարերարութեանցն, ըստ
որում երգարանէ Շնորհալին սուրբ Ծայրապետն մեր
Ներսէս. «Հրաշալի Աստուածաբանութեան սրբոյն
Ստեփաննոսի քահանայք ընդ վէմին զօրացն երկ-
նից զՔրիստոս գովեցէք» ի Շարակ:

2. Հ. Ի քանի՞ տեսակս բաժանի Աստուածաբանութիւնն:
Պ. Ի հինգ տեսակս բաժանեն Աստուածաբանք զգերագոյն գիտութիւնն Աստուածաբանութեան: Նախ՝ ի բնական, երկրորդ՝ ի գերբնական, երրորդ՝ յուսումնական, չորրորդ՝ յերանական, և հինգերորդ՝ ի բարոյական:

3. Նախ՝ բնական Աստուածաբանութիւնն է բնականապէս յայտնեալ երևելի արարածովքս, որք յերկինս և յերկրի. վասն զի երկինք և երկիր սքանչելի սարիւք և շարժմամբք, վայելչազարդ բարձրութեամբ և մեծութեամբ, զարմանալի գեղեցկութեամբ և ազդեցութեամբ քարոզեն յաւէտ ամենեցուն զԱ՟յ արարչագործ զօրութիւնն, զամենակարող իմաստութիւնն, և զանձառելի փառաց ներգործութիւնն. ըստ անժխտելի վկայութեանցս. «Երկինք պատմեն զփառս Ա՟յ. և զարարածս ձեռաց նորա պատմէ հաստատութիւն». Սաղմ. ժը. 1:
«՚Ի մեծութենէ և ՚ի գեղեցկութենէ արարածոց ըստ նմին համեմատութեան և արարչագործն նոցա երևի» Իմաստ. ժգ. 5: «Աներևոյթք նորա ՚ի սկզբանէ աշխարհի, արարածովքս իմացեալ տեսանին. որ է՝ մշտնջենաւորութիւն և զօրութիւն և Աստուածութիւն

նորա,, Հռով. ա. 20: ''Եւ կարգեաց Աստուած զաշխարհս որպէս զպարտէզ. զի ուսցին արարածք ըզխնամս արարչին յառնել և 'ի կազմել: Եւ միշտ նախախնամութեամբ նորա զարմանալք որ երեւին և որ ոչն երեւին: Ո՛չ ի յոչընչէ անտի սկիզբն առար միոյն՝ և եած մինչև 'ի հազարս և 'ի բիւրս զբիւրաքանչիւրսն ..... Եւ զքննութիւն արարածոց յօրինեաց որպէս զգիր զպրութեան և եդ անուանս, զի անուանքն զընտրութիւնն տացեն զգրոյն զորոշումն 'ի միմեանց,, Ի յաճ. ճառ. Է: ''Երկինք և երկիր և որ 'ի նոսա լինելութիւնք որպէս թէ զրով և բանիւ պատմեն զանհասութիւնն Այ. զի 'ի տեսանել (մարդոյ) զայսպիսի անպատմելի արարչութիւնն, շարժէ այնուհետև զմիտս և զլեզու 'ի փառաբանութիւն Աստուծոյ. և յամենայն եղելոցս փութայ փառաւորել զարարիչն,,. Գրիգոր Տաթեւացի ('ի Հարցմանց) երես. 498:

''Հարցին ոմանք ցսրն Անտօն, եթէ ո՞րպէս կարես կեալ առանց գրեանց յանապատին. պատասխանեաց նոցա երանելին. ''Եթէ բնութիւնն ստեղծեալ իրաց է վասն իմ իմաստնալոյ գիրք ինձ, յորում ընթեռնուլ կարեմ զԱստուածային զերազանցութիւնն. զի 'ի նմա տպագրեալ է Աստուած զիւրն կենդանագրէս,,: Ըստ այսմ խօսի և սուրբն Բարսեղ. ''Բոլոր աշխարհս է տպագրեցեալ մատեան մի. ուր 'ի գեղեցկութեանէ և 'ի կարգէ երևելեաց՝ փորձ առեալ լինի հաստատութիւնն և զերազանցութիւնն աներևութից, այնոցիկ, որք վարին բանականութեամբ և լուսով բանականաւ,,:

Դ. Երկրորդ՝ գերբնական Աստուածաբանութիւնն է շնորհ Աստուածայայտնութեան հեղեալ յԱստուածուստ

տու արժանաւորս առանց հնարից մարդկային ուս-
ման: Ըստ այնմ. ‘‘Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ ցնոսա. մի՛ քրթմնջէք ընդ միմեանս. ոչ ոք կարէ գալ առ իս, եթէ ոչ Հայրն՝ որ զիս առաքեաց՝ ձգեսցէ զնա. եւ ես յարուցից զնա յաւուրն յետնում: Գրեալ է 'ի մարգարէս. եւ եղիցին ամենեքեան ուսեալք յԱստուծոյ. ամենայն որ լսէ 'ի Հօրէ եւ ուսանի, գայ առ իս,, Յովհ. Զ. 43—45: ‘‘Պատասխանի ետ Յիսուս, եւ ասէ ցնա. երանի՛ քեզ Սիմոն որդի Յովնանու, զի մարմին եւ արիւն ոչ յայտնեաց քեզ՝ այլ Հայր իմ որ յերկինս է,, Մատթ. ԺԶ. 17:
‘‘Գոհանամ զքէն Հայր տէր երկնից եւ երկրի, զի ծածկեցեր զայս յիմաստնոց եւ 'ի գիտնոց, եւ յայտնեցեր տղայոց. այո՛ Հայր. զի այսպէս հաճոյ եղեւ առաջի քո,, Ղուկ. Ժ. 21:
‘‘Յուցանեմ ձեզ եղբարք զաւետարանն, որ աւետարանեցաւ յինէն. զի ոչ է ըստ մարդոյ. քանզի եւ ոչ ես 'ի մարդոյ առի, եւ ոչ ուսայ յումեքէ, այլ 'ի յայտնութենէն Յիսուսի Քրիստոսի,, Գաղ. Ա. 11:

Ըստ այսմ Աստուածային գերբնական յայտնութեան շնորհաց նկատեալ երանաշնորհ սուրբ վարդապետն մեր Եզնիկ Կողբացի գրէ զարմացմամբ մեծաւ. ‘‘Ո՛վ ծով եւ հրաշալի Աստուածաբանութեան, զոր ոչ 'ի ձեռն ուսմբ, այլ ինքն իսկ առանց միջնորդի ուսուցանէ Հայր,,:

5. Երրորդ՝ Սրտածանչական կամ Գրչական Աստուածաբանութիւնն է՝ որ ճանաչէ զճշմարտութիւնն Աստուծոյ եւ զմարդասիրական խնամոց՝ եւ զանօրինութեանց նորին ամենակարող զօրութեանցն. եւ

այս ընդարձակ ճառիւք և մեկնութեամբ սուրբ գրոց. որպէս են բանք և ճառք նախնի սուրբ հարց մերոց, յորս երևելի հանդիսացան սուրբն Կիւրեղ, սուրբն Դիոնեսիոս, սուրբն Գրիգոր Աստուածաբան, սուրբն Յոհան Ոսկեբերան, Բասիլիոս և սուրբ Գրիգոր Լուսաւորիչն մեր՝ և այլ շնորհալի սուրբ հարք մեր. որոց հոգեշունչ բանք և ճառք Աստուածաբանութիւն անուամբ գրուածին. յաղագս որոյ երանելին Գրիգոր Սկևռացի գրէ 'ի ներբողն Ներսէսի Լամբրոնացւոյ՝ յաղագս մեկնութեան սաղմոսացն. "Նա թէ ումեք բղձալի իցէ՝ անհետազօտելի Աստուածային խորոցն լինել հասու՝ զնա ընթերցցի: Եթէ Աստուածաբանական որ կարօտ ճառից լիցի, 'ի նմանէ զլրումն ընկալցի: Նա թէ 'ի անօրինականի գիտութիւնն ախորժէ գալ խորհրդոյն՝ նմա հետևեսցի,,:

6. Չորրորդ՝ բաժանումն Աստուածաբանութեան՝ է գիտութիւնն երանելեաց, որ և կոչի 'ի սորոց վարդապետաց՝ հանդերձելոյ կամ երանական գիտութիւն: վասն զի գիտութիւն մեր և ճանաչողութիւն յաղագս Աստուծոյ և Աստուածայնոց անկատար է, որչափ կեամք և եմք յաստի կեանս. իսկ 'ի հանդերձեալ երանելի կեանս ունիմք ստանալ զգերազանց գիտութիւնս և յայտ յանդիման տեսութիւնս զԱստուծոյ և զԱստուածայնոց:

Ահա զայս հանդերձեալ յաւիտենական կենաց երանաւէտ տեսութիւնն բացայայտ նկարագրեն սրբազան առաքեալն Պօղոս՝ և Աստուածաբան աւետարանիչն Յոհաննէս. "Արդ տեսանեմք իբրև ընդ հայելի օրինակաւ, այլ յայնժամ դէմ յանդիման. արդ խելամուտ եմ փոքր 'ի շատէ, այլ

յայնժամ գիտացից՝ որպէս և նոյն ծանեաւ զիս,, Ա. Կոր. ԺԳ. 12։

" Սիրելիք՝ այժմ որդիք Աստուծոյ եմք, և չև ևս է յայտ՝ եթէ զի՞նչ լինելոց իցեմք. գիտեմք՝ զի յորժամ նա յայտնեսցի՝ նման նմա լինելոց եմք, զի տեսանելոց եմք զնա՝ որպէս և էն,, Ա. Յովհ. Գ. 2։

" Վասն զի և ոչ տանի տկար բնութիւնս այլազգ զհրաշալի և զսոսկալի տեսիլ նորա տեսանել։ Իսկ յորժամ զապականացուս 'ի բաց եդեալ զանապականն զգենումք պատկեր, յայնժամ դէմ յանդիման որպէս և էն իսկ իւրով անհասանելի բնութեան փառօքն տեսանեմք զնա։ Թուի ինձ եթէ այս այն է՝ զոր ինքն ամենատէրն ասաց առ Հայր. կամիմ, ասէ, զի ուր եսն իցեմ, և սոքա ընդ իս իցեն. զի տեսանիցեն զփառսն իմ։ Նմին իրի և սա զնոյն երկրորդէ. որպէս զի զծայրագոյն պատիւ և զերանութիւն տեսանողացն այնր փառաց, 'ի դէմս ածիցէ...... Զի՞ք ինչ բարձրագոյն փառք և մեծագոյն երանութիւն կամիլ ումեք, քան զնա իւրական փառօքն լի բովանդակ տեսանել։ Քանզի այն է արքայութիւնն. այն է վերին քաղաքին և առագաստին հանգիստն. այն իսկ է անճառ բարիքն և անպատում երանութիւնն։ Արդարև բիւրապատիկ երանութեան և անեզրական խնդութեան արժանաւորք են ոյք աչալրջութեամբ զահեղին զայն տեսանեն, և առանց ամօթոյ և պատկառանաց հայիլն յերանելի երեսն Աստուծոյ։ Եւ բիւրապատիկ ողբոց և արտասուաց արժանաւորք են այնոքիկ, որ յայնմ տեսլենէ զրկին։ Քանզի այն է ահագին և անտանելի տանջանք քան զտանջանս գեհենին և քան զայլ ամենայն զանազան տե-

սակս տանջանաց, յերանելի տեսութենէն Քրիստոսի զրկիլ և յերեսաց Աստուծոյ անկանիլ,, Աւգ. Խոստ. Ճառ. Է. Տ. Յովհ:

7. Հինգերորդ՝ Եղբայրական Աստուածաբանութիւնն է՝ ուղղել մարդկային վարուց և բարուց յԱստուածահաճոյ գործս բարեպաշտութեան. և այս լինի յաւէտ հաստատուն և բեղմնաւոր Աստուածաբանական առաքինութեամբք, այս է՝ ուղղափառ հաւատով, աներկբայ յուսով և կատարեալ սիրով: «Բարի առնէ տէր բարեաց, և այնոցիկ՝ որք ուղիղ են սրտիւք,, Սաղմ. ՃԻԴ. 4: «Ազնիւ ծառայ՝ բարի և հաւատարիմ, որովհետև 'ի սակաւուդ հաւատարիմ ես, 'ի վերայ բազմաց կացուցից զքեզ. մուտ յուրախութիւն Տեառն քո,, Մատթ. ԻԵ. 21: «Փառք պատիւ և խաղաղութիւն ամենայնի՝ որ գործէ զբարի,, Հռոմ. Բ. 10: «Արդ մինչդեռ ժամանակ 'ի ձեռս է, գործեսցուք զբարիս առ ամենեսեան, մանաւանդ առ ընտանիս հաւատոյ,, Գաղ. Զ. 10:
«Վասն որոյ եղբարք՝ առաւել փութասջիք՝ զի բարեաց գործովք հաստատուն զձեր կոչումն և զընտրութիւնն առնիցէք,, Բ. Պետ. Ա. 10:
Արդ՝ սիրտ մեր գանձարան բարոյական առաքինութեան լինի, յորժամ հաւատովք, յուսով և սիրով զարդարեալ հանդիսանայ, որով կարող լինի զառաքինական բարութիւնս արտադրել. իսկ սիրտ թափուր յԱստուածաբանական առաքինութեանց կուտակեալ ունի 'ի ներքս բազմատեսակ չարութիւնս. ուստի զմեղկական և մոլորական չարեաց բղխէ միշտ: «Մարդ բարի՝ 'ի բարի գանձուց սրտի իւրոյ հանէ զբարիս. և մարդ չար՝ 'ի չար գան-

ձուց սրտի իւրոյ հանէ զչարիս,, Մատթ. ԺԲ. 35:

8. Արդիւնաշատ զօրութիւնք և սքանչելի ներգոր-ծութիւնք Աստուածաբանական առաքինութեանց հաւատոյ, յուսոյ և սիրոյ յոյժ կարևորք են մեզ ամենեցուն 'ի փրկութիւն. քանզի հաւատով հա-ճոյանամք Աստուծոյ. յուսով աներկբայ ակնկա-լութիւն ունիմք խոստմանցն Աստուծոյ. հաստա-տուն սիրով առ Աստուած և առ ընկերս մեր՝ հաղորդիմք Աստուածային ամենառատ բարեաց, երկնաձիր շնորհաց և յաւերժական փառաց Աս-տուծոյ երկնից արքայութեան :

Արդ՝ մնան հաւատք, յոյս, սէր. սոքա երեքեան սքանչելի զօրութիւնս տան մարդկայինս մտաց ներ-քին յօժարութեանց առ Աստուածահաճոյ բարե-գործութիւնս ձեռնամուխ լինել, և 'ի չար խորհր-դոց և գործոց հրաժարել: Սոքա երեքեան ուղե-ցոյց լինին կամաց մերոց. զվերինն տան խորհել զանթառամ փառացն ժառանգութիւն, և մերժել զանցաւորս խաբուսիկ և սնոտի վայելչութիւնս: Սոքա երեքեան՝ եթէ հաստատին և արմատանան 'ի սրտի մերում, տան մեզ համարձակ խոստովանել ըստ սրբազան Առաքելոյն՝ եթէ, "Կենդանի եմ այսուհետև ոչ ես՝ այլ կենդանի է յիս Յիսուս Քրիստոս,, Գաղ. Բ. 20: Սոքա երեքեան տան մեզ միշտ զգուշանալ առ 'ի պահել 'ի ներքին գան-ձարանի սրտից մերոց զԱստուածադիր օրէնս և զհրամանս. զի մի՛ անդէն զօրեն առիթք մեղաց 'ի կամս մեր և տայցեն մեղանչել ընդդէմ օրինաց և պատուիրանացն Աստուծոյ:

Խորհրդականապէս Աստուածաբանեն սուրբ և երա-նելին Յովբ և հոգեւոր մարգարէն Դաւիթ.

"Հաւսից 'ի պատուիրանս նորա. և զճանապարհս նորա պահեցից և ոչ եւս թիւրեցայց. զպատուիրանօք նորա ոչ անցից՝ զի մի՛ մեռանիցիմ. 'ի ծոց իմ թագուցի զբանս նորա,, Յոբ. ԻԳ. 11. 12:
"Ի սրտի իմում թագուցի զբանս քո, զի մի՛ մեղայց քեզ,, Սաղմ. ՃԺԸ. 11:

Ի վերջոյ, սոքա երեքեան Աստուածաբանական առաքինութիւնք ուրոյն ուրոյն երջանկութիւնս Աստուածային շնորհաց ներգործեն 'ի մեզ. նախ՝ ուղղափառ հաւատոյ ճշմարտութիւնն կացուցանէ զմեզ հաճելի Աստուածային բարեհաճամ կամացն. և զանհնարելին 'ի մարդկանէ հնարաւորս առնէ. ըստ այնմ. "Երթ՝ և որպէս հաւատացեր եղիցի քեզ,, Մատթ. Ը. 13:
"Ամենայն ինչ հնարաւոր է այնմ, որ հաւատայն,, Մարկ. Թ. 22:

Երկրորդ՝ մասն Աստուածաբանական առաքինութեան է յոյսն հաստատուն. որ ներկայացուցանէ առաջի մտաւորական տեսութեան մեր զհանդերձեալ ամենացանկալի փառսն երկնից արքայութեան. "Ընկալջիք երանելի յուսոյն, և յայտնութեան փառաց մեծին Աստուծոյ,, Տիտ. Բ. 13:
"Օրհնեալ է Աստուած՝ և Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ ըստ բազում ողորմութեան իւրում ծնաւ զմեզ վերստին 'ի յոյս կենդանի. 'ի ձեռն յարութեանն Յիսուսի Քրիստոսի 'ի մեռելոց,* յանեղծ յանարատ և յանթառամ ժառանգութիւնն՝ որ պահեալ է յերկինս 'ի ձեզ,, Ա. Պետ. Ա. 3:

Հաստատ և անփոփոխելի յոյս առ Աստուած՝ յապահովի կացուցանէ զանձինս սրտալից յուսա-

ցուցաց իբրև անկասկածելի խորհուրդ նորա. և յա-մենայնի տալ փառս և համբերատար լինել ՚ի վիշտս յուսալով միայն յԱստուածային ամենակարող զօ-րութիւն, որ ոչ երբէք յամօթ առնէ զյուսա-ցեալս իւր, այլ արիացուցանէ միշտ զօրավիգն լի-նելով յամենայնի:

‘‘Ի քեզ Տէր յուսացայ՝ մի ամաչեցից յաւի-տեան, յարդարութեան քում փրկեա և ապրեցո զիս,, Սաղմ. Լ. 1:

‘‘Քանզի գիտեմք, եթէ նեղութիւնք զհամբերու-թիւն գործեն. համբերութիւն՝ զհանդէս. հանդէս՝ զյոյս. յոյս ոչ երբէք ամաչեցուցանէ,, Հռովմ. Ե. 3—5:

Երրորդ մասն Աստուածպաշտական առաքինու-թեան է սէր առ Աստուած և առ ընկերս մեր. սէրն առ Աստուած լինի բնաւ չափ, կանոն և սահման. քանզի Աստուած է անչափ և անսահ-ման մեծութիւն. և անբաւ զօրութիւն: ‘‘Սիրես-ցես զՏէր Աստուած քո յամենայն սրտէ քումմէ, և յամենայն զօրութենէ քումմէ, և յամենայն անձնէ քումմէ, և յամենայն մտաց քոց,, Բ. Օրին. Զ. 5: Իսկ սէրն առ ընկերս մեր՝ չափաւոր և սահմանա-ւոր. բստ այնմ. ‘‘Սէր զընկեր քո իբրև զանձն քո,, Ղեւտ. Ժ. 27:

Կատարեալ Աստուածսիրութիւնն հմտացուցանէ զատացիւն իւր զԱստուծոյ և զԱստուածայնոց. զոր ոչ այնքան կարող են տալ արտաքին գիտու-թիւնք. բստ այնմ. ‘‘Եթէ ոք կամիցի գիտել ինչ, չև ևս գիտաց՝ որպէս արժան է գիտել. բայց որ սիրէ զԱստուած, նա է տեղեկացեալ ՚ի նմանէ,, Ա. Կորն. Ը. 2. 3: և ոչ այսչափ միայն, այլ և

տայ զառհաւատչեայն 'ի սատանայ զկատարեալն նորոգութիւն յանցանաց մերոց: " Թողեալ լիցին սմա մեղք իւր բազում, զի յոյժ սիրեաց,, Ղուկ. Է. 47: " Սէր ծածկէ զբազմութիւն մեղաց,, Ա. Պետ. Դ. 8: " Կարի իմն մեծարգի և պատուական գնէ զարիտուր սիրոյն, ոչինչ 'ի յերկրաւորացս՝ որ առ այս մարդկան պանծալիք թուին, խոստանայ զվարձուցն հատուցումն: Այլ որ քան զամենայն պիտանացու է և բնական բնութեան՝ զթողութիւն մեղաց առնուլ 'ի պարգևի սակս սիրոյն. և զազատութիւն 'ի ծառայութենէ չարին,, Ասէ . Ոսկեբ. Ճառ. Ի: Արդեմն ջերմեռանդն հոգւով փառաբանակից լինելով ընդ հոգենուագ մարգարէին Դաւթի և մեք համարձակ աղաղակեսցուք առ խնամատար մարդասիրութիւնն Աստուծոյ. եթէ՝ " Սիրեցից զքեզ՝ տէր զօրութիւն իմ, տէր հաստատիչ իմ, ապաւէն իմ, և փրկիչ իմ,, Սաղ. ԺԷ. 1:

# ԳԼՈՒԽ Բ։

## Տեղիք Աստուածաբանութեան։

9. Հ. Ամենայն գիտութիւնք ունին իւրեանց սեպհական շտեմարանս, յորոց արտադրեն վկայութիւնք և սկզբունք իւրեանց. իսկ Աստուածաբանութիւնն է գերագոյն գիտութիւն. ուրեմն ո՞ք են շտեմարանք Աստուածաբանական սկզբանց և եզրակացութեանց։

Պ. Աստուածաբանք ցուցանեն զայսոսիկ հետևեալ զհինգ հարկաւոր շտեմարանս Աստուածաբանական ձեռնարկութեանց և վկայութեանց, և անուանեն տեղիք Աստուածաբանութեան, որք են՝ Աստ[...]ծաշունչ սուրբ Գիրք. Աւանդութիւն. [...] Ընդհանրական սուրբ Ժողովք և Բանք Ա[...] [...]եալ Հարց սրբոց։

10. Հ. Սուրբ Գիրք առնլով զի՞նչ պարտ և արժան է իմանալ։

Պ. Սուրբ Գիրք են Աստուածաշունչ մատեանք հին և նոր կտակարանաց. արդարև տեղի և շտեմարան Աստուածաբանութեան. վասն զի յայտնի զանձնալ տեսանի նոր աւետարանական օրէնքն 'ի մէջ հին օրինաց, և հինն լրացեալ և կատարեալ բովանդակի 'ի նոր աւետարանական օրէնս. և այս երկոքին սուրբ գիրք Աստուածաշունչ մատեանք հին և նոր կտակարանք զանձ են անսպառելի և անկապուտ աշակերտելոց արքայութեան երկնից, Աստուածաբանից վարդապետաց սուրբ և քարոզչաց յաւիտենական ճշմարտութեան։

Ահա զայս անբաժանելութիւնն է 'ի միմեանց հին և

նոր Աստուածաշունչ կտակարանաց առակաւ քա-
րոզեաց մեզ երկնաւոր վարդապետն մեր Յիսուս
Քրիստոս․ " Վասն այսորիկ ամենայն դպիր աշա-
կերտեալ արքայութեան երկնից, նման է առն տա-
նուտեառն՝ որ հանէ 'ի գանձէ իւրմէ զնոր և զհին "
Մատթ․ ԺԳ․ 52։
Ի վերայ այսր բնաբանի այսպէս գրէ երանաշնորհ
սուրբ վարդապետն մեր Յովհան Ծործորեցի․
" Լուիցեն՝ որ զբոց ընթերցուածոց փոյթ ոչ ու-
նիցին, թէ որչափ վնաս անձանց իւրեանց կատա-
րիցեն․ և դարձեալ՝ ոչ խօսէ զհինն, այլ գովէ և
գանձ կոչէ․ քանզի նորա ծածկեալ կայր 'ի հինն՝
իբր զգանձ յագարակի․ վասն որոյ որք զնորս ոչ ու-
նիցին՝ և ոչ զհինն բոլորովին․ քանզի սոքա
երկոքեան ընդ միմեանս կապեալք են և յարմա-
րեալք․ վասն այնորիկ ասաց․ թէ՝ հանէ 'ի գանձէ
զնոր և զհին․ այսինքն՝ 'ի գրոյն 'ի հոգին ելանէ․
և հոգւով զգիրն ճանաչէ․ և լինի ազատեալ ոչ
միայն 'ի ծառայութենէ, այլ և յաղքատութենէ․
և անսպառ գիտութեամբ Տեառն պայծառացեալ՝
երկնային բարեացն վերակոչեցի տանուտէր․ եղեալ
գիտուն հնոյ արարչութեանն և վերստին նորո-
գութեանն, միանգամայն և հին աւուրց Աստուա-
ծութեանն և նորածին մանկանն " Յոհան․ Ծոր․
Ի Մկն․ աւետ․ Գլ․ ԺԳ․ 52
11․ Եթէ հարկաւոր են սուրբ գիրք ուղիղ Աստուածա-
բանել և վարդապետել, ապա պարտ է ուսանել
զիմաստս սուրբ գրոց և 'ի կարևոր բացատրութիւնս
լինել քաջավարժ․ որ ունի զչորեքին տեսակս մեկ-
նութեան, այս է՝ նկարագրական, խորհրդական,
այլաբանական, և բարոյական։ Առաջայս կարևորա-

գոյն յԱստուածաւանդ իմաստս սուրբ գրոց հաստատուն կալ խրախուսէր սրբազան Առաքեալն Պօղոս զսիրելի աշակերտն իւր զՏիմոթէոս յասելն. " Այլ դու հաստատուն կաց յորս ուսարդ, և հաւատարիմ եղեր. գիտես ուստի ուսար. զի 'ի մանկութենէ զգիրս սուրբս գիտես, որք կարօղք են իմաստուն առնել զքեզ 'ի փրկութիւն 'ի ձեռն հաւատոցն որ 'ի Քրիստոս Յիսուս,, Բ. Տիմ. Գ. 14. 15: Իսկ վասն չորից տեսակաց բացատրութեան և մեկնութեան սուրբ գրոց ըստ կուռնելեաւ ալափիտեան, յայտնեցաւ մարգարէին Եզեկիէլի յերկրին քաղդէացւոց 'ի վերայ քոբար գետոյ 'ի տեսիլ չորից կենդանեաց թեւակցելոց ընդ միմեանս, որք 'ի չորեսին կողմանս իւրեանց ընթանային. " Եւ կերպարանք չորեցունց՝ և տեսիլ նոցա, և գործոց իւրեանց, որպէս թէ շրջիցի անիւ 'ի մէջ անուոյ. 'ի չորեսին կողմանս իւրեանց գնային, և յետս ընդդէմ ոչ դառնային 'ի թիկունս իւրեանց ,, Եզեկ. Ա. 16:

12. Հ. Սուրբ գիրք հին և նոր կտակարանք վասն էր Աստուածաշունչ անուամբ մեծարին գերօրինակ քան զայլ մատենագրութիւնս սրբազան Հարց:

Պ. Իրաւամբ և խորհրդով Աստուածաշունչ ասին սրբազան մատեանք հին և նոր կտակարանաց, առ 'ի որոշել 'ի մարդկային գրոց և մատենից, յորս թէպէտ գրեալ կայցեն ճշմարտապատում բանք և հաւատաքարոզ վարդապետութիւնք. բայց մարդկային ուսմամբ և հանճարով են կազմեալ և արտայրեալ, յԱստուածային գանձարանէ ասեմ յԱստուածաշունչ սուրբ գրոց անտի. որպիսի են հարց սրբոց և նախաշնորհ վարդապետաց գրութիւնք

յաղագս ուղղափառ հաւատոյ, և մեկնութիւնք իմաստից սուրբ գրոց և Աստուածահաճոյ բարոյական վարուց: Իսկ սուրբ գիրք հին և նոր կտակարանք ուղղակի կոչին Աստուածաշունչք. վասն զի յատուկ և անմիջապէս ներշնչութեամբ Աստուծոյ գրեալ են 'ի ձեռն հոգևորգու մարգարէից և սրբազան առաքելոց. զորօրինակ՝ եթէ վարդապետ ոք հրամայեսցէ քարտուղարին և կամ աշակերտի իւրում 'ի գիր առնուլ զասացուածս իւր, գրեալ բանքն ոչ լինին աշակերտին կամ քարտուղարին, այլ միայն նշանագրիքն: Ըստ այնր օրինակի բանք գրեալք 'ի հին և 'ի նոր կտակարանս Աստուածաշունչ կոչին իսկապէս. "Ամենայն գիրք Աստուածաշունչք և օգտակարք, 'ի վարդապետութիւն են՝ և 'ի յանդիմանութիւն, և յուղղութիւն, և 'ի խրատ արդարութեան. զի կատարեալ իցէ մարդն Աստուծոյ, յամենայն գործս բարութեան հաստատեալ,, Բ. Տիմ. Գ. 16. 17:

"Քանզի ոչ եթէ ըստ կամաց մարդկան տուաւ մարգարէութիւն երբէք, այլ 'ի Հոգւոյն սրբոյ կրեալք՝ խօսեցան մարդիկ յԱստուծոյ,, Բ. Պետ. Ա. 21:

"Այսու առաւել իմն պատկառելի ցուցանէ զմարգարէութիւնն, որ թէպէտ և մարդիկ էին միջնորդքն, սակայն 'ի Հոգւոյն կրեալք խօսէին: Ընդայս Դաւիթ յայտ արարեալ ասէ. լեզու իմ որպէս գրիչ երագագրի գրչի. և այլ մարգարէ ևս ասէ. ոչ մարգարէ էի, և ոչ որդի մարգարէի, այլ հովիւ էի և թուզ կծուէի. և լուայ հոգւով զօրութեամբն Աստուծոյ: Տեսէ՞ք՝ թէ զիա՞րդ 'ի Հոգւոյն կրեալ խօսէին պատգամս: Այն այսմ և պօղոս վկայէ Աս-

ուածակիր անձն. զփորձ առէք խնդրէք Քրիստոսի, որ ի նմա ընդ ձեզ խօսի: Զի Թէպէտ և լեզուն Պօղոսի էր, սակայն Քրիստոս խօսէր լեզուաւն նորա: ..... Վասն զի Աստուած այնպիսի պատուով պատուեաց զհոգեղէն բնութիւնս և զմարդկանացու, որ իւրոց խորհրդոցն խորհրդակիցս արար զնոսա. որպէս և ասաց իսկ ինքն, Խորհուրդ իմ ընդ իմոցն է ինձ: Նա զարմանալ Թէ՝ ոչինչ առնէ տէր զօրութեանց, որ ոչ յայտնէ զխորհուրդս՝ ծառայից իւրոց մարգարէիցն: Գրէ և Աստուածային Պօղոս, խորհուրդն ծածկեալ յաւիտենից և յազգաց՝ այժմիկ յայտնեցաւ 'ի ձեռն առաքելոցն և մարգարէիցն ,, Սոփ. շնորհ. ճառ. Զ. 'Ն Տէր. Ժ. Պետ:

13. Հ. Որպիսի՞ կերպիւ իմացուք զերևումն Աստուծոյ առ նահապետս և առ մարգարէս, և յայտ յանդիման առ նոցա զօրէնս և զպատուէրս իւր. մի՞ Թէ կարելի իցէ յաշխարհի աստ մարդ մահկանացու տեսանել զԱստուած դէմ յանդիման և խօսակցել ընդ նմա. ո՞չ ապաքէն գրեալ է. “ Ոչ տեսանէ մարդ զերեսս իմ, և ապրի ,, Ելից. լգ. 20:

“ Զաստուած ոչ ոք ետես երբէք, բայց միածինն որդի՝ որ է 'ի ծոց հօր, նա պատմեաց ,, Յօհ. ա. 18:

“ Որ միայն ունի զանմահութիւն՝ բնակեալ 'ի լոյս անմատոյց. զոր ոչ ոք ետես 'ի մարդկանէ, և ոչ տեսանել կարող է ,, ա. Տիմ. զ. 16:

“ Զաստուած ուրուք երբէք չէ տեսեալ ,, Յօհ. ա. Կաթ. դ. 12:

Պ. Թէպէտ ոչ ոք 'ի մարդկանէ ետես զԱստուած իրական անսահման իսկութեամբն և անրաւ բնութեամբն ըստ սրբոյն Դիոնեսիոսի, եԹէ՝ “ Ինքն յամենից բոլորովին անըմբռնելի է ..... զի ոչ ընդ

զգայութեամբ անկանի,, ։ Ե Ոսկէ. ճառ 14. Յոհ.
“ Եթէ որպէս կամ զի՞նչ է Աստուած՝ ոչ միայն մարգարէքն. բայց և ոչ հրեշտակք. և ոչ հրեշտակապետք կարեն տեսանել..... բնութեան եղականի զիա՞րդ հնար իցէ տեսանել զանեղն,,. բայց սուրբ գիրք վկայեն և յայտնի ցուցանեն, եթէ՝ Աստուած, որ է անսահման մեծութիւն, անտեսանելի և բնակեալ ՚ի լոյս անմատոյց, երևեցաւ նահապետաց և մարգարէից։ Բայց գիտել արժան է. զի ոչ զանբովանդակելի և զանսահմանելի բնութիւնն տեսին, այլ զնորին ճշմարիտ խոկութիւնն զանազան տեսլեամբ և արտաքին հրաշազարդ և փայլկնագոյն ցուցմամբ և յայտնութեամբ։
“ Աստուած փառաց երևեցաւ հօր մերում Աբրահամու, մինչդեռ ՚ի Միջագետս էր, մինչև բնակեցուցեալ էր զնա ՚ի Խառան. և ասէ ցնա։ Ել յերկրէ քումմէ և յազգէ քումմէ, և եկ յերկիր՝ զոր ցուցից քեզ... Ես ՚ի կատարել ամացն քառասնից, երևեցաւ նմա յանապատի լերինն Սինայ հրեշտակ Տեառն ՚ի բոց հրոյ մորենւոյն, և Մովսէս տեսեալ՝ զարմացաւ ընդ տեսիլն. և ՚ի մատչելն նորա նշմարել, եղև ձայն Տեառն, Ես Աստուած հարց քոց, Աստուած Աբրահամու և Իսահակայ և Յակոբայ. և զահի հարեալ Մովսէս՝ ոչ իշխէր հայել,, Գործ. է. 2. 3. 30—32։ Ծննդ. ժբ. 1։
“ Ա՜յ է ինձ՝ ես այր տառապեալ զիա՞րդ կամ հիացեալ. զի մարդ եմ՝ և պիղծ շրթունս ունիմ, և ՚ի մէջ պղծաշուրթն ժողովրդեան բնակեալ եմ ես. և զտէր զօրութեանց տեսի աչօք իմովք,, Եսայ. Զ. 5։
Ի բանից աստի երևի, թէ՝ Աստուած ընդ նահա-

պետաց և մարգարէից զանազան կերպիւ և պէսպէս օրինակօք խօսէր, ոչ զբովանդակ Աստուածպաշտութեանն խորհուրդ և անօրէնութիւն միում և եթ ցուցանէր, այլ ըստ Ոսկեբերանին (Ի հոմ. ա. Եբր.) միում զայս յայտնէր և միւսում զայլ. և զամենայն խօսիցն ներշնչմունս պէսպէս եղանակօք ձևացուցանէր. էր որ բանիւ միայն, և էր որ նմանութեամբ և առակօք, զգալի երևութիւք և ներքին ազդմամբ, էր որ յանուրջս կամ յարթնութեան և երբեմն մտաց յափշտակութեամբ և կամ գիշերային և տունջենային տեսլեամբ։
" Եւ ասէ ցնոսա տէր. լուարուք բանից իմոց. եթէ լինիցի մարգարէ ՚ի ձէնջ Տեառն, տեսլեամբ երևեցայց նմա, և երազով խօսեցայց ընդ նմա։ Ոչ այնպէս որպէս ծառային իմ Մովսէսի՝ որ յամենայն տան իմում հաւատարիմ է,, Թուոց. ժբ. 6. 7։
" Ես խօսեցայց ընդ մարգարէսն. և ես զտեսիլս յաճախեցի. և ՚ի ձեռս մարգարէից նմանեցայց,, Ովս. ժբ. 10։
" Բազում մասամբք, և բազում օրինակօք կանխաւ խօսեցաւ Աստուած ընդ հարսն մեր՝ մարգարէիւք։ ՚Ի վախճան աւուրցս այսոցիկ խօսեցաւ՝ ընդ մեզ որդւովն, զոր եդ ժառանգ ամենայնի, որով և զյաւիտեանս արար,, Եբր. ա. 1. 2։
" Զի յորժամ կամէր Աստուած առ մարդիկ երևել, զզօրութիւն իւր յամպն ծածկեալ՝ առագաստեալ պահէր. զի ոչ կարէին մարդիկ համօրէն ժուժալ բաւել տեսլեանն Աստուածութեան. այլ փակեալ զերկինս իբրև սրահակաւ իմն՝ յներքս վարագուրել, զի մի անժոյժ եղեալ կիզցին արարածք։ Նա թէպէտ և երևէր երբեմն ժամանակաւ ումեք ումեք

արժանաւորացն , ըստ նոցա հանդուրժելոյ տեսլեանցն երևէր · որպէս զի նոցա տանել կարասցեն , որպէս Մովսէսն ։ Եւ կամ գլխովին ժողովրդեանն 'ի Սինէական լերինն՝ իջեալ ամպոյն պատեալ երեւէր և անտի խօսէր ընդ նոսա · նա էր յամենայն զարմն նոյնպիսի երևեալ ամպով ,, Եփրեմ · եբր · 197 ։

14․ Հ․ Զի՞նչ է աւանդութիւնն, և յիշատակի՞ արդեօք յԱստուածային սուրբ գիրս · եւ ո՞յք ոմանք են հեղինակք նորա։

Պ․ Սրբազան Աւանդութիւնն է բան Աստուծոյ անգիր կենդանի ձայնիւ աւանդեալ 'ի ձեռն մարգարէից և առաքելոց , զոր ունի սուրբ եկեղեցին Քրիստոսի առ յինքն փոխանցեալ իբրև հաւատարիմ աւանդապահ · և յաղագս Աստուածադրեցիկ և կարևոր աւանդութեանս այսմիկ գտանին յիշատակութիւնք 'ի սուրբ գիրս · և առաջին հեղինակ այսր տիրական աւանդութեան է տէր մեր Յիսուս Քրիստոս · վասն որոյ յԱստուածաբանից անուանեցաւ Քրիստոսական Աւանդութիւն · և քանզի միջնորդաբար 'ի Սրբազան առաքելոց անտի եւս սահմանեցաւ և հաստատեցաւ · վասն որոյ և յորջորջեցաւ առաքելական ։

Ահա այս ամենայն աւանդութիւնք երեւին 'ի ծիսական խոստովանութիւնս և յարարողութիւնս ուղղափառ սուրբ եկեղեցւոյն Քրիստոսի · որպիսիք են , նուիրեալ խորհրդական նշխարն սուրբ պատարագին հարկ է լինել 'ի յալեւրէ ցորենոյ, բաժակն՝ յանապակ գինւոյ որթոյ · փրկագործ խորհուրդն սրբազան պատարագին է յոյժ կարևոր 'ի փրկութիւն հոգւոց կենդանեաց և ննջեցելոց · խորհուրդ եկեղեցւոյ

են եօթն , հարկ է պաշտօն և երկրպագութիւն տալ քառաթևեան սուրբ նշանին Յիսուսի փրկչին մերոյ · ջերմեռանդն հոգւով խաչանիշել զերեսս , որոց վկայից պաշտօն մեծարանաց և նոցին պատկերացն վայելչական յարգութիւն, աղօթել 'ի կողմն արևելից , պահել 'ի կիւրակէս պարապմանց 'ի հոգևոր պաշտամունս , 'ի տէրունական տօնախմբութեան աւուրս պահել կիւրակէ , և յաւուրս քառասներորդաց պահոց և 'ի չորեքշաբաթի , յուրբաթու , և 'ի շաբաթական պահս հրաժարել 'ի պարարտացուցիչ կերակրոց · և զայլ տէրունական և առաքելական աւանդութիւնս անսասանելի բարեպաշտութեամբ սահմանելու և հաստատելու 'ի ձեռն ընտրելոյն Աստուծոյ , նահապետաց և մարգարէից և առաքելոց և հայրապետաց :

“ Որպէս լուաք և ծանեաք զայս , և հարքն մեր պատմեցին մեզ ... Որինչ միանգամ պատուիրեաց հարցն մերոց , ցուցանել զայս որդւոց իւրեանց , զի ծանիցէ ազգ այլ : Որդիք՝ որ ծնանին, յարիցեն և պատմեսցեն զայս որդւոց իւրեանց · զի դիցեն առ Աստուած զյոյս իւրեանց , և մի՛ մոռասցին զգործս Աստուծոյ,, Սաղմ · ՀԷ · 3 · 6 · 7 :

“ Վասնզի բազումք յօժարեցան վերստին կարգել զպատմութիւն վասն իրացն հաստատելոց 'ի մեզ · որպէս աւանդեցին մեզ՝ որք 'ի սկզբանէ ականատեսք և սպասաւորք եղեն բանին,, Ղուկ · Ա · 1 · 2 :

“ Յայտնեմ ձեզ եղբարք զաւետարանն , որ աւետարանեցաւ յինէն · զի ոչ է ըստ մարդոյ · քանզի և ոչ ես 'ի մարդոյ առի , և ոչ ուսայ յումեքէ , այլ 'ի յայտնութենէն Յիսուսի Քրիստոսի,, Գաղ · Ա · 11 · 12 :

“ Գովեմ զձեզ, զի զամենայն ինչ զիմ յիշէք․ և որպէս աւանդեցի ձեզ՝ զաւանդութիւնն ունի-ցիք ․ ․ ․ ․ զի ես ընկալայ ՚ի Տեառնէ, զոր և ձեզն աւանդեցի,, Ա․ Կորն․ ԺԱ․ 2․ 23։

“ Այսուհետև եղբարք հաստատո՛ւն կացէք՝ և պի՛նդ կալարուք զաւանդութիւնն՝ զորս ուսայք՝ եթէ բանիւ և եթէ թղթով մերով,, Բ․ Թեսղ․ Բ․ 14։

“ Արդ դու որդեակ իմ, (Տիմոթէոս) զօրացի՛ր շնորհօք՝ որ ՚ի Քրիստոս Յիսուս․ և զոր լուար յինէն բազում վկայիւք, զայն աւանդեսցես հաւա-տարիմ մարդոց, որք բաւական իցեն և զայլս ու-սուցանել,, Բ․ Տիմ․ Բ․ 1․ 2։

“ Բազում ինչ ունէի գրել ձեզ, այլ ոչ կամեցայ քարտիսիւ և դեղով գրել․ զի ակն ունիմ ինքէն իսկ գալ առ ձեզ, և բերան ՚ի բերան խօսել,, Բ․ Ընդհ․ Յովհ․ 12։

Զայսօրինակ աւանդութեանց գրեաց սուրբ Յօ-հան Ոսկեբերան ՚ի մեկնութեան Մատթէոսի ճառ Ա․ զոր յառաջ բերեալ հռչակաւորն վարդա-պետն մեր Գրիգոր Նարեկացի գրէ ՚ի յառաջա-բանութեան երգոց երգոյն մեկնութեան․ “ Այսպի-սի իրաց աղագաւ և հրամանի վարդապետն մեր ոսկե-ղեբաց Յօհան վարի բանիւ, թէ այնպիսի սրբա-կան վարս պիտոյանայր մեզ ստանալ, որ գիրս ոչ պիտոյ էր․ որպէս Նոյին, և Աբրահամու, և նորին որդւոց և թոռանց․ որպէս Յովբայն, և Մովսէ-սին, և Առաքելոցն․ որ փոխանակ գրոյ ՚ի սիրտս նոցա բնակէր, և ուսուցանէր, և ՚ի տախտակս սրտին գրէր և ոչ ՚ի գիրս,,։

“ Քանզի այնպէս էին բանք Առաքելոցն շնորհօք հոգւոյն իբրև աղբիւր հանմանալք, զի այլն շնորհս

լսողացն ։ Նմին իրի և Աստուածընկալն Պետրոս իբրև սկսաւ խօսիլ 'ի մէջ ժողովոյն Կոռնելեայ՝ եկն հոգին սուրբ 'ի վերայ նոցա ։ Ի սոյն պատճառս և Պօղոս գրէր առ Կորնթացիս․ անձկացեալ եմ, ասէ, տեսանել զձեզ․ զի փոխեցից 'ի ձեզ շնորհս ինչ հոգեւորս առ 'ի հաստատել զձեզ ։ Տեսանեմ զզօրութիւն բանից Առաքելոցն․ զի Աստուած հանգուցեալ էր 'ի լեզուս նոցա․ և 'ի բերանոյ նոցա հրաշագործէր զշնորհաբաշխութիւն իւր լսողացն։ Ի սոյն յոյս միտս ասաց և երանելին Յովհաննէս, թէ ունիմ ինձէն գալ առ ձեզ, և բերան 'ի բերան խօսիլ ։ Եւ զայս ըստ նմանութեան Տեառն մերոյ խորհեցաւ առնել․ քանզի նա նստեալ 'ի լերինն՝ ոչ փորագրէր տախտակս քարեղէնս և տայր նոցա, որպէս երբեմն Մովսէսի 'ի լերինն Սինա, և ոչ սևագրեալ գրէր 'ի մագաղաթի զպատգամս վարդապետութեան իւրոյ․ այլ զի՞նչ, բացեալ ասէ զբերան իւր, ուսուցանէր նոցա բարձրագոյն ձայնիւք զպատգամս Աստուծոյ Հօր ։ Եւ 'ի ձեռն հոգւոյն գրէր նոցա ոչ 'ի տախտակս քարեղէնս, այլ 'ի տախտակս սրտի մարմնեղէնս ։ Եւ յայսմ պատճառէ չկամեցան Առաքեալքն թողուլ ինչ գրով․ այլ փոխանակ գրոյ՝ հոգւովն գրել 'ի միտս և 'ի հոգիս ։ Եւ զորս միանգամ գրեցին, 'ի պատճառէ իմիքէ գրեցին, կամ 'ի խնդրոյ աշակերտաց,, Սուք․ Շնոր․ Ն․ Մկն․ Ժ․ Ծղն․ Յովհ․ Ծառ․ Թ․ Երես․ 770։

15․ Հ․ Զի՞նչ արժան է իմանալ բառիւս եկեղեցի, և զի՞ իցէ էական և ստորագրական սահման նորա։

Պ․ Եկեղեցի անուն է բառ յունական և ստուգաբանի կոչումն կամ հրաւիրումն միաբան խորհրդով ժողովեալ բազմութեան առ երևելի համախմբութիւն

ինչ։ Վասն որոյ տեղքն այն մարդկային բազմութեան 'ի մի վայր անդր ժողովելոց միաբանութեամբ յաղագս միոյ իրիք բարենպատակ խորհրդակցութեան և կամ պաշտաման՝ նմանապէս առնել կոչեցաւ եկեղեցի։

“Յայնժամ եկեղեցացոյց արքայն Սողոմոն զամենայն ծերս Իսրայէլի . . . Եւ եկեղեցացան առ արքայ Սողոմոն ամենայն այր Իսրայէլի„ Գ. Թագ. Ը. 1.2.

“Էին ոմանք յանտիոք ըստ եկեղեցւոյն մարգարէք և վարդապետք„ Գործ. ԺԳ. 1.

Արդ այս խորհրդական անուամբ եկեղեցի ունի այս էական և ստորագրական սահմանս. նախ՝ ըստ Աստուածաբանից եկեղեցի անուանի սեպհական ժողովուրդ Քրիստոսի, ունօղ զքրիստոնականն կնիք մկրտութեան և համաբարբառ խոստովանութեամբ ուղղափառ հաւատոյ յուղիղ և 'ի ճշմարիտ դաւանութեան։ Որպէս եւ սահմանի։ Եկեղեցին է ջերմեռանդն ժողով ուղղափառ հաւատացելոց յանուն ամենասուրբ երրորդութեան մկրտելոց, 'ի միութիւն հաւատոյ միաբանելոց, և սրբարար փրկաւէտ խորհրդոց և Աստուածային պաշտամանց հաղորդակցելոց. յօրինաւոր հոգևոր հովուաց առաջնորդելոց, և 'ի միմիայն երկնաւոր հովուապետէն Յիսուսէ Քրիստոսէ խնամելոց, որք են բարոյական մարմին նորա. և նա միայն տիրապէս գլուխ մարմնոյ իւրոյ եկեղեցւոյն.

“Եկեղեցին ընդ ամենայն Հրէաստան և 'ի Սամարիա և 'ի Գալիլեա ունէր խաղաղութիւն, շինեալ և երթեալ զհետ երկիւղի Տեառն. և մխիթարութեամբ Հոգւոյն սրբոյ բազմանայր։ Եւ եկեղեցիքն հաստատէին 'ի հաւատս, և յաւելանային 'ի

թիւն հանապազօր ,, Գործ · Ի · 31 · ԺԶ · 5 :
“ Ողջոյն տան ձեզ ամենայն եկեղեցիք Քրիստոսի ,, Հռովմ · ԺԶ · 16 :
“ Նա զնա եդ գլուխ 'ի վերայ ամենայն իրիք եկեղեցւոյ, որ է մարմին նորա, և լրումն՝ որ զամենայն յամենայնի լնու ,, Եփես · Ա · 22 :
“ Այլ դուք մարմին Քրիստոսի էք, և անդամք յանդամոց նորա ,, Ա · Կորնթ · ԺԲ · 27 :
Ոսկեբերան 'ի վերայ այսր բանի այսպէս խորհրդածէ . “ Նախասահմանեաց Աստուած հայր զորդին իւր միածին զ՚Յիսուս Քրիստոս փրկիչ մեր ընդհանրական գլուխ 'ի վերայ ամենայնի եկեղեցւոյ իւրոյ, առ 'ի նախախնամել և պաշտպանել իբրև զիւր սեպհական մարմին, զօրացուցանելով զարդարելով և փառաւորելով պէսպէս սքանչելի շնորհօք ,, :
Յայս հոգևորական օրինակ սիրաշաղկապ միաւորութեան Քրիստոսի փրկչին մերոյ ընդ եկեղեցւոյն սքանչելի իմն նկարագրէ հրեշտակակրօն վարդապետն մեր սուրբ Գրիգոր Նարեկացի յասելն . “ Դարձեալ այլ օրինակ հոգևորական, որ զսիրոյն յօդուած շաղկապէ 'ի մի առ եկեղեցի, քև խորհրդածի . իբր զի առանց բնաւից զուգամասնութեան կապակցել լծով հաւանականաւ զմեծն ընդ փոքուն, միաւորեալ է հաստատածոյն անարատութիւն՝ յանուն Քրիստոսի ժողովելոյն ,, Նար · ԽԷ · 3 :
Գրէ և երանելի վարդապետն մեր Յովհան Ծործորեցի . “ Եթէ ոք ասիցէ . զիա՞րդ մի լինիմք մարմին՝ ըստ Տեառն մարմնոյն : Ասացուք՝ հոգւովն սրբով, ըստ առաքելոյն՝ թէ ոք զհոգին Քրիստոսի ոչ ունի, սա չէ նորա . քանզի մար-

մինն Քրիստոսի ոչ 'ի մարդկային սերմանէ է՝ յայտ է առհա, այլ 'ի հոգւոյն սրբութենէ, ըստ հրեշտակին առ կոյսն աւետեաց՝ թէ որ 'ի նմայն ծնեալ է՝ 'ի հոգւոյն սրբոյ է․ այսպէս մեք ընդունելութեամբ հոգւոյն յաւազանն մաքրութեամբ՝ մարմնոյ և արեան հաղորդութեամբ՝ լինիմք մարմին Քրիստոսի ։ Այս թէ ոք զայս ոչ ունիցի՝ չէ նորա մարմին, որպէս ասաց Պօղոս․ վասն որոյ 'ի վերայ բերէ թէ՝ Աստուած զուգեաց, մարդ մի՛ մեկնեսցէ․ այսինքն՝ զհօր կամաւ եղեալ միութիւնս եկեղեցւոյ առ բանն՝ և բանին առ մարմին իւր, մի՛ ոք իշխեսցէ որոշել զնորայն՝ աղանդաւոր բանիւք բաժանել իբր 'նեստր և համախոհք նորին ։ Իսկ զեկեղեցւոյ, կամ զայլ ոք գայթակղեցուցանել և յուրացութիւն ձգել․ և կամ զանձն անօրէն գործովք ապականեցուցանել և 'ի նմանէ որոշել, ըստ առաքելոյն թէ՝ առեալ զանդամս Քրիստոսի՝ առնիցեմք անդամս պոռնկի, քաւ լիցի․ քանզի այս հերձուածողաց է փորձանք՝ զոր գաղափարաւ փարիսեցիս կոչեաց, յորմէ արժան է խորշել, և Աստուածային բանիւք պապանձեցուցանել,, Ի Ճշ․ Մտթ․ ԺԹ․ 6 ։

16․ Հ․ Վասն էր այս սրբազան և խորհրդաւոր անունս եկեղեցի վայելչացեալ է տիրապէս ընտրեալ ժողովրդոցն Աստուծոյ ուղղափառ քրիստոնէից, և ընդէ՞ր բարձաւ 'ի հրէից անունս եկեղեցի, որով 'ի հնումն մեծարեալ լինէր իբրև ժողովուրդ Աստուծոյ․ և այժմ ժողով նոցա և ժողովրդանոց Սինովդեայ և կամ Սինագոգայ առ ձայնի, որ թարգմանի հաւաքումն և կամ գումարումն ո և լցէ բազմութեանց բանականաց և անբանից ։

Գ. Թէպէտ 'ի հնումն իսրայէլացիք Աստուածային
օրինօք և Աստուածազգեցիկ պատուիրանօք մար-
գարէից և այնպէս գուշակութեամբ փայլեցեալ՝
իրաւամբ կոչէին ժողովուրդ Աստուծոյ. և ժողովք
նոցա և ժողովարանն՝ եկեղեցի Աստուծոյ. ըստ
այնմ. "Յեկեղեցիս մեծս օրհնեցէք զԱստուած,
և զտէր յաղբերացն Իսրայէլի,, . և թէ "Յիշեա
զժողովուրդ քո զոր ստացար 'ի սկզբանէ. փրկեցեր
զգաւազան ժառանգութեան քո,, Սաղ. կէ. 26.
հգ. 2:

Նոյն որպէս գրէ սուրբ վարդապետն մեր Եղնիկ Կող-
բացի. "Եկեղեցի Աստուծոյ 'ի սկզբանէ աշխար-
հի էր. զորմէ և Դաւիթ 'ի Ժողովոյն սորոյ ու-
սեալ մատուցանէր զաղօթս, թէ յիշեա զեկեղե-
ցի քո զոր ստացար 'ի սկզբանէ,, Գէշ+ Ե. բայց
այժմ հեռացան իսպառ 'ի լուսաշաւիղ ճշմարիտ
Աստուածպաշտութեան ճանապարհէն և 'ի մարգա-
րէական Աստուածաշունչ գուշակութեանց, որ
զփրկագործ անորէնութենէ Յիսուսի Քրիստոսի.
և ըստ իւրեանց չարաչար խստասրտութեան և Աստ-
ուածընդդէմ ապստամբութեան ատելի եղեալ Աստու-
ծոյ, մերժեցան յԱստուածային փրկարար և երանա-
ւէտ շնորհացն: Ըստ որի և յաղագս սոցին ամենա-
ծանր յանցանաց մարգարէական հոգւով զանգա-
տանս առնէր 'ի դիմաց Աստուծոյ սուրբ մարգա-
րէն Դաւիթ յասելն. "Ժողովուրդ իմ ոչ լուաւ
ձայնի իմում, և Իսրայէլ յիս ոչ նայեցաւ: Նարձէ
Թողի զնոսա երթալ զհետ կամաց սրտից իւրեանց.
զի գնասցին նոքա ըստ կամս անձանց իւրեանց,,
Սաղ. Ձ. 11. 12:

Յայս մեա և մարգարէն Եսայի 'ի կողմանէ Աս-

տուծոյ բացագանչէ ․ " Լո՛ւր երկին , և ունկնդիր երկիր ․ զի Տէր խօսեցաւ , որդիս ծնայ և բարձրացուցի , և նոքա զիս անարգեցին ։ Ծանեաւ եզն զստացիչ իւր , և էշ զմսուր Տեառն իւրոյ ․ և Իսրայէլ զիս ոչ ծանեաւ , և ժողովուրդ իմ զիս 'ի միտ ոչ էառ ։ Մի թէ ո՞չ իցէ կարող ձեռն Տեառն փրկել ․ կամ ծանրացոյց ինչ զունկն իւր՝ զի մի՛ լուիցէ ։ Այլ մեղքն ձեր որոշեն 'ի մէջ ձեր՝ և 'ի մէջ Աստուծոյ ։ և վասն անօրէնութեանց ձերոց դարձոյց զերեսս իւր 'ի ձէնջ՝ զի մի՛ ողորմեսցի ։ Զի ձեռք ձեր պղծեալք են արեամբ՝ և մատունք ձեր 'ի մեղս ։ շրթունք ձեր խօսեցան զանօրէնութիւն , և լեզուք ձեր խոկան զանիրաւութիւն ,, Եսայ ․ ա ․ 1 ․ 3 ․ ծթ ․ 1—3 ։

Եւ Յիսուս Քրիստոս փրկիչն մեր զապստամբութիւն գլխաւորացն հրէից զդպրաց և փարիսեցւոց կեղծաւորաց օրինակաւ յանդիմանելով՝ ասաց վճռաբար ․ " Ասէ ցնոսա Յիսուս ․ չիցէ՞ ընթերցեալ ձեր 'ի գիրս ․ զվէմն՝ զոր անարգեցին շինողքն , նա եղև գլուխ անկեան , 'ի Տեառնէ եղև այս , և է սքանչելի յաչս մեր ։ Վասն այսորիկ ասեմ ձեզ ․ զի բարձցի 'ի ձէնջ արքայութիւնն Աստուծոյ ․ և տացի ազգի՝ որ առնիցէ զպտուղս նորա ,, Մտթ ․ իա ․ 42 ․ 43 ։

Վասն որոյ զսոցին Աստուածընդդէմ ապերախտութիւնս յայտ յանդիմանն կացուցանէ եկեղեցւոյն թեսաղոնիկեցւոց և սրբազան առաքեալն Պօղոս ․ " Դուք , ասէ , նմանօղք եղերուք եղբարք՝ եկեղեցւոյն Աստուծոյ՝ որ են 'ի Հրէաստանի 'ի Քրիստոս Յիսուս ․ զի զնոյն չարչարանս չարչարեցայք և դուք 'ի ձերոց ազգականաց , որպէս և նոքայն 'ի

հրէից · որք և զՏէրն Յիսուս սպանին և զմարգարէսն, և զմեզ հալածեցին, և Աստուծոյ յաչաց եղեն · և ամենայն մարդկան հակառակ եղեն ,, Ա · Թես · Բ · 14 · 15 :

“ Լուսաւորեաց՝ լուսաւորեաց Երուսաղէմ · զի հասեալ է լոյս քո, և փառք Տեառն 'ի վերայ քո ծագեցի : Զի ահա խաւար ծածկեսցէ զերկիր, և մառախուղ զհեթանոսս · բայց 'ի քեզ տէր յայտնեսցի, և փառք նորա 'ի քեզ երևեսցին ,, Եսայ · Կ · 1 · 2 :

“ Արք եղբարք՝ պարտ է համարձակութեամբ ասել վասն նահապետին Դաւթի · զի մեռաւ, և թաղեցաւ · և գերեզման նորա կայ 'ի միջի ձերում մինչև ցայսօր : Զի մարգարէ էր և գիտէր, եթէ երդմամբ երդուաւ նմա Աստուած՝ 'ի պտղոյ յորովայնէ նորա նստուցանել յաթոռ նորա : Յառաջագոյն ծանուցեալ խօսեցաւ վասն յարութեան Քրիստոսի · զի ոչ թողաւ ոգին նորա 'ի դժոխս, և ոչ մարմին նորա ետես ապականութիւն ,, Գործ · Բ · 29 · 31 :

“ Վասն որոյ փրկութեան խնդրեցին և քննեցին մարգարէքն · որք վասն որոյ 'ի ձեզ լինելոց էին շնորհքն՝ մարգարէանային · քննէին յորում և յորպիսի ժամանակի գուշակէր 'ի նոսա հոգին Քրիստոսի · որ նախ՝ զչարչարանացն Քրիստոսի վկայէր, և յետ այնորիկ՝ զփառացն : Որոց և յայտնեցաւ իսկ · զի ոչ եթէ անձանց, այլ մեզ մատակարարք լինէին, նոցին՝ որք այժմ պատմեցան այնոքիւք, որ աւետարանեցին ձեզ հոգւովն սրբով ,, Ա · Պետ · Ա · 10—12 :

Տեսանեմ թէ ծրագրի օրինակաւ մեզ մատակա-
րարք լինէին մարգարէքն: Նախ՝ տնկեցին զայգին
տաշտաւոր, և մեք արբմք զգինին ուրախարար:
Նոքա շինեցին զտունն, և մեք հանգուցեալք վայե-
լեմք 'ի նմին: Նոքա կազմեցին զսեղան հարսա-
նեացն, և մեք ճաշակեցաք զքաղցրութիւն փե-
սային: Նոքա հրաւիրեցին 'ի հարսանիսն, և մեք
կոչեցաք և 'ի ներքս մտաք, և սուրբ առագաստին
արժանաւորք եղաք,, Սարգ. Շնորհ. Հառ. Ճ. Պետր:
"Եւ զորս եդ Աստուած յեկեղեցւոջ՝ այս են.
նախ՝ զառաքեալս, երկրորդ՝ զմարգարէս, երրորդ՝
զվարդապետս, ապա զօրութիւնս, ապա շնորհս
բժշկութեանց, ազգս լեզուաց, թարգմանութիւնս
լեզուաց,, Ա. Կորնթ. ԺԲ. 28:
"Եւ նա ետ զոմանս առաքեալս, զոմանս մար-
գարէս, զոմանս աւետարանիչս, զոմանս հովիւս
և վարդապետս. առ 'ի հաստատութիւն սրբոց, 'ի
գործ պաշտաման, 'ի շինուած մարմնոյն Քրիս-
տոսի: Մինչև հասցուք ամենեքեան 'ի մի միա-
բանութիւն հաւատոյ՝ և գիտութեան որդւոյն Աս-
տուծոյ. յայր կատարեալ 'ի չափ հասակի կատար-
մանն Քրիստոսի,, Եփես. Դ. 11—13:
Յաղագս բազմարդիւն վաստակոց հոգեշունչ վար-
դապետութեանց սրբազան Հայրապետացն գրէ քեր-
թողահայրն մեր սուրբն Մովսէս Խորենացի. "Հան-
գստացեալք ընդ երկնայնոցն այսօր տօնեմք զյիշա-
տակ սուրբ Հայրապետացն, որք զԱստուածային
առատապէս առընկալեալք շնորհաց բաշխումն,
ընդհանուր ծաւալեցին յեկեղեցիս արդարոց. օրհ-
նեցէք զտէր ընդ անմարմնոցն դասս,, 'Ի շարականն:
Եւ երանելի սուրբ վարդապետն մեր Յօհաննէս

Երզնկացի նորոգէ զքանչելահրաշ արդիւնս անթիւ վաստակոցն և զքանչելի Աստուածաբանական վարդապետութիւնս սրբոյն Գրիգորի Լուսաւորչի. «Պարծանաւորք հնչումն հարաւային հողմոյն ճառագայթեալ հրով Աստուածային հոգւոյն, որով հալեցաւ սառն կռապաշտութեան հիւսիսարնակ ազանց. և եղեն ծաղկեալք Աստուածային գիտութեամբն: Պայծառ նորագուարճ տնկեալ յաշխարհիս Հայոց, բազմաջան քրտամբք Տէր Գրիգորիոս. արբեալ 'ի վտակաց հոսման քաղցրի ճշմարիտ բանին ծաղկաւէտ լեալ հրաշագեղ տնկօք» 'Ի շարականն:

Այսքան առ այս յաղագս եկեղեցւոյն Աստուծոյ հնոյն և նորոյս. իսկ եթէ որք կամիցին վերահասու լինել զզանազանութենէ հին եկեղեցւոյն 'ի նորոյս Քրիստոսական սուրբ եկեղեցւոյս և 'ի խորհրդական պանծալի նշանաց և խորհրդոցն նորին, ընթերցցին զգրքոյկն մեր անուանեալ Խորհրդածութիւն շնորհաց և նշանաց և խորհրդոց Քրիստոսական սուրբ եկեղեցւոյ» գլխ. Գ. Ճ. ՃԱ:

17. Հ. Որպէս սահմանի ժողովն առաքելական եկեղեցւոյ, և որով լինի սուրբ, Աստուածահաճոյ, և օրհնաւոր. և որք սկիզբն եղև նորա:

Պ. Ընդհանուր ժողովն է համախմբութիւն հաւատաց Քրիստոսական սուրբ եկեղեցւոյ վասն նորանոր ծագեալ խնդրոց վերաբերելոց յուղղափառ հաւատս և 'ի բարեկարգութիւնս առաքինական վարուց. Նա լինի օրհնաւոր, սուրբ, և Աստուածահաճոյ, յորժամ սահման և վճիռ ժողովոյն համաձայն իցէ Աստուածային սուրբ գրոց՝ հին և Նոր կտակարանաց, և հոգեպատում ճառից և վարդապետութեանց

երանելի Հարց սրբոց : Որք` յայտնի օրինաւոր հոգեգումար ժողովս ներկայ հանդիսանայ շնորհիւ և զօրութեամբ իւրով ճշմարիտ հովուապետն մեր և կենդանարար գլուխն եկեղեցւոյ Յիսուս Քրիստոս : Յայս միտ խրախուսեաց զաշակերտսն իւր ընտրեալս յասելն . "Ուր իցեն երկու կամ երեք ժողովեալ յանուն իմ, անդ եմ ես 'ի մէջ նոցա,, Մատթ . Ժը . 20 :

Նա զկատարումն այսր շնորհաձիր խոստման իւրոյ յայտնեաց 'ի սուրբ սիոն վերնատան . ուր ժողովեալ կային սրբազան առաքեալքն զատք . որպէս գրէ աւետարանիչն Յովհաննէս . "Նա էր երեկոյ 'ի միաշաբաթւոջ աւուրն . և դրօք փակելովք` ուր էին աշակերտքն ժողովեալ վասն ահին հրէից , եկն Յիսուս և եկաց 'ի մէջ նոցա , և ասէ ցնոսա . ողջոյն ընդ ձեզ,, Յովհ . Ի . 19 :

Ասացաք , թէ` ժողովն Աստուածահաճոյ լինի և օրինաւոր . եթէ նորին սահմանն և վճռոյն համեմատ իցէ Աստուածային սուրբ գրոց , և սրբոց հարց հոգելից վարդապետութեանց . հաստատէ զայս երանելի առաքեալն Պօղոս գրելով առ ժողովս հաւատացելոց . "Ըղձացեալ եմ տեսանել զձեզ . զի փոխեցից 'ի ձեզ շնորհս ինչ հոգևորս` առ 'ի հաստատել զձեզ . . . . զի ոչ եթէ ամօթ ինչ համարիմ զաւետարանն . քանզի զօրութիւն Աստուծոյ է 'ի փրկութիւն ամենայն հաւատացելոց . նախ հրէի` և ապա հեթանոսի . զի արդարութիւն Աստուծոյ նովաւ յայտնի 'ի հաւատոց 'ի հաւատս ,, Հռովմ . Ա . 11 . 16 . 17 :

"Եւ զոր խօսիմքս` ոչ եթէ մարդկեղէն ուսմամբ ճարտարութեան բանից , այլ վարդապետութեամբ

հոգւոյն , ընդ հոգևորս զհոգևորսն համեմատեմք ,, Ա · Կորնթ · Բ · 13 :

Եւ այս հաստատեալ է , ասէ սուրբն Յօհան Ոսկեբերան , 'ի վերայ անշարժ հիման աւետարանական բանից Յիսուսի Քրիստոսի , որ առ դասս սրբազան առաքելոց իւրոց · " Այլ յորժամ մատնիցեն զձեզ , մի՛ հոգայցէք՝ թէ որպէս կամ զինչ խօսիցիք · զի տացի ձեզ 'ի ժամուն յայնմիկ զինչ խօսիցէք · զի ոչ եթէ դուք իցէք որ խօսիցիքն , այլ Հոգին Հօր ձերոյ որ խօսեսցի 'ի ձեզ ,, Մատթ · Ժ · 19 · 20 :

" Արդ՝ դիք 'ի սիրտս ձեր , մի՛ յառաջագոյն կրթել տալոյ պատասխանի · զի ես տաց ձեզ բերան և իմաստութիւն , որում ոչ կարիցեն կալ հակառակ՝ կամ տալ պատասխանի ամենայն հակառակորդք ձեր ,, Ղուկ · ԻԱ · 14 · 15 :

Անձրևաւորութիւն հոգևոր ժողովոյ 'ի հին օրինաց անտի երևի · որ լինէր յաղագս ջերմեռանդն Աստուածպաշտութեան և ուղղութեան բարուց : Որպէս եղև 'ի ժամանակս Եղիայ մարգարէի · յորում երջանիկ մարգարէն 'ի սիրտ և 'ի հոգի վառեալ և նախանձախնդիր եղեալ Աստուածային ճշմարտութեանն՝ զամօթի եհար զկռամոլ զարքայն Աքաաբ , որ ոչ միայն պաշտէր զկուռս բահաղու՝ այլ և 'ի ձեռն սուտ մարգարէիցն նորա զժողովուրդս Իսրայէլի առ այնս յօժարեցուցանէր : Վասն որոյ սրտահառաչ աղօթիւք նոյն սուրբ մարգարէին անձրևս ցուցաւ ամենակարող զօրութիւնն Աստուածային ճշմարտութեան · փառս որոյ և ամենայն ժողովուրդ անկեալ 'ի վերայ երեսաց իւրեանց յերկիր՝ բարձրաձայն աղաղակելով խոստովանէին զԱ-

մենակարող զօրութիւնն և գլխաւորական ճշմարտութիւնն ամենակարողին Աստուծոյ . որպէս գրեալ է . « Իբրև տես ամենայն ժողովուրդն , անկան 'ի վերայ երեսաց իւրեանց՝ և ասեն , արդարև Տէր՝ նա է Աստուած , Տէր՝ նա է Աստուած » Գ . Թագ . ԺԸ . 39 :

Նոյն և Աստուածուստ եղև պատուէր հրամանի 'ի հին օրէնս . եթէ պատահեսցին կրօնական ինչ հակառակութիւնք , 'ի ժողովս քահանայից եկեղեցւոյ քննեսցի և վճիռ օրինաւոր տացի . ըստ այնմ . « Ելցես 'ի տեղին , զոր ընտրեսցէ Տէր Աստուած քո՝ անուանել զանուն իւր անդ . և երթիցես առ քահանայսն և Ղևտացիս . և առ դատաւորսն որ լինիցի յաւուրսն յայնոսիկ՝ և քննեալ պատմեսցեն քեզ զդատաստանն . և արասցես ըստ հրամանին զոր պատմեսցեն քեզ՝ որք 'ի տեղւոջն իցեն՝ զոր ընտրեսցէ Տէր Աստուած քո . և զգուշասջիր յոյժ առնել ըստ ամենայնի որպէս օրինադրեսցի քեզ » Ե . Օրինաց . ԺԷ . 9 . 10 :

« Այլ և յԵրուսաղէմ կացոյց Յոսափատ 'ի քահանայից՝ և 'ի Ղևտացւոց , և 'ի Հայրապետաց իսրայէլի՝ յիրաւունս Տեառն . դատել զբնակիչսն Երուսաղէմի . և պատուիրեաց նոցա և ասէ . այնպէս արարէք երկիւղիւ Տեառն և ճշմարտութեամբ և լի . սրտիւ : Ամենայն այր զիրաւունս , զեկեալ առ Ձեզ յեղբարց ձերոց՝ 'ի բնակչաց քաղաքաց իւրեանց , 'ի մէջ արեան և արեան , և 'ի մէջ իրաց և պատուիրանի . և զիրաւունս և զդատաստանս որոշեցէք նոցա . և մի՛ մեղիցեն առ Աստուած . և ոչ ևս եղիցի 'ի վերայ ձեր բարկութիւն . և ոչ 'ի վերայ եղբարց ձերոց . այսպէս արասջիք և

չ մեղանչիցէք ․ և ահա Ամարիաս քահանայ՝ առաջ-
նորդ 'ի վերայ ձեր յամենայն բանի Տեառն ․ և
զԶաբադիաս որդի Իսմայէլի առաջնորդ տանն յու-
դայ՝ յամենայն բանի արքայի ․ և դպիրքն և ղևտա-
ցիքն առաջի ձեր ․ զօրացարուք և արարէք ․ և
եղիցի Տէր ընդ բարւոյն,, Բ․ Մնացորդ․ ԺԹ․ 8—11։
Իսկ 'ի նոր շնորհական օրէնս առաւել քան զա-
ռաջինն հաստատեաց Տէրն մեր Յիսուս Քրիս-
տոս զօրինաւոր ժողովն եկեղեցւոյն իւրոյ աւետա-
րանական կանոնադրութիւնս տալով աշակերտաց
իւրոց ․ և սահմանեաց զերրեակ կարգս որոշեալս ․
ուստի երեակ տեսակս օրինաւոր ժողովոց ունի ուղ-
18․ ղափառ եկեղեցին Քրիստոսի ։ Առաջինն ասի ժո-
ղով **թեմական** կամ **քաղաքական** ․ որ գումարի յե-
կեղեցականաց նոյն թեմի կամ քաղաքին առ 'ի
պաշտպանել զսահմանադրեալ կանոնադրութիւնս
եկեղեցւոյն ․ զայս առաջին ժողով սահմանեաց
Յիսուս հրամայելովն․ "Եթէ մեղիցէ քեզ եղբայր
քո , երթ յանդիմանեա զնա՝ յորժամ դու և նա
19․ միայն իցէք,,։ Երկրորդ ժողովն ասի **ազգային** ․
որ գումարի 'ի քահանայից և Եպիսկոպոսաց
եկեղեցւոյն նոյն ազգի , յորս հարկ է գտանել օրի-
նաւոր Պատրիարգն կամ Կաթուղիկոսն ․ և սահ-
մանք և կանոնք սորին զօրագոյն համարին ․ և յա-
ղագս այսր ժողովոյ սահմանեաց Յիսուս զայս օ-
րէնս ․ "Ապա թէ ոչ լուիցէ քեզ , առ ընդ քեզ
20․ միւս ևս կամ երկուս,,։ Իսկ երրորդն անուանի **տիե-
զերական** և կամ **ընդհանրական ժողով** , յոր գումարին
Պատրիարգունք կամ Կաթուղիկոսունք ամենայն
ազգաց ուղղափառաց ․ այլք Եպիսկոպոսունք ․ Եպիս-
կոպոսունք , երիցունք , և յընդհանուր ազգս քրիս-

տանէից տարածին սահմանադրութիւնք և վճիռք տրին . ահա և զայս ընդհանրական ժողովս յայտ յանդիմանն ցուցանէ հրամանն տէրունական . ‘‘ Իսկ եթէ նոցա ոչ լուիցէ, ասասջիր յեկեղեցւոջ . ապա թէ և եկեղեցւոյն ոչ լուիցէ , եղիցի քեզ իբրև զհեթանոսն և զմաքսաւոր,, Մատթ . Ժը . 15 . 17 .

21 . Սակայն յայսոսիկ օրինաւոր ժողովս Քրիստոսական եկեղեցւոյն զո՞ ոք արժան է անուանել զլուխ ժողովականաց և կամ մեծ քան զամենայն հանդիսականսն : Պատասխանեմ . ըստ աւետարանական ճշմարտութեան հաւատամք ,թէ ուր օրինաւոր ժողովումն է եկեղեցականաց խորհել վճռել և հաստատուն պահել զԱստուածահաճոյ կանոնս կրօնից կատարեալ Աստուածպաշտութեան և բարեպաշտութեան , անդ է անշուշտ ամենակալ զօրութեամբ և սքանչելահրաշ շնորհիւն Յիսուս Քրիստոս փրկիչ մեր իբրև կենդանարար զլուխ բարոյական անդամոց իւրոց ըստ անվրէպ խոստման իւրում . ապա ոչ ոք 'ի ժողովելոց ծանիցէ զինքն մեծ կամ զլուխ ժողովոյն, այլ միայն ունի որոշել ըստ իւրեան սահմանեալ պաշտաման և աստիճանի եկեղեցական կարգի . ‘‘ Զի ուր իցեն երկու կամ երեք ժողովեալ յանուն իմ, անդ եմ ես 'ի մէջ նոցա,, . և թէ՝ ‘‘ Ահաւասիկ ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս՝ մինչև 'ի կատարած աշխարհի,, Մատթ . Ժը . 20 . Իը . 20 :

Այս [illegible] մեծաւ զահի հարկեալ պատկառեցի , որ միանգամ յընդհանրական և յօրինաւոր ժողովս յանդգնեցի իբրև զլուխ եկեղեցւոյ բազմիլ և մեծամտիլ, պատկառեցի ասեմ 'ի տէրունական բանէս . ‘‘ Եւ ոչ զգլուխ զայն իցէ ըն-

Թերցեալ ձեր, թէ զվէմ զոր անարգեցին շինողքն, նա եղեւ գլուխ անկեան ։ Ի Տեառնէ եղեւ այս. եւ է սքանչելի յաչս մեր „ Մարկ. ԺԲ. 10. 11 ։
" Նա է վէմն անարգեալ 'ի ձէնջ շինողաց, որ եղեւ գլուխ անկեան „ Գործ. Դ. 11 ։
" Եւ զամենայն ինչ հնազանդ արար 'ի ներքոյ ոտից նորա. եւ զնա եդ գլուխ 'ի վերայ ամենայն իրիք եկեղեցւոյ, որ է մարմին նորա, լրումն որ զամենայն յամենայնի լնու ։ Ապա այսուհետեւ ոչ էք օտարք եւ պանդուխտք, այլ քաղաքակիցք սրբոց եւ ընտանիք Աստուծոյ. շինեալք 'ի վերայ հիման առաքելոց եւ մարգարէից, որ է գլուխ անկեանն Քրիստոս Յիսուս „ Եփես. Ա. 22. 23 ։ Բ. 19. 20 ։
" Վասնզի կայ խոկ 'ի գրի. թէ ահաւասիկ դնեմ 'ի Սիովն վէմ ընտիր՝ գլուխ անկեան պատուական. եւ որ 'ի նա հաւատասցէ՝ մի ամաչեսցէ ։ Ձեզ այսուհետեւ հաւատացելոց է վէմ պատուական. իսկ անհաւատից, վէմ՝ զոր անարգեցին շինողքն, նա եղեւ գլուխ անկեան „ Ա. Պետր. Բ. 6 ։
Եւ ոչ ոք յառաքելապատիւ հարց սրբոց երեւեցաւ յուղղափառ եկեղեցւոջն Քրիստոսի բարձրամտեալ եւ եղեալ զհետ մեծութեան, փառաց եւ նախագահութեան. վասն զի ըստ Աւետարանին զանձրունական զանխախտելի բանին անջնջելի դրոշմեալ ունէին 'ի սիրտս իւրեանց ։ " Բայց դուք՝ մի զոք կոչէք վարդապետ, զի մի է ձեր ուսուցիչ. եւ ամենեքին դուք եղբարք էք ։ Եւ հայր մի կոչէք ձեզ յերկրի. զի ձեր՝ մի է հայր՝ որ յերկինս է ։ Եւ մի կոչէք ուսուցիչք. զի ուսուցիչն ձեր Քրիստոս

է. և մեծն ՚ի ձէնջ եղիցի ձեր սպասաւոր ,, Մատթ. ԻԳ. 8—11:

‘‘ Եւ Յիսուս կոչեաց զնոսա առ ինքն , և ասէ ցնոսա. գիտէք՝ զի որ յանուան իշխանքն են հեթանոսաց , տիրեն նոցա. և մեծամեծք նոցա իշխեն նոցա: Ոչ նոյնպէս իցէ և ՚ի ձերում միջի. այլ որ կամիցի ՚ի ձէնջ մեծ լինել՝ եղիցի ձեր պաշտօնեայ ,, Մարկ. Ժ. 42. 43:

‘‘ Ո՞վ է մեծ , բազմականն՝ եթէ սպասաւորն. ո՞չ ապաքէն բազմականն. բայց ես եմ ՚ի միջի ձերում իբրև սպասաւոր ,, Ղուկ. ԻԲ. 27:

Համապատիւ էին սրբազան առաքելոցն դասք. և հաւասարաչափ շնորհս և զօրութիւն առաքելութեան ընկալան ՚ի Քրիստոսէ. որպէս քարոզեաց մեզ առաքելապատիւ սուրբն Գրիգոր Լուսաւորիչն մեր. ‘‘ Քրիստոսազգեցիկ և խաչակիր առաքելոցն , որոց գլխաւորն Պետրոս , և Անդրէաս , Յակոբոս , և Յովհաննէս , Փիլիպպոս , և Բարթուղիմէոս , Թովմաս և Մատթէոս , Յակոբոս , Սիմոն , Թադէոս , և Բարսաբաս , Մարկոս , Ղուկաս , և Պօղոս , Բառնաբաս. և այլք ևս որ նմանեցին սոցին. որք և եօթանասունքն ևս: Որք առին իշխանութիւն ՚ի Տեառնէ՝ գնալ ՚ի վերայ իժի և քարբի. և կոխել զզօրութիւնս թշնամւոյն. լինել լոյս երկրի. և համեմել յաղել զանկարգութիւն չարութեան անգիտութեան մարդկան աղիւն Աստուածութեան հոգւոյն սրբոյ ,, Յաճ. Բան. Գ:

Սմին նման գրէ սուրբն Կիպրիանոս ՚ի բանս միութեան եկեղեցւոյ. Գլուխ Է. ‘‘ Նոյնպէս այն ինչ էին այլ առաքեալքն , որ ինչ եղև և Պետրոս , հաւասար ընկերակցութեամբ և իշխանութեամբ պերճացեալք. այլ սկիզբն ՚ի միութենէ յառաջա-

նայ , և զխնաւորութիւնն տուեալ լինի Պետրոսի ,,: Եւ գրէ սոյն այս երանելին . "Մի միայն է եկեղեցի 'ի բազում անդամս բաժանեալ , և 'ի մի միայն հովուութիւն առեալ բազում հովուաց . որք համաձայն են 'ի վարդապետութիւնս հաւատոյ ,, 'ի Թուղթն առ Նիկիանոս :

'Ի նոյն իսկ դասուց երանելի առաքելոցն վարդապետեանն մեզ Պետրոս և Պօղոս . " Զերիցունս այսուհետև աղաչեմ իբրև երիցակից՝ և վկայ չարչարանացն Քրիստոսի , որ և հանդերձեալ փառացն յայտնելոց հաղորդ . արածեցէ՛ք, որ 'ի ձեզ հօտ է Աստուծոյ . վերակացու լինել՝ մի՛ իբրև ակամայ՝ այլ կամաւ ըստ Աստուծոյ . մի՛ զօշաքաղութեամբ , այլ յօժարութեամբ . մի՛ իբրև տիրել վիճակացն , այլ լինել օրինակ հօտին . զի յերևել հովուապետին՝ ընդունիջիք զանթառամ փառացն պսակ ,, Ա . Պետ . Ե . 1—4 :

" Որպէս ընտրեցաք յԱստուծոյ հաւատարիմ լինել աւետարանին , նոյնպէս և խօսիմք . ոչ իբրև մարդկան հաճոյ լինել , այլ Աստուծոյ՝ որ քննէն զսիրտս մեր : Զի ոչ երբէք բանիւք ողոքանաց եղեաք առ ձեզ , որպէս և դուք իսկ գիտէք . և ոչ 'ի պատճառս ագահութեան , որպէս և Աստուած վկայ է՝ և ոչ խնդրէաք փառս 'ի մարդկանէ , ոչ 'ի ձէնջ և ոչ յայլոց : Կարօղ էաք իբրև Քրիստոսի առաքեալք ծանրանալ , այլ եղեաք հեզք 'ի մէջ ձերում . որպէս դայեակ մի՛ որ սնուցանիցէ մանկունս : Նոյնպէս և մեք գթայաք 'ի ձեզ . հաճոյ թուէր մեզ տալ ձեզ ոչ միայն զաւետարանն Աստուծոյ , այլ և զանձինս մեր . քանզի սիրելիք մեր եղերուք ,, Ա . Թես . Բ . 4—8 :

22. Եւ այս համապատուութիւն սրբազան Առաքելոց ոչ միայն 'ի հոգեշունչ բանս նոցին յայտնի երեւի, այլ եւ 'ի հոգեգումար ժողովս իւրեանց : Առաջին ժողովն Առաքելոց եղեւ վասն ընտրութեան Մատաթեայ 'ի տեղի յուդայի մատնչի . ուր սրբազան Առաքեալն Պետրոս 'ի ժողովն անդ առանձնաբանէ ոչ իբրեւ գլուխ նոցին հանդիսացեալ, այլ ըստ Տեառն պատուիրանին, թէ՝ " Դուք ամենեքին եղբարք էք ,, Մատթ . իգ . 8:

Բանիւք զաշակերտակիցս իւր ժողովեալս անդանօր եղբարս անուանէ եւ համապատիւս նոցեան . " Եւ յաւուրսն յայնոսիկ յարուցեալ Պետրոս 'ի մէջ եղբարցն՝ ասէ . եւ էր անդ բազմութիւն անուանց իբրեւ հարիւր եւ քսանից : Արք եղբարք՝ պարտ էր կատարել գրոյն . զոր յառաջագոյն ասաց Հոգին սուրբ 'ի բերանոյ Դաւթի՝ վասն յուդայ, որ եղեւ առաջնորդ ունելեացն Յիսուսի . զի 'ի թիւս մեր էր՝ ընդ մեզ, եւ հասեալ էր նմա վիճակ պաշտաման այսորիկ . . . . Եւ կացուցին երկուս . զՅովսէփ՝ որում Բարսաբայն կոչէին, որ անուանեցաւն Յուստոս, եւ զՄատաթեայ . եւ կացեալ յաղօթսն՝ ասեն . դու Տէր սրտագէտ ամենայնի՝ յայտնեա զմի ոք՝ զոր ընտրեցեր 'ի սոցանէ յերկոցունց, առնուլ զվիճակ պաշտաման այսորիկ՝ եւ զառաքելութեան, յորմէ անկաւ Յուդաս՝ գնալ 'ի տեղի իւր : Եւ ետուն վիճակս նոցա, եւ ելանէր վիճակն Մատաթեայ, եւ համարեցաւ ընդ մետասան առաքեալսն ,, Գործ . ա . 15—26 :

23. Երկրորդ ընդհանուր ժողով սրբազան Առաքելոց եղեւ յաղագս ձեռնադրութեան եօթն սարկաւագաց ի վերակացութիւն եւ 'ի հոգաբարձութիւն որբոց

և այրեաց եկեղեցւոյն Քրիստոսի ։ Սակայն և ոչ անդ երևի հետևմունք նախադասութեան և գլխաւորութեան, այլ համաձայնութիւն և միաբանութիւն ընդ միմեանս ․ « Կոչեցին երկոտասանքն զբազմութիւն աշակերտացն՝ և ասեն ․ ոչ է հաճոյ մեզ թողուլ զբանն Աստուծոյ, և պաշտել զսեղանս ։ Ընտրեցէք եղբարք վկայեալս ՚ի ձէնջ արս եօթն, զորս կացուսցուք ՚ի վերայ պիտոյից այսոցիկ ․ և մեք աղօթից և պաշտաման և բանին հպատակ լիցուք ։ Եւ հաճոյ թուեցաւ բանն առաջի ամենայն բազմութեան ․ և ընտրեցին զՍտեփաննոս, այր՝ լի հաւատովք և հոգւով սրբով, և զՓիլիպպոս, և զՊրոքորոն, և զՆիկանովրա, և զՏիմոնա, և զՊարմենա, և զՆիկողայոս զեկն անտիոքացի ։ Զորս կացուցին առաջի առաքելոցն, և աղօթս արարեալ՝ եդին ՚ի վերայ նոցա ձեռս ։ Եւ բանն Աստուծոյ աճէր ․ և բազմանայր թիւ աշակերտացն յոյժ յԵրուսաղէմ ։ Եւ բազում ժողովք ՚ի քահանայիցն անսային հաւատոյն „ Գործ ․ Զ ․ 2—7 ։

24․ Երրորդ ժողով սրբազան առաքելոց եղև վասն խարական օրինաց Մովսէսի և թլփատութեան ․ « Յարեան ոմանք ՚ի հերձուածոյն փարիսեցւոց հաւատացեալք, և ասեն ․ թէ պարտ է թլփատել զդոսա, և պատուիրել պահել զօրէնս Մովսէսի ։ Եւ ժողովեցան առաքեալք և երիցունք տեսանել վասն բանիս այսորիկ ․ Եւ յետ բազում խնդրելոյ՝ յարեաւ Պետրոս՝ և ասէ ցնոսա ․ արք եղբարք՝ դուք գիտէք, զի յաւուրցն առաջնոց ՚ի միջի ձերում ընտրեաց Աստուած բերանով իմով լսել հեթանոսաց բանին աւետարանի ,

և հաւատալ.... Եկաց ամենայն ժողովուրդն, և լսէին Բառնաբայ և Պօղոսի պատմելոյն՝ որչափ արար Աստուած նշանս և արուեստս 'ի հեթանոսս 'ի ձեռն նոցա: Եւ յետ լռելոյն նոցա, պատասխանի ետ Յակոբոս՝ և ասէ. Արք եղբարք՝ լուարուք ինձ: Շմաւօն պատմեաց՝ որպէս յառաջագոյն Աստուած այց արար առնուլ ժողովուրդ 'ի հեթանոսաց՝ անուան իւրոյ: Եւ այսմ միաբանին բանք մարգարէիցն. որպէս գրեալ է.... Վասն որոյ և ես իրաւունս համարիմ, մի՛ նեղել զայնոսիկ՝ որք 'ի հեթանոսաց դառնան առ Աստուած. այլ առաքել թուղթ առ նոսա, խորշել 'ի կերակրոց կռոց, և 'ի պոռնկութենէ, և 'ի մեռելոտւոյ, և յարենէ.... Յայնժամ հաճոյ թուեցաւ առաքելոցն և երիցանցն ամենայն եկեղեցեաւն, արս ընտրեալս 'ի նոցանէ առաքել յԱնտիոք ընդ Պօղոսի և ընդ Բառնաբայ, զՅուդայ՝ զկոչեցեալն Բարսաբայ, և զՇիղայ՝ արս գլխաւորս. գրեալ առ եղբարս 'ի ձեռն նոցա զայս ինչ, և այլն,, Գործ. ԺԵ. 5—22:

Յայս երիս ժողովս սրբազան Առաքելոց յայտնի երեւցաւ, եթէ՝ օրինաւոր և տիեզերական ժողովն է ծայրագոյն դատաւոր Կաթուղիկէ, այս է՝ ընդհանրական եկեղեցւոյն Քրիստոսի:

25. Այսպէս եղեն օրինաւոր գումարումն. վճիռք և սահմանադրութիւնք երից ընդհանրական ժողովոցն. որք են՝ սուրբ ժողովն՝ Նիկիոյ, Կոստանդնուպօլսի և Եփեսոսի, և սոցին սահմանադրական կանոնադրութեանց և աւանդութեանց հաւանեցան ազգային և քաղաքական օրինաւոր ժողովք: Զայսցանէ գրէ երանաշնորհ սուրբ հայրապետն մեր Գրիգոր սոյն 'ի նամակին՝ որ առ Մանուէլ թագաւորն Հոռոմոց

ստորագրութեամբք Եպիսկոպոսաց ուղղափառ եկեղեցւոյս Հայաստանեայց. « Վասն զի գումարեալ ժողովք հարց սրբոց՝ որք 'ի ժամանակս ժամանակս եղեն 'ի սուրբ և 'ի կաթուղիկէ եկեղեցիս ընդդիմամարտ զանազան հերձուածոց, յայտնի փայլեն 'ի մէջ մեր, թէ ո՞ք և վասն որո՞յ պատճառի շարժեցան յայն, և սրբոց հարցն՝ որք միաբանեցան յիւրաքանչիւր ժողովս՝ ուղղափառութեան ձայնակցիմք, և զնզովեալսն 'ի նոցանէ նզովեմք. որք արդարև յարդարեցին զժուարինսն 'ի դիւրինս, և զառապարսն՝ 'ի հարթ ճանապարհս. և խլեցին զորոմն ապականիչ՝ որք էին գայլք 'ի հանդերձս գառանց, յորոց զգուշացուցին զբանաւոր հօտս ուխտիս:

26. Նա 'ի սոցանէ առաջին և տիեզերական ժողովն՝ որ 'ի Նիկիա, 'ի ժամանակս Աստուածասէր թագաւորին Կոստանդիանոսի, որք զհամագոյութեանն հաւատս հաստատեցին ընդդէմ արիանոսացն. և էր մի 'ի սրբոյ ժողովոյն Արքեպիսկոպոսն Հայոց Մեծն Արիստակէս որդի սրբոյն Գրիգորի, յորմէ ընկալեալ զուղղափառ դաւանութիւն Նիկիական ժողովոյն՝ զգուշացաւ եկեղեցի մեր և անփորձ մնաց յարիանոսացն աղանդոյն մինչև ցայսօր:

27. Նաև ժողովն 'ի Կոստանդնուպօլիս ընդդէմ Հոգեմարտիցն, ընդ որս էր և Մեծն Հայրապետ սուրբն Ներսէս, որում և աշակերտեալք՝ ամրացաք 'ի Մակեդոնի աղանդոյն:

28. Նա երրորդ ժողովն յԵփեսոս ընդդէմ Նեստորի, որ ըստ պատահման ժամանակին ունէր զաթոռ Արքեպիսկոպոսութեան Կոստանդնուպօլսի. սա ոչ Աստուածածին դաւանէր զսուրբ կոյսն. և զՏէր մեր Յիսուս Քրիստոս ոչ յերկուց բնութեանց

միաւորեալ, այլ շարադրութեամբ յարակցեալ, ընդ-
դէմ որոյ ժողովեալ երկերիւր սուրբ հարցն յԵփե-
սոս, արտաքս ձգեցին զնորին չար հերձուածն յե-
կեղեցւոյ. և ետուն մեզ ուղղափառ հաւատ ժո-
ղովական թղթովք սրբոյն Կիւրղի Աղէքսանդրու-
հայրապետի, զորս ընկալաւ հայրապետն Հայոց
մեծն Սահակ, և խորշեցոյց զեկեղեցի մեր 'ի Նես-
տորի չար հերձուածոյն:

Գտանին այլ և այլ ժողովոց կանոնադրութիւնք 'ի
մէջ մեր. և ընդունելի են, որք զզանազան կարգս ե-
կեղեցւոյ հաստատեցին. և զպէսպէս հերձուածս հեր-
քեցին. որպէս և անկիւրեայ ժողովն 'ի հերքումն
ընկղմանոսի ամբարշտութեան՝ որ 'ի զոհս կռոցն
բռնադատէր զերիցունսն. և կեսարիայն ընդդէմ
յուսթից կանանց. և նէոկեսարիայն ընդդէմ ան-
խտիր պոռնկութեան, և գանգրեայն ընդդէմ ու-
տացւոց հերձուածոյն. և լաւոդիկեայն ընդդէմ չո-
րեքտասանեկրորդաց. և սարդիկեայն 'ի պէտս եկե-
ղեցական կարգաց: Յայս ուղղափառ ժողովս և
որք սոցին հանգոյն՝ ուսաք զհաւատոյ դաւանու-
թիւն, և 'ի նոցին կանոնադրութենէ զգործոց
պարկեշտութիւն, և մեղաց խորշութիւն, և եկեղե-
ցական կարգաց վայելչութիւն. որոց և առաջնոր-
դութեան հայրենի դաստիարակութեամբք ուղիղ
լինիմք զգուշացեալք առ 'ի յոչ խոտորել յաջ և
ոչ յահեակ յարքունական պողոտայէն, զոր ցուցին
մեզ: Վասն այնորիկ և համարձակութեամբ նզո-
վեմք զառ 'ի նոցանէ նզովեալ հերձուածողսն. զա-
րիոս՝ որ ոչ ասաց զորդի 'ի բնութենէ Հօր. զմա-
կեդոնն՝ զի հայհոյեաց զհոգին սուրբ. զպօղոս
շամշատցին և զնեստոր նորին հերձուածոյն նորո-

պէս՝ որք մարդ դաւանեցեալ ասացին զԱստուածն մեր և զՏէր մեր Յիսուս Քրիստոս, յարակցութեամբ և համաձութեամբ շարայարեալ Աստուած, և ոչ անճառ և սքանչելի միութեամբ. Նզովեմք և զամբարիշտն Նեստորէս՝ որ զմիութիւն Աստուածութեան և մարմնոյն շփոթմամբ դաւանէր, և ոչ յատկութեամբ 'ի հայեցողութիւն բնութեանց: Ընդունիմք իսկ և երդակցեմք սուրբ և Աստուածազգեաց հարցն, որք այսոցիկ հերձուածոցս մահու չափ ձգնեալ հակառակ կացին. և զուղղափառ հաւատ Աստուածաշունչ վարդապետութեամբն իւրեանց գրով թողին մեզ. զորս առեալ ընկալաք և միշտ ընթերցմամբ 'ի նոցին աշակերտութիւնն փութամք զտանել անմոլար,, Աղեքսանդր:

Տես և զսահմանադրութիւն սուրբ ժողովոյն Կոստանդեայ գրեալ առ Յուլիոս Բ. "Այս ճշմարտութիւնս է աներկբայ. և ամենայն ուղղափառք պարտաւորին խոստովանել զսա. և ով որ համարձակի ուրանալ, վաղվաղակի թուակից լինի հերետիկոսաց. և չէ պարտ զարմանալ, զի նա ասի հերետիկոս, որ յանդգնի ներհակել իշխանութեան և զօրութեան մերոյ տիեզերական ժողովոյ,,:

29. Ը. Ընդհանրական ակնէն Աստուածաբանութեան անուանեցաւ հոգեշունչ վարդապետութիւն և վկայութիւն հարց սրբոց և վարդապետաց եկեղեցւոյ. այլ ընդ այս տարակուսիմք, թէ՝ հարքս սուրբք զո՞րս պարտ է մեզ խնդրել. արդեօք զհի՞ն օրինաց, եթէ միայն զհայրապետս և զվարդապետս եկեղեցւոյ նորոյ շնորհական օրինացս:

Գ. Եթէ զերկոսին միանգամայն ծանիցուք, այսինքն՝

զՀին օրինաց նախահարս մեր, և զնորոյս սուրբ եկեղեցւոյ հայրապետս և զվարդապետս, ոչինչ սխալիմք. բայց ունին զանազանութիւնս: Վասն զի նախնի Հայրապետաց և մարգարէից բանք էին աւանդութիւնք Աստուածային հին օրինաց և պատուիրանաց. և պէսպէս ազգարարութիւնք 'ի կողմանէ Աստուծոյ առ ժողովուրդն, գուշակութիւնք շնորհական և աւետարանական նոր օրինաց. "Նակոչեաց Մովսէս զամենայն Իսրայէլ՝ և ասէ ցնոսա. լուր Իսրայէլ զիրաւունս և զդատաստանս՝ զոր ես խօսիմ յականջս ձեր յաւուր յայսմիկ. և ուսջիք զնոսա, և զգոյշ լինջիք առնել զնոսա: Տէր Աստուած մեր ուխտեաց ձեզ ուխտ 'ի Քորեբ, եւայլն,, Բ. Օրինաց. Ե. 1—33:

"Նա արդ՝ այսպէս ասէ Տէր Աստուած՝ որ արար զքեզ Յակոբ, և որ ստեղծն զքեզ Իսրայէլ: մի' երկնչիր զի փրկեցի զքեզ, և կոչեցի քեզ զանուն քո՝ թէ իմ ես դու,, Եսայ. ԽԳ. 1:

Առ այս գեղեցիկս գրէ սուրբ Հայրն մեր Գրիգոր Լուսաւորիչն. "Ի մարգարէից և 'ի Հայրապետաց ծանիցուք զՀայրն ամենակալ, և զՈրդին համազօր, և զՀոգին համագործ. և ծանիցուք և գիտասցուք և ընտանասցուք հաճոյից արարչին ուղղափառ հաւատով. անքակ մտօք 'ի սիրոյ արարչին 'ի նեղութեան և յանդորրու. և արդարացեալք և լեալք երախտաւորք և կամարարք բարերարին,, 'ի Յաճախ. ճառ Է:

# ԳԼՈՒԽ Գ ։

Բնական Աստուածգիտութիւն է գլխաւոր մասն Աստուածաբանութեան, և պատրաստ է ՚ի կողմանէ Աստուծոյ առ մարդիկ ։

30․ Հ․ Ո՞րն է առաջին և գլխաւոր մասն Աստուածաբանութեան և նախկին պարտաւորութիւն Աստուածաբան ուսուցչաց ։

Պ․ Առաջին պարտաւորութիւն Աստուածաբանից է ճգնիլ բացայայտ բանիւք սուրբ գրոց, և յայտնի օրինակօք և փաստիւք հաւատոյ ճշմարտութեան ուսուցանել, թէ՝ գոյ Աստուած անեղ բնութիւն, ամենակարող, արարիչ ամենայն արարածոց․ և այսու համոզել զմիտս ունկնդրաց ՚ի կատարեալն Աստուածգիտութիւն և յԱստուածպաշտութիւն ։ Վասն զի յոր միտս ծագի լոյսն ճշմարիտ Աստուածգիտութեան, անդանօր անսահման արդարութեանն և բազմատեսակ ողորմութեանն ներգործութիւն երևի․ զոր օրինակ՝ ՚ի ծագել արեգական՝ ճառագայթք նորա զամենայն նսեմութիւնս խաւարին խափանեն՝ հալածականս առնեն, և զամենայն փայլչութիւնս երևեցուցանեն․ ըստ այսմ․ "Ձ-
գեա զողորմութիւնս քո այք ճանաչեն զքեզ,, Սաղմ․ ԼԵ․ 11 ։

Զայս Աստուածահաճոյ մաղթանս առնէ ուղղափառ սուրբ եկեղեցի մեր ՚ի ժամու ՚ի ճաշուն․ գրէ և երանաշնորհ սուրբ վարդապետն մեր Մովսէս․ "Ընդ լուսոյ առաւօտու և զգութ ողորմութեան քո, և զլոյս իմանալի կամաց քոց ՚ի հաւատացելոցս ծագեա,, ։ Նշդակցի ընդ այս

երանելին Յոհան խոստովանէր . "Ծագեա Տէր զո-ղորմութիւնս քո և զարդարութիւնս քո 'ի պաշտօ-նեայս և յերկրպագուս ամենասուրբ Երրորդութեանդ. Ծագեաց 'ի խաւարի լոյս ուղղոց . ողորմած գթած և արդար է Տէր,, 'ի կարգս եկեղեցական պաշտամանց :

"Ճանապարհք արդարոց իբրև զլոյս ծագին, առաջնորդեն՝ և լուսաւորեն, մինչև ուր ծագես-ցի,, Առակ . Դ . 18 :

"Լուսաւորեաց՝ լուսաւորեաց Երուսաղէմ, զի հասեալ է լոյս քո, և փառք Տեառն 'ի վերայ քո ծագեցին : Զի ահախաւար ծածկեաց զերկիր, և մառախուղ զհեթանոսս . բայց 'ի քեզ տէր յայտ-նեսցի, և փառք նորա 'ի քեզ երևեսցին,, Եսայ . Կ . 1 . 2 :

"Դարձեալ խօսեցաւ Յիսուս ընդ նոսա և ասէ . Ես եմ՝ լոյս աշխարհի . որ գայ զկնի իմ՝ ընդ խա-ւար մի՛ գնասցէ, այլ ընկալցի զլոյսն կենաց,, Յովհ . Ը . 12 :

"Զի թէպէտ և երբեմն էիք խաւար, այժմ՝ լոյս էք 'ի Տէր . իբրև զորդիս լուսոյ գնասջիք . զի պտուղ լուսոյ ամենայն բարութեամբ է՝ և արդա-րութեամբ և ճշմարտութեամբ,, Եփես . Ե . 8 . 9 :
Ի վերայ այսց առաքելական բանից խորհրդածե-լով սուրբն Յոհան Ոսկեբերան գրէ . "Արդ լոյս էք 'ի Տէր, զի մինչ դարձայք 'ի ճշմարիտն Աստ-ուած, այս փոխեցայք յանուանէ լոյսն Աստ-ուածգիտութեան . որով ունիք զԱստուածահա-ճոյ վարուց պտուղս բերել և զարգանալ բարու-թեամբ և արդարութեամբ,, : "Այլ դուք ազգ էք ընտիր, թագաւորութիւն, քահանայութիւն . ազգ սուրբ, ժողովուրդ սեպհական . որպէս զի զձեր

առաքինութիւնս նուիրեցէք այնմ, որ զձեզ 'ի խաւարէն կոչեաց յիւր սքանչելի լոյսն ,, Ա. Պետր. Բ. 9.

Նա Սարգիս Շնորհալի 'ի վերայ այսր բանի այսպէս վարդապետէ. " Տեսէք զօրութիւն երախտեացն Աստուծոյ: Նա, ասէ, 'ի խաւարէ յիւր սքանչելի լոյսն կոչեաց զձեզ. և դուք գլխաւորապէս ձեր առաքինութիւնդ նուիրեցէք նմա: Խորհրդաւորական ընդ զառաքինութիւնսն, առ 'ի նշանակել բանիւն՝ եթէ ոչ միով առաքինութեամբ միայն շառացայք շնորհել ձերում բարերարին, այլ՝ ամենայն առաքինութեամբք, որ զձեր բարերարութիւնդ ցուցանէ: Նմին իրի ասաց, զձեր առաքինութիւնդ նուիրեցէք ,, Սրբ. Շնորհ. Ի Ձգն. Յառաջ:

Զայս անստուեր լոյս Աստուածգիտութեան և ճշմարիտ հաւատոյ ուղղափառութեան հոգեշունչ վարդապետութեամբ քարոզեաց մեզ նախահայրապետն մեր սուրբն Գրիգոր յասելն. " Ճշմարտութիւն հաւատոյ լոյս է աչաց մտացն շարժմանց՝ խորհրդոցն յիշատակաց, զգեցեալ զլոյսն գիտութեան, իմաստութեան շնորհաց սուրբ հոգւոյն, որ զառաջնորդական զմիտսն լուսաւորէ, և զլովք սրբովք յանդիման կացուցանէ զաներևոյթսն. իբրև 'ի տեսիլ աչաց արեգականն լոյս: Զի և այն ևս լոյս՝ այսպէս երևութանայ Աստուածային անէրութեանն մեծութիւն անքննելի, որ աննման և անհամեմատ է. անպատում և անսահման, անհաս և անբաւ յարարածոց: Այլ ճանաչի աներկբայ հաւատով այնմ, որ 'ի նեղութեան և յանդորրու զօրացեալ հաւատով, որ 'ի սուրբ երրորդութիւնն, կայ մնայ անսասանելի առ մար-

տակիցն հաւատոց ,, Ա Յովհ․ Ճառ․ Ե ։

31․ Հ․ Աստուած զայս Աստուածգիտութեան ներհեղա-
կան լոյսն արդեօք յամենայն միտս և ՚ի սիրտս բա-
նաւորաց հաճի՞ ներգործել ։

Պ․ Արդարև անբաւ մարդասիրութեամբն ՚ի կողմանէ իւրմէ հաճեալ է միշտ և կամի յամենեցուն միտս ներգործել զանեղական լոյսն շնորհաց Աստուածգիտութեան ։ Ահա Դաւիթ յայս բարերար հաճութիւն Աստուածային կամացն նկատեալ հոգւոյ գիտողութեամբ՝ յորդորէ զամենայն մարդիկ․ զի ամենեքեան մերձեսցին առ Աստուած սրտի մտօք ունել զլոյս հաւատոյ և շնորհաց․ ՙՙ Մատիք առ նա և առէք զլոյս, և երեսք ձեր մի՛ ամաչեսցեն ,, Սաղ․ ԼԳ․ 6 ։

Բացայայտ եւս աւետարանեաց մեզ Յիսուս յասելն․ ՙՙ Ես եմ լոյս աշխարհի․ որ գայ զկնի իմ՝ ընդ խաւար մի՛ գնասցէ, այլ ընկալցի զլոյսն կենաց ,, Յովհ․ Ը․ 12 ։

Յայս միտս յորդորէ սրբազան առաքեալն Պօղոս զհաւատացեալս հաստատուն կալ ՚ի լոյս շնորհաց Աստուածգիտութեան և Աստուածպաշտութեան․ ՙՙ Թէպէտ և երբեմն էիք խաւար, արդ՝ լոյս էք ՚ի Տէր․ իբր զորդիս լուսոյ գնացէք․ զի պտուղ լուսոյ ամենայն բարութեամբ է՝ և արդարութեամբ և ճշմարտութեամբ ,, Եփես․ Ե․ 8․ 9 ։

Զայս անեղական լոյսն Աստուածային շնորհաց սքանչելի իմն նկարագրէ հաւատացելոց Աստուածաբան Աւետարանիչն Յովհաննէս․ ՙՙ Եւ զայս գրեմք ձեզ, զի ձեր ուրախութիւնն կատարեալ լիցի ։ Եւ այս են աւետիքն, զոր լուաք ՚ի նմանէ՝ և պատմեմք ձեզ․ զի Աստուած լոյս է, և խա-

ւար 'ի նմա չիք, և ոչ մի. եթէ ասիցեմք՝ եթէ հաղորդութիւն ունիմք ընդ նմա, և 'ի խաւարի շրջիցիմք, ստեմք՝ և ոչ առնեմք զճշմարտութիւն,, ա. Յովհ. ա. 4—6:

Համառօտակի բացատրէ երանելի սուրբ վարդապետն մեր Սարգիս շնորհալի զտեսութիւն այսր բանի աւետարանչին. " Զայս գրեմ ձեզ և վկայեմ. զի ձեր ուրախութիւնն կատարեալ իցէ: Եւ զոր ասե՝ այսպիսի ինչ է, եթէ շնորհաց է ժամանակս և ողորմութեան. մի՛ լինիք յերկրայս, և մի՛ ինչ 'ի զմնդակացն հասեցուսցէ զձեզ 'ի յուսոյ հանդերձելոցն. և մերթ ուրախ լինիցիք ընդ կրօնս Աստուածպաշտութեանն. և մի՛ տարակուսեալ վհատիցիք: Վասն զի ո՛վ ոք՝ որ միտս ունիցի և բանս, 'ի շնորհաց բաժանման ժամանակին՝ տրտմութեամբ լիցի թաղծեալ. այլ մանաւանդ ուրախ լինել և ցնծալ. զի ոչ ըստ պարտուց բաժանէ զպարգևսն և տայ, այլ ըստ գթութեան և մարդասիրութեան. և սակս այսորիկ գրեցի ձեզ՝ առ 'ի ծանուցանել ձեզ զժամանակիս զօրութիւն, և զԱստուծոյ անեզրական զգթութեանն առատութիւն. զի ձեր ուրախութիւն մի՛ այգիօք թերատես ձեզ երևեսցի, այլ լի և կատարեալ և բիւրապատիկ բարեաց պատճառաւ,, Սարգ. Շնորհ. Ն. ԴԻ:

Եւ որք հեռացեալ են յԱստուածային խնամոց և զրկեալ յԱստուածապարգև լուսոյն շնորհաց, և չեն առացեալ զլոյսն շնորհացն Աստուածգիտութեան, չունին զկատարեալ Աստուածպաշտութեանն զարդիւնս և զանձկալութիւնս փարձուց երկնաւոր հատուցման. ըստ այնմ. " Ահաւասիկ որք հեռի արարին զանձինս իւրեանց 'ի քեն կորիցեն. սատա-

կորուսցես զամենեսեան՝ որ ապստամբ եղեն 'ի քէն· Ինձ մերձենալ առ Աստուած բարի է, և դնել առ Տէր զյոյս իմ,, Սաղմ· ՀԲ· 27 :

" Նա մատնեցից զձեզ 'ի սուր, և ամենեքեան կոտորիջիք· զի կոչեցի զձեզ՝ և ոչ լուայք· խօսեցայ՝ և ստունգանեցիք· և արարէք չար առաջի իմ· և զոր ոչն կամէի՝ ընտրեցէք : Վասն այսորիկ այսպէս ասէ Տէր· ահաւասիկ որք ծառայեն ինձ՝ կերիցեն, և դուք քաղցիջիք· ահաւասիկ որք ծառայեն ինձ՝ արբցեն, և դուք ծարաւիջիք· ահաւասիկ որք ծառայեն ինձ՝ ուրախ լիցին, և դուք ամաչեսջիք,, Եսայ· ԿԵ· 12 : 13 :

32· Հ· Զխորհ Աստուածային նախախնամութեանն և շնորհաց մերձաւոր զտանիմք· և յե՞րբ աւ զրկեալ լինիմք 'ի նորին զանազան բարերարութեանց և պարգևաց :

Պ· Մերձաւոր զտանիմք Աստուածային նախախնամական գթութեանց և մարդասիրական շնորհաց և փառաց, յորժամ ծառայեմք առաքինական գործովք մերովք բարերար կամաց նորին : Լո՛ւր հօգեւոր մարգարէին Դաւթի, որ նախ զկամս իւր Աստուածահաճոյ առաքինական գործոց համակերպեալ ցուցանէ ընդ Աստուածային բարերար կամացն· և ապա զկատարելութիւն նորին և զամենակարող օգնականութիւնն հայցէ· վասն որոյ ասէ· " Արա՛ զկամս քո Աստուած իմ կամեցայ, և զօրէնս քո 'ի մէջ որովայնի իմոյ,,· և հետևաբար զկատարեալ մարդասիրութեան շնորհս նորին ամենակալ մեծութեանն հայցէ աղաղակելով· " Կամեաց Տէր փրկել զիս· և Տէր օգնել ինձ նայեաց,, Սաղմ· ԼԹ· 9· 14·

Յոյր սակս արժանացաւ Աստուածային գովու-թեան՝ ըստ այնմ. "Նա՝ երբ փոխեաց զնա, յարոյց նոցա զԴաւիթ թագաւոր. որում և ա-սաց վկայութեամբ. գտի զԴաւիթ որդի Յեսսեայ այր ըստ սրտի իմում, որ արասցէ զամենայն զկամս իմ„, Գործ. ԺԳ. 22. ա, Թագ. ԺԶ. 13. Սաղմ. ԺԸ. 18:

Յաղագս այսորիկ հոգեշունչ բանիւք յորդորական խրատս տայ երանելի առաքեալն Պօղոս առ Հռով-մայեցիս ճանաչել և պաշտել զբարեբանեալ կամս վերնախնամ տեսչութեան Աստուծոյ. "Աղա-չեմ զձեզ եղբարք գթութեամբքն Աստուծոյ՝ պատ-րաստել զմարմինս ձեր պատարագ կենդանի, սուրբ, հաճոյ Աստուծոյ, զխօսուն պաշտօնդ ձեր. և մի՛ կերպարանիք կերպարանօք աշխարհիս այսորիկ. այլ նորոգեցարուք ՚ի նորոգութիւն մտաց ձերոց, առ ՚ի քննել ձեզ զի՛նչ են կամքն Աստուծոյ, բարին և հաճոյն և կատարեալն„, Հռովմ. ԺԲ. 1. 2:

Ահա այսպէս մինչ սրտի մտօք փութասցեմք ծա-ռայել բարերար կամացն Աստուծոյ՝ յամենայնի հնազանդելով օրինաց և հրամանաց նորին, զորս հին և նոր կտակարանք ուսուցանեն մեզ, ա-պա և միշտ մերձաւոր լինիմք Աստուծոյ և բազ-մատեսակ շնորհաց նորին. իսկ եթէ կամապաշ-տութեամբ և մեղսասէր բնութեամբ հեռանամք յԱստուածային օրինաց և պատուիրանաց և ժըխ-տեմք զբարեխնամ կամս նորին՝ հեռանամք անշուշտ ՚ի նախախնամական շնորհաց և բարերարութեանց նորա. "Մի թէ ոչ լիցէ կարող ձեռն Տեառն

փրկել. կամ ծանրացոյց ինչ զունկն իւր՝ զի մի՛ լուիցէ: Այլ մեղքն ձեր որոշեն 'ի մէջ ձեր և 'ի մէջ Աստուծոյ. և վասն անօրէնութեանց ձերոց դարձոյց զերեսս իւր 'ի ձէնջ՝ զի մի՛ ողորմեսցի,, Եսայ. ծԹ. 1. 2:
« Եւ տաց նոցա սիրտ ճանաչել զիս՝ թէ ես եմ Տէր. և եղիցին ինձ 'ի ժողովուրդ, և ես եղէց նոցա յԱստուած. զի դարձցին առ իս յամենայն սրտէ իւրեանց,, Երեմ. ԻԴ. 7:
« Լուայց զի՞նչ խօսի Տէր Աստուած մեր, խօսեսցի զխաղաղութիւն ժողովրդեան իւրոյ առ սուրբս իւր՝ և առ այնոսիկ, որք դարձեալ են առ նա սրտիւք,, Սաղմ. ՁԴ. 9:
« Քանզի ո՛չինչ կատարումն գործեցին օրէնք, և մուտ ազնուական յուսոյն՝ որով մերձենամք առ Աստուած,, Եբր. Է. 19:
« Հնազանդեցարուք այսուհետև Աստուծոյ, և կացէք հակառակ չարախօսին, և լիցի փախստական առ 'ի ձէնջ: Մերձեցարուք առ Աստուած, և մերձեսցի առ ձեզ: Սրբեցէք զձեռս մեղաւորք, և ուղի՛ղ արարէք զսիրտ երկմիտք,, Յակ. Դ. 7. 8:
Եւ սուրբն Գրիգոր Նարեկացի գրէ 'ի դաւանն Աստուածընկալ սուրբ խաչին. « Անհասանելի հեռաւոր՝ և անընդմիջելի մերձաւոր անմահ Թագաւոր,, 'Ի Գով. Խաչ.:
Յիշեսցուք և զբան Կիւրղի հրաշալի Հայրապետին Երուսաղէմայ, որ վարդապետէ 'ի վերայ այսր բանի մարգարէին Երեմիայ. թէ՝ « Ես Աստուած մերձաւոր եմ, և ո՛չ Աստուած հեռաւոր,,. « Ոչ երբէք հեռանայ Աստուած, ասէ, Ամենակալ

Տէրն և արարիչն ամենայնի ողորմութեամբ բարերարութեամբ և նախախնամութեամբ . բայց մեք հեռանամք մեղօք և անօրէնութեամբք մերով եւսն ,, : Ըստ բում ՙՆարեկացւոյն՚ յորժամ մեղանչեմք , անհաւանեալպէս հեռանամք յԱստուծոյ . բայց յորժամ հրաժարեմք 'ի մեղաց 'ի ձեռն խոստովանութեանն և ապաշխարութեան՝ առաքինանամք . և առանց միջոցի նա լինի մերձենայ առ մեզ . զի ըստ Աստուածաբանին Դիոնեսիոսի արիսպագացւոյն մերձ Աստուած յամենեսեան էութեամբ , զօրութեամբ և ներգործութեամբ . այլ ոչ շնորհիմերձ է յամենեսեան , եթէ ոչ՝ 'ի սուրբս իւր : Ընկնելի լիցուք և հոգելից քաղցրութեան առաքելապատիւ Հայրապետին մերոյ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին . " Զի որպէս խաւար 'ի լուսոյ փախչի , այսպէս և երկրաւորքս յերկնաւորացն և յանմահից կենացն : Վասն այսր լի բարութեանց՝ զամենայն բարութեանն ջանս 'ի մեզ ունելով , փոյթ 'ի մեզ լիցուք կալ մնալ 'ի մշակութիւն հաճոյից Աստուծոյ , որ ամենեքեան լցեալ է : Նափոխեսցուք յաղտեղէ և 'ի գարշ ցանկութեանց և 'ի չարեաց , որ վշտագին սպառնալեօք է պատուհասն . և հեռացուցուք հանդերձ վերնոցն մաքուր վարուք : Լինել երախտաւոր եղբարց , մշակել զբարի առանցն 'ի փրկութիւն հոգւոց և մարմնոց . զի հրաւիրեալ և կոչեցեալ եմք յորդեգրութեան շնորհն . զի բարս բարիս անկեալ է 'ի մէջ Աստուծոյ , այլ և զիշխանական կամն . զի կամեսցուք միշտ զբարին առնել . զի հոգևոր օրէնքն հաստատեսցի 'ի սիրտս մեր , յոյս , սէր , հաւատ , առողջն հանդերձ յանձնիշխանական կամն հրեշտա-

կաց և մարդկան : Որպէս զի ժառանգորդք լեցուք փառաւորեալ կենացն , և պատուեալք յարարչէն երանութեամբքն՝ որ անձառելին է : Նա եւ ես անձ-նիշխանութեան արարածոցս երկուս դաստիարակս որպէս որդւոց , սպառնալիս և զաւետիս • երկնչել 'ի սպառնալեացն և փախչել 'ի վնասակարացն . և ցանկալ աւետաւոր բարւոյն և երթալ զհետ արդարութեան , 'ի ձեռն ճշմարիտ և սուրբ գրոց խրատուց իրաւանց և արդարութեան հնազան-դել յաղագս բարեձևութեան : Զի վասն այսորիկ ետ զմարգարէս և զառաքեալս , զհայրապետս , և զվարդապետս ուսուցիչս , զի տեղեակ և հմուտ արասցեն զմեզ բարի կամացն Աստուծոյ , որ զա-մենայն մարդ կամի՝ զի 'ի գիտութիւն ճշմարտու-թեան եկեսցեն ,, Ի յաճախ • ճառ Է :

# ԳԼՈՒԽ Դ :

## Ստուգաբանութիւնք Աստուածային անուանց նշանակեն զգլխաւոր յատկութիւնս նորա :

33. Ա. Որպէս ընդհանրական Աստուածային անուանք տա՛ն մեզ յայտարարութիւն զԱստուածային գոյութենէն և զզօրութենէն . վասն զի ըստ քերականական առման՝ անունն է համառօտ սահման իրին նշանակելոյ . զոր օրինակ՝ ձայնս մարդ՝ է յայտարար անուն սահմանիս բանական կենդանի :

Բ. Աստուածային պաշտելի անուանք ստորոգեալք նմա 'ի սուրբ գրոց ոչ տան մեզ վերահասու լինել անքննելի էութեան նորին և անսահմանելի բնութեանն . այլ յայտնեն մեզ զամենակարող զօրութիւնն , զմարդասիրական խնամակալութիւնն , զբարերարութիւնն Աստուածային կամաց և զանսկիզբն և զանվախճան տէրութիւնն նորին . " Վասն այսորիկ պահեցայր , զի 'ի քեզ ցուցից զզօրութիւն իմ . և զի պատմեսցի անուն իմ ընդ ամենայն երկիր ,, Ելից . Թ . 16 :

" Ի մեծութեան զօրութեանց յայտնի է անուն Տեառն ,, Երեմ . Ժը . 10 :

" Լո՛ւր ինձ յակոբ , և իսրայէլ զոր ես կոչեմ . ես եմ առաջին՝ և ես եմ յաւիտեանս ,, Եսայ . Խը . 12 :

" Աներևոյթք նորա 'ի սկզբանէ աշխարհի՝ արարածովքս իմացեալ տեսանին . այսինքն է՝ մշտնջենաւորութիւն և զօրութիւն և Աստուածութիւն նորա ,, Հռոմ . Ա . 20 :

" Անիմանալի է Աստուած և անանուն , և թէ ա-

նանուն՝ միանգամայն բազմանուն ,, սուրբն Դիոն. 'ի գիրս Աստուածային անուանց :

" Նոյն ինքն Աստուածային բնութիւնն անճառելի և անձայնելի կայ մնայ՝ գերազանցելով քան զամենայն ձայնի նշանակս ,, Գրիգոր Աստուածաբան յաղագս Է :

" Այլ ոչ եթէ զանհաս բնութիւնն կարիցէ ոք ճառել. և որպէս էն՝ զայն կարիցէ ոք պատմել. զի անհաս և անբաւ և անբովանդակ է, անքննին է, անմատոյց է, անիմաց է յամենայն արարածոց. աներևոյթ 'ի տեսլենէ և մօտ առ ամենեսին, և խնամօք տեսչութեամբ և գթութեամբ շնորհաց մարդասիրութեան իւրոյ ,, Յովհաննէս :

" Բայց զարմանալի է այս. զի վասն առաւելսիրոյն իւրոյ, անանունն յանուն գայ. զի ոչ էր ոք ընդ անսկզբանն, որ կոչէր զանուն նորա. այլ ինքն վասն բարերար կամացն արարիչ արարածոց անուանի. Զի արարիչ և բարերար, լոյս և կեանք 'ի խնամս արարածոց զանուանս ունի. այլ զիւր անունն ինքն միայն գիտէ : Զի լոյս է անշիջանելի, և կենդանեաց կեանք, և հուր աննիւթ, նիւթական հրոյս արարօղ : Այլ որպէս էրն և է և կայ յաւիտեան, ինքն միայն գիտէ ,, Ն. յաճախ. ճառ Է :

" Ոչ անուամբ չափել, և ոչ յօրջորջմամբ նշանակել ,, Նարեկ. ԼԳ :

" Ահա փառք քեզ, անսահման անուն և անբովանդակելի զօրութիւն ,, անդ. ՂԶ :

" Աստուծոյ բնութիւն ոք յարարածոցս ոչ երբէք կարաց ճանաչել, ոչ զբնութիւն և ոչ զանուն նորա տիրապէս, այլ անուանեմք զնա բազմապատիկ

անուամբ բատ ներգործութեան կամացն „ [illegible] Ներս · Լամբ · ՚ի մեկն · պատ :

34. Հ. Աստուածային պէսպէս անուանք զի՞նչ տեղեկութիւն տան մեզ զներգործութեանց Աստուածային կամաց :

Պ. Բազմատեսակ Աստուածային պաշտելի անուանք, զորս յայտնեն մեզ սուրբ գիրք, ունին խորհրդաւոր նշանակութիւնս ամենակարող զօրութեան, մարդասիրական խնամակալութեան և ամենակալ տէրութեանն Աստուծոյ, այլովքն համդերձ :

Նախ՝ պարտին տեղեկրաց Աստուածային անուանն, որ առ մեզ ստուգարանի ստ էած զմեզ, այսինքն՝ ստեղծօղ ամենայնի : Ըստ այսմ․ „ Աստուած անուանն պարզական է, որ զնախախնամելն յայտ առնէ բատ փիլոնի․ և առ մեզ ստուգարանի, թէ ստ էած զմեզ․ զի որպէս պարզութեամբն յունէից ՚ի լինելութիւն էած զեղեալքս ամենայն, նոյնպէս և զխուսթեամբն միշտ խնամէ „ Խոսրով․ Անձե․ եպիսկոպոս․ ՚ի մեկն․ ժամագր :

„ Աստուածն՝ պարզութեան և նախախնամութեան է անուն․ այլ ոչ էութեան : Քանզի անգիտելի է այն մեզ․ և ՚ի վեր է քան զամենայն միտս և զնշանակ : Եւ թէ՝ նախ՝ զանունն Աստուծոյ՝ զոր զաւին մարդիկ, նմին անուանէ․ անուն սակս, ոչ բնութեանն՝ որ է պաշտելի և անհաս, այլ փառացն և ներգործութեանցն․ քանզի ստեղծիչն արարածոց գիտացեալ միայն զնա․ այսր ազդու յարդեանց իւրացն կոչեցաք զարարիչն՝ Աստուած․ այսինքն՝ ստ ածօղ զոչ էսն յէութիւն և ՚ի գոյութիւն զերկնաւորս և զերկրաւորս „ Ներսէս Լամբ․ ՚ի մեկն․ պատ :

«Օչ Աստուծոյ անունն՝ ստեղծագործութեան՝ և հացուցանելոյ է անուն,, Տէր Լուսաւորիչ. Յաճխ. Մաշտ. Գլուխ ՃԷ :

35. Ա. Եթէ դիրապանծ վսեմ անունս Աստուծոյ սեպհական է արարչին ամենայն արարածոց, ապա ընդէ՞ր ՚ի սուրբ գիրս Աստուած անուանին հրեշտակք և ոմանք ՚ի մարդկանէ :

Պ. Նոքա՝ հրեշտակք անուանին Աստուածք, զի զպաշտօն Աստուածային հրամանին կատարեն. ըստ այնմ. «Ո՞չ ապաքէն ամենեքեան հոգիք են հարկաւորք՝ որք առաքին ՚ի սպասաւորութիւն վասն այնոցիկ, որ ժառանգելոց են զփրկութիւն,, Եբր. Ա. 14 :

Աստուածային անուամբ մեծարեալ են այն երեք հրեշտակք երեւեալք նահապետին Աբրահամու առ կաղնեաւն Մամբրէի. Ծնն. ՚ի ԺԸ գլուխ :

«Եւ երեւեցաւ նմա Աստուած առ կաղնեաւն Մամբրէի, մինչդեռ նստէր առ դուրս խորանին իւրոյ ՚ի միջօրէի : Ամբարձեալ զաչս իւր ՚ի վեր և տես. և ահա արք երեք կային ՚ի վերոյ քան զնա,, Ծննդ. ԺԸ. 1. 2 :

«Եւ ձայն թեւոցն քրովբէից լսելի լինէր մինչև ՚ի սրահն արտաքին. իբրև զձայն Աստուծոյ սադայի՝ որ խօսէր,, Եզեկ. Ժ. 5 :

36. Երկրորդ՝ մարդիկ յԱստուածուստ ունելին պարգեւեալ զհաղորդութիւն ինչ իշխանութեանն Աստուծոյ. այսինքն՝ Աստուածային որդութեան և գիտութեան արդարութեանն և շնորհաց. որպէս թագաւորք դատաւորք ընտրեալք յԱստուծոյ, մարգարէք և արդարք ՚ի սուրբ գիրս կոչին Աստուածք համանունաբար, ըստ այնմ. «Թէպէտ և

իցեն անուանեալ Աստուածք՝ եթէ յերկինս, և եթէ յերկրի · որպէս և են Աստուածք բազումք, և Տեարք բազումք ,, ա · Կորնթ · ը · 5 :

“Նա ասէ Տէր ցՄովսէս · ահա ետու զքեզ Աստուած փարաւոնի ,, Ելից · է · 1 :

“ԶԱստուածս քո մի բամբասեսցես · և զիշխան ժողովրդեան քո մի հայհոյեսցես ,, Ելք · իբ · 28 :

“Աստուած եկաց ՚ի ժողովս Աստուծոց · և ՚ի մէջ նոցա դատէր զնոսա ... Ես ասացի՝ թէ Աստուածք իցէք , կամ որդիք բարձրելոյ ամենեքեան ,, Սաղմ · ձբ · 1 · 6 :

Զայսպիսի բանս յառաջ եբեր Յիսուս Քրիստոս ՚ի նախատինս կամակոր ազգին Հրէից , մինչ ընդդէմ դաւանչին նմա ուրանալով զԱստուածութիւնն և ասէին · “Դու զի դու մարդ ես , և զանձն քո Աստուած առնես ,,: Որոց պատասխանի ետ Յիսուս · “Ոչ յօրէնս ձեր գրեալ է · ես ասացի թէ Աստուածք իցէք : Իսկ եթէ զնոսա Աստուածս ասէ , առ որս բանն Աստուծոյ եղև , և չէ մարթ եղծանել զգրոյն , և այլն ,, Յովհ · ժ · 33—35 :

“Աստուածս կոչէ Աստուածաբանութիւնն զերկնայինսն և զերադոյն քան զմեզ էութիւնս · և առ ՚ի մեզ Աստուածասէրս և սրբազան արս ,, Դիոն · ՚Ի ճառս երկնային քահանայապետութեանց · գլ · ժբ :

“Նոյն փառաւորեալ Աստուածութեամբ եղաւ և ՚ի վերայ որդւոց մարդկան · և արժանի եղեն, զի կոչեցան նովաւ ... Որք անուն Աստուածութեան ՚ի մեծ պատիւ տուաւ · և ում կամեցաւ Աստուած ետ զնա : Բայց անուանք Աստուծոյ բա-

զումք են և պատուականք , որպէս և ետ զանուանս իւր Մովսէսի ,, Յովհ. ՃԺԲ. Հայրապետ. ճառ ՃԻ :

'' Անուն Աստուծոյ կայ մնայ և առ մարդոյ , զի կոչեցան ամենք Աստուածք .... կոչեցաւ մարդ՝ Աստուած , որպէս և Մովսէս 'ի վերայ փարաւոնի ,, Եփրեմ. 'ի Ծն. առաջ. գլ. ԺԵ :

'' Ձեռնօք հասանեմք յարմարաւոր մասանցդ շառաւիղօք՝ զգործնականացն անօրինել զանազանութիւն , իբր կցորդ համայնդութեամբ ամենարարչի աջոյն Աստուծոյ՝ Աստուած կոչեցար ,, Նարեկ. ԽԳ :

Յայս միտս և հոգևորուղն բան սորայն Յովհաննու ոսկեբերանին 'ի ճառ ողորմութեան 'ի վերայ բանին, թէ՝ '' Մեծ է մարդ և պատուական այր ողորմած ,, . '' Զի՞ զարմանաս , թէ՝ մեծ է մարդն ողորմած՝ զի և Աստուած եւս է . և այս վասն այնորիկ , զի Աստուածապէս բաշխէ զբարիս իւր կարօտելոց ,, :

37. Հ. Արդեօք 'ի բազմաթեւակ յանուանս Աստուծոյ է՞ այնպիսի անուն , որ պարզապէս յայտնի ծանուցանէ մեզ զանեղ էութիւնն Աստուծոյ :

Պ. Այո՛ . ահա բնական անունս Որ Էն տայ մեզ իմանալ զինքնագոյ , զմշտնջենաւոր և զանփոփոխ յաւիտենական էութիւնն Աստուծոյ . և այս իսկ է Աստուածութեանց անուն . զի ինքն յայտնեաց Մովսիսի յասելն . '' Եւ ասէ Աստուած ցՄովսէս , ես եմ Աստուած , Որ Էն . և ասէ , այսպէս ասասցես որդւոց Իսրայէլի . Որ Էն առաքեաց զիս առ ձեզ ,, Ելից . Գ . 14 :

'' Եղևալ նմա 'ի քարէ լերինն՝ բոցանշան բորբոքեալ մորենւոյն ծանօթս տուեալ Մովսէսի 'ի Հայրենեաց անուն և գէական անուն իւր ճշմարտեալ

տուաքել զնա յԵգիպտոս ,, Մատթ. Բ.

" Նա բարերարն և հաստիչն՝ Աստուած էր՝ և է, Նա անսկիզբն յերկնում փառօք, և մշտնջենաւոր անփոփոխման առ խնամս արարածոց։ Նա ճշմարտութիւն էր՝ և է. յէութեանն իւրում անփոփոխ, և հաստատութիւն արարածոց։ Անհաս իմաստութեան իրաւունք էր՝ և է. յիւրում անճառելի նախախնամութեանն առ արարածս ամենայն, կենարար ամենագիտ ամենաշահ խրատիւք։ Անվրէպ ամենաշահ գիտութիւն էր՝ և է. յիւրում անբաւութեանն առ լուսաւորութիւն արարածոց։ Անփոփոխ հաւատարմութեամբ էր՝ և է. յաւէրժ փրկական խորհրդով յաղագս մարդկան, առ մերձաւորութիւն հաղորդութեան կենդանական սիրով ,, Ի յաճախ. ծառ Ը։

" Նա էակս մեզ քարոզէ.
զոր էնն ուսաք 'ի Մովսէսէ.
թէ Աստուած էր 'ի սկզբանէ.
և չէ եղեալ 'ի յումեքէ ,, Ներս. շնորհ. 'ի Յիսուս որդի։

Սակայն զանունս Ոչէն այժմ Եբրայեցիք համարեալ են անվերծանելի և անթարգմանելի, և 'ի տեղի սորին ընթեռնուն ադոնայ՝ որ նշանակէ Տէր։ Ըստ այսմ զայս բան մարգարէութեանն Երեմիայ՝ եթէ, "Ես Տէր Աստուած. այս է անուն իմ՝ զփառս իմ այլում ոչ տաց ,, Իսրայէլացիք ընթեռնուն այսպէս. Ես Եհովա. այս է անուն իմ. զփառս իմ այլում ոչ տաց։

38. Հ. Յի՞նչ միտս բարեբանեմք զԱստուած, անուամբս Տէր ամենակալ։

Պ. Խոստովանիմք և հաւատամք՝ եթէ Աստուած է ամենակալ Տէր. վասն զի ընդ ամենակարող իշխանութեամբ և զօրութեամբ իւրով ունի զամենայն

արարածս զերկնաւորս և զերկրաւորս , խնամէ և պաշտպանէ զամենեսեան և ամենեցուն հատուցանէ ըստ գործոց իւրեանց :

" Ամենակալ մեծ անուն Տէր . աչք քո բաց են յամենայն ճանապարհս որդւոց մարդկան՝ տալ իւրաքանչիւր ըստ ճանապարհի իւրում և ըստ պտղոյ գնացից իւրոց ,, Երեմ . լբ . 19 :

" Տէր ամենակալ ,, . յաղօթս Մանասէի :

" Ամենակալ ասի Աստուած վասն գոլոյն նորա ամենից ամենակալական հաստատումն և շարունակող և պարունակող զօրէս ,, Դիոնես . ՚ի գիրս Աստուածային անուանց . ժ . գլ :

" Ի յանհամեմատ ամենակալ սուրբ երրորդութեան և յանսկզբն էութեան միանձնաւորութենէն հաստատեցան ամենայն արարածք երևելիք և աներևոյթք : Երկինք և երկիր և ամենայն որ ՚ի նոսա , ՚ի միոյ արարչութենէն արարան ամենայն զօրութիւնք , ամենալոյս լուսովն և կենդանարար Տէրամբն . զի լի են ամենայն արարածք փառօք նորա : Որ ամենիմաստ և ամենագէտ և ամենատես բարերար կամօք իւրովք խնամէ զարարածս . զոր յոչինչէ և ՚ի չգոյէ գոյացոյց , զհոգևորս և զշնչաւորս՝ և զանշունչս ,, Դ . յաճախ . Տաղ Է :

" Ամենակալն այն է՝ որ ամենայնի իշխան է ,, Կիւրեղ . ՚ի կոչ . ընծայ . գլ . Է . 3 :

" Ամենակալ բարերար մարդասէր Աստուած բոլորից . յօրինող երևութից և աներևութից ,, . և թէ՝

" Ամենակալ ինքնիշխանութիւն բոլոր էականութեան ,, Նարեկ . լգ . ծէ :

" Ոչ վայրաբար և զամենակալն յաւելու . այլ զի զմտաւ ածցուք , թէ նոյն տէր է ամենեցուն . և բաւականաւ ամենեսեան , և զամենայնուրն ընդ իւրով իշ-

խնամութեամբ ,, Խոստով․ անչն․ Նշղ․ ՚ի մէջ․ ժամագ․ :
"Ամենակալ է Հոգին սուրբ · վասն զի ընդ Հօր և ընդ Որդւոյ իշխէ երկնաւորաց և երկրաւորաց · և կալեալ ունի զոստ ՚ի ներքոյ իւրոյ զօրութեան ,, Ներս․ Լամբ․ ՚ի մեկն․ պատարագին :

39․ Հ․ Երրեակ զանազան անուանք Աստուծոյ տա՞ն մեզ զգիտակս ծանօթութեան զԱստուծոյ և զԱստուածայնոց :

Պ․ Այո՛ · Աստուածային անուանք ուրոյն ուրոյն յայտնեն մեզ զզանազան խնամատու մարդասիրութիւն, զարարչութիւն և զքաւիչ կատարելութիւն Աստուծոյ · վասն որոյ գրէ սուրբն Դիոնեսիոս · "Զբազում անուանս ինքնին Աստուած յաղագս իւր սրբազան առաքելովքն աւանդեաց ,, ՚ի գիրս Աստուածային անուանց · գլ․ ա :
Զառաջին անձն միանական սուրբ երրորդութեան Հայրական անուամբ փառաւորելով խոստովանիմք · վասն զի է Հայր բնականաբար Միածնի սիրելի որդւոյն իւրոյ ·
"Դա է որդի իմ սիրելի, ընդ որ ես հաճեցայ, դմա լուարուք ,, Մատթ․ Գ․ 17․ ԺԷ․ 5 : Մարկ․ Ա․ 11․ Թ․ 6 : Ղուկ․ Գ․ 22․ Թ․ 35 :
"Գոհանամ զքեն Հայր՝ Տէր երկնի և երկրի · զի ծածկեցեր զայս յիմաստնոց և ՚ի գիտնոց, և յայտնեցեր տղայոց : Այո՛ Հայր · զի այսպէս հաճոյ եղև առաջի քո : Ամենայն ինչ տուաւ ինձ ՚ի Հօրէ իմմէ ,, Մատթ․ ԺԱ․ 25—27 :
"Նա մեք տեսաք և վկայեմք, զի Հայր առաքեաց զՈրդին իւր փրկիչ աշխարհի : Որ ոք խոստովանեսցի՝ թէ Յիսուս է որդի Աստուծոյ, Աստուած ՚ի նմա բնակէ՝ և նա յԱստուած ,, Ա․ Յովհ․ Դ․ 14․ 15 :
"Օրհնեալ է Աստուած և Հայր Տեառն մերոյ

Յիսուսի Քրիստոսի· հայր գթութեանց, և Աստուած ամենայն մխիթարութեան,, Բ· ԿՈՐՆԹ· Ա· 3:

“ Հայր չծնեալ, այլ ծնօղ է· և որդի չծնօղ, և ծնունդ ,, ՃՆՓՈՒՆ :

“ Հայր է բնութեամբ մեծին որդւոյն իւրոյ · որ 'ի կենաց կեանք , և 'ի լուսոյ լոյս , և 'ի բարւոյ բարի ,, 'Ի ՅԱՃԱԽ · ՃԱՌ Է :

“ Որդի հօր նման ծնողին իւրոյ · կեանք 'ի կենաց ծնեալ · և լոյս 'ի լուսոյ ,, ԵԶՆԻԿ 'Ի ԿՈՂ-ԲՆԾայ· ԳԼ· Ը :

“ Բայց զի որդի՛ ասի որդին ,
ոչ մարմնական և ախտային ·
իբրու կարծեն կոյրքն մտօք ·
հաւանականք ընդ Սաբելին :
Որք բան ասեն ընդ Յովհաննու ·
և յանուանէ փախչին յորդւոյ ·
ոչ գիտելով յիմարքն հոգւով ·
թէ չէ օտար բանն 'ի յորդւոյ :
Զի որպէս ծնունդ է բան որդի ·
նոյնպէս և հօր ծնունդ որդի ·
լոյս 'ի լուսոյ յառաջ բերումն ·
և ոչ նման ծննդեան մերում :
Բան ասացաւ անուն նորին ·
զի անմարմին է ծնունդ բանին ·
Եւ զի նմին հօր է բնութիւն ·
անուանեցաւ յորդիութիւն ·
անհաս մարդկան և հրեշտակաց ·
բանք անճառ անհաս մտաց ,, 'Ի ՅՈՎՀԱՆ· ՕՁՆԷ :

“ Որ յառաջ քան զյաւիտեանս անժամանակ ծնեալ 'ի հօրէ անճառելի բանն Աստուած: Որ 'ի հօրէ անմարմնաբար ծնեալ որդի նախ քան զյաւիտեանս,, 'Ի ՇՆՈՐՀԱԼՒՈՅ:

" Էր նա յառաջ քան զյաւիտեանս ընդ Հօր. Աստուած յԱստուծոյ ,, [illegible] Ներսէս 'ի ճառն [illegible]:

Հ. Եթէ Հայր է առաջին անձն սրբոյ Երրորդութեան, ապա յի՞նչ միտս որդին միածին Յիսուս 'ի միում անգամ աւետարանաց, եթէ " Ես և Հայր իմ մի եմք ,,. և 'ի միւսումն. " Հայր իմ մեծ է քան զիս ,,. որպէս գրէ սրբազան աւետարանիչն Յովհաննէս. Յովհ. Ժ. 30. ԺԴ. 28:

40. Պ. Այսու մտօք մեծ ասի Հայր, զի է ծնօղ Որդւոյն, ապա թէ ո՛չ ըստ էութեան և ըստ բնութեանն հաւասարակից և համագոյ է Հայր որդւոյն միածնի և Հոգւոյն սրբոյ:

" Ծնունդն առաջին, 'ի Հօրէ յառաջ քան զամենայն յաւիտեանս. մշտնջենական և յաւիտենական ծնունդ, 'ի մշտնջենական և յաւիտենական Հօրէն յառաջ քան զամենայն ,, յԱգաթանգ:

" Մշտնջենաւոր էր Հայր, և մշտնջենաւորութեամբն ծնաւ և անճառ բանիւք զորդին,, [illegible]:

" Ոչ է յառաջ Հայր քան զՈրդի.
և կամ Որդի քան զՀոգի.
այլ որպէս Հայր միշտ յաւիտեան.
և համագոյ յիւր էութեան:
ըստ պատճառին մեծ ասի Հայր.
և ոչ բնութեամբ՝ քանզի է Հայր ,, 'ի Յիսուս որդւոյ:

" Ոչ նախ Հայր՝ և ապա Որդի. որպէս յաւիտենական է Հայր, յաւիտենական է Որդի՝ ընդ յաւիտենականին Հօր. և մշտնջենակից նմին 'ի սկզբանն և կատարածին, ծագմանն արեգական նմանեալ ճառագայթից: Զի որպէս ոչ նախ

արեգակն՝ և առա լոյս , այլ 'ի միում ժամանակի
երևին երկոքեան . այնպէս և լոյս որդի , 'ի լուսոյ
հօրէ ծագեալ , և ընդ նմին մշտնջենաւորեալ ,,
Ներսէս Շնորհ. յԸնդհ. 'Ի Թուղթն առ Մանուէլ կայսր :
Նոյս և Հայր Աստուած անժամանակ յաւիտենից
41. ծնող միածնի որդւոյն իւրոյ , ըստ դաւանութեան մար-
գարէական շնորհացն և առաքելական գրութեանց և
աւետարանութեանց իւրոց , երբ ասեմք կոչէ Հայր Մեր :
" Արդ սա ինքն է Հայր քո . որ ստացաւ զքեզ ,
արար զքեզ՝ և ստեղծ զքեզ ,, Բ. Օրինաց . ԼԲ. 8.
" Որպէս գթայ հայր 'ի վերայ որդւոց իւրոց,
այնպէս գթասցի Տէր յերկիւղածս իւր ,, Սաղմ.
ՃԲ . 13 :
" Եւ արդ Տէր , հայր մեր դու ես . մեք կաւ ,
և դու ստեղծիչ մեր . և գործք ձեռաց քոց ա-
մենեքին մեք ,, Եսայ . ԿԴ . 8 :
Եւ այս Յիսուս Քրիստոս շնորհիւ իւրով որ-
դեգրեցոյց Հօր Աստուծոյ ետ մեզ համարձակու-
թիւն և վստահութիւն այսպէս հրամայելով . " Յոր-
ժամ կայցէք յաղօթս , ասասջիք . Հայր մեր՝ որ
յերկինս ես ,, Ղուկ . ԺԱ . 2 :
Եւ թէ՝ " Ելանեմ ես առ Հայրն իմ , և առ
Հայր ձեր . և Աստուածն իմ՝ և Աստուած ձեր ,,
Յովհ . Ի . 17 :
" Շնորհք ընդ ձեզ և խաղաղութիւն յԱստու-
ծոյ հօրէ մերմէ , և 'ի Տեառնէ Յիսուսէ Քրիս-
տոսէ : Օրհնեալ է Աստուած՝ և հայր Տեառն
մերոյ Յիսուսի Քրիստոսի . Հայր գթութեանց ,
և Աստուած ամենայն մխիթարութեան ,, Բ. Կորնթ.
Ա . 2 . 3 :

Զի հայր է բնութեամբ միածնին որդւոյն իւրոյ .

որ 'ի կենաց կեանք , և 'ի լուսոյ լոյս , և 'ի բարւոյ բարի ։ Նմա մեզ ըստ շնորհի հայր անուանեալ է , և լոյս՝ որ լուսաւորէ զմեզ հաւատով , և կեանք՝ որ կենագործէ զմեզ ,, 'ի Յածու. ծոց Է ։

" Ըստ աղօթից պատուիրանին ,
չմտի մտօք 'ի տուն սրտին ։
Ես ոչ յանկեան հրապարակին .
գոնէ ունիլ վարձ մարդկային ։
Նմա հեղգացայ ես յերկոսին.
առ կերպարանն և ճշմարտին ։
Ով ծուլութիւնս յաղթեաց յուսին .
երկրաւորիս և երկնային ։
Նորդ՝ գթութեամբ քո , հայր յերկին .
զոր մեզ խոստուր շնորհիւ քոյին ։
Տուր ինձ կարդալ բոլորովին ,
'ի սուրբ սրտէ զանուն նորին ,, 'ի Յեսուս ոչէ ։

" Զմոխիր անարգ մահացու՝ իբր զնշոյլ լուսոյ յարգեցեր . զհայր քո հզօր ահաւոր օրհնեալ՝ մարդասիրապէս և անարժանիս իմոյ անձին կնքեցեր ,, Նարեկ . Է ։

" Ով որպէս արարչարար ստեղծ , նոյնպէս և հայրաբար գթայ ըստ իւրում անբովանդակելի գթութեանցն . և մխիթարէ յիւրաքանչիւր պէտս զամենեսեան ըստ կրկնակի վտանգից ։ Ով թէ մարմնական հայրք գթան յորդիս , և ձեռակերտի իւրեանց խնամ տանին , ապա որչափ ևս առաւել , որ աղբիւրն է գթութեանց և շտեմարան ամենայն մխիթարութեանց , Աստուածային նախախնամութիւնն ,, Խոսրով . 'ի Մկն . Ժամագ ։

Ուրեմն պարտ է որդեգրեցելոց Տեառն Աստուծոյ՝ ըստ

առաքելոյն Պօղոսի, որ առ Եփեսացիս · Գլ · Ե · 14 · Ամենազօր շնորհիւն հոգւոյն սրբոյ գործել զբարիս և զհաճոյս հօր Աստուծոյ · և մի՛ անառակ և մոլար վարուք ժպրհել և անարգել զհայրականն զգթութեան զբարերար կամս նորին իբրև զապստամբ և կամակոր ազգն իսրայէլացւոց · զորմէ ամբաստանէ նոյն ինքն հայրն ամենակալ 'ի ձեռն մարգարէից իւրոց :

" Լո՛ւր երկին և ունկնդիր երկիր՝ զի տէր խօսեցաւ : Որդիս ծնայ և բարձրացուցի , և նոքա զիս անարգեցին : Ծանեաւ եզն զստացիչ իւր , և էշ զմսուր Տեառն իւրոյ · և իսրայէլ զիս ոչ ծանեաւ , և ժողովուրդ իմ զիս 'ի միտ ոչ էառ ,, Եսայ · Ա · 2 · 3 :

" Որդի փառաւոր առնէ զհայր , և ծառայ երկնչի 'ի Տեառնէ իւրմէ · իսկ արդ՝ եթէ հայր եմ , ո՞ւր են փառքն իմ · եթէ տէր եմ , ո՞ւր է պատիւն իմ , ասէ տէր ամենակալ ,, Մաղաք · Ա · 6 :

Ահա զայս ամենայն նկատեալ՝ և զհոգեշունչ բան սրբազան առաքելոյն Պետրոսի ընթերան առեալ երանելի սուրբ վարդապետն մեր Սարգիս շնորհալի գրէ · "Եթէ հայր կոչեմք զայն՝ որ առանց ակնառութեան դատէ ըստ իւրաքանչիւր գործոց · ապա երկիւղիւ զձերոյն պանդխտութեան ժամանակս գնասջիք ,, Ա · Պետ · Ա · 17 :

Գեղեցիկս ճառէ յորդորական բանիւս · (Արդ՝ եթէ հայր կոչէք , ասէ , զայն , որ առանց ակնառութեան դատէ ըստ իւրաքանչիւր գործոց) իբրև քրքրեաց զմիտս նոցա պատուովն և հայր կոչելովն զԱստուած , ապա երկնցուցանէ ահաւորօքն առ 'ի նշանակել բանիւ՝ եթէ ոչ միայն հայր է, այլ և արդար

դատաւոր և ըստ իւրաքանչիւր գործոց հատուցանող : Զի մի՛ երբէք 'ի հայրութեան անուն ապաստան եղեալ՝ յորսայս կայցեն անփոյթ առնելով զպատուիրանացն : Զի որպէս մեք զանձինս մեր Աստուծոյ մատուցանեմք , այնպէս և նա կերպարանէ զինքն առ մեզ : Եթէ մեք հաշտ և համբոյր՝ ընդ բարեգործութեամբ և հնազանդութեամբ երեւիմք առ հայրն՝ զհաճոյս նորա առնելով . այնպիսի ցուցանէ և նա առ մեզ զիւր սէրն . զի քան զամենայն հայր՝ գթած է և խնամակալու : Իսկ եթէ ապառում և անընդել բարս ցուցանեմք նմա, սոյնպիսի ձեւանայ և նա առ մեզ 'ի դատաստանին ըստ Աստուածային գրոց՝ որ ասէ . բարի արնէ Տէր բարեաց , և զԹիւրեալն յափշտակութեամբ տանի ընդ գործողս անօրէնութեանն ,,
Սուրբ · Շնորհ · ճ · Փեփր · ճառ Հ :

Ապաքէն տեսցուք 'ի վեր անդր , զի յորժամ փառաբանեմք զԱստուած զանազան ստորասական անուամբ , խոստովանիմք զԱստուածային բազմատեսակ սքանչելի կատարելութիւնս և զամենակարող
42 · զօրութիւնս : Նախ՝ խոստովանիմք զԱստուած Արարիչ : Վասն զի զբովանդակ զարարածս երկնի և երկրի յոչնչից արարչագործեաց ամենակարող հրամանաւ և ամենարուեստական կամօք իւրովք :

" Ի սկզբանէ արար Աստուած զերկինս և զերկիր ,,
Ծննդ · ա · 1 :

" Զամենայն՝ զոր ինչ կամեցաւ և արար Տէր յերկինս և յերկրի , 'ի ծով և յամենայն խորս ,,
Սաղմ · ճլե · 5 :

" Այսպէս ասէ Տէր Աստուած՝ որ արար զերկինս և կանգնեաց զնա , որ հաստատեաց զերկիր

և որ 'ի նմա · որ նա շունչ մարդկան որ 'ի վե-
րայ նորա · ոգի ամենեցուն , որք կոխեն զնա ,,
Եսայ · ԽԲ · 5 ։

" Ով եսդ Տէր Տէր · դու արարեր զերկինս և զեր-
կիր զօրութեամբ քով մեծաւ՝ և բազկաւ քով
բարձու ,, Երեմ · ԼԲ · 17 ։

" Աստուած՝ որ արար զաշխարհս , և զամենայն
որ 'ի նմա · նա երկնից և երկրի է Տէր ,, Գործ ·
ԺԷ · 24 ։

" Զի նովաւ հաստատեցաւ ամենայն , որ ինչ յեր-
կինս՝ և որ ինչ յերկրի , որ երևելին՝ և որ ոչն երև-
ելին ,, Կողոս · Ա · 16 ։

" Տէր Աստուած , որ նա միայն ինքնութեամբ ·
և յառաջ քան զնա չիք այլ ոք այլ արարիչ ամե-
նայնի , որ երևի՝ և որ ոչն երևի ։ Բայց որդին
միածին՝ որ 'ի հօրէ ծնեալ · և հոգի նորուն՝ որ
'ի նորին յէութենէ · որով եղև աշխարհս 'ի սկզբ-
բանց ,, յԱփոլոնգեղոս ։

" Տէր իմ տէր , տուիչ պարգևաց · ինքնաբուն
բարի , ամենից տիրող հաւասարապէս · միայն ա-
րարիչ զընաւս յոչէից ,, Նուբէէ · Է ։

43· Երկրորդ՝ Աստուած է ճշմարիտ · զի զոր ինչ մար-
դասիրական խնամօք խոստանայ , կատարէ անվրէպ-
վան որոյ ո՛չ միայն է ճշմարիտ ապացուցանէր , այլև
գերազանցաբար՝ ճշմարտութիւն յատկութենական ։

" Աստուած՝ որոյ ճշմարտութեամբ են գործք նո-
րա , և ամենայն ճանապարհք նորա իրաւամբք
են ,, Բ · Օրինաց · ԼԲ · 4 ։

" Արդ և ես խոստովան եղէց քեզ 'ի պատրաստու-
թիւն սաղմոսաց՝ ճշմարիտ Աստուած · սաղմոս ա-
սացից քեզ օրհնութեամբ սուրբդ իսրայելի ,,
Սաղմ · Հ · 22 ։

" Որ ընդունի զվկայութիւն նորա՝ կնքեաց , թէ Աստուած ճշմարիտ է ,, ։ և թէ՝ " Բազում ինչ ունիմ վասն ձեր խօսել և դատել . այլ որ առաքեացն զիս , ճշմարիտ է . և ես զոր լուայ 'ի նմանէ՝ զայն խօսիմ յաշխարհի ,, Յովհ . Գ . 33 . Ը . 26 ։

" Յուսով կենացն յաւիտենից , զոր խոստացաւ անսուտն Աստուած յառաջ քան զժամանակս յաւիտենից ,, Տիտոս . Ա . 2 ։

" Եւ գիտեմք՝ եթէ որդին Աստուծոյ եկն՝ և ետ մեզ միտս . զի ծանիցուք զճշմարիտն . և եմք 'ի ճշմարտին որդւոյ նորա Յիսուսի Քրիստոսի . զի նա է ճշմարիտ Աստուած՝ և կեանք յաւիտենական ,, Ա . Յովհ . Ե . 20 ։

" Աստուած յԱստուծոյ՝ լոյս 'ի լուսոյ Աստուած ճշմարիտ յԱստուծոյ ճշմարտէ ,, 'Ի Հանգանակն հաւատոյ ։

" Իսկութիւն անծին և էութիւն անսկիզբն . և մշտնջենաւորութիւն անսահման, և ճշմարտութիւն անփոփոխ ,, 'Ի յաճախ . ճառ Ա ։

44. Երրորդ՝ Աստուած է ամենագէտ . վասն զի յԱստուածային յամենահայեաց և յամենանկատ տեսութենէն , ոչինչ կարէ թագուն լինել երբէք և կամ ծածկեալ , թէ խորհուրդ իցեն սրտից մարդկան և թէ գործողութիւն բարեաց և չարեաց . զի ամենայն ինչ մերկապարանոց կայ առաջի տեսութեան նորին ։

" Ոչ եթէ որպէս տեսանիցէ մարդ , տեսանէ Աստուած . զի մարդ հայի յերեսս, և Աստուած հայի 'ի սիրտս ,, Ա . Թագ . ԺԶ . 7 ։

" Ոչ ապաքէն ինքն տեսցէ զճանապարհս իմ, և ամենայն գնացս իմ թուեսցէ ,, Յոբ . ԼԱ . 4 ։

" Որ ստեղծ առանձին զսիրտս նոցա, և 'ի միտ առնու զամենայն գործս նոցա ,, Սաղմ. ԼԲ. 15 :

" Յամենայն տեղիս աչք Տեառն դիտեն զբարիս և զչարս ,, : " Մի ասիցես՝ թէ զոր օրինակ արար նա ինձ՝ արարից նմա, և հատուցից նմա՝ որպէս զրկեաց զիս ,, Առակ. ԺԵ. 3. ԻԴ. 29 :

" Աչք Տեառն բազմապատիկ առաւել լուսաւորք են քան զարեգակն. շրջահայեցք ընդ ամենայն ճանապարհս մարդկան, և զխորս անդնդոց, և զսիրտս մարդկան նկատօղք 'ի մասունս ,, Սիրաք. ԻԳ. 28 :

" Ես Տէր քննեմ զսիրտս՝ և փորձեմ զերիկամունս, տալ իւրաքանչիւր ըստ ճանապարհաց իւրոց, և ըստ պտղոյ գործոց իւրոց ,, Երեմ. ԺԷ. 10 :

" Եւ գիտաց Յիսուս հոգի իւր՝ թէ այնպէս խորհէին 'ի սիրտս իւրեանց, և ասէ, զի՞ խորհիք զայդ 'ի սիրտս ձեր ,, Մարկ. Բ. 8 :

" Ասէ ցնա Նաթանայէլ. ուստի՞ ճանաչես զիս. պատասխանի ետ Յիսուս՝ և ասէ ցնա. մինչչև էր Փիլիպպոսի կոչեալ զքեզ՝ զի էիր 'ի ներքոյ թզենւոյն, տեսի զքեզ ,, Յովհ. Ա. 48 :

" Այժմիկ գիտեմք՝ եթէ գիտես զամենայն. և ոչինչ պիտոյ է՝ եթէ ոք հարցանիցէ զքեզ. յայսմիկ հաւատամք եթէ ելեր յԱստուծոյ ,, Յովհ. ԺԶ. 30 :

" Եւ սրտագէտն Աստուած վկայեաց նոցա, տուեալ նոցա զհոգին սուրբ՝ որպէս և մեզ ,, Գործ. ԺԵ. 8 :

" Այլ որպէս ընտրեցաք յԱստուծոյ հաւատարիմ լինել աւետարանին, նոյնպէս և խօսիմք. ոչ իբրև մարդկան հաճոյ լինել, այլ Աստուծոյ, որ քննէ զսիրտս մեր ,, Ա. Թես. Բ. 4 :

«Եւ չիք արարած աներեւոյթ յերեսաց նորա. այլ ամենայն ինչ մերկապարանոց կայ առաջի աչաց նորա՝ զորմէ մեր բանքս են» Եբր. Դ. 13:
«Աստուած՝ որ ամենայնիւ լոյս է, ամենայնիւ լուր է, ամենայնիւ տես է, ամենայնիւ բան է, ամենայնիւ զօրութիւն է, ամենայնիւ իմաստութիւն է» Իրենէոս:
«Քանզի մերկ են քեզ ծածկեալքն, եւ հրապարակեալ են աներեւոյթքն» Նուչէլ. Ե:

45. **Չորրորդ՝ Աստուած է գերագոյն կատարեալ էակ, հոգի եւ [illegible]**. որ ունի իրաւամբ զերագոյն եւ ամենակարող իշխանութիւն. վասն զի է Աստուած արարիչ եւ Տէր ամենայնի, անբաւելի եւ ամենակալ տէրութիւն, անսխալ եւ գաղտնաքննին դատողութիւն, իրաւացի եւ անվրէպ արդարութիւն, ամենազօր եւ հզօրագոյն կարողութիւն, եւ խնամոտ մարդասիրութեամբն ունի սքանչելի երկայնմտութիւն. ըստ որում ոչ երբէք առ ժամայն պատժէ եւ դատապարտէ զմոլորեալս եւ զչարագործս, զօրինազանցս եւ զմեղաւորս, այլ սպասէ ամենեցուն զզղջումն եւ զդարձ նոցա 'ի չար ճանապարհէ իւրեանց: Ահա զայս ամենայն զԱստուածային զօրութիւնս համառօտակի նկարագրէ հոգենուագ մարգարէն Դաւիթ յասելն. «Աստուած դատաւոր արդար, հզօր եւ երկայնամիտ՝ որ ոչ ածէ զբարկութիւն իւր զօրհանապազ» Սաղմ. Է. 12:
«ՅԱստուծոյ է զօրութիւն. եւ քո Տէր ողորմութիւն. եւ դու հատուցանես իւրաքանչիւր ըստ գործս նոցա» Սաղմ. ԿԱ. 14:
«Ես Տէր քննեմ զսիրտս՝ եւ փորձեմ զերիկամունս, տալ իւրաքանչիւր ըստ ճանապարհաց իւրոց, եւ ըստ պտղոց գործոց իւրոց» Երեմ. ԺԷ. 10:

“Այլ ըստ խստութեան քում, և ըստ անզեղջ սրտի, գանձես անձին քում բարկութիւն՝ յաւուր բարկութեան, և յայտնութեան արդար դատաւորութեան Աստուծոյ, որ հատուցանէ իւրաքանչիւր ըստ գործս իւրեանց” Հռովմ. Բ. 5. 6։

“Մարգարէին ասէ, արդարութիւն արդարոյն 'ի վերայ նորին եղիցի 'ի կեանս. և անօրէնութիւն անօրինին 'ի վերայ նորին եղիցի 'ի մահ, եթէ մնասցէ 'ի նմին։ Իսկ եթէ դարձցի արդարն 'ի մեղս՝ մահու մեռցի. և մեղաւորն յարդարութիւն՝ կելով կեցցէ։ Լսես զարդար դատաստանն արդարոց և մեղաւորաց 'ի Տեառնէ։ Որպէս զիարդ և կամիմք՝ փոփոխեմք զաւետիսն 'ի սպառնալիս, և զողորմանս 'ի պատուհաս” Դ. յաճախ. Տառ Է։

46. Հզօր. որ է ասել ինքնութեամբ, իսկութեամբ, հզօր և կարող ամենայնի, և ինքնատէր և ինքնակատար իշխանութիւն, զոր ինչ կամի՝ կարող է կատարել Հայր Աստուած, և զոր ինչ հաճելի է նմա՝ առնէ, և ոչ ոք է կարող խափանել զայն, զոր հզօր զօրութեամբ իւրով հրամայէ։

“Աստուած հզօր՝ իշխան” Եսայ. Թ. 6։

“Տէր Աստուած զօրութեանց ո՞ նման է քեզ. հզօր ես դու Տէր, և ճշմարտութիւն քո շուրջ է զքև” Սաղ. ՁԸ. 9։

“Արար ընդ իս մեծամեծս հզօրն, և սուրբ է անուն նորա” Ղուկ. Ա. 49։

“Արդարև մեծամեծք են և 'ի վեր քան զբան. և չէ ոք բաւական բանիւ ցուցանել զմեծութիւն շնորհացն՝ որ առ նա եղեն։ Իսկ զինչ ես ոք ունիցի այլ ինչ մեծամեծս ասել կամ շնորհի առաւելութիւն. որպէս զի յարարածոց ասա գոլով մայր

լինել անեղ բնութեան։ Որդ զի տայց, մեծամեծս տայր. վասն այնորիկ յաւել, տայց, հզօրն. այն՝ որում տկարանայ և ոչինչ, այլ որպէս կամի՝ բաւական է կատարել„ Ոսկեբ. Եփեսացւոց. ՚ի մեկն. Պօղ. թղ. Ա:

“ Զոր յիւր ժամանակին ցուցցէ երանելին՝ և միայն հզօր, Թագաւոր թագաւորաց, և Տէր տերանց. որ միայն ունի զանմահութիւն՝ բնակեալ ՚ի լոյս անմատոյց„ Ա. Տիմ. Զ. 15:

“ Խոնարհեցարուք ընդ հզօր ձեռամբն Աստուծոյ. զի զձեզ բարձրացուսցէ ՚ի ժամանակի„ Ա. Պետր. Ե. 6:

“ Հզօր ասելովն՝ թուի թէ երկեղուկս կամի առկանել և պատկառեցուցանել. եթէ ձեռն այն՝ որ հզօր է, ակամայ զձեզ կարող է հնազանդեցուցանել որպէս և կամի. սակայն անդէպ են շնորհքն Աստուծոյ, որ անձնիշխանս արար զմեզ՝ և ազատ եթող, և ՚ի կամս մեր զամենայն ապաստան արար գործել. և ոչ կամի ՚ի հարկէ հնազանդեցուցանել զմեզ, այլ զկամաւորն խնդրէ։ Որպէս զի փոխարէն ընդ վաստակոցն վարձս հատուցանիցէ„ Սուրբ. Շնորհ. ՚ի մեկն. Յակ. Ա:

“ Հզօր և ամենակարող է. վասն զի յաղթեաց մահուամբ՝ մահու, և խորտակեաց զդրունս դժոխոց. և եհան զարգելեալսն ՚ի նմանէ. որպէս իջանելովն ՚ի հնոցն զմանկունսն պարեցոյց, նոյնպէս և ՚ի դժոխս իջանելովն զմարդկային բնութիւնն ՚ի մահուանէ ՚ի կեանս վերածեաց„ Խոսրով. ՚ի մեկն. Ժամագրքէ:

47. Ներկայանանք. քանզի հայրագութ շնորհիւն ընդ եր-

կար համբերէ Հայր Աստուած և ոչ դատապար-տել փութայ զմեղաւորս, այլ կամի զդարձ և զապաշխարութեան նոցին զզջումն 'ի ձեռն բանից մարգարէից իւրոց և սրբոց առաքելոց ։

"Լուացարուք՝ սրբեցարուք· ընկեցէք զչարիս ձեր յանձանց ձերոց առաջի աչաց իմոց· դադարեցէք 'ի չարեաց ձերոց .... Եւ եկայք խօսեցարուք ընդ միմեանս՝ ասէ Տէր· և եթէ իցեն մեղք ձեր իբրև զծանծախարիթ՝ իբրև զձիւն սպիտակ արա-րից· և եթէ իցեն իբրև զորդան կարմիր՝ որպէս զասր սուրբ արարից։ Եւ եթէ ախորժեսջիք՝ և լուիցիք ինձ, զբարութիւնս երկրի կերիջիք ։ Ապա թէ ոչ կամիցիք լսել ինձ, սուր կերիցէ զձեզ· քանզի բերան Տեառն խօսեցաւ զայս,, Եսայ· Ա· 16—20։

"Ես եմ· ես եմ նոյն, որ ջնջեմ զանօրէնութիւնս քո վասն իմ· և զմեղս քո այլ ոչ ևս յիշեցից ։ Բայց քեզ յուշ լիցի՝ և ընդ միմեանս դատեսցուք· ասա դու նախ զանօրէնութիւնս քո՝ զի արդա-րասցիս ,, Եսայ· ԽԳ· 25· 26 ։

"Կենդանի եմ ես՝ ասէ ադոնայի Տէր· ոչ կամիմ զմահ ամբարշտին, որպէս զդառնալ ամբարշտին 'ի չար ճանապարհէ իւրմէ՝ և զկեալ· դառնալով դարձարուք ի ճանապարհաց ձերոց չարաց. ընդէր մեռանիք տունդ իսրայէլի ,, Եզեկ· ԼԳ· 11 ։

"Եթէ զմեծութեամբ քաղցրութեան նորա, և զներելովն և զերկայնմտութեամբն արհամարհեցես· չգիտիցես՝ զի քաղցրութիւնն Աստուծոյ զքեզ յապաշխարութիւն ածէ,,։ "Ապա եթէ կամեր Աստուած ցուցանել զբարկութիւն, և յայտնի առ-նել զզօրութիւն իւր, որ համբերեր բազում երկայն-մտութեամբ անօթոցն բարկութեան՝ պատրաստե-լոցն 'ի կորուստ,, Հռովմ· Բ· Դ· Թ· 22 ։

“Այլ վասն այնորիկ գտի զողորմութիւն․ զի նախ յիս ցուցցէ Յիսուս Քրիստոս զամենայն զերկայնմտութիւն՝ յօրինակ այնոցիկ, որ հաւատալոցն իցեն ի նա՝ ի կեանս յաւիտենից,, Ա․ Տիմ․ Ա․ 16։

“Սէր որոյ սիրելիք՝ այսոցիկ սպասեալք, փոյթ յանձին ունիջիք՝ անբիծք և անարատք գտանել նմա ի խաղաղութիւն․ և զՏեառն երկայնմտութիւնն՝ փրկութիւն համարիջիք,, Բ․ Պետ․ Գ․ 14։

“Երկայնամիտ և նիրող էր և է, քաղցրութեամբ և բարերար և անյիշաչար կամօք նորին, և ոչ զամենեսեան պատժել․ զի դարձեալ ի մեղաց՝ կեցցեն արդարութեամբն,, Ի յաճախ․ Ճառ․ Է։

“Ով դու առատատուէս քնքնեցես օրհնեալ․ որ վասն մեր մեղաւորացս երկայնամիտ անուանեցար,,։ և թէ՝ “Եթէ յամբանամք, երկայնամտես․ եթէ մեք ժխտեմք, դու առատատուէս շնորհեալ ընձեռես․ եթէ լքանիմք, տրտմիս․ եթէ արխանամք, խնդաս,,։ և այլուր “Նա արդ առ ամենայն բան՝ յամենայնի ուղիղ ես Աստուած․ իրաւամբ դատես․ արդարութեամբ կշռես․ ճշմարտութեամբ չափես․ օրհնութեամբ հնարես․ բարւոք ընթանաս․ սուրբութիւն սիրես․ յստակութիւն կամիս․ լուսաւորութիւն համբուրես․ փորձիւ յանդիմանես․ երկայնմտութեամբ քննես․ ոչ ունիս նենգութիւն՝ և ոչ գոռոզութիւն, այլ ամենևին հեզութիւն, հանդարտութիւն և ողորմութիւն,, Նարէկ․ Իբ․ Ճա․ ԿԷ։

“Նա դարձեալ՝ զԱստուծոյ ներողութիւնն առ մեզ․ զի Աստուած է․ և զի բարձրեալ է ի վերայ երկնի և երկրի․ և զի գովեալ է ի բնութենէ և ի գործոց և յերախտեաց իւրոց․ և փառաւորեալ է յամենեցունց․ և մեր արհամարհեալ զնա և զպա-

տուփրանս նորա , և նա երկայնամտէ և ներէ . և անսայ ապերախտութեան ։ Նա ՚ի դառնալն՝ զերկս տարածանէ և ընդունի խնդութեամբ ,, Խոսրով . ՚ի մեկն . ժամագրքին ։

“ Զի տեսանելով զայսքան մեղաց բազմութիւնս գործեցեալ՝ ոչ տաղտկանայ, և ոչ զերեսն ՚ի բաց դարձուցանէ . այլ տակաւին երկայնամիտ լինի ։ Նա երկայնմտութիւն ՚ի քաղցրութենէն է և ՚ի սիրոյն , և չկորուսանելն յերկայնմտութենէն, և ապաշխարութիւնն ՚ի չկորուսանելոյն ։ Զայս և ինքն իսկ ասաց արարիչն Աստուած . Ոչ կամիմ ասէ զմահ մեղաւորին , այլ դառնալ ապաշխարելն և զկեալն ,, Սարգիս Շնորհ. ՚ի մեկն. Է. Պետր. Գ. 9. Հատ Ե ։

“ Արդար ես դու Տէր՝ ուղիղ են ճանապարհք քո՝ Աստուած երկայնամիտ խնայեա յարարածս քո ։ Որ յաւիտենից ես առաւել բարձրացեալ աղաղակեմք Աստուած երկայնամիտ խնայեա յարարածս քո ,, ՚ի Շարակնոցէ ։

48. Հ. ՅԱստուածային անուանս զանի՞ այնպիսի անուն ստորոգեալ Աստուծոյ, որով յայտնեսցի մեզ բնութիւնն Աստուածային ։

Պ. Աստուածային անուանք եթէ ստորասաբար և եթէ գերազանցաբար ստորոգեալքն ոչ տան մեզ ճանաչել զԱստուածային անճառելի և անեղ բնութիւնն . այլ զքանչելի զօրութիւնն և զմարդասիրական բարերարութիւնն ։ Ուստի ըստ Գրիգորի Աստուածաբանին այսպէս ստորոգեմք , արարիչ, հզօր , բարի , սուրբ , սքանչելագործ . ևս և գերազանցաբար . ամենաբարի , ամենիմաստ , ամենասուրբ , ամենազօր , ամենակալ , ամենակարող . և այլն ։ Վասն որոյ Աստուած է ըստ էութեան և ըստ

բնութեանն անճառելի , անպատմելի , անասելի , անհասանելի , և անսահմանելի . ուստի և չկարեմք տալ Աստուծոյ տրամաբանօրէն սահման ինչ կա-կան . ըստ որում սահմանն է՝ բան բացայայտիչ բնութեան իրին : Զայս վկայեն սուրբ գիրք և երանելի սրբազան հարք :

"Ո՞վ է մարդ՝ որ գիտիցէ զխորհուրդս Աստուծոյ . կամ ո՞վ ածիցէ զմտաւ թէ զինչ կամիցի Տէր . զի խորհուրդք մահկանացուաց զանգիտօղք են . և գայթագղունք հնարագիտութիւնք մեր ,, Իմաստ . Թ . 13 :

"Ո՞չ գիտաց զմիտս Տեառն . և ո՞չ եղև նմա խոր-հրդակից՝ եթէ խելամուտ արասցէ զնա ,, Եսայ . Խ . 13 :

"Քանզի փոքր 'ի շատէ գիտեմք՝ և փոքր 'ի շա-տէ մարգարէանամք . այլ յորժամ եկեսցէ կատա-րումն , փոքր 'ի շատէն խափանեսցի ,, Ա . Կորնթ. ԺԳ . 9 :

"Նոյն ինքն Աստուածային բնութիւնն անճառե-լի և անձայնելի կայ մնայ՝ գերազանցելով քան զա-մենայն ձայնի նշանակս ,, Դիոնէսիոս Արէոպագացի. յԱնուանս . Է :

"Զի արարիչ և բարերար , լոյս և կեանք 'ի խնամս արարածոց զանուանս ունի . այլ զէր ա-նուանն ինքն միայն գիտէ : Զի լոյս է անշիջանելի , և կենդանեաց կեանք . և հուր աննիւթ , նիւթա-կան հրոյս արարօղ . այլ որպէս էրն , և է՛ և կայ յաւիտեան , ինքն միայն գիտէ ,, Դամասկ . հռա Է :

"Ողջունեմքս գիտեմք զԱստուած . այլ զէութիւն նորա՝ թէ որպէս կամ զինչ իցէ , ո՛չ ոք գիտէ . բայց միայն որ յէութենէ նորա ծնեալ է ,, Յօհ . ոսկ .

Դ. Գիր. Յովհ. Ճառ. Ժբ :

" Էութեան անուն ոչ գիտեմք Աստուծոյ . իսկ գրական անուանցն ոչ գոյ թիւ . վասն զի կոչի Տէր, և Աստուած , արարիչ, Թագաւոր , լոյս ,, Խոսրով . Դ Գլխ . Ժամագրքէ :

" Ոչ անուամբ չափել , և ոչ յորջորջմամբ նշանակել . ոչ որակութեան նմանել , և ոչ քանակութեամբ կշռեցել . ոչ օրինակաւ ձևացել , և ոչ որպիսութեամբ ծանուցել . ոչ 'ի Թերութենէ տարածել , և ոչ 'ի լրմանէ ամփոփել . ոչ ուրեք երբեք գրաւել , և ոչ 'ի անդուոջ վայրի երևել ,, Նարեկ . Լէ :

" Աստուած արարչութեան և նախախնամութեանն է անուն , այլ ոչ էութեան . քանզի անգիտելի է այն՝ և 'ի վեր քան զամենայն միտս և զնշանակս ,, Նեբր . Լամբ . Դ Գլխ . Պատարագ . Դ Համձանոյն Հատուածոյ :

" Այս և զնորին գեղոյ նման
" յիւրն ցուցցէ տիպ տիրական .
" այլ 'ի բնութիւնն անտանելի
" և ոչ աղօտ միտք ձգի :
" Ոչ մարդկային մաքրագունից
" ոչ երկնայնոց սեռից վեհից .
" զի էթէ է գոլ հաւատամք
" բայց թէ զի՞նչ է անգիտանամք :
" 'Ի յառաջին խմաստ փութամք
" և յերկրորդէն յայտ վերջանամք:
" Որ յառաւելն նկրտին
" առ 'ի նուաղն տկարանան .
" և որք չափով վերաբերին
" զեր քան զչափն վերանան :

" յարարածոյս ծանուցաւ
" անեղծող սոցուն թէ է անրատ :
" եւ 'ի տեսլեանցն զանազան
" թէ չէ բնութիւնն այն՝ որ ցուցաւ ,, 'ի Յովհաննու Ոսկէ :

49. Հ. Ապաքէն Աստուած անբովանդակելի անպարունակելի անպարփակելի եւ անվայրափակ մեծութիւն է. ապա զիա՞րդ սուրբ գիրք վկայեն եւ հաստատութեամբ աւանդեն, թէ՝ 'ի սուրբս եւ 'ի հաճելիս բարերար կամաց իւրոց բնակէ՝ բովանդակի եւ պարագրի :

Պ. Թէպէտ Աստուած է բնութեամբ եւ էութեամբ անպարագրելի անբովանդակելի եւ անվայրափակ. ըստ այսմ. " Ոչ ընդ վայրօք փակեալ, այլ վայրացն ինքն է արարիչ. ինքն է ամենայնի, եւ ինքն ոչ յումեքէ փակի ,, Աթանասի 'ի Ճառ. ընդ. Գլ. Է :

" Աստուած է արարիչ եւ անուանք . . . երկինք ամենայնիւ, աշխարհ ամենայնիւ, 'ի վեր ունել (զԱստուած) ոչ բաւեն. ինքն պատեալ զամենայնիւ, 'ի ներքոյ ամենայնի. 'ի վերոյ ամենայնի. արտաքոյ ամենայնի. եւ ամենայն 'ի նմանէ. եւ ամենայն 'ի նա ,, յԱթանասէ :

" Անպարագիր եւ անվայրափակ, Հայր Որդի եւ Հոգի ,, Ներսէս. ճառ. 'ի Ներբողն առաքելոց :

" Որ յարարածոց ես անբովանդակելի ,, 'ի Շարակնոցէ :

" Անսկիզբն է Աստուած. անճառ եւ անհասական. որ ոչ տեղեաց սահմանի. եւ ոչ վայրօք բովանդակի ,, Աւետիքեանու. ճառ ա. 'ի բանս Հաւատոյ:

Այս բանք երանելի հարց սրբոց հաստատեցին, եւթէ Աստուած է՝ անպարագրելի եւ անբովանդակելի

իսկութեամբ, բնութեամբ և էութեամբ. բայց թէ ուր յայտնին զօրութիւնն, փառացն և շնորհացն նորին ներգործութիւնք՝ անդանօր է Աստուած սքանչելապէս, յայտ առնեն հետևեալ վկայութիւնքս.

“Այսպէս ասէ տէր. երկինք աթոռ իմ են՝ և երկիր պատուանդան ոտից իմոց. ո՞րպիսի տուն շինեսջիք ինձ, ասէ Տէր. կամ ո՞րպիսի ինչ իցէ այն տեղի հանգստեան իմոյ: Զի զայս ամենայն ձեռն իմ արար, և իմ է ամենայն՝ ասէ Տէր. և յո հանգեայց, թէ ոչ ՚ի հեզս և ՚ի խոնարհս՝ և որ դողայ ՚ի բանից իմոց,, Եսայ. կզ. 1. 2:

“Դու ՚ի սուրբս բնակեալ ես, և գովեալդ Իսրայէլի,, Սաղմ. իա. 4:

“Աստուած մերձաւոր եմ ես՝ ասէ Տէր, և ոչ Աստուած հեռաւոր: Եթէ թաքիցէ մարդ ՚ի թագստեան, և ես ոչ տեսից զնա՝ ասէ Տէր. մի՞թէ զերկինս և զերկիր ես ոչ լնուցում ասէ Տէր,, Երեմ. իգ. 23. 24.

“Եթէ ոք սիրէ զիս՝ զբանն իմ պահեսցէ, և հայր իմ սիրեսցէ զնա. և առ նա եկեսցուք՝ և օթևանս առ նմա արասցուք,, Յովհ. ժդ. 23:

“Որ ոք խոստովանեսցի՝ եթէ Յիսուս է որդի Աստուծոյ, Աստուած ՚ի նմա բնակէ՝ և նա յԱստուած: Եւ մեք հաւատացաք, և ծանեաք զսէրն Աստուծոյ՝ զոր ունի առ մեզ: Աստուած սէր է. և որ կայ ՚ի սէրն՝ բնակեալ է յԱստուած, և Աստուած ՚ի նմա բնակէ,, Ա. Յովհ. Դ. 15. 16:

“Շնորհ ունիմ երախտեաց բարերարութեան անսկզբն և անփոփոխ մշտնջենաւոր տէրութեան սուրբ Երրորդութեանն, որ աղբիւրն է ամենայն արարածոց երկնաւորաց և երկրաւորաց, և որ ՚ի նոսա

տարածք են ։ Եւ ապրուցանէ զամենեսեան առ հասարակ բարերար կամօք , և ամենագութ սիրոյն խնամօք ․ զի ժառանգորդս արասցէ զբանաւորս մշտնջենաւոր երանութեանց ։ Ով առողջ , սուրբ և անարատ լիցուք 'ի պատուիրանապահութեան նորին ․ անբիծ երախտեօք՝ մտերիմ սիրով և ուղիղ հաւատով լինել օթևան ամենասուրբ երրորդութեան „ Ի յաճախ․ ճառ Ժ ։

“ Ամէ է լցեալ նովաւ երկին ,
երկիր և խորք անդնդային ։
Նա և ներքոյ ամենայնի ․
և արտաքոյ արարածին ։
Խնամօղ տածօղ եղականաց ․
և 'ի յեկից անպարագայց ։
Քուզ ամենից և մերձաւոր ․
և յումեքէ ոչ հեռաւոր ։
Տեսօղ մարդկան ծածուկ սրտից ․
զխորհուրդս զբան և զգործս նոցա „ Ներսէս․ Է
Յիսուս որդի․ Ի բանն Հաւատոյ ։

“ Իսկութիւն անքննութեան ․ անմատչելի հեռաւոր , և անընդմիջելի մերձաւոր „ Նարեկ․ ԻԴ ։

“ Անսահման երանութիւն և անփոխման կենդանութիւն և ընդ Աստուծոյ թագաւորութիւն ․ Աստուծոյ անզի լինել բնակութեան՝ և տաճար հանգստեան ։ Ահաւասիկ յայտ է , թէ այնպիսի հոգին բարձր է քան զերկինս , պայծառ է քան զարեգակն , լուսաւոր է քան զաստեղս , գեղեցիկ է քան զդրախտն , երանելի է քան զհրեշտակս , հաւասար է արքայութեանն ։ Ի՞ր վասն ․ վասն զի Աստուած 'ի նմա բնակի , և նա յԱստուած ։ Տեսե՞ր զմեծութիւն շնորհին , տեսե՞ր զառաւելութիւն

մարդասիրութեանն․ և այսրէն՝ խոստովանութեան փոխարէնք, զի սրտիւն հաւատայ յարդարութիւն․ և բերանովն խոստովանի ՚ի փրկութիւն ,, Առաքե-լոյն․ ՚ի Հռմ․ ժ․ Յովհ․ դ․ 15․ համա․ է․:

50․ Բ․ Վասն էր և յի՞նչ միտս ստորագի զԱստուծոյ լինել միայն բարի․ որպէս Փրկիչն մեր Յիսուս վճռաբար ասելով․ " Չիք ոք բարի, բայց մի Աստուած ,, Ղուկ․ ԺԸ․ 19: Ո՛չ ապաքէն նոյն ինքն ևս հրամայեաց․ "Մարդ բարի՝ ՚ի բարի գանձուց սրտի իւրոյ՝ հանէ զբարիս ,, Մատթ․ ԺԲ․ 35: զի՞նչ այս հակասութիւն բանից:

Գ․ Ոչ ինչ հակասութիւն երևի ՚ի վերոգրեալ ասութիւնս աւետարանական բանիցն Յիսուսի․ այլ զանազան խորհրդական մտաւորութիւնս տայ մեզ․ նախ՝ մեծատունն այն՝ որ եկն առ Յիսուս, կամէր փորձել զնա կեղծաւորաբար և ոչ որպէս բարեմիտ ցանկացող ուսանել զճշմարտութիւն․ և երկրորդ՝ մատեաւ առ Յիսուս ոչ հաւատալով նմա իբրև որդւոյ Աստուծոյ, այլ իբրև որդւոյ մարդոյ ուսուցչի և վարդապետի հնոյ օրինաց, ուր Յիսուս ուսուցիչ էր և վարդապետ ճշմարտութեան շնորհական նոր օրինաց և Տէր Աստուած փրկիչ աշխարհի: Վասն որոյ մինչ մեծատունն ասէ․ " Վարդապետ բարի՝ զի՞նչ գործեցից, զի զկեանս յաւիտենականս ժառանգեցից ,, Ղուկ․ ԺԸ․ 18: յանդիմանեաց զնա Յիսուս յասելն․ " զի՞ ասես զիս բարի․ չիք ոք բարի, բայց մի Աստուած ,, Ղուկ․ ԺԸ․ 19: Կամէր ասել․ զի կոչես զիս վարդապետ բարի, համարելով զիս իբրև սոսկ մարդ վարդապետող հին օրինաց․ և ոչ իբրև Տէր Աստուած և վարդապետ ճշմարտութեան հին և նոր կտակարանաց, այլ պարտ էր քեզ հաւատալ, յուսալ և սիրել զնա-

չել զնա՝ որպէս և ծանեան ընտրեալ աշակերտք իմ և հաւատացեալ ժողովուրդք: "Ռաբբի, որ թարգմանեալ կոչի՝ վարդապետ. ուր են օթեւանք քո," Յովհ. Ա. 38:

"Դուք կոչէք զիս վարդապետ և Տէր, և բարւոք ասէք, քանզի եմ իսկ," Յովհ. ԺԳ. 13: այսինքն՝ միածին որդի եմ ինքնաբուն բարւոյն Հօր Աստուծոյ, ուստի բարւոք ասէք:

Ահա զայս ուղղափառ վարդապետութիւն քարոզեաց մեզ սուրբն Գրիգոր Լուսաւորիչն մեր. "Որ հայր է բնութեամբ միածին որդւոյն իւրոյ, որ 'ի կենաց կեանք, և 'ի լուսոյ լոյս, և 'ի բարւոյ բարի," Ի յաճախ. ճառ Է:

Նոյն և ուղղամիտ վարդապետութեամբ բացատրէ երանելի սուրբ վարդապետն մեր Յովհան Օձնեցի զվերագրեալ աւետարանականն բան կենարարին մերոյ. "Երկուս եդ առաջի նորա՝ կրկին ընկալաւ զդատաստանին, առաջնոյն՝ զի ասաց վարդապետ բարի, ասէ, չիք ոք բարի՝ ըստ Մարկոսի, բայց միայն Աստուած. կամ զի՝ նա իբր առ մարդ մատեաւ, և կամ առ մի ոք 'ի վարդապետաց հրէից. վասն այնորիկ և Քրիստոս իբրև զմարդ խօսի ընդ նմա, թէ՝ չիք ոք բարի. կամ թէ՝ զթիւր կարծիս նորա ուղղէ, զի զՏէր սոսկ մարդ կարծեաց, ասէ. չեմ իբր զմարդ բարի. որ զանգեալ են ընդ չարի, այլ իբրև զԱստուած բարի՝ որ անխառն է 'ի չարէ. և զի այս այսպէս է՝ յայտ 'ի բանէս է, զի ոչ ասաց թէ՝ չեմ այնպէս, այլ թէ՝ զի այնպէս բարի կարծեցեր զիս.... բայց առաջնոյն թէ՝ չիք ոք բարի, ոչ եթէ զմարդիկ զրկէ 'ի բարութեանն անուանէ, այլ խտրոց արկանէ Աստուծոյ և մարդկան բարերարութեանն," Ի ՃԳՆ. Մարկ. Գլ. ԺԷ. 17:

“ Ասէ ցնա վարդապետ և բարի ։ Իսկ Յիսուս ոչ հաճեցաւ ՚ի բանս նորա · զի իբրև ընդ սոսկ մարդոյ խօսեցաւ ընդ նմա · վասն որոյ ասէ ։ Զի՞ք զք բարի , բայց մի Աստուած · յայտնէ զԱստուած միայն բարի · ոչ եթէ զանձն իւր արտաքոյ բարւոյն փակէ , այլ զի ուսցին ցնա Աստուած բարի և ոչ մարդ միայն „ [illegible] ՚ի ԺԸն · Ղուկ · ժը · 18 · 19 ։

Ձեր որպէս գրէ սուրբն Իգնատիոս · խորոց մեծ է ՚ի մէջ Աստուածային անսահման , բնութեան և անփոփոխ բարութեանն և ՚ի մէջ մարդկային , սահմանաւոր , ստացական , և անհաստատ բարութեան . ըստ այնմ · “ Խոստովան եղերուք Տեառն զի բարի է , զի յաւիտեան է ողորմութիւն նորա „ Սաղմ · ճժէ · 1 ։

“ Ինձ մերձենալ առ Աստուած բարի է՞ և դնել առ Տէր զյոյս իմ „ Սաղմ · հէ · 28 ։

Առաջին բան սաղմոսին նշանակէ զանսահման , բնութեան և անփոփոխ բարութիւնն Աստուծոյ · իսկ երկրորդն յայտ առնէ զմարդկային ստացական և սահմանաւոր բարութիւնն ։

“ Նա որ բարին է բնութեամբ յառաջ քան զյաւիտեանս , չիք նկամուտ ինչ ՚ի կատարեալ բարերարութիւնսն , այլ կայ միայ միշտ բարի .... Ձեր չիք արատ կամ բիծ առ կատարեալ բարեբարութիւնն և քաղցրութիւնն .... զի որ նորայն է՛ խոկութեամբ բարի է „ Ի յաճախ · ճառ ճ ։

“ Տէր իմ Տէր , տուիչ պարգևաց՝ բնութեան բարի , ամենից տիրող հաւասարապէս „ Նարէկ · Ճ ։ Սուրբն Գրիգոր Նարեկացի ՚ի սրբազան առաքելոյն Յակոբայ առնու զիւր բան · քանզի “ Մի խաբիք եղբարք իմ սիրելիք , ասէ առաքեալն , զի ամենայն տուրք բարիք և ամենայն պարգևք

կատարեալք 'ի վերուստ են իջեալ առ 'ի Հօրէն լուսոյ, յորում չիք փոփոխումն, և կամ շրջելոյ ստուեր,, Յակոբ. Ա. 16. 17:

" Իբրեւ ասաց զանձառ և զանհաս պարգեացն, զոր պարգեւեաց խորոց արարածոցս, և եթէ յո՞ր վայր բարձրութեան տարեալ կացոյց զմեզ. սկսանի այսուհետև զանհետազօտելի բնութիւնն Աստուածոյ նկարագրել. և ուսուցանէ անփոփոխ զնա գոլ և անայլայլելի. յորում չիք, ասէ, փոփոխումն: Այսինքն յիւրում էութեան, բնութեան և բարձրութեան, յորում էր և է, մշտնջենաւոր 'ի նմին կայ և մնայ անփոփոխելի . . . չիք փոփոխումն և շրջելոյ ստուեր: Վասն զի լոյս են պարգեւք նորա, սեան և ճշմարիտ լոյս. և ստուերանալ ոչ ունի. որպէս զգալի լոյսս, որ չէ ճշմարիտ լոյս, այլ զիշերաւ հատանի և ամպով ծածկի. իսկ այն լոյս՝ անձառելի է և առաւել պայծառ. վասն զի բնութեամբ է՝ և ոչ ստացական: Զի ամենայն ինչ՝ որ բնութեամբ է, անհատ է և ճշմարիտ. և ամենայն ինչ՝ որ ստացական է, չէ մնացական և ճշմարիտ. թէպէտ լոյս իցէ կամ այլ ինչ 'ի մեծամեծաց կամ 'ի նուաստից. այլ ստուերական է, փոփոխական և ապականացու: Ոչ այնպէս ինչ և Աստուածայինն. այլ զոր օրինակ՝ բնութիւն նորա լոյս է անստուեր, նմանապէս և տուրք նորա բարիք, և պարգեւքն կատարեալք,, Մեկնեն ընդհ. Նար Ա. ի Թղթ. Յակոբ:

Զմարդկային բարութիւնն անհաստատութիւնն և զփոփոխութիւնն ասէր 'ի սրբազան առաքելոյն Պօղոսէ. որ նկատեալ զառաջին յառաջադիմութիւն գաղատացւոց 'ի ճշմարտութիւնն քրիստոնէական հաւատոյ և զփոխումն նոցա 'ի սուտ ժամա-

նակի 'ի ծէսս և յարարողութիւնս հրէութեան . 'ի բաց թողլով զաւետարանական ճշմարտութիւնն, որպէս յանդիմանէ զնոսա . " Բարւոք ընթանայ-իք , ո՞ կասեցոյց զձեզ ճշմարտութեանն չհաւա-նել" Գաղատ . Ե . 7 :

Նաև հրեշտակակրօն սուրբ վարդապետն մեր Գրիգոր Նարեկացի զանհաստատ բնութիւնն մարդկային յանձն իւր նկարագրեալ գրէ այսպէս . " Բպաւո-րիմ դաշն հաստատել, և ուխտակորոյս արտաքս մերժիմ : Այսօր մաքուր հոգեկիր, և վաղիւն մոլի խելագար . զօրէնսն պատուէրին լքեալ, թիւրա-դրութեան օձին հետևիմ" Նարէկ . Հա :

51 . Բ . Խոստովանիմք եթէ Աստուած ամենակալ սուրբ անուամբ փառաբանի 'ի հրեշտակաց և 'ի մարդ-կանէ . բայց և մարդիկ հոգւով գտանին այսր փա-ռաւորեալ անուամբ . ուստի զի՞նչ զանազանու-թիւն է 'ի մէջ Աստուածային բարեբանեալ սրբու-թեանն և 'ի մէջ մարդկային սուրբ կոչմանն :

Գ . Մեծ զանազանութիւն գտանեմք ընդ սուրբ գրոց բաղդատելով զԱստուածային սրբութիւնն ընդ մարդկային սրբութեան . վասն զի ըստ Գրիգորի Աստուածաբանին , սուրբ է Աստուած մեր բնու-թեամբ և իսկութեամբ . վասն որոյ է յաւիտենա-կան սրբութիւն . և միայն սուրբ . որ տայ կամա-բարաց և պաշտօնէից իւրոց զիւր սրբութեան շնորհս, ուստի 'ի յերկինս երեքսրբեան փառաւորութեամբ միայն փառաբանի 'ի հրեշտակաց՝ զոր ետես և լուսա-մարգարէն Եսայիաս :

" Տեսի զՏէր նստեալ յաթոռ բարձրութեան և վերացելոյ . և լի էր տունն փառօք : Եւ Սերովբէք կային շուրջ զնովաւ . վեց թևք միոյ՝ և վեց թևք միոյ . երկուքն ծածկէին զերեսս իւրեանց , և

երկուքն ծածկէին զոտս խորանոց՝ և երկուքն թռուցեալք · Աղաղակէին մի առ մի՝ և ասէին · սուրբ · սուրբ · սուրբ · Տէր զօրութեանց՝ լի է ամենայն երկիր փառօք նորա ,, Եսայ · Զ · 1—3 : Յայտ · Դ · 8 :

" Զի ոչ գոյ սուրբ իբրև զՏէր, և ոչ արդար՝ իբրև զԱստուած մեր · և ոչ գոյ սուրբ բաց 'ի քէն ,, Ա · Թագ · Բ · 2 :

" Սուրբ ահաւոր անուն բարձրեալ անպատում · անճառութեամբ փափագ յարախորժելի · 'ի սրբերգենիցն փառաւորողաց մէջ սրբարանեալ՝ բնակեալդ 'ի սրբում ,, Նարեկ · ՂԳ :

,, Սուրբ, սուրբ, սուրբ ես ճշմարտապէս և ամենասուրբ · և ոչ ոք պանծացի բովանդակել զքո 'ի մեզ զանբաւ բարերարութեանց զեղմունս ,, :

" Միայն սուրբ՝ միայն Տէր Յիսուս Քրիստոս 'ի փառս Աստուծոյ հօր ,, Յաղօթս և յերգս սրբոյ պատարագին :

" Սուրբ ես Տէր Աստուած մեր · հզօր և փառաւորեալ · 'ի բնութենէ ունելով զսրբութիւն և զփառաւորութիւն ,, Խորհրդ · 'ի Ժմն · Ճաշուց :

" Ոչ 'ի միում կողմանէն սուրբ է՝ և 'ի միւսմէն ոչ այնպիսի · այլ ամենևին սուրբ, ամենևին յստակ, բոլորովին արդար · բնութեամբ և էութեամբ՝ ունի զսրբութիւնն, ոչ եկամուտ և ոչ ստացական · և ամենեցուն սրբութիւն 'ի նմանէ է՝ մարդկան և հրեշտակաց ,, Մեկնիչ Ճշմր · 'ի Ծնն · Ա · Գլխ · Ա · 15 · Ճառ Զ :

52· Բայց սրբութիւն մեր և հրեշտակաց ստացական է և շնորհաց · այլ ոչ էութենական և բնական · կարեմք լինել սուրբ հնազանդելով Աստուածային բարերար կամացն և հաղորդելով անսահման կյա-

ւխտենական կամաց նորին : "Խօսեցաւ Տէր ընդ Մովսէսի՝ և ասէ. խօսեաց ընդ ժողովրդեան որդւոց Իսրայէլի՝ և ասասցես ցնոսա. սուրբք եղերուք. զի ես սուրբ եմ Տէր Աստուած ձեր .... Սրբեսջիք՝ և եղիջիք սուրբք. զի սուրբ եմ ես Տէր Աստուած ձեր որ սրբեմ զձեզ" Ղեւտաց. ԺԹ. 1. 2. 7. 8:

"Դուք արդէն իսկ սուրբ էք վասն բանին՝ զոր խօսեցայ ընդ ձեզ.... Սուրբ արա զնոսա ճշմարտութեամբ քով. զի քո բանդ ճշմարտութիւն է: Որպէս զիս առաքեցեր յաշխարհ. և ես առաքեցի զնոսա յաշխարհ: Եւ 'ի վերայ նոցա ես սուրբ առնեմ զանձն իմ. զի եղիցին և նոքա սրբեալք ճշմարտութեամբ" Յովհ. ԺԵ. 3. ԺԷ. 17—19:

"Եւ դուք՝ այնպիսիք ոմանք էիք. այլ լուացարո՛ւք. այլ սրբեցարո՛ւք. այլ արդարացարո՛ւք՝ յանուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի և 'ի հոգին Աստուծոյ մերոյ" Ա. Կորնթ. Զ. 11:

"Այլ ըստ սրբոյն որ կոչեաց զձեզ՝ և դուք սուրբք յամենայն գնացս ձեր լինիջիք: Վասն որոյ գրեալ է. "Եթէ եղերո՛ւք սուրբք զի ես սուրբ եմ" Ա. Պետր. Ա. 15. 16:

"Սիրելիք՝ այժմ որդիք Աստուծոյ եմք. և չև ևս է յայտ՝ եթէ զի՛նչ լինելոց իցեմք. գիտեմք՝ զի յորժամ նա յայտնեսցի՝ նման նմա լինելոց եմք, զի տեսանելոց եմք զնա որպէս և էն: Եւ ամենայն որ ունի զայս յոյս յանձին, սրբէ զանձն իւր, որպէս և նայն սուրբ է" Ա. Յովհ. Գ. 2:

"Սրբել 'ի յաղտոյ 'ի սրբոյն Աստուծոյ, ազատանալ և լուսաւորիլ 'ի փառս տիրական ազատութեանն, և անհպելի լինել Թշնամւոյն. և զերծանիլ 'ի մահուանէ մեղաց. և յուսով յարութեան՝

կալ մնալ անդրէն, սուրբ և անարատ . . . ։ Ո՛վ արժան է մեզ տալ զմեզ, և սիրել զարդարութիւն և զսրբութիւն և զճշմարտութիւն, որ ուրախ առնէ զարարիչն հանդերձ երկնաւոր զօրօք ,, ՚Ի յոճառ · Ճառ Է ։

՛՛ Ո՛վ եթէ նա սուրբ է՝ որպէս և էն իսկ ճշմարիտ , և դու խորշ ինչ մեղաց ունիցիս , և անփոյթ առնիցես զանձին սրբութենէ , զիարդ ունիցիս յոյս՝ շաղախեալ անձամբ զնա տեսանել ։ Ո՛վ եթէ արդար է Տէր , և զարդարութիւն սիրէ , արդ որ Թիւրն է սրտիւ և աղտեղին անձամբ , մի՛ ակնկալցի տեսանել զերեսս նորա ։ Սորին վասն ասաց · որ ունիցի զայս յոյս յանձին՝ սրբէ զանձն իւր՝ որպէս և նա սուրբ է . . . . Նա զիարդ որ կարէ նմանիլ նորա սրբութեան՝ ասիցէ որ արդեօք ։ ՚Ի բնութենէս նմանիլ՝ և ոչ որ · վասն զի նա բնութեամբ ունի զսրբութիւնն , և մեք կամօք և չարչարանօք ստանամք՝ սակս ինչ աղտեղեալ ՚ի կարեաց մարմնոյ ։ Իսկ նա՝ որ ազատն է ՚ի կրից , տեսեալ բղկամաց մերոց յօժարութիւնն ՚ի սրբութիւն, մարդասիրութեամբն հաւասար համարի իւրում սրբութեանն զմերս, և այնպէս պատկէ զմեզ ,, Սուքիաղուրն · ՚Ի Ճճռ · ա · Յոհ · Գ · 2 · Ճառ Է ։

53 · Հ · Հաւատամք եթէ Աստուած է հոգի ըստ բանից Տեառն մերոյ Յիսուսի · ՛՛ Հոգի է Աստուած , և երկրպագուաց նորա պարտ է հոգւով և ճշմարտութեամբ երկիրպագանել ,, Յովհ · Դ · 24 ։ և առ այս լուծումն տան սրբազան մեկնիչք , եթէ՝ Աստուած է անմարմին , որպէս և ոսկեբերան գրէ · ՛՛ Հոգի է Աստուած · ոչ այլ ինչ

յայտ առնէ՝ բայց եթէ անմարմին է ,, Դ ծաւ- ւէ . Դ . Իդ . Յովհ : այլ ընդէր սուրբ գիրք տան Աստուծոյ զգայարանս , որպէս զաչս , զձեռս , զոտս և այլն :

Գ. Զգայարանս տալ սուրբ գրոց Աստուածային սքանչելի ներգործութեանց այլաբանական մտօք է և ոչ նկարագրական . որպէս մարգարէն Մովսէս զամենակարող զօրութիւնն Աստուծոյ յայտնելով գոհաբանութեամբ ասէր . " Աջ քո Տէր փառաւորեալ է զօրութեամբ իւրով , և աջ քո Տէր խորտակեաց զթշնամին ,, Ելից . ԺԵ . 7 :

54. Այնպէս այլաբանութեամբ առեալ ձեռք Աստուծոյ անուանեն սուրբ գիրք զԱստուածային սէրն , զողորմութիւնն նախախնամութեան , զամենակալ և զինքնիշխան զօրութիւնն և կարօղութիւնն , ևս և զվրէժխնդրութիւնն նորին . ըստ վկայութեանցս . " Քո է բազուկ և քո է զօրութիւն , զօրասցի աջ քո և բարձր եղիցի ձեռն քո . . . . Գտի զԴաւիթ ծառայ իմ , իւղով սրբով իմով օծի զնա : Ձեռն իմ ընկալցի զնա , և բազուկ իմ զօրացուսցէ զնա : Եղիցի ձեռն քո 'ի կեցուցանել զիս , զի զպատուիրանս քո ընտրեցի ,, Սաղ . ՁԸ . 14 . 21 . 22 : ՃԺԸ . 173 :

" Զի զոր սուրբն Աստուած խորհեցաւ , ո՞վ իցէ որ զայն ցրիցէ . և զբարձրացեալ ձեռն նորա ո՞վ իցէ որ դարձուցանիցէ ,, . և թէ՝ " Զի զայս ամենայն ձեռն իմ արար , և իմ է ամենայն՝ ասէ Տէր . . . . Եւ տեսջիք և խնդասցեն սիրտք ձեր , և ոսկերք ձեր իբրև զդալարի զուարճասցին . և ծանիցի ձեռն Տեառն ,, Եսայ . ԺԴ . 27 . ԿԶ . 2 . 14 :

" Վասն այնորիկ ահաւասիկ ես ցուցից նոցա 'ի

ժամանակիս յայսմիկ զձեռն իմ, ծանուցից նոցա զզօրութիւն իմ. և գիտասցեն՝ թէ անուն իմ Տէր է ,, Երեմ. ԺԶ. 21 :

" Եւ եղև բան Տեառն առ եզեկիէլ քահանայ՝ որդի բուզեայ, յերկրին ՙՔաղդէացւոց ՚ի վերայ ՙՔոբար գետոյ. և անդ եղև ձեռն Տեառն ՚ի վերայ իմ ,,. և թէ՝ " Եւ ձգեցից զձեռն իմ ՚ի վերայ նոցա, և եդից զերկիրն յապականութիւն և՚ի սատակումն ,, Եզեկ. Ա. 3. Զ. 14 :

" Խոնարհեցարուք ընդ հզօր ձեռամբն Աստուծոյ, զի զձեզ բարձրացուսցէ ,, Ա. Պետր. Ե. 6 :

" Ընկեցէք զչարիս ձեր յանձանց ձերոց առաջի աչաց իմոց ,, Եսայ. Ա. 16 :

" Աչք Տեառն ՚ի վերայ երկիւղածաց իւրոց, որք յուսան յողորմութիւն նորա: Աչք տեառն ՚ի վերայ արդարոց, և ականջք նորա ՚ի վերայ աղօթից նոցա: Զանգործս իմ տեսին աչք քո, և ՚ի գիրս քո ամենեքեան գրեսցին ,, Սաղ. ԼԲ. 18. ԼԳ. 16. ՃԼԸ. 16 :

" Որք և զՏէրն Յիսուս սպանին և զմարգարէսն, և զմեզ հալածեցին. և Աստուծոյ յաչաց ելին ,, Ա. Թեսաղ. Բ. 15 :

" Աստուած՝ որ ամենայնիւ լոյս է, ամենայնիւ լուր է, ամենայնիւ տես է, ամենայնիւ բան է, ամենայնիւ զօրութիւն է, ամենայնիւ իմաստութիւն է ,, յԱ. Դիոն :

" Եւ թէպէտ բազում անգամ ծանուցար՝ կարկառմամբ ձեռին քո սքանչելութեան ձգել զիս առ. քեզ, ոչ հաւանեցայ ըստ մարգարէին զերծանելէ ամբաստանութեան: Իսկ զհամայնեցս թիւ նա միայն զօրէ իմանալ, որ զառ ՚ի մէնջ չէութիւնն

գրեալ՝ խիր զէութիւն գործոյ տեսանէ,, Նոյնէ. Է. ԺԱ։ “Զի թէ զանտես ուրուք 'ի նիւթական շինուածոց ինչ կամ զ վայրաց աշխարհի ոչ կարէ յայտնի առ զցոյցս տեսլեանն՝ ոչ տեսեցելոյն, եթէ ոչ՝ օրինակաւ՝ յորոց տեսլեանն իցէ նշանակ, զիա՞րդ ապա զայնմ բնութենէ՝ զորմէ ասեն առաքեալք, եթէ ոչ ոք ետես 'ի մարդկանէ, և ոչ տեսանել կարող է. անհնար էր ձևել, եթէ ոչ նիւթական ձևով՝ որ մեզ գիտելին է, տպաւորելին զգանն, աչս ասելով, և ականջս, և զայս 'ի զ զայարանաց. թէպէտ և այլաբանաբար, և ոչ՝ որպէս են, առաջեալ լինին այսոքիկ. զոր և մարգարէն յայտ առնէ ասելով. աչք նորա 'ի տնանկս հային, և արտեւանունք նորա քննեն զորդիս մարդկան.... այլ աչք Աստուծոյ ասէ զխնամն ողորմութեան, որ առ երանեալ 'ի տնանկ աղքատն հոգւով. իսկ արտեւանունք՝ զքննութիւն զդատաստանին, որ առ մեղաւորս և ամբարիշտս, առ տեսանելով զամենայն և պահելով, և անդ զատելով և հատուցանելով... Նա զի չեն այնպիսի նիւթական զգայարանք նորայն, որպէս մեր. ասէ զօրձել յայլում վայրի, մի՞թէ որ տնկեաց զունկն, ինքն ոչ լսիցէ. կամ որ ստեղծ զակն, ինքն ոչ տեսանիցէ. յայտ առնելով, թէ այլով կերպարանաւ է նորայն տեսութիւն և լսողութիւն, և այլով մերս. քանզի մեք իբրև ընդ պատուհանս տեսանեմք, և լսեմք ընդ զգայարանս, և յորժամ սոքա փակին, անտես մնամք և անլուր. իսկ նա տեսանէ միշտ և լսէ, և ամենայնիւ և զամենայն և յամենայն ժամ. զորմէ և մերն Լուսաւորիչ ասէ. թէ Աստուած ամենայնիւ լոյս է, ամենայնիւ աչս է։ Մեք զմերձակայս միայն

տեսանեմք. իսկ նա նստի 'ի Վերուստ, և հայի յան-
դունդս. և 'ի բարձունս բնակեալ, և զխոնարհս տե-
սանէ. մեր աչք զարտաքուստ մարմնոյ միայն
նկատէ, և այն՝ զանկատուց. իսկ նորայն ոչ միայն
զերևելիս, այլև զծածկեալ խորհուրդս սրտից և
զերիկամանց զամենեցունց, ըստ որում և ասէր Սա-
մուէլ, ոչ որպէս տեսանէ մարդ՝ տեսանէ Աստուած.
զի մարդ հայի յերեսս, իսկ Աստուած 'ի սիրտս.
և ոչ միայն զեղեալս, այլև զանգործս իմ տեսին
աչք քո,, Ներս. Շնորհ. 'ի Խոսքն առ փղձկս
Յովհաց Նուհանեփ :

" Մեծութիւն է Աստուածային գրոց՝ մարմնա-
կան իրօք՝ որ 'ի մեզս տեսանի, զԱստուծոյն զան-
տեսանելի և զանխմանալի զնախախնամութիւնն մեզ
'ի դէմ ածել: Նա ասէ Աստուծոյ՝ և ականջս, և
ձեռս, և ոտս, որ ոչ են առ Աստուծոյ. զի յայնպի-
սի յերևելի զգայութեանց՝ որ ինչ միանգամ մեր
է՝ անբաւ է Աստուածութիւնն. ոչ առանձնակի
կերպս կրել՝ որպէս և մեք մերով զգայութեամբք:
Զի աչօք տեսանեմք միայն՝ և ոչ լսեմք, և ական-
ջօք լսեմք՝ և ոչ տեսանեմք: Այլ Աստուած ամե-
նայնիւ լուր է, ամենայնիւ տես է,, Սարգ. Շնորհ.
Ճառ. Է. 'ի Թղթ. Ա. Պետր :

# ԳԼՈՒԽ Ն ։

## Յայտնութիւն խորհրդոյ սրբոյ Երրորդութեան և մարդեղութեան Յիսուսի Քրիստոսի ։

55. Հ. Քրիստոնէական ուղղափառ հաւատոյ ճշմարտութիւնն արդեօք յո՞ր խորհուրդս առաւել հիմնաւորեալ է ։

Պ. Քրիստոնէական ուղղափառ և ճշմարիտ հաւատք մեր հիմնաւորեալ է յԱստուածային յայս երկու սքանչելի խորհուրդս, որք են ուղղափառ դաւանութիւն հաւատոյ յամենասուրբ և միանական Երրորդութիւնն, և յուղղափառ դաւանութիւնն հաւատոյ 'ի փրկարար մարդեղութիւնն Յիսուսի ։ Ուստի և մարգարէք զայս երկու խորհուրդս նկարագրէին իբրև զհիմունս հանդերձեալ քրիստոնէական հաւատոյ ․ "Ողորմութեամբ Տեառն լի եղև երկիր, և բանիւ Տեառն երկինք հաստատեցան, և հոգւով բերանոյ նորա ամենայն զօրութիւնք նոցա,, Սաղ․ ԼԲ․ 5 ։

"Առաքեա Տէր զլոյս քո և զճշմարտութիւն քո, զի առաջնորդեսցեն ինձ 'ի լեառն սուրբ քո,, Սաղ․ ԽԲ․ 3 ։

Ահա այս բանք սաղմոսին յայտնի առաջի աչաց մերոց կացուցանեն զերկրպագելի խորհուրդ երեքանձնեայ ամենասուրբ Երրորդութեանն ։

Առ այս քարոզեաց մեզ և լուսաւորիչն մեր սուրբն Գրիգոր ․ "Եւ 'ի մարգարէից և 'ի Հայրապետաց ծանիցուք զՀայրն ամենակալ, և զորդին համազօր, և զհոգին համագործ ․ և ծանիցուք և գիտասցուք և ընտանասցուք հաճոյից արարողին ուղղափառ հաւատով,, ․ և թէ "Բանիւ Տեառն

երկինք և երկիր հաստատեցան, և հոգւով բերանոյ նորա ամենայն զօրութիւնք նոցա ,, 'Ի յաճախ. ճառ Է. ԺԶ :

"Նմին խոյ մարգարէքն յայտնէին և թաղուցանէին . յայտնէին բանիւք, և թաղուցանէին որգեամբք : Զոր և մեծն Դաւիթ ծանուցեալ 'ի Հոգւոյն յայտնութեամբ՝ զխոստովանութիւնն առաջի դնէ զերից անձանցն և զմիոյ էութեանն և զեչխանութեանն : Այսպէս գոլով բանին. "Ողորմութեամբ Տեառն լի եղև երկիր , զայս հօր դնեմք: Եւ բանիւ Տեառն երկինք հաստատեցան , զայս աներկուանալի որդւոյ դնեմք : Եւ հոգւով բերանոյ նորա ամենայն զօրութիւնք նոցա: Տեսեր, եթէ զերիսդ զանազանեաց զդէմսն և'ի միոյ գործոյ զմի Տէրութիւն զեկոյց ,, Սարգ. Շնորհ. ճառ Ժ. Ա. Պետր. Ա. 21 :

Մարգարէն Դաւիթ և զփրկագործ խորհուրդ մարդեղութեանն բանին Աստուծոյ՝ մարգարէական հոգւով տեսեալ, 'ի դիմաց մարդկայնոյ բնութեան հայցէր զյայտնութիւն նորին 'ի Հօրէն ամենակալէ . "Ցոյց մեզ Տէր զողորմութիւնս քո , և զփրկութիւնս քո տուր մեզ ,, Զշնորհս այս մարդեղութեան Յիսուսի անուանէ Պօղոս խորհուրդ ծածկեալ 'ի հին օրէնս և յայտնեալ 'ի նորումս . "Զխորհուրդ՝ որ ծածկեալն էր 'ի յաւիտեանցն և յազգաց , որ այժմ յայտնեցաւ սրբոց իւրոց : Որոց կամեցաւ Աստուած ցուցանել, թէ զի՞նչ է մեծութիւնն փառաց խորհրդոյ նորա 'ի հեթանոսս : որ է Քրիստոս 'ի ձեզ, յոյսն փառաց ,, Կողոս. Ա. 26. 27 :

"Որ յաղագս մեր մարդկան և վասն մերոյ փըրկութեան իջեալ յերկնից՝ մարմնացաւ, մարդացաւ,

ծնաւ կատարելապէս 'ի Մարիամայ սրբոյ կուսէն հոգւովն սրբով,, 'ի Հանգանակն հաւատոյ :

"Տեառնն՞ որք էլին 'ի սկզբանէ աշխարհի, այսօր ծնաւ, առէին, պատմեն զծնելոյն առ 'ի նշանակելոյ զմարգարէականն, թէ ո՞ պատմէ 'ի մէնջ մարդկան զծնեալ իւր : Եւ տուեալ նշան զծնելոյն, թէ գտանիցէք մանուկ պատեալ 'ի խանձարուրս և եդեալ 'ի մսուր. այն իսկ էր յաւիտենական խորհուրդն ծածկեալ առ Աստուծոյ՝ որ յայտնեցաւ երկնաւորաց իշխանացն,, Սուրբն Գրիգ. Նար. Մեղեդի :

"Խորհուրդն անճառ, ծածկեալն յազգաց և յաւիտենից, յայտնեցաւ իջմամբ հրեշտակապետին այսօր առ կոյսն Մարիամ,, 'ի Շարակ. 'ի կանոն աւետեաց :

56. Հ. Զիա՞րդ լինէր յայտնութիւնն սքանչելի խորհրդոյ ամենասուրբ Երրորդութեանն 'ի հնումն. և ո՞րպէս 'ի նոր շնորհական օրէնս :

Պ. 'Ի հին օրէնս ընդ աղօտ և իբրև ընդ քողով ծածկեալ լինէր յայտնութիւնն ամենասուրբ Երրորդութեանն (1). իսկ 'ի նորումս եղև բացայայտ տեսլեամբ և անպատրուակ քարոզեալ. (2):

(1.) "Եւ ասաց Աստուած. արասցուք մարդ ըստ պատկերի մերում և ըստ նմանութեան,,: "Եւ ասաց Տէր Աստուած, ոչ է բարւոք մարդոյդ միայն լինել, արասցուք դմա օգնական ըստ դմա,, Ծննդ. Ա. 26. Բ. 18.

"Տէր Աստուած, որ նա միայն ինքնութեամբ. և յառաջ քան զնա չէք այլ ոք այլ արարիչ ամենայնի, որ երեւի, և որ ո՛չն երեւի ։ Բայց որդին միածին՝ որ 'ի հօրէ ծնեալ. և հոգի նորուն՝ որ 'ի նորին յէութենէ. որով եղև աշխարհս 'ի

ակերտանց ,, : Եւ թէ, “ Հօր արարչի խորհուրդ ՚ի
մէջ եղեալ ընդ արարչակից որդւոյ և հոգւոյ ,
իբրև գլխորհուրդն առաջին ՚ի նախաստեղծ մար-
դոյն . զի որպէս անդն ասաց , թէ արասցուք մարդ
՚ի նմանութիւն պատկերի կերպարանաց մերոց , և
անդէն ստեղծեալ զԱդամ ՚ի կենդանութիւն ՚ի
չգոյէն հաստատեցաւ : Նոյն օրինակ և աստ ասա-
ցեալ Հօր առ Որդին և առ Հոգին . ասէ՝ ե-
կայք արասցուք Ադամայ օգնական նման նմա՝ ըստ
նմանութեան պատկերի իւրոյ և կերպարանաց ,,
յԱփոխանգեղոյ էջն 96 :

“ Այն որ ասաց թէ՛ արասցուք մարդ ըստ՝ նմա-
նութեան պատկերի . ապաքէն յայտ է , թէ ընդ
ումեք՝ որ առ նմա կայր , ասէ . այլ յայտնագոյն
և սաղմոսարանն ցուցանէ,, Աւգուստ. ՚ի Քաղ. Աստ.
գլ. ԺԶ :

“ Որն (մարգարէն Մովսէս) ասէր , եթէ ինձ ասա-
ցաւ պատմել յերկիր՝ եթէ Տէր ասաց միածնի իւ-
րոյ . արասցուք մարդ ըստ պատկերի մերում ,,
Նիւսէն . ՚ի Ճառն Եարեկանութեան :

“ Արասցուք ըստ մերում պատկերի՝ ասաց , ՚ի ձեռն
յոգնական նշանակին զսուրբ Երրորդութիւնն ծա-
նոյց ,, Գրիգ . Նիւս . ՚ի Մարդակազմութեան :

“ Եւ երևեցաւ նմա Աստուած առ կաղնեաւն
մամբրէի , մինչդեռ նստէր առ դուրս խորանին իւ-
րոյ ՚ի միջօրէի : Ամբարձեալ զաչս իւր և ետես ,
և ահա արք երեք կային ՚ի վերոյ քան զնա . և
իբրև ետես՝ ընթացաւ ընդ առաջ նոցա ՚ի դրանէ
խորանին իւրոյ . և երկիր եպագ ՚ի վերայ երկրի ,
և ասէ: Տէր՝ եթէ գտի շնորհս առաջի քո՝ մի զան-
ցաներ ՚ի ծառայէ քումմէ,, Ծննդ . ԺԸ . 1—3 :

“ Իբրև լցան նորա ամք իննսուն և ինն , երևեալ Աստուած Աբրահամու , և ուխտ եդեալ խօսէր և վերանայր . դարձեալ՝ հրեշտակօք երևեալ ՚ի Մամբրէ՝ զպարգևական զաւակն խոստացաւ ,, Սուրբն Գրիգ . Նար . յԱղօթան :

“ Նա երիս՝ զի երիս եսես, խնդաց զերրորդական խորհուրդն , որում պատարագս մատուցանէր . քան թէ ուրոյն երեք են . առաջինն չէ ծնեալ յումեքէ . երկրորդն ծնունդ է առաջնոյն . երրորդն ոչ երկրորդին , այլ առաջնոյն է եղումն և բղխումն ,, Վարդան Վարդապետ . ՚ի Ծնն . Աբրահամու :

“ Որ կոչեցեր ազդմամբ ձայնին
զնահապետ հաւատոց ազգին :
զԱբրահամն այն առաջին
պանդխտանալ յօտար երկրին.
Երևեցար ՚ի Մամբրէին ,
մինչդեռ նստէր նա ընդ կաղնին :
Կերակրեցար որպէս մարմին
յորժամ ընդունելի էր անմարմին :
և խոստացար նմա զորդին ,
որով որդիք մարդկան օրհնին ,, ՚ի Յիսուս որդի :

“ Նա ասէ ցնա , Ես եմ Աստուած հօր քո, Աստուած Աբրահամու. Աստուած Իսահակայ. և Աստուած Յակոբայ . և դարձոյց Մովսէս զերեսս իւր, քանզի երկնչէր հայել առաջի Տեառն ,, Ելից . Գ . 6: Մատթ . ԻԲ . 32: Մարկ . ԺԲ . 26: Ղուկ . Ի . 37:

“ Եւ զի՞նչ ասաց Ես եմ Աստուած Աբրահամու, Իսահակայ և Յակոբայ . այլ թէ Ես եմ Աստուած Աբրահամու , Աստուած Իսահակայ և Աստուած Յակոբայ . զի յայտնէ զխորհուրդ Երրորդութեան, ցուցեալ թէ անուանքն երեքեան զհետ անձանցն ,, Վարդան Վարդապետ . ՚ի Ծնն . Աբրահամու :

“Դարձեալ՝ ճանաչի զԱստուած անունն յիշելով զերիս անձնաւորութիւնն Հօր և Որդւոյ և Սրբոյ Հոգւոյն ծանուցանէ։ Իսկ ասելովն, թէ՝ չէ Աստուած՝ Աստուած մեռելոց, այլ կենդանեաց. ՚ի չԱստուածոյն զմի բնութիւն որոշէ՝ որք մեռելոցն հոգւով Աստուած կոչեցան. այլ նա մի Աստուածութիւն յերիս դէմս բաժանեալ՝ կենդանեաց է Աստուած, արդար հոգւոց ստեղծիչ և նախախնամիչ„ Յովհ. Ծործոր. ՚ի Մկն. Մատթ. ԻԲ. 32։

“Երեք անգամ Աստուած ասելն՝ զառանձնաւորութիւն Երրորդութեանն նշանակէ. իսկ յետոյ միանգամ ասելն՝ Աստուած, զմի էութիւնն. զի այլ և այլ են յատկութեամբ. իսկ էութեամբ և բնութեամբ՝ մի։ Զի առանձին է Հօր՝ անծին և անսկիզբն գոլն. և ՚ի Որդւոյ՝ ծնունդ և սկսանիլն ՚ի Հօրէ անժամանակաբար, և Հոգւոյն Սրբոյ՝ բղխումն և ելումն ՚ի Հօրէ անհատաբար և անժամանակապէս։ Եւ այսպէս առանձնաւորութեամբ բաժանեալ գոլով, իսկ զօրծովք և Աստուածութեամբ՝ միացեալ. զի զոր ինչ գործէ Հայր, զնոյն գործեն և Որդին և Հոգին սուրբ„ Ճռն Նարեկց. ՚ի Մկն. Սաղմ. ԿԶ. 27։

“Եւ եղև յամին յորում մեռաւ ոզիա արքայ, տեսի զՏէր նստեալ յաթոռ բարձրութեանն և վերացելոյ. և լի էր տունն փառօք։ Եւ սերովբէք կային շուրջ զնովաւ. վեց թևք միոյ՝ և վեց թևք միոյ. երկուքն ծածկէին զերեսս իւրեանց, և երկուքն ծածկէին զոտս իւրեանց, և երկուքն թռուցեալք։ Աղաղակէին մի առ մի՝ և ասէին. սուրբ. սուրբ. սուրբ. Տէր զօրութեանց՝ լի է ամենայն երկիր փառօք նորա։ Եսայ. Զ. 1—3։

Զայս բան այսպէս մեկնաբանէ երանաշնորհ վարդապետն մեր Գէորգ մեկնիչ համաձայն Յոհան Ոսկեբերանի, Կիւրղի և Եփրեմի։

"Եւ զի՞նչ նշանակեն թեւքն, զի ոչ թեւք իցեն անմարմին զօրութեանցն, այլ զի թանձր կերպարանօք՝ ծածուկս ինչ յայտնեսցէ մեզ մարգարէն, զի թեւքն զհամբառնալն և զերագութեանցն յայտնէ մեզ. որպէս Գաբրիէլ թռուցեալ իջեալ յերկնից երևէր Դանիէլի.... Եւ ասէին. սուրբ. սուրբ. սուրբ. Տէր զօրութեանց, և այս օրհնութիւն ոչ միայն փառաբանութիւն, այլ և մարգարէութիւն բարութեանց՝ որ լինելոց էր աշխարհի, և Աստուածպաշտութեան կրօնիցս հաստատութիւն: Ոչ ասացին միանգամ սուրբ և լռեցին, կամ երկիցս և դադարեցին, կամ երիցս, և այլ յաւելին, այլ երիցս սուրբ և մի Տէր. զի Երրորդութեան մատուցանէին փառաբանութիւն. երիցս սուրբ ասացին, և 'ի մի Տէր ժողովեցին, զի յերիս դէմս մի երևի Աստուածութիւն.... և այն մարգարէութիւն էր հանդերձելոցն. զի փառօքն Աստուծոյ լնլոց էին տիեզերք, այսինքն՝ գիտութեամբ նորա, զի յորժամ այս բանք ճառեցան, լի էր երկիր ամբարշտութեամբ. իսկ յորժամ մարդ եղև միածինն, լցաւ ամենայն երկիր փառօք նորա. զի նմա կրկնի ամենայն ծունր,,:

(2) "Եւ իբրև մկրտեցաւ Յիսուս, ել վաղվաղակի 'ի ջրոյ անտի. և ահա բացան նմա երկինք, և ետես զհոգին Աստուծոյ՝ զի իջանէր իբրև զաղաւնի և գայր 'ի վերայ նորա: Եւ ահա ձայն յերկնից՝ որ ասէր. դա է որդի իմ սիրելի, ընդ որ հաճեցայ,, Մատթ. Գ. 16. 17:

"Եւ այլակերպեցաւ առաջի նոցա. և լուսաւորեցան երեսք նորա իբրև զարեգակն, և հանդերձք նորա իբրև զլոյս.... Եւ մինչդեռ նա խօսէր, ահա ամպ լուսաւոր՝ հովանի եղև 'ի վերայ նոցա. ձայն եղև

յամպոյն՝ և ասէ․ դա է որդի իմ սիրելի ընդ որ հա-
ճեցայ, դմա լուարուք։ Իբրև լուան աշակերտքն,
անկան 'ի վերայ երեսաց իւրեանց՝ և երկեան յոյժ,,
Մատթ․ ԺԷ․ 2․ 5․ 6։

"Գնացէք այսուհետև՝ աշակերտեցէք զամենայն հե-
թանոսս․ մկրտեցէք զնոսա յանուն Հօր և Որդւոյ
և Հոգւոյն սրբոյ,, Մատթ․ ԻԸ․ 19։

"Նա 'ի մկրտելն զամենայն մկրտեալսն կեցուցէ,
և իւրովի յանձն առեալ զմկրտութիւն, և պա-
տուականապարեալ իւրով իջանելովն 'ի մկրտութիւն։
Նա նախ անուն իւր 'ի մեզ առեալ ճանաչել զճշ-
մարիտ Որդին Աստուծոյ բարբառով Հօր իւրոյ և
իջմամբ Հոգւոյն,, Ոսկեբերան։

"Որ 'ի Հօրէ վկայեալ Որդին, յայտնեալ Հոգին՝
իջեալ նմանապէս Աղաւնւոյ․ զի և մեք օրհ-
նեսցուք զԵրրորդութիւն միաստուածն, բարեբա-
նելով միշտ յաւիտեան,, 'ի Շարակ․ Աստուածա-
յայտնութեան։

"Զանձառելի խորհուրդ սուրբ Երրորդութեանդ
այսօր 'ի լերինն երևեցուցեր աշակերտաց քոց,, Անդ
'ի ժամն Պայծառակերպութեան։

"Ի վեր քան զյոյս և զզօրութիւն մարդկայինս
բնութեան՝ տեսեալ լինէին յայնժամ բարութիւնք․
քանզի խորհուրդ Երրորդութեանն ծածկեալ յա-
ւիտենից և յազգաց, յայտնէր 'ի յորդանան։
Հայր 'ի վերուստ վկայելով․ և Որդի մկրտութեամբն․
և Հոգին աղաւնակերպ իջմամբն,, Սուրբն Ներ-
սէս Շնորհ․ 'ի Մեկն․ Մատթ․ ԳԼ․ Ը․ 17։

"Այդ են բարբառն, և էջ Հոգին, զի զՈրդին իւր
հաւաստեսցէ արասցէ, այսպէս ազդել անգր փոխ-
եալ․․․․ բայց դու առս ինձ աստանօր զճշմարիտ
Աստուածաբանութիւնս․ զի յորժամ Հայր լսցի

Աստուածաբանող, և յաղագս որդւոյ Աստուածա-նն զի՞նչ պիտոյ իցէ ասել. զի որպէս Որդի ըզ-Հայր յայտնեաց, այսպէս և զՈրդի Հայր. ասե-լով՝ դու ես որդի իմ սիրելի,, Յովհ. Ոսկեբ. ՚ի Գրք. Մատթ. ճէ. 5:

"Նախ ասաց, թէ աշակերտեցէք, և ապա թէ մկրտեցէք: Եւ զի՞նչ է աշակերտելն. այսինքն՝ յառաջագոյն վարդապետել զբան հաւատոյն՝ որ ՚ի Հայր և յՈրդի և ՚ի սուրբ Հոգին. և ՚ի տնօ-րինական գործն Քրիստոսի, ՚ի ծնունդն և ՚ի մկր-տութիւնն, ՚ի խաչն և ՚ի թաղումն, ՚ի յարութիւնն և յայլսն ամենայն. որպէս զի մի՛ պատրանք և խաբէութիւն համարեալ լիցի,, Տեառն Իգնատ. ՚ի Գրք. Ղուկ. գլ. ճղ. 16:

"Եւ զի՞նչ արդեօք վկայութիւնն իցէ, զոր վկայ-եաց, ասէ, ՚ի վերայ որդւոյ իւրոյ, երկնից բանալն, և հայրական ձայնին գալն, և զնա որդի զաւա-նել և հաճելի որդի, և Հոգւոյն իջանելն մարմ-նաւոր տեսլեամբ իբրև զաղաւնի՝ և հանգչել ՚ի վե-րայ նորա, այս է, ասէ, վկայութիւնն Աստուծոյ, զոր վկայեաց ՚ի վերայ որդւոյ իւրոյ,, Սարգիս Շնորհ. ճառ Է: Ա. Յովհ. ե. 9:

57. Որպէս միանական սուրբ Երրորդութեան խոր-հուրդ ՚ի հնումն օրինակաւ և նշանօք թաղուն երեւէր. իսկ ՚ի նորումս ՚ի շնորհական օրէնս բա-ցայայտ և սքանչելի տեսլեամբ երեւեցաւ և քարո-զեցաւ, նոյնպէս և փրկարար խորհուրդն մարդե-ղութեան միածնի Որդւոյն Աստուծոյ ծածկեալ մնայր, և զանազան նշանակօք և օրինակօք քարո-զեալ լինէր մարգարէիւք (1). իսկ ՚ի սկիզբն նո-րոյս անպատրուակ յայտնեալ ծածկեալն այն խոր-հուրդ՝ բացայայտ քարոզեցաւ ընդ ամենայն աշ-

խորհ 'ի փրկութիւն ճշմարիտ հաւատացելոց (2)։
Օրինակք յայտնի ցուցանեն մեզ անժխտելի բանք սուրբ գրոց և սրբոց հարց ։

(1)․ “ Ահա Ադամ եղև իբրև զմի 'ի մէնջ ճանաչել զբարի և զչար․ զուցէ ձգիցէ զձեռն և առցէ ”։ “ Ով հեգնական է բանս․ զի ոչ վայել է Աստուծոյ՝ ատնահար լինել իւրոյ ձեռագործին, այլ ճշմարտելով ասէ․ եղև Ադամ ճանաչօղ բարւոյ և չարի , փորձիւ և ոչ զօրութեամբ․ զի Աստուած բնութեամբ ճանաչէ զամենայն մարդ 'ի գործոյ ճանաչէ զոր մեք 'ի բնութենէ․ սա արդ գիտաց , զարձեալ զի ցանկայ Ադամ լինել իբրև զմի 'ի մէնջ․ ահա եղև նմա 'ի կամս մեր Աստուածանալ նորայոյն բնութեան , և լինել երկրորդ Ադամ , որոյ խորհուրդն յառաջ քան զյաւիտեանս ծածկեալ զոյլ 'ի մեզ ահա հիմն արկցի խորհրդոյն մինչև առցէ կատարումն , և ձգիցէ զձեռն իւր 'ի ծառն կենաց , որ բուսանի 'ի պատմոյ արդարութեան , և առյ զպտուղն 'ի ժամու իւրում՝ ասելով , այս է հացն յերկնից իջեալ , զոր թէ ոք ուտիցէ , զմահ մի տեսցէ յաւիտեան ,, Վարդան վարդապետ․ 'ի մեկն․ արարածոց ։

“ Աբրահամ հայր ձեր ցանկացաւ տեսանել զօր իմ․ ետես և ուրախ եղև ,, Յովհ․ Ը․ 56 ։

“ Յայտ առնէր նոցա, զի օտարոտի էին 'ի նմանէ այնու , զի նա ուրախացաւ՝ նորա փչացան։ Իսկ զօր իմ ինձ այսպէս թուի թէ զխաչն ասաց․ նախատես եղեալ առ ահակ 'ի պատարագել խոյին ,, Ոսկ․ 'ի մկն․ Յովհ․ ճառ Ծ ։

“ Նա և զայն ցուցանել զանձանց խորհրդածել , թէ նա տեսութեան նորա ցանկայ․ իսկ մեք սպանանել եա խնդրեմք․ զինչ քան զայն աներաշխի այլ

պարտ է քննել զօրն, զոր տայ ունել Աբրահամու ցանկութիւն առ տեսութիւն. Թուի ինձ զխաչելութեան օր. իսկ տեսանելն զի՞նչ է. յորժամ զորդին իւր Սահակ պատարագ Աստուծոյ, այրեալ լինէր Իսահակ խոյն փոխանակ տղոյն։ Այնպէս եւս աշխարհի փրկութիւնն յօրինակին փոխանակ Քրիստոսի տեսեալ 'ի վերայ խաչին, եւ որպէս խոյն փոխանակ Իսահակայ կախեալ զծառոյն 'նա եւ որժամանաւոր իսկ էր Աբրահամ այնպիսի հրաշափառ տեսութեան որ եւ առ Աստուածայինն սիրոյն, եւ յորդին արձակէր զձեռն որպէս ինքն զմիամօրն ուրեմն մատուցանէր կամաւորապար պատարագ Աստուծոյ վասն սիրոյն, զոր ունէր առ Աստուած, այնպէս եւ Հայր սիրելի որդին իւր տալոց էր փոխանակ աշխարհի վասն մարդասիրական գթոյն, զոր ունէր առ իւր արարած,, Նանոյ կղզպտղէւ. է. ձխ. Յովհ։

“Ստեղծիչ սրտից Տէր առանձին
տեսող գործոց եւ խորհրդին,
'ի փորձ մեր առ սիրելին,
պատարագել քեզ զԱմորդին։
Երթեալ 'ի մեծ բարձր լերին
'ի գագաթայ որպէս ասին,
բառնալ զփայտ ողջակիզին
իւր միածին ողջախոհին։
Զոր եւ հանեալ 'ի սեղանին,
որպէս զքեզ Տէրդ 'ի խաչին.
բուռն հարեալ զսուսերին
եւ մերձ եդեալ պարանոցին։
Մինչ 'ի վերուստ հնչեալ ձայնին,
թէ՝ մի՛ մխեր 'ի պատանին,
այլ հայեցես յաջոյ ձեռին
կախեալ զխոյն 'ի ծառեկին։

Որ փոխանակ բանականին
Խոստացեալ քում ծառային ․
Ետուր 'ի զոհ պատարագին
զանբան անեղծական կենդանին ,, 'ի Յէսու․ որդւ․:

Սպաքէն պանծելի նշանակ էր զալստեան բանին Աստուծոյ 'ի մարմնաւորութիւն յամենօրհնեալ սրբոյ կուսէն գեղմն խորհրդաւոր և անձրևն հրաշալի ․ որ իջանէր նախ 'ի վերայ գեղման , և ապա 'ի վերայ ամենայն երկրի ․ որպէս գրեալ է 'ի գիրս դատաւորաց․ Է․ 37 :

Զայս մարգարէական հոգւով տեսեալ վկայէր մարգարէն Դաւիթ յասելն ․ " Իջցէ որպէս զանձրև 'ի վերայ գեղման, որպէս ցօղ որ ցօղէ յերկիր ,, Սաղմ․ հա․ 6 :

" Անպակասելի զանձ․ անապական անձրև․ արփիացնցուղ ցօղ․ ամենատեղաց զեղ ,, Նարեկ․ Հ :

" Այսօր պատկերն օրինականքն Յովակիմ և Աննա ետուն մեզ զգեղմն ընդունիչ, զցօղն երկնային ․ յորմէ հոսեաց անձրևն կենաց , և բղխեաց աշխարհի աղբերքն իմաստից : Գեղմն իմանալի զոր ետես Գեդէօն, յառաջ քան զայս հաստատեալ իմանամք զանձառելի զքո ծնունդ․ և երկրպագեմք որ 'ի կուսէդ մարմնացար Աստուած ,, 'ի Շարակն:

" Այժմ , յառաջագոյն ասէ Դաւիթ ․ ․ ․ ․ իջցէ , ասէ , իբրև զանձրև 'ի վերայ գեղման․ անձրև վասն երկնաւորին՝ 'ի վերայ գեղման վասն մարմնոյն, անձրև 'ի վերայ գեղման, զի իջանէ առանց բարբառոյ , իջանէ իբրև ծածկեալ խորհրդով 'ի ծնունդն,, Ոսկեբ․ Աւետ․ 'ի Յով․ ընծ․ ճառ ԼԷ :

Նա սուրբն Գրիգոր լուսաւորիչ այսպէս քարոզեաց․ " Անդ էր այնուհետև քննել 'ի հոգեպատում մատեանս մարգարէութեան , թէ մանուկ ծնաւ մեր

եւ որդի տուաւ մեզ, որոյ իշխանութիւն է 'ի վե-
րայ ուսոց իւրոց. եւ անուն կոչեցաւ նմա հրեշ-
տակ մեծի խորհրդոյ. սքանչելի խորհրդակից,
Աստուած հզօր, իշխան, հայր հանդերձելոյ աշ-
խարհին,,:

Տեսանես, զի որդի եւ իշխան, եւ հրեշտակ եւ խորհրդա-
կից, եւ Աստուած հզօր, եւ Հայր հանդերձելոյ աշ-
խարհին, զայս նորածին մանուկն նշանակէ: Քանզի
եւ էր իսկ որդի. վասն զի զօրութիւն Աստուծոյ է,
եւ խորհրդակից, եւ Աստուած հզօր, որով եւ յաւի-
տեանքն հաստատեցան: Նա մանուկ, զի այսօր 'ի
սրբոյ կուսէն 'ի Բեթղեհէմ ծնեալ, որով եւ յա-
ռաջապատում իսկ է, թէ Տէր ասաց ցիս որդի իմ
ես դու, եւ ես այսօր ծնայ զքեզ: Նա հայր հան-
դերձելոյ աշխարհին, զի զհնացեալ եւ զմահացու
աշխարհս ըստ հողածին առաջին մարդոյն՝ երկրորդ
մարդն կուսածին եկեալ յերկնից նորոգեսցէ: Նա
իշխան, քանզի զաւազան ըղխեալ յարմատոյն
Յեսսեայ, ասէ Եսայի, եւ ծաղիկ եւ 'ի շառաւիղէ
անտի, ծնունդ զատեր Դաւթի. եւ աթոռ յաթոռն
Դաւթի նստցի, եւ զթագաւորութիւն նորա յաջո-
ղեսցէ,, յՍ. Եփրեմ:

(2). "Զխորհուրդն՝ որ ծածկեալն էր 'ի յաւիտենից
եւ յազգացն. որ այժմ յայտնեցաւ սրբոց իւրոց:
Որոց կամեցաւ Աստուած ցուցանել, թէ զի՞նչ է
մեծութիւն փառաց խորհրդոյն նորա 'ի հեթանոսս.
որ է Քրիստոս 'ի ձեզ, յոյսն փառաց,, Կող.
ա. 26—28:

" Նա հովիւքն էին 'ի տեղւոջն յայնմիկ բացօ-
թեայք, որք պահէին զպահպանութիւնս գիշերոյ հօ-
տից իւրեանց. եւ հրեշտակ Տեառն երեւեցաւ նոցա,
եւ փառք Տեառն ծագեցին առնոսա. եւ երկեան երկիւղ

մեծ. և ասէ ցնոսա հրեշտակն. մի՛ երկնչիք, զի ահաւասիկ աւետարանեմ ձեզ ուրախութիւն մեծ, որ եղիցի ամենայն ժողովրդեանն. զի ծնաւ ձեզ այսօր փրկիչ, որ է՝ օծեալ Տէր, 'ի քաղաքի Դաւթի. և այս նշանակ ձեզ. գտանիցէք մանուկ պատեալ 'ի խանձարուրս, և եդեալ 'ի մսուր. և յանկարծակի եղև ընդ հրեշտակին ընդ այնմիկ բազմութիւն զօրաց երկնաւորաց, որք օրհնէին զԱստուած՝ և ասէին. Փառք 'ի բարձունս Աստուծոյ, և յերկիր խաղաղութիւն, 'ի մարդիկ հաճութիւն,, Ղուկ. Բ. 8— 15:

"Եւ բանն մարմին եղև, և բնակեաց 'ի մեզ. և տեսաք զփառս նորա զփառս իբրև զմիածնի առ 'ի Հօրէ, լի շնորհօք և ճշմարտութեամբ,, Յովհ. Ա. 14:

"Որ էրն 'ի սկզբանէ. զորմէ լուաքն, որում ականատեսն իսկ եղաք. ընդ որ հայեցաքն, և ձեռք մեր շօշափեցին 'ի վերայ բանին կենաց, և կեանքն յայտնեցան, և տեսաք. և վկայեմք, և պատմեմք ձեզ զյաւիտենական կենացն, որ էր առ Հօր՝ և երևեցաւ մեզ,, Ա. Յովհ. Ա. 1—3:

"Բայց մեզ զեռ կայ պատմել ձեզ՝ զծնունդ Աստուածորդոյն 'ի սուրբ կուսէն. թէ զիարդ եղև, մի ըստ միոջէ պատմեսցուք: Զի ոչ եթէ յորմէ հետէ ծնունդն 'ի կուսէն իցէ՝ յայնմ հետէ է բանին սկզբնականին գոյութեան. այլ յառաջ քան զամենայն յաւիտեանս ծնեալ 'ի Հօրէ. իսկ արդ վասն մեր էջ և մարմնով ծնաւ 'ի կուսէն. այն ծննդոյ Հայրն որ զնա ծնաւ՝ նա միայն գիտէ. իսկ երկրորդ ծնունդն շնորհիւ իւրով 'ի մէջ մարդկան. վասն զի կեցուսցէ զմարդիկ, և օրհնեսցէ յառաջին անիծից անտի զերկիր, իւրովք օրհնութիւնաբեր զարշապարօքն եկեալ նորա-

զնոյն․ զի նոսա կորուսեալ զմարդիկ, ժողովեաց զցրուեալս, եգիտ զկորուսեալն,, Ոսկեբերան ։
“ Խորհուրդ մեծ և սքանչելի որ յայսմ աւուր յայտնեցաւ․ հովիւքն երգեն ընդ հրեշտակս, տան աւետիս աշխարհի ,, ՚ի Շնորհալւոյն ։
“ Ով որքան մեծ է ՚ի քեզ աւարտեալ խորհուրդ, սրբուհի․ զի եթէ աստծք մարգարէիցն հոգեկիր յղացմամբ Իսրայէլի ծնօղ ք ասացան , այլ դու որ զբանն Աստուած անճառաբ՝ հայրենի բնութեան հաւասար՝ ՚ի սենեկի քում մաքրական մարմնապէս բազմածանուցեր , զորովնի արժանաւոր զովութիւնս ոչ ընդունիցիս ․ ․ ․ ․ ․ Այլ արդ ոչ բան բաղդատելով՝ զանհամեմատ քո մեծութիւնդ լեցի կարող գերահռչակել , արարչին մայր, անհասին ծնօղ , անբաւին գրկարան , ամենակալին յանձանձիչ , փառաւորողին զգեցուցիչ , վերօրհնելոյն գրկիչ ։ Ահա յաղագս այսոցիկ բաւ անուա քո բանիւ յիրաւի տացուք քեզ երանի, մայր Յիսուսի ,, ՚Ի Նարեկ․ ՚ի [illegible] ։
“ Զոր խնամենայ ժամանակաւ
տկար բնութեամբ յինքեան տարաւ․
Այս որպէս մարդ զԱստուած ծնաւ
և կուսութիւնն ոչ խախտեցաւ․
Ստեղծող մանկանց մանուկ ցուցաւ
և հին աւուրցն տղայացաւ․
՚Ի յանբանից մսուր եդաւ
՚ի հրեշտակաց քարոզեցաւ․
Աստեղբն լոյս ընծայեցաւ
և ՚ի մոգուցն պատուեցաւ ,, ՚Ներսէս Շնորհ․ ՚ի Յիսուս որդի ։

# ԳԼՈՒԽ Զ.

## Խոստովանութիւն սրբոյ Երրորդութեան ։

58. Հ. Քրիստոնէական սուրբ հաւատք մեր առ միասնական սուրբ Երրորդութիւնն որպիսի ճշմարիտ և ուղղափառ խոստովանութիւնս և դաւանութիւնս պահանջէ ։

Պ. Ճշմարտութիւնն ուղղափառ հաւատոյ մեր առ միասնական սուրբ Երրորդութիւնն պահանջէ հաստատելով ունել զայս ուղղափառ խոստովանութիւն և զճշմարիտ դաւանութիւն, եթէ յամենասուրբ Երրորդութեան երեք են անձինք, և երեքեան մի են բնութեամբ և Աստուածութեամբ. առաջին անձն կոչի Հայր Աստուած. երկրորդն Միածին Որդի Աստուածոյ Հօր և Բանն. և երրորդն Բղխումն ՚ի Հօրէ սուրբ Հոգին ճշմարտութեան. և երեք անձինքն են մի էութիւն, մի բնութիւն, մի Աստուածութիւն, համաբուն, համազօր, համակամ և համիշխան յամենայնի ։ « Երկրպագեմք Հօր և Որդւոյ և սուրբ Հոգւոյն. զառանձնութիւնն ոչ բաշխեմք, բայց զԱստուածութիւնն միաւորեմք. ոչ ՚ի մի զերկուսեան հաւաքեմք. զի մի զարբելն տեառնացեմք. և ոչ որոշեմք յերիս այլազգիս և օտարոտիս, զի մի զարբեալն մոլեցեմք » Գրիգ. Լուսաւ. ճառ Է ։

« Հաւատով ճշմարտեսցուք ՚ի մի Աստուած Հայր և Տէր և արարիչ ամենայնի. և ՚ի միածին Որդին՝ որ ՚ի Հօրէ և առ Հօր և ընդ Հօր. և ՚ի սուրբ Հոգին՝ որ ՚ի նորին էութենէ, և նովաւ արար զամենայն արարածս. որ է մի տէրութիւն, մի զօրութիւն, մի իշխանութիւն, մի մեծութիւն, մի գիտութիւն, մի խորհուրդ, մի սրբութիւն,

մի անսկզբնական զօրութիւն, երեք կատարեալ անձինք, մի կատարեալ կամք, անպատում անքննելի միութիւն Երրորդութեանն, մի իսկութիւն, մի էութիւն, մի Աստուածութիւն, Հայր է և Որդի է և Հոգի է. երեք անձինք. մի զօրութիւն Աստուածութեան. Հայր յանձնէ. Որդին 'ի Հօրէ. և Հոգին 'ի նոցունց 'ի նոսին: Իսկութեամբն էութեամբն Աստուածութեամբն հարթ և հաւասար հասարակ 'ի խորութիւնս, 'ի բարձրութիւնս, 'ի լայնութիւնս, յերկայնութիւնս, մի էութիւն բնութեանն. մի պատկ Երրորդութեանն. և լի են երկինք և երկիր փառօք նորա » յԱ̃ծ̃ինգ̃ :

" Մի է բնութիւն և գոյութիւն ամենասուրբ Երրորդութեանն. և իւր է ինքնութիւնն և յիւրմէ գոյութենէ: Զի 'ի սկզբանց ունի զպատճառն զոլ Հայր զՈրդւոյ և զսուրբ Հոգւոյ: Իսկութիւն անծին և էութիւն անսկիզբն, և մշտնջենաւորութիւն անսահման և ճշմարտութիւն անփոփոխ: Աեանք է կենդանացուցիչ ամենայն կենդանեաց, Հայր է Որդւոյն, և բղխող Հոգւոյն. Աստուած է արարիչ արարածոց երևելեաց և աներևութից,, 'Ի յաճախ. ճառ ա̃ :

" Խոստովանիմք զամենասուրբ զԵրրորդութիւնն, զՀայր և զՈրդի և զսուրբ զՀոգին, յերիս անձնաւորութիւնս բաժանեալ, և 'ի մի բնութիւն և յԱստուածութիւն ժողովեալ: Հայր անծին և անսկիզբն յառաջ քան զյաւիտեանս. Որդի ծնեալ ի բնութենէ Հօր անախտ և անմարմին նախ քան զժամանակս. Հոգին սուրբ բղխումն 'ի Հօրէ՝ ոչ բստ որդւոյ ծննդեամբ, այլ յառաջ եկեալ աղբերաբար ինքեան միայնոյ քննելի օրինակի, և յարարածոց անգիտելի: Նա ոչ էր երբեմն Հայր՝ յոր-

ժամ ոչ էր ընդ նմին Որդին և Հոգին, այլ որպէս Հայր՝ միշտ Հայր, և ոչ յետոյ ստացեալ զանուն Հայրութեան. նոյնպէս և Որդի միշտ Որդի ընդ Հօր իւրոյ մշտնջենաւոր. այնպէս և Հոգին սուրբ միշտ Հոգի Աստուծոյ անմեկնելի ՚ի Հօրէ և յՈրդւոյ, մի էութիւն, մի իշխանութիւն, մի կամք, և մի արարչագործ զօրութիւն՝ յերիս անձնաւորութիւնս իմանի: Ոչ մեծութիւն և ոչ փոքրկութիւն, ոչ բարձրութիւն և ոչ խոնարհութիւն, ոչ առաւելութիւն և ոչ նուազութիւն, այլ մի կարգ, մի պաշտօն, մի երկրպագութիւն սուրբ Երրորդութեանն զաւանի, որով գոյացան յոչէից եղեալքս ամենայն, երկինք երկնաւորօքն, և երկիրս երկրաւորօքս, երեւելի և աներեւոյթ արարածք յառաջին եղեալ արարչութեան,,

ՆԵՐՍ. ՇՆՈՐՀ. ՚Ի ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԹՂԹԻՆ ՅԱՂԱԳՍ ՀԱՒԱՏՈՅ:

59. Հ. Արդեօք գտանիցի՞ յարմարաւոր օրինակ ինչ միոյ բնութեան և միոյ Աստուածութեան երեքանձնեայ սուրբ Երրորդութեան:

Պ. Այո՛ բաւական համոզիչ մտաց մերոց գտանին օրինակք բացայայտիչք հաւատոյ և զուգափառ միասնական սուրբ Երրորդութեանն, զորս եդեալ մեզ հոգեւորս վարդապետութեամբ իւրով նախահայրապետն մեր սուրբ Գրիգոր Լուսաւորիչ:

« Զի որպէս արեւ և լոյս և ջեր, ասէ, մի արեգակն ասի և ոչ այլայլ, և որպէս աղբիւր և ջուր և գետ ՚ի միոյ բնութենէ լսին, որպէս և միտք և բան և ոգի իմանի ՚ի մարդումն, նոյնպէս ըստ միոյ բնութեան է իմանալ Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ զբնութիւնն: Զի ոչ է արեգակն առանց լուսոյ և ջերմութեան, և ոչ աղբիւր ա-

ռանց Ջրոյ և բղխման, և ոչ միտք առանց բանի և Հոգւոյ: Նոյնպէս և ոչ Հայր առանց Որդւոյ և Հոգւոյն սրբոյ: Կատարեալ է Հայր անձամբ և զօրութեամբ, գիտութեամբ և իմաստութեամբ, արարչութեամբ և բարերարութեամբ, և զամենայն իւր անծին խոհութեամբ ունի: Կատարեալ է Որդի անձամբ և զօրութեամբ, գիտութեամբ և իմաստութեամբ, արարչութեամբ և բարերարութեամբ, և զամենայն իւր անսկիզբն ծնութեամբ ունի: Կատարեալ է և Հոգին սուրբ անձամբ և զօրութեամբ, գիտութեամբ և իմաստութեամբ, արարչութեամբ և բարերարութեամբ, և զամենայն իւր անսկիզբն ելութեամբ ունի: Մի բնութիւն Աստուածութեանն և անփոփոխ խնամութեանն. մի արարչութիւն է և մի բարերարութիւն. մի տէրութիւն և մի զօրութիւն.... Նոյնպէս ընկալաք զհաւատոյն զբան. և դուք այսպէս հաւատացէք յամենասուրբ Երրորդութիւնն, յարարիչն Աստուած և 'ի հաստատիչն Տէր և 'ի կենսատու շնորհն նորա „ Յաճախ. ճառ Ժ. և Է. Սուրբն Գրիգոր Աստուածաբան գրէ յՃառս ԳԼ. Է: “Միանեցուցանէ զմիանական սուրբ Երրորդութիւնն՝ ասան, ազգեր, և զհաւ. զեղայրքեկ, ասէ, ոչ ժամանակաւ որոշին՝ և ոչ յերկրաց պատուեն, այլ երեք անձնաւորութիւնքն զանազանին. դարձեալ ասէ, զարեգակն, և զճառագայթս զլոյս ածէ զմիտաւ, և այլն „:

“Նմա 'ի յերկնս լոյս պատուցեալ,
երեքն 'ի մի լոյս միացեալ.
որպէս 'ի մի ջահ ժողովեալ,
երից լուսոյն մի եղեալ:
Ըստ արեգականն հաւասարման
զծուր Լոյս և զօթարան.

Կամ թէ զաղբիւր, զգետ և զծով
այսմ օրինակ առ բերելով։
Երիցն ջուր բնութեամբ գոլով
անուամբ անձամբ բաժանելով։
Եւ այս է մի Աստուածութիւն
բաց երից անձանց անուամբ զրութիւն։
Կամ լոյս ՚ի ջուրս ծագելով,
և ճառագայթ ներգործելով.
Որպէս և Հայր՝ յորմէ Որդին
Հոգին ծաւալ ճառագայթին,, ՚ի Յիսուս որդւոյ.
՚ի բանս հաւատոյ։

“Խոստովանիմք որպէս ուսաք ՚ի Հարցն սրբոց՝ զՀօր յատկութիւն առ անձնաւորութեանն, անծին և անսկիզբն. և զՈրդւոյ ծնունդ անսկզբնականին Հօր, անեղապէս և անժամանակ. և զՀոգւոյ բղխումն և ելումն և արտաքս տարքումն ՚ի Հօրէ անճառաբար։ Հայր ասի Հայրն՝ վասն պատճառ գոլոյն Որդւոյ ծննդեան և Հոգւոյն ելութեան. և Որդին Որդի, ոչ յաղագս սկսաւոր ինչ ծննդեանն՝ ըստ նիւթականացս, որպէս կարծեն կոյրքն մտօք, այլ զի ՚ի բնութենէ Հօր՝ և ոչ արարած է, սակայն յեղանակ ծննդեանն անհաս է յարարածոց. կոչի և միածին, զի ոչ այլ ոք յառաջ քան զնա, կամ յետ նորա ծնունդ Հօր. ասի և բան, քանզի անախտաբար է ծնունդն ըստ օրինակի մերոյս բանի, որ ծնանի ՚ի մտաց,, Ներսէս Շնորհ. ՚ի Թուղթ գրեալ առ Մանուէլ Կայս. Հոռոմոց։

“Երրակի թիւ կատարեալ, յերիս անձինս բաժանեալ, Աստուածութեամբ միաւորեալ, միով բնութեամբ հաստատեալ,, Ի Ժամագրքէս։

60. Հ. Որպիսի՞ գերագրական անուամբ փառաբանեմք զանսկզբնական էութիւն անփոփոխելի տէրութեան և անքննելի զօրութեան միանական սուրբ Երրորդութեան:

Պ. Ըստ բանի սուրբ գրոց և ըստ նախնի հարց սրբոց՝ փառաբանեմք զմիանական սուրբ Երրորդութիւնն՝ խոստովանելով ամենակարող զօրութիւն, անչափ և անսահման մեծութիւն, զուգափառ և համագոր միութիւն:

“Եւ ասէ տէր ցԱբրահամ· զի՞ է զի ծիծաղեցաւ Սառրա ընդ միտս իւր՝ և ասէ· թէ արդարև ծնանիցի՞մ· զի ահա ես պառաւեալ եմ„ Ծննդ. ժը. 13:

“Եւ ասէ Տէր ցՄովսէս· մի՞թէ ձեռն չիցէ բաւական„ Թուոց. ժա. 23:

“Եւ գոչեաց Ասա առ Տէր Աստուած իւր, և ասէ· Տէր, ոչ տկարանայ քեզ ապրեցուցանել բազմօք և սակաւուք· զօրացո զմեզ Տէր Աստուած մեր· զի ի քեզ յուսացաք„ Բ. Մնաց. ժդ. 11:

“Ողորմիս ամենեցուն՝ զի յամենայնի կարող ես„ Իմաստ. ժա. 24:

“Գիտեմ կարող ես յամենայնի, և տկարանայ ինչ ոչ քեզ„ Յոբ. խբ. 1:

“Սուրբ. սուրբ. սուրբ. Տէր զօրութեանց՝ լի են ամենայն երկիր փառօք նորա„ Եսայ. զ. 3:

“Ով եղ Տէր Տէր· դու արարեր զերկինս և զերկիր զօրութեամբ քով մեծաւ՝ և բազկաւ քով բարձու. զի ոչինչ է բան որ ծածկեսցի ի քէն .... Աստուած մեծ և հզօր. Տէր զօրութեանց անուն նորա„ Երեմ. լբ. 17. 18:

“Զի ոչ տկարասցի առ յԱստուծոյ ամենայն բան„ Ղուկ. ա. 37:

"Վասն զի քննիչ է սրտից, և ծածկագէտ, ամենայն գաղտնեաց յայտնիչ. զի զամենայն ինչ գիտէ, և զամենայն ինչ՝ զոր առնէ, կարող է կատարել. և տկարանայ նմա և ոչինչ. որպէս ասաց Գաբրիէլ առ կոյսն սուրբ. ոչ տկարասցի առ ՚ի յԱստուծոյ ամենայն բան,, յՂկ. Ա. ԼԷ.։

"Եւ Տէր ամենակալ կարդասցուք, որ առնէ բզմեծամեծ սքանչելիս փառաւորեալս, անքննելիս, որոց ոչ գոյ թիւ,, [illegible]։

"Քանզի զքեզ օրհնեն իշխանութիւնք երկնից, Թագաւոր փառաց ամենակալ ամենակարող,, ՚ի Շարակն։

"Որ ինձ անհասն է, քեզ սահմանեալ է. որ ինձ անանցն է, քեզ հզաւոր է. որ եղկելոյս ինձ ծածկեալն է, քում իմաստութեան մերձաւոր է. որ ինձ անհնարինն է, քեզ կատարեալ է,, Նարեկ. ԾԷ։

Իսկ յառաջագայ վկայութիւնքս ցուցանեն մեզ զանչափ և զանսահման մեծութիւն և զուգափառ և հաւասար միութիւն ամենասուրբ Երրորդութեանն։

"Ոչ հաւատաս եթէ ես ի Հայր՝ և Հայր յիս է. զբանս՝ զոր ես խօսիմ ընդ ձեզ, ոչ եթէ յանձնէ ինչ խօսիմ, այլ Հայրն որ յիս բնակեալ է, նա գործէ զգործն։ Հաւատացէք ինձ՝ եթէ ես ՚ի Հայր՝ և Հայր յիս,, Յովհ. ԺԴ. 11։

"Զի հաւատով ճշմարտեսցուք ՚ի մի Աստուած Հայր և Տէր և արարիչ ամենայնի. և ՚ի միածին Որդին որ ՚ի Հօրէ, և առ Հօր, և ընդ Հօր. և ՚ի սուրբ Հոգին՝ որ ՚ի նորին էութենէ. և նախաարար զամենայն արարածս. որ է մի էութիւն, մի զօրութիւն, մի իշխանութիւն, մի մեծութիւն, մի գիտութիւն, մի խորհուրդ, մի սրբութիւն, մի անսկզբնական զօրութիւն, երեք կատարեալ անձինք, մի կատարեալ կամք, անպատում անքննելի միու-

թիւն Երրորդութեան ,, Աղէքսանդ :

"Պարտ է ձեզ լուսոյ զՀայր և զՈրդի, ո-րինչ հաստանել կամ անջատել 'ի հարազատութենէն որ ըստ էութեան, խոկ եթէ ձեզ ոչ է այս բա-ւական առ 'ի ցուցանել զհամագոյութիւն և զու-գապատուութիւն, զո՞նէ 'ի գործոցն ուսարուք, որ ետես զիս՝ ետես զՀայրն իմ ,, Ուղ . Ի . ԳՐՆ . Յովհ . Ծառ . ԺԲ :

"Որ անքննելի ես յէութեան համագոյ Երրոր-դութիւն, երեքսրբեան մի տէրութիւն, միով բնու-թեամբ Աստուածութիւն ,, Ն . Շնորհ :

"Խոստովանիմք և զերիս զայս անձնաւորութիւնս 'ի մի Աստուածութիւն ժողովել և միաւորել, ոչ յայլ և այլ բնութիւնս բաժանելով 'ի միմեանց՝ ըստ արքոսի, արարած և ժամանակի 'ի ներքս մու-ծանելով, այլ մի բնութիւն, մի զօրութիւն, մի փառք ամենասուրբ Երրորդութեանն հաւատացեալ ճանա-չեմք : Եւ ոչ զարձեալ հրէականին հետևողի սա-բէլի լեբիացւոյ ձայնակցելով, զերիս 'ի մի հաւա-քեալ անձնաւորութիւնս, այլ բաժանեմք անբաժա-նաբար, և միաւորեմք որոշմամբ ըստ ուղղափառ Հարցն զաւանութեան ,, Ներս . Շնորհ . 'ի ԹՂԹ . Գրեալ առ Մանուէլ կայսրն Հոռոմոց :

"Խոստովանիմք և դաւանեմք, պաշտեմք և եր-կրպագեմք զուղղափառ միութիւնն ամենասուրբ Երրորդութեանն . Աստուածութիւնն անճառ, միշտ բարի, նոյնագոյ, հաւասարապատիւ, անհաս ի-մաստից թևոց սլացման, 'ի վեր քան զօրինակ և անդր քան զնմանութիւն ,, Նարեկ . ԼԳ :

# ԳԼՈՒԽ Է.

## Խորհուրդք մարդեղութեան Յիսուսի Քրիստոսի :

61. Հ. Զի՞նչ եղև գլխաւորագոյն աւիթ և կարևորագոյն պատճառ մարդեղութեան միածնի Որդւոյն Աստուծոյ :

Պ. Մարմնաւորին տնօրէնութեան փրկչին մերոյ գլխաւոր շարժառիթն եղև փրկութիւն և ազատութիւն ազգի մարդկան 'ի դժոխային դատապարտութենէ, և 'ի պատժոց սկզբնական մեղաց :

" Ծնցի որդի, և կոչեսցես զանուն նորա Յիսուս. զի նա փրկեսցէ զժողովուրդ իւր 'ի մեղաց իւրեանց ,, : " Որպէս որդի մարդոյ ոչ եկն պաշտօն առնուլ՝ այլ պաշտել, և տալ զանձն իւր փրկանս փոխանակ բազմաց ,, Մատթ. Ա. 21 : Ի. 28 :

" Զի աւետարանեմ ձեզ ուրախութիւն մեծ, որ եղիցի ամենայն ժողովրդեան. զի ծնաւ ձեզ այսօր փրկիչ, որ է օծեալ Տէր, 'ի քաղաքի Դաւթի ,,: " Զի եկն որդի մարդոյ խնդրել և կեցուցանել զկորուսեալն ,, Ղուկ. Բ. 10 : ԺԹ. 10 :

" Հաւատարիմ է բանս, և ամենայն ընդունելութեան արժանի է. զի Յիսուս Քրիստոս եկն յաշխարհ փրկել զմեղաւորս ,, Ա. Տիմ. Ա. 15 :

" Եւ մեք տեսաք և վկայեմք, զի Հայր առաքեաց զՈրդին իւր փրկիչ աշխարհի ,, Ա. Յովհ. Դ. 14 :

" Որ յաղագս մեր մարդկան և վասն մերոյ փրկութեան իջեալ յերկնից մարմնացաւ ,, 'ի Հանգանակն հաւատոյ :

“Հաւատք ճշմարիտ այս են . խոնարհեցաւ և խառնեաց զԱստուածութիւնն ընդ մարդկութեանն և զանմահն ընդ մահկանս . զի զամենայն անփակ արասցէ յանմահութենէ Աստուածութեան իւրոյ „ յԱթանասէ :

“Որ էրն 'ի սկզբանէ առ Աստուած և Աստուած բանն , կերպարան անեղէն և համագոյ սուրբ Հոգւոյն , 'ի վերջին աւուրս ծանուցեալ մարմնանալ յանձն առնու 'ի կուսական յարգանդէ վասն փրկութեան ազգի մարդկան „ Է Ղուկ :

“Իսկ Յիսուսն փրկիչ և փրկութիւն Տեառն ասի , փրկել զժողովուրդն ոչ 'ի յայտնի պատերազմացն՝ որ ըստ աշխարհի, և ոչ 'ի մարմնական ծառայութենէ , այլ 'ի մեղաց և յապականութենէ „ Աուրքէա Ճուրճ . Է Դեն . Յով . Ճառ Ա :

“Տեսանե՞ս զպատճառս եկաւորութեանն Աստուծոյ յաշխարհ : Զի մարդկան փրկութիւն և հաւատք հարկ արարին նմա զիջանելն և զմեռանելն „ Աուրքէա Ճուրճ . Է Դեն . Ա . Պետր . Ճառ Է . Ա . 21 :

62 . Հ . Ուստի՞ հարկաւորեալ ստիպեցաւ Հայրն Աստուած զՈրդին իւր միածին առաքել յաշխարհ 'ի փրկութիւն ազգի մարդկան :

Պ . Ըստ սուրբ գրոց և Աստուածաբան հարց որոց Հայրն Աստուած յանսահման մարդասիրութենէ ստիպեալ հաճեցաւ առաքել զՈրդին Աստուած 'ի փրկարար տնօրէնութիւն : Այս Աստուածային մարդասիրութեանն շնորհ յայտնեցաւ 'ի դրախտ անդ'ի խոստմանն և 'ի մեղապարտ զաւակին Ադամայ նախահօր մերոյ . վասն որոյ ասէ Ոսկեբերան . զի զնշանն փրկարար խորհրդոյն մարդեղութեան յայտնի արար անդանօր լսելի առնելով զախոյն և

զգթութեանն խորհրդաւոր ոտնաձայն յօրինակ խոր-հելոյ և խնդրելոյ զմոլորեալն սիրելի և գթառատ ձայնիւ գոչմամբ :

"Լուան զձայն զգնալոյն Տեառն Աստուծոյ 'ի դրախտի ընդ երեկս .... և կոչեաց Տէր Աստուած զԱդամ, և ասէ ցնա. ո՞ւր ես ,, Ծննդ. Գ. 8. 9:

"Ո՞ մարդասիրին, ոչ միջնորդօք յանդիմանէ, որպէս թագաւորք և դատաւորք զմահապարտս, այլ ինքնին նախաստեղծիցն տայ զզգայութիւն ձայ-նի՝ յորմէ թագչէին ,, Ոսկեբ. 'ի մեկն. Ծննդոց :

"Տես որչափ մերձաւոր և ծանօթ էր Աստուծոյ. մինչ ոտնաձայնեն անգամ չէինն անտեղեակ. քան-զի բարերարն յանդէաս պատճառել՝ նախ ոտնա-ձայն առնէ, զի յոյժ քաւութիւնարեր հաւեալ մարդոյն ինքնապատուել զյանցանացն փրկութիւն զամնիցեր ,, Ատֆոնակ :

Ապաքէն որպէս ընդ այս անբաւ և անսահման Աստուածային մարդասիրութիւնն սքանչացեալ զարմացմամբ գրէին 'ի հնումն մարգարէք, (1,) նոյնպէս և 'ի նորումն վկայեն սրբազան աւետա-րանիչք և առաքեալք (2) :

(1). "Ո՞վ է մարդ զի յիշես զնա, կամ որ-դի մարդոյ թէ այց ինչ արասցես դու նմա ,, Սաղմ. Է. 6 :

"Բացէ 'ի բաց Տէր երևեցաւ նմա. 'ի սէր յա-ւիտենական սիրեցի զքեզ, վասն այնորիկ ձգեցի զքեզ 'ի գթութիւն ,, Երեմ. ԼԱ. 3 :

(2). "Զի այնպէս սիրեաց Աստուած զաշխարհ, մինչև զՈրդին իւր միածին ետ ,, Յովհ. Գ. 16:

"Մեծ ես քան զայս սէր ոչ ոք ունի, եթէ զանձն իւր դիցէ 'ի վերայ բարեկամաց իւրոց ,, Յովհ. ԺԵ. 13:

"Յայտնեաց Աստուած զսէրն իւր 'ի մեզ. զի մինչ-դեռ մեղաւորքն էաք, Քրիստոս վասն մեր մե-ռաւ" Հռովմ. Ե. 8:

"Այլ Աստուած՝ որ մեծն է ողորմութեամբ, վասն բազում սիրոյն իւրոյ զոր սիրեաց զմեզ. Մինչ-դեռ մեռեալ էաք 'ի մեղս մեր, կենդանիս արար զմեզ 'ի Քրիստոս" Եփես. Բ. 4:

"Եւ զի յայտ երեւեցաւ սէրն Աստուծոյ 'ի մեզ, զի զՈրդին իւր միածին առաքեաց յաշխարհ, զի եղիցուք նովաւ կենդանիք։ Յայսմ է սէրն. ոչ զի մեք սիրեցաք զԱստուած, այլ զի նա սիրեաց զմեզ, և առաքեաց զՈրդին իւր 'ի քաւութիւն մեղաց մերոց" ա. Յովհ. դ. 9. 10:

"Որպէս և Տէր ինքնին զիւր երախտաւորին վկայս ունի իւրոյ սիրոյն և բարերարութեանցն առ ընտ-րեալսն և կատարեալսն և երախտագիտեալսն հօտում, որ զեղու 'ի նոսա զշնորհսն" Յոհան. ճառ. է:

"Բազում ցուցանէ զանբաւ և զերկայնաձիգ ըզ-սէրն՝ զոր ունէր և եհեղ 'ի մեզ. քանզի անմահն և անսկիզբն, և որոյ մեծութեանն ոչ գոյ չափ և վախճան, վասն սորա՝ որք յերկրէ են և հող և մոխիր, և որք լցեալ էին բիւրապատիկ մեղօք, և յորժամ չար կենօք իւրեանց հակառակ կացին բարւոյ, և մարտնչէին ընդ նմա, զայնպիսին սի-րեաց ... պատկառեսցուք արդեօք 'ի նորա սիրոյն, ամաչեսցուք 'ի նորա առաւել մարդասիրութենէն, զի նա ինքն 'ի միածինն ոչ խնայեաց վասն մեր" Ոսկեբերան. Է ճառ. Յովհ:

"Զի ոչ եթէ մեք 'ի խնդիր եղաք Աստուծոյ և գտաք և սիրեցաք զնա, որպէս պարտն էր սի-րել, և այս փոխանակ վարձուցն եղեալ հատուց-

մունք, այլ զի նա նախ սիրեաց, ասէ, զմեզ․ զմեզ ասէ, զատելիքս և թշնամիքս սիրեաց, և անեզրական սիրով սիրեաց․ և հայրական աղեօք գթացաւ․ զի 'ի մեղս մեր և յանօրէնութիւնս վերակացու եղև մեզ։ Նա առաքեաց զՈրդին իւր 'ի քաւութիւն մեղաց մերոց․ այսինքն՝ զարդարն 'ի վերայ անարդարոցս՝ մեռանիլ և փրկել․ և զսուրբն՝ 'ի վերայ պղծոցս, և զանմեղն՝ 'ի վերայ մեղաւորացս„ Սարգ․ Շնորհ․ 'ի Մեկն․ ա․ Յովհ․ Ճառ Է․ դ․ 10։

“ Նա զոր մեծն է գրեցից՝ պատմել յապաւանիւն․ քանզի ոչ անուանեցար հրեշտակասէր, և որ զպետութիւնս նոցունց հաստատեցեր, այլ և զերկինս զամբարօք նոցին՝ զմատանց քոց գործ, ոչ գրեցեր երբէք սիրել զնոսա, այլ առեր պատուիմեծաց զօվասոյց՝ առաջին զասեալ զմարդասիրութիւնն „ Նարեկ․ Ժ։

“ Զի՞նչ տեսեր Տէր 'ի մարդն․ զի այդչափ սիրեցեր զնա, այդչափ աշխատեցար 'ի վերայ նորա, զհրեշտակս 'ի ներքոյ պատժոց թողեր, և զմանէ բուռն հարեալ կանգնեցեր․ երկնի և երկրի սիրով զքեզ չասացեր, և մարդասէր անուամբ պարծեիր „ Ներս․ Լամբր․ 'ի Ծըն․ Աստուծոյ։

“ Կենդանի եմ այսուհետև, ոչ ես՝ այլ կենդանի է յիս Քրիստոս․ այլ որ այժմ կեամ մարմնով, հաւատովք որդւոյն Աստուծոյ կեամ․ որ սիրեացն զիս, և մատնեաց զանձն վասն իմ„ Գաղ․ Բ․ 20։

63․ Հ․ Յի՞նչ պատճառս յամեցաւ յայնչափ դարս փրկագործ գալուստ փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի յաշխարհ՝ առ 'ի կատարել զփրկագործ մարդեղութեանն աքանչելի խորհուրդ։

Գ. Քանզի յառաջին դարուց և ժամանակաց անտի մինչև ցգալուստ Քրիստոսի յաշխարհ մարդիկ որպէս թէ 'ի աղայական թերակատար հասակի համարեալ էին, ուստի հարկ եղև կրթել զնոսա 'ի բնական և 'ի գրաւոր օրէնս իբրև 'ի սկզբունս ուսմանց 'ի պատրաստութիւն իմանալի գիտութեանն Աստուծոյ՝ շնորհական օրինաց աւետարանական ճշմարտութեան ։ Զոր օրինակ, մանկունք և հեզք պտուղնից առաջի դնին մանկանց, զի մարթասցին յետոյ 'ի միտ առնուլ զբարձրագոյն և զկարևորագոյն գիտութիւնս ։ Այս որպէս բնութիւնն՝ որ ոչ փագփաղակի տայ ժամանել մարդոյ զարգանալ հասակաւ կամ խելամտութեամբ, այլ կարգաւ իմն և սակաւ առ սակաւ իբրև աստիճան առ աստիճան բարձրացուցեալ, այսպէս ահա մերին Աստուածային իմաստութիւնն սքանչելի մարդասիրական տնօրէնութեամբ հաճեցաւ. զի մարդկային ազգ առ ժամանակ ինչ 'ի բնական և 'ի գրաւոր օրէնս դաստիարակեսցի և զարգասցի. և յետոյ 'ի հասանել ժամանակին մեծի և սքանչելի բարձրագոյն խորհրդոյ փրկագործ մարդեղութեանն Յիսուսի Քրիստոսի փրկչին մերոյ վերահասու լիցի և ընդունակ ։ Վասն որոյ մարգարէք 'ի հին օրէնս մարգարէացեալ նախակրթէին զմարդիկ 'ի սկզբունս ծանօթութեան զսքանչելեացն՝ որ ունէին կատարել յապառնի ժամանակս (1). իսկ սրբազան առաքեալք աւետարանեալ զներկայն, աւանդեցին բացայայտ զբարձրագոյն խորհուրդ մարդեղութեան. յորոց առեալ և սուրբ հարք եկեղեցւոյ ուսուցին մեզ (2)։

(1). «Անդ ծագեցից զեղջիւր 'ի Դաւիթ, պատ-

րաստ արարից զճրագ օծելոյ իմոյ ,, Սաղմ. ճլա. 16։
“ Յայտնի արասցէ Տէր զբազուկ իւր սուրբ առաջի ամենայն ազգաց. և տեսցեն ամենայն ծագք երկրի զփրկութիւն Աստուծոյ մերոյ ,, Եսայ. ծբ. 10։
“ Ահա աւուրք գան՝ ասէ Տէր. և յարուցից Դաւթի ծագումն արդարութեան. և թագաւորեսցէ թագաւոր, և 'ի միտ առցէ, և արասցէ զիրաւունս և զարդարութիւն 'ի վերայ երկրի ։ Ահա աւուրք գան՝ ասէ Տէր, և հաստատեցից զբան իմ բարի, զոր խօսեցայ 'ի վերայ տանն Իսրայէլի և 'ի վերայ տանն Յուդայ ։ Յաւուրս յայնոսիկ և 'ի ժամանակին այնմիկ ծագեցից Դաւթի ծագումն արդարութեան, որ առնիցէ զիրաւունս և զարդարութիւն յերկրի ։ Յաւուրս յայնոսիկ փրկեսցի Յուդայ, և Երուսաղէմ բնակեսցի յուսով. և այս է անունն՝ զոր կոչեսցէ զնա Տէր, արդարութիւն մեր ,, Երեմ. իգ. 5 ։ լգ. 14—16 ։
“ Եւ ցանեցից 'ի վերայ ձեր ջուր սուրբ, և սրբեջիք յամենայն պղծութեանց ձերոց, և յամենայն կռոց ձերոց սրբեցից զձեզ ։ Եւ տաց ձեզ զսիրտ նոր, և զոգի նոր նորոգեցից 'ի ձեզ. և հանից զսիրտն քարեղէն 'ի մարմնոց ձերոց, և տաց ձեզ զսիրտ մարմնեղէն. և զոգի իմ տաց ձեզ ։ Եւ արարից, զի յարդարութիւնս իմ գնայցէք, և զիրաւունս իմ պահիցէք, և առնիցէք զնոսա ,, Եզեկ. լզ. 25—27 ։
“ 'Ի մէջ երկուց գազանաց ծանիցիս. 'ի մերձենալ ամացն յայտնեսցիս. 'ի հասանել ժամանակին երեւեսցիս ,, Ամբակ. գ. 2 ։
(2). “ Մինչև հաւատքն եկեալ էին, ընդ օրինօք փակեալ պահէաք 'ի հանդերձեալ հաւատն, որ

յայտնելոց էին 'ի մեզ : Ապա օրէնքն դաստիարակք եղեն մեզ 'ի Յիսուս Քրիստոս, զի 'ի հաւատոցն արդարասցուք : Այլ իբրև եկին հաւատքն, ոչ ևս ընդ դաստիարակաւ եմք . քանզի ամենեքին որդիք Աստուծոյ էք հաւատովք 'ի Յիսուս Քրիստոս ,,: և թէ՝ "Այնպէս և մեք մինչ տղայք էաք, ընդ տարերբ աշխարհիս 'ի ծառայութիւն կայաք . այլ իբրև եկն լրումն ժամանակին, առաքեաց Աստուած զՈրդին իւր՝ որ եղև 'ի կնոջէն, և եմուտ ընդ օրինօք . զի զնոսա որ ընդ օրինօքն իցեն, գնեսցէ . զի մեք զորդեգրութիւն ընկալցուք ,, Գաղ . Գ . 23—26 : Դ . 3—5 :

"Այլ պատուական արեամբն Քրիստոսի, իբրև անբիծ և անարատ գառին : Որ յառաջ ծանօթն էր նախ քան զլինելն աշխարհի, և երևեցաւ 'ի վախճան ժամանակաց վասն ձեր ,, Ա. Պետր. Ա. 19 . 20 :

"Իսկ ընդէ՞ր արդեօք յերկարեալ միածինն այնչափ ներողութիւն արարածոց հատուցանէր, եթէ ոչ՝ զի նախ ազդ արարեալ յառաջագոյն ընտրելականս առնիցէ, զի մի յանկարծ երևեալ անծանօթ անընկալ լիցի, այլ իբրև հայողաց և սպասողաց՝ եկեալ ծանօթս տայցէ : Զի եթէ յանչափ ժամանակաց եկեալ առ իւր արարածսն անընկալ եղև, ո՞րչափ անազդելոցն և անհամբաւելոցն, այլ կանխաւ խորհրդով ծանօթս տուեալ ամենայն ազգաց և յաւիտենացն եկելոց ,, յԱգթնգ :

"Զգալուստ Որդւոյ իւրոյ յայնմ ժամանակի պատշաճեաց (Աստուած)՝ յորում գիտէր, թէ օգուտ լինելոց է : Եւ թէ բժիշկ ըստ պէսպէս հիւանդութեանց ազգի ազգի դեղս ախտացելոցն մատու-

ցանեն. զի որ 'ի սկզբան ցաւոց դէպ իցէ՝ զայն 'ի սկզբան մատուցանեն, և որ ընդ միջինն՝ զայն 'ի միջոցին, և որ 'ի պառաւել ցաւոցն՝ զայն հուսկ յետոյ, ո՛րչափ առաւել ես ամենահնարն, յորմէ ամենայն հանգամանք կարողութեան բղխեալ են, 'ի դէպ ժամանակի առնէ՝ զոր առնէ ,, Նիւս. Կոչէ. ծառ ՀԷ :

" Ի մերձենալ ամաց վերջին, զոր տեսանօղքն ծանուցին, զհասանիլ մեր փրկողին առ 'ի վախճան ժամանակին. երևեցար 'ի մէջ մարդկան, զգեցեալ զկերպ ծառայական ,, Է Ճառքն :

64. Հ. Ի մարմնաւոր տնօրէնութիւնն բանին Աստուծոյ Յիսուսի փրկչին մերոյ եղե՞ն համագործ և համակամ Հայր Աստուած և սուրբ Հոգին Աստուած:

Պ. Անճառելի գործողութիւնք ամենասուրբ Երրորդութեան կրկին է ըստ Աստուածաբանին. առաջինն է ծածուկ և ներքին, որ յատկապէս վերաբերի միոյ անձին. ըստ որում Հայր Աստուած է ծնօղ միածին Որդւոյն և բղխօղ սուրբ Հոգւոյն : Ահա զայսմանէ հոգևորուղիս քարոզութեամբ ճառեցին նախնի սուրբ հարք՝ վարդապետք ճշմարտութեան :

" Ոչ է Հայր ծնեալ ուստեք, այլ Որդի է ծնեալ և ոչ արարեալ. և ոչ Հոգին սուրբ ստացեալ, այլ բղխեալ : Անտնջենաւորք, միաբան խնկութեամբ՝ ընդ Հօր և առ Հայր՝ և 'ի Հօրէ, որպէս բոց և ջերմութիւն հրոյ ,, Յաճախ. ճառ Ը :

" Գիտեմ, զի զՈրդին ծնաւ (Հայր). և եթէ զիարդ՝ անգիտանամ. զի Հոգին 'ի նմանէ է. բայց եթէ որպէս 'ի նա՝ ոչ գիտեմ ,, Ոսկ. Ի Ճառն յԱշահարանելուոյն :

" Ոչ երկուս անձինս և կամ երկուս ծնունդս խոստովանիմք. այլ միածին, և մի ծնունդ, և

մի Հոգի ճշմարտութեան՝ որ 'ի Հօրէ ելանէ ,,
Սեւերիանոս . 'ի ճառն վասն հաւատոյ :

"Հայր է ծնող , որդի ծնունդ .
Հոգին 'ի նոյն բնութենէ ,
ոչ մարմնական ծննդեան նման ,
զի է աննիւթ և պարզական :
Նա ոչ աղբիւր համանման ,
զոլ անմարմին բղխումն Հոգւոյն ,
ոչ բաժանեալ յէութենէ
Նման և Հոգին առ 'ի Հօրէ :
Ոչ մինն առեղծիչ , մին արարած ,
և միւսն օտար պաշտօնատար ,
որպէս կարծիքն արիոսի
հերձուածոց համախոհի ,, 'ի [illegible] :

"Մինն ծնունդ է Հօր՝ որպէս զՈրդի , և միւսն բղխումն 'ի նորին բնութենէ , ոչ որպէս Որդի , այլ որպէս Հոգի , և երկոքեանն որ են Հօրն : Անձնաւորութեամբ 'ի նմանէ բաժանեալք , և ոչ բնութեամբ որոշեալք ,, [illegible] . 'ի [illegible] . [illegible] :

65· Իսկ Աստուածային առնելութեան երկրորդն ասի [illegible] , որ վերաբերի [illegible] երից Աստուածային անձանց միասնական ամենասուրբ Երրորդութեան , որպիսիք են [illegible] :

66· [illegible] Աստուծոյ :

"Եւ ասաց Աստուած . արասցուք մարդ ըստ պատկերի մերում և ըստ նմանութեան ,, Ծննդ . Ա . 26 :

“ Ողորմութեամբ Տեառն լի եղև երկիր, և բանիւ Տեառն երկինք հաստատեցան, և Հոգւով բերանոյ նորա ամենայն զօրութիւնք նոցա „ Սաղմ. ԼԲ. 6 :

“ Նա որպէս երկինք և ամենայն զարդք նոցա հաստատեալ կան բանիւն Աստուծոյ, և հոգւոյն ամենայն զօրութիւնք . . . ոչ ոք այլ արարիչ, բայց միայն ամենասուրբ Երրորդութիւնն՝ որ ասաց և եղեն, հրամայեաց և հաստատեցան „ Յոհան. ճառ. Ա :

“ Մի էութիւն, մի իշխանութիւն, մի կամք և մի արարչագործ զօրութիւն յերիս անձնաւորութիւնս իմանի „ Ներսէս Շնորհ. 'ի Խոստովն. գրեալ առ Աղէքս. :

67. Տէրութիւն փրկագործ մարմնաւորութեան.

“ Պատասխանի ետ հրեշտակն և ասէ. Հոգին սուրբ եկեսցէ 'ի քեզ, և զօրութիւն բարձրելոյն հովանի լիցի 'ի վերայ քո. քանզի և որ ծնանելոցն է 'ի քէն՝ սուրբ է, և Որդի Աստուծոյ կոչեսցի „ Ղուկ. Ա. 35 :

“ Նա այս ամենայն եղև Հոգւոյն գործակցութեամբ. վասն այսորիկ ասէ, Հոգին սուրբ եկեսցէ 'ի քեզ, և զօրութիւն բարձրելոյն հովանի լիցի 'ի վերայ քո . . . . որ ծնանելոցն է 'ի քէն՝ սուրբ է. վասն զի մարմնական և ոչ մի ինչ ախտաւոր կրից կցորդութիւն, այլ ամենայն ինչ յԱստուծոյ և Աստուածայինք անսերմն յղութեան անապական ծնունդ և Որդի Աստուծոյ „ 'ի Մեկն. Ղուկ. Ա. 35 :

" Զմկրտեալս 'ի մահն Քրիստոսի՝ 'ի բնակութիւն իւր մաքրազարդեաց · զոր Հայր և Որդի, զնոյն և Հոգին ներգործեաց · և ինքն է Աստուած խնկեալ տիրապէս՝ ամենայն յամենայնի ,, Նարեկ · գլ · լը ։

" Միայն երանեալ և բարերանեալ, Հօրն հաճութեամբ հոմանաւորեալ · Որդւոյն ծնող, Հոգւոյն վերընդունող, Երրորդութեան փառացն տարօղ ,, Նարեկ · 'ի Ներբ · Աստուածածնի ։

" Որպէս և ասէր մարգարէն յերեսաց Տեառն Որդւոյ · մատերուք առ իս, և լուարուք զայս · ոչ 'ի սկզբանէ 'ի ծածուկ ինչ խօսեցայ և ոչ 'ի տեղւոջ խաւարին երկրի · զի յորժամ լինէրն՝ ես անդ էի · և արդ՝ Տէր Տէր առաքեաց զիս և Հոգի նորա, Տեսանես զէական միաւորութիւնն, յորժամ լինէրն՝ ես անդ էի, ասէ, յայտ արարեալ զմիաբուն Երրորդական, թէ 'ի հաստատելն համագործ և 'ի նորոգելն միարան ։ Արդ բացեալ երկինք և Հայր աղաղակէր, թէ դա է Որդի իմ սիրելի, և Հոգին իջեալ 'ի նմանութիւն աղաւնւոյ · զի յայտ լիցի միարան խորհուրդ զօրութեան գալստեան Որդւոյն ,, Ագաթանգ ։

## 68. Տեսութիւն Ներգործութեան Աստուածային Խնամոց ։

" Որ հայիս քաղցրութեամբ յարարածս քո Հայր ամենակալ ։ Որ իջեր 'ի փրկել զարարածս քո Որդի միածին ։ Որ խնամես տեսչութեամբ զարարածս քո Հոգիդ ճշմարիտ ,, 'ի Շարակն ։

" Իսկ յաղանակ խնամարկելոյ հաստողին՝ 'ի վեր է

քան զսահման կշռութեան մտաց հրեշտակաց և երկրաւորաց. և եթէ բնաւ կրկնեսցի, ոչ լինի չափել. քանզի անըմբռնողականըն՝ և բարեբարեն է անճառելի.... Իսկ համարարւոյ միակամութեանն ցուցակ՝ առ 'ի գնոյն բարի ներգործել, որպէս Հոգին՝ կենդանւոյն, և բանն՝ բանականին, պայծառութիւն փառացն, և կերպարան էութեան,, Եբրէէ. Ա:

69. Հ. Զանազան անուանք նուիրեալք Աստուածորդւոյն մարդացելոյ վասն մերոյ փրկութեան Յիսուսի Քրիստոսի զանազան ներգործութիւնս փրկագործ տնօրէնութեա՞ն միայն յայտնեն մեզ, եթէ զինչութիւն և եթ Աստուածային անձին տան մեզ ճանաչել:

Պ. Ոչ թէ միայն զինչութիւն Աստուածային անձին, այլ և ըստ զանազան անուանցն զանազան սքանչելի ներգործութիւնս շնորհաց մարմնաւորին և փրկագործ տնօրէնութեանն աւետարանեն մեզ ուղղափառ հաւատացելոցս, զորս 'ի սորե ունիս տեսանել վկայութեամբք սուրբ գրոց և երանեալ

70. հարց սրբոց: Նախ՝ խոստովանիմք զՏէր մեր Յիսուս Քրիստոս բնական և ճշմարիտ Միածին Որդի Հօր Աստուծոյ, Աստուած յԱստուծոյ. լոյս 'ի լուսոյ. Աստուած ճշմարիտ. յԱստուծոյ ճշմարտէ ծնունդ և ոչ արարած:

"Զաստուած ոչ ոք ետես երբեք, բայց միածին Որդի՝ որ է 'ի ծոց Հօր՝ նա պատմեաց մեզ,,: և թէ "Զի այնպէս սիրեաց Աստուած զաշխարհ, մինչև զՈրդին իւր միածին ետ. զի ամենայն որ հաւատայ 'ի նա՝ մի կորիցէ, այլ ընկալցի զկեանս

յաւիտենականս ։ Զի ոչ առաքեաց Աստուած զՈրդին իւր յաշխարհ թէ դատեսցի զաշխարհ, այլ զի փրկեսցի աշխարհ նովաւ ։ Որ հաւատայ 'ի նա՝ ոչ դատապարտեսցի ․ և որ ոչ հաւատայ 'ի նա՝ արդէն իսկ դատապարտեալ է ․ զի ոչ հաւատաց յանուն միածնի որդւոյն Աստուծոյ ,, Յովհ․ Ա․ 18 ։ Գ․ 16—18 ։

“Եւ զի յայսմ երևեցաւ սէրն Աստուծոյ 'ի մեզ, զի զՈրդին իւր միածին առաքեաց Աստուած յաշխարհ, զի եղիցուք նովաւ կենդանիք ,, Ա․ Յովհ․ Դ․ 9 ։

“ Որ առաքեցեր զՄիածին Որդիդ քո յաշխարհ, լոյս՝ 'ի լուսոյ, կեանք՝ 'ի կենաց ,, յԱգաթանգ ։

“Լսես ծնունդ, զորպէսն մի քններ ․․․․ Աստուծոյ ծննդեան լռութեամբ պատուեսցի․ մեծ է քեզ ուսանել՝ թէ ծնաւ ․ բայց թէ զիարդ՝ և ոչ հրեշտակաց է իմանալ, թող թէ քեզ զմտաւ ածել ,, Սուրբն Գրիգոր Աստուածաբան ․ յԾնունդ ․ ճառ Ժ․ և Է ։

“ Զմարմնով տնօրէնութեան միածնին խորհուրդ հարցափորձել կամեցեալ՝ զայն առնեմ փոյթ ունել ճշմարիտ և հաստատ ուղիղ․ զի ինքն՝ որ յԱստուծոյ Հօրէ բանն, ճշմարիտ Աստուածն յԱստուծոյ ճշմարտէ, լոյս 'ի լուսոյ ,, Սուրբն Աթանաս․ 'ի պարսաւ ․ Գլ․ ԺԳ ։

“Որ ծնաւ զՈրդին՝ ծնաւ նա զՀայրն․ զի նման է որդի յամենայնի ծնողին իւրոյ ․ կեանք ծնեալ 'ի կենաց, և լոյս 'ի լուսոյ, և զօրութիւն 'ի զօրութենէ, և յԱստուծոյ Աստուած ,, 'Ի հաւ․ ընծայ ․ Գլ․ ԺԱ ։

“ Որդի Աստուծոյ կենդանւոյ օրհնեալ յամենայնի,

Հօրդ ահաւորի անքննին ծնունդ, որ տկարանայ առ 'ի քէն և ոչինչ,, Նարեկ. խա :

‛‛Բազում ինչ է՝ զոր ասեմք զԱստուծոյ, և հաւանել ոչ կարեմք. ասեմք, եթէ՝ ամենայն ուրեք է Աստուած, և ոչ գիտեմք՝ ո՞րպէս է : Ասեմք, եթէ՝ Հայր որդի ծնաւ իւր հանգունակից, և զպայման ծննդեանն ոչ գիտեմք,, Սուրբն Եփրեմ. Ի ճառն. ա. Յովէն. Տեառն. ա. ա. 1 :

‛‛Հայր՝ անսկիզբն է և անծին. Որդի՝ ծնեալ 'ի բնութենէ Հօր, այլ՝ անժամանակ. ոչ ըստ մարդկան ծննդեան ախտաւոր և հոսանուտ, զոր և ընդմտաւ ածելն է հայհոյութիւն, թող թէ՝ բարբառել բանիւ. այլ որպէս լոյս 'ի լուսոյ, և հուր 'ի հրոյ, զի ոչ են օտարք 'ի բաժանելն, այլ մի ճառագայթ և մի ջերմութիւն հրոյն և լուսոյ, ծնելոյն և յորմէ ծնաւն. և մի է բնութիւն երկաքանչիւրոցն. թէպէտ և բաժանին 'ի միմեանց անձամբ : Նոյնպէս և լոյս Որդի 'ի լոյս Հօրէ, և հուր Աստուածութեանն Որդւոյ 'ի հրոյ Աստուածութեան Հօր յառաջ եկեալ ծննդեամբ, ոչ են այլ և այլ, այլ մի և նոյն բնութեամբ,, Ներսէս շնորհ. ընդհանրն :

‛‛Զի որպէս ծնունդ է բան սրտի,
նոյնպէս և Հօր ծնունդ Որդի.
լոյս 'ի լուսոյ յառաջ բղխումն,
և ոչ նման ծննդեան մերում :
Բան ասացաւ անուն նորին,
զի անմարմին է ծնունդ բանին.
և զի նմին Հօր է բնութիւն,
անուանեցաւ յորդիութիւն :
Անհաս մարդկան և հրեշտակաց,
բանի անճառ անտես մտաց.

միայն հաւատ ուղղափառաց ,
Երրորդութեանն է միաձակաց,, 'ի Յէսուա որդէ :
"Զանզի ուր Աստուած զՀայր դաւանիմք զանըս-կիզբն և զպատճառն սկզբնականաց , 'ի նմանէ և զՈրդիխոստովանեսցուք անժամանակաբար ծնունդ՝ որպէս 'ի պատճառէ. այս է՝ Աստուածն ճշմարիտ յԱստուծոյ ճշմարտէ ,, Ներսէս Լամբր. 'ի Մեկ. հանգանակն :
" Լոյս 'ի լուսոյ ծագումն՝ արեգակն արդար ան-ճառ ծնունդ Հօր Որդի , յառաջ քան զարև ա-նուն քո գոլեալ ընդ Հօր ,, Ներս. 'ի Ժամագրքէն :
71. Երկրորդ՝ դաւանիմք զՅիսուս Քրիստոս զմիա-ծին Որդին Աստուծոյ ծնեալ յան Հօր Աստու-ծոյ ծոցածին :
"Առաքեաց զբան իւր և բժշկեաց զնոսա, և փրր-կեաց զնոսա յապականութենէ իւրեանց ,, Սաղ. ճզ. 20 :
" 'Ի սկզբանէ էր բանն. և բանն էր առ Աստուած. և Աստուած էր բանն ,, Յովհ. ա. 1 :
" Որ էրն 'ի սկզբանէ . զորմէ լուաքն , որում ա-կանատեսն իսկ եղեաք . ընդ որ հայեցաքն , և ձեռք մեր շօշափեցին 'ի վերայ բանին կենաց ,, ա. Յովհ. ա. 1 .
" Այլ բան է ճշմարիտ , ոչ եթէ երբեք իցէ, և երբեք չիցէ , կամ երբեմն չէր , և երբեմն եղև . այլ միշտ հանապազ 'ի սկզբանէ յաւիտենից էր իսկ նա : Զանզի և առօղ նորա մշտնջենաւոր էր . քանզի նմին իսկ առողին նման է և բան առողին . և վասն այսորիկ ասաց . եթէ " 'Ի սկզբանէ էր բանն ,, . զի յայտ արասցէ՝ եթէ վերադոյն է յաւի-տենութիւնն նորին քան զամենայն զսկիզբն և զսահ-

մանս ժամանակաց ,, ասացելն Նեկեսի. Ն. Գիր. Յովհ. Գլ. Ա :

“'Ի սկզբանէ էր, ասէ, բանն. իսկ երկրորդս որ ասեն թէ՝ առ ո՞ ուրեք էր բանն : Այլ մանաւանդ զի Աստուածութեան առանձին իմն է մշտնջենաւորութիւնն և իսկութիւնն և անսկզբնութիւնն. վասն այսորիկ եդ՝ թէ 'ի սկզբանէ էր . դարձեալ զի մի՛ իբրև լուիցես թէ 'ի սկզբանէ և անծին ես համարեսցիս զնա, էած թափեաց մխիթարեաց վաղվաղակի մինչև հարցեալ էր, թէ զի՞ էր, ո՞ւր էր, առ Աստուած էր. դարձեալ զի ասէր, Բանն էր . զի մի՛ համարեսցիս իբրև զհագագ ինչ ընդ բերան բանն կարգաց որ և յառաջն ասացաք՝ և յերկրորդ բանի ասա դարձեալ նշմարէ . զի ոչ ասաց Աստուծով էր . այլ ասէ՝ առ Աստուած էր . անդատին զիսկութիւնն զգործութիւնն ցուցանէ . դարձեալ՝ յառաջագոյն մատուցեալ յայտնագոյն ցուցանէ մեզ, զի բանն այն Աստուած իսկ է ,, Ոսկ . Ն. Գիր. Յովհ. ճառ Է :

“Արդ՝ այսպիսի յատուկ և համառօտ դաւանութեամբ առաքելականացն եղաւկցեմք ձայնից, ըստ որում և Աստուածաբանն Յովհաննէս զԱստուածականն ծնունդ 'ի նախասկիզբն աւետարանին՝ ասելով . 'ի սկզբանէ էր բանն. և բանն էր առ Աստուած. և Աստուած էր բանն. նա էր 'ի սկզբանէ առ Աստուած . ամենայն ինչ նովաւ եղև : Նա 'ի թուղթն Կաթուղիկէ, որ էրն 'ի սկզբանէ, զորմէ լուաքն, որում և ականատեսն իսկ եղեաք, և ձեռք մեր շօշափեցին 'ի վերայ բանին կենաց : Յայտնի է ամենայն իրօք, թէ 'ի սկզբանէ էր նա՝ որ 'ի ըն-կրզքանն Աստուծոյ Հօրէ բանն էր . որ և Աստ-

ուած հաւասար նմին և՛ արարչակից. իսկ ականա-
տեսք մարմնոյն, որպէս և յաւելու, թէ ձեռք մեր
շօշափեցին 'ի վերայ բանին կենաց. յայտ արա-
րեալ զանձառ միաւորութիւն բանին և մարմնոյն,,
Գրիգ. Կոր. 'Ի ԲԱՆ գրեալ առ յոյսքն Եմմանուէլ:

"Բանն անմարմին ըստ էութեան,
եղև մարմին ճշմարտութեան.
զիւրն պահեալ անչեղապէս,
և զմերն առեալ ստուգապէս:
Նոր այս խառնումն սքանչելի,
Աստուած ընդ մարդ բնութեամբ խառնի.
ոչ էութիւնն փոփոխի,
և ոչ ձեւով կերպարանի:
Որպէս ասաց ժանտն եւտիքէս՝
թէ ոչ մարմին առ խոկապէս,
այլ առ աչօք անց ընդ կուսին՝
խողովակի նմանապէս:
Կամ կաղապար հրահալեաց՝
որ զբնութիւն ոչ տայ ինքեանց.
միայն զձեւս քանդակեալ
և զքանակս ենթակայեալ:
Եւ ոչ երկուցն միութիւն
բաժանելով յերկու բնութիւն.
և կամ յերկուս որդիս զմին,
ըստ Նեստորի չարափառին.
և ոչ մարմինն անմտարար,
որպէս ասաց ապօղինար,, 'Ի Յիսուս որդի:

72. Երրորդ՝ միածին Որդին բան 'ի մարդեղութեանն անուանեցաւ Յիսուս Քրիստոս:

"Գիրք ծննդեան Յիսուսի Քրիստոսի ..... Եւ Յիսուսի Քրիստոսի ծնունդն էր այսպէս,, Մատթ. Ա. 1. 18:

Յիսուս՝ այս պաշտելի անուն զմարդասիրական փըր-
կագործութեանն ասէ մեզ զ շնորհ ։

"Ծնցի որդի, և կոչեսցես զանուն նորա Յիսուս. զի նա փրկեսցէ զժողովուրդ իւր 'ի մեղաց իւրեանց,, Մատթ. Ա. 21 ։

"Քանզի երևեցաւ շնորհն Աստուծոյ փրկիչ ամենայն մարդկան,, Տիտ. Բ. 11 ։

"Ո՛ որ միայն ես փրկիչ և արդար. ո՛ որ միշտ ես և յաւիտենից, և ամենայն ուրեք մերձ ես Աստուած իմ Յիսուս,, 'ի հանգիստ Յովհ. ոսկեբ՝ բանքն ։

"Քանզի Յիսուսն փրկիչ թարգմանի, զոր ինքն իսկ մեկնէ հրեշտակն, և յանխաւ քարոզէ զբարութիւնն՝ որ նովաւ լինելոց էր. և որպէս՝ նա փրկեսցէ զժողովուրդ իւր 'ի մեղաց իւրեանց ։ Զարմանալի իրս յայտ առնէ ասացեալքս. զի ոչ մարմնոյ փրկութիւն աւետարանէ, այլ որ առաւել մեծն է, 'ի հոգւոյն զրժողէ,, Ներս. Շնորհ. 'ի Մեկն. Մատթ. Ա. 21 ։

"Յիսուսն անուն Հէբրայականէն 'ի մեր փրկիչ թարգմանի,, Խոսրով. 'ի Մեկն. Ժամագր ։

"Յիսուսն փրկիչ և փրկութիւն Տեառն ասի, փրկել զժողովուրդս ոչ 'ի յայտնի պատերազմացն՝ որ ըստ աշխարհի, և ոչ'ի մարմնական ծառայութենէ. այլ 'ի մեղաց և յապականութենէ,, Սարգիս Շնորհ. 'ի Մեկն. Յակ. ճառ Ա ։

"Որ Աստուածն էր և բան. յորժամ էջ յերկնից յերկիր՝ կոչեցաւ Յիսուս, որ՝ փրկիչ,, Ներս. Շնորհ. 'ի Մեկն. առակ. Գլ. Ա ։

Եւ փառաւորելի անունս Քրիստոս օծեալ 'ի մեզ թարգմանի, ըստ որում առեցեալ մարդկային բնու-

թիւնն Յիսուսի օծաւ 'ի նորին իսկ Աստուածու-
թենէն անձնաւորական միաւորութեամբ ։

“ Հոգի Տեառն 'ի վերայ իմ, վասն որոյ և եօծ իսկ զիս„ Եսայ. կա. 1 ։ Ղուկ. դ. 18 ։

“ Աւետարանեմ ձեզ ուրախութիւն մեծ, որ եղիցի ամենայն ժողովրդեանն. զի ծնաւ ձեզ այսօր փրկիչ, որ է օծեալ Տէր, 'ի քաղաքի Դաւթի„ Ղուկ. բ. 10. 11 ։

“ Զմարդկութիւն նորա՝ արար Աստուածութիւն նորա Տէր և օծեալ„ սուրբն Աթանաս. ճառ ա ։

“ Որ խոնարհեցար 'ի մեզ իւղ թափեալ անուն օծելոյդ Աստուծոյ. խառնելով զԱստուածութիւնդ՝ օծեալ զմարդկային առեր բնութիւն„ Ի Շարակն. յօրհն. Ծննդեան ։

“ Քրիստոս ոչ սոսկ մարդկութեան է անուն և ոչ լոկ Աստուածութեան, այլ օծեալ թարգմանի, այսինքն՝ Աստուած և մարդ. վասն զի Աստուածութեամբն եօծ զմարդկութիւնն„ սուրբն Խոսրով. 'Ի Մեկն. Ժամակարգէ ։

“ Վասն զի Քրիստոսն անուն ոչ յատուկ Աստուածութեան է, և ոչ սոսկ մարդկութեան. քանզի Քրիստոսն յԵբրայեցւոց 'ի մերս՝ օծեալ թարգմանի ։ Եւ արդ՝ վասն զի օծաւ մարդկութիւնն յԱստուածութենէ անտի, նովին իրի զվայելչականս զայս անունն կոչաւ„ Սուրբն Շնորհ. 'Ի Մեկն. Յովհ. ճառ ա ։

“ ԶԱստուածութիւնն 'ի մարդկութիւնն միաւորեալ օծեալ անուանէր„ Ներսէս Շնորհ. 'Ի Մեկն. Պատարագի ։

73. Չորրորդ՝ Յիսուս Քրիստոս է էմմանուէլ և անբաժանելի լոյս Ճշմարտի. որով մերժեցաւ կորստական

խաւարն կամօք ամբարշտութեան, և ընդհանուր տարածեցաւ 'ի հոգիս հաւատացելոց լոյս աւետարանական ճշմարտութեան :

"Ժողովուրդ՝ որ գնայր ընդ խաւար, տեսին զլոյս մեծ. և որ բնակեալ էք յաշխարհին և 'ի ստուերս մահու, լոյս ծագեսցի 'ի ձեզ,, : Եւ թէ՝

"Լուսաւորեաց լուսաւորեաց Երուսաղէմ, զի հասեալ է լոյս քո, և փառք Տեառն 'ի վերայ քո ծագեսցի .... Եւ ոչ ևս եղիցի քեզ արեգակն 'ի լոյս տուընջեան, և ոչ ծագումն լուսնի տացէ քեզ զլոյս 'ի գիշերի. այլ եղիցի քեզ Տէր լոյս յաւիտենական, և փառք քո Աստուած ,, Եսայ. Թ. 2 : Կ. 1 . 19 :

"Առաքեա Տէր զլոյս քո և զճշմարտութիւն քո, զի նոքա առաջնորդեսցեն ինձ և ածցեն զիս 'ի լեառն սուրբ և 'ի յարկս քո ,, Սաղմ. ԽԲ. 4:

"Մի ուրախ լինիր ինձ թշնամի իմ... Տէր է իմ լոյս ,, Միքէա. Է. 8 :

"Ժողովուրդ՝ որ նստէր 'ի խաւարի, տեսին լոյս մեծ. և որոց նստէին յաշխարհին և 'ի ստուերս մահու՝ լոյս ծագեաց նոցա ,, Մատթ. Դ. 16 :

"Լոյս 'ի յայտնութիւն հեթանոսաց, և փառս ժողովրդեան քում Իսրայէլի ,, Ղուկ. Բ. 32 :

"Եւ այս իսկ է դատաստան. զի լոյս եկն յաշխարհ, և սիրեցին մարդիկ զխաւար առաւել քան զլոյս. զի էին գործք իւրեանց չարութեան,, :"Ես եմ լոյս աշխարհի. որ զկնի իմ ընդ խաւար մի գնասցէ. այլ ընկալցի զլոյսն կենաց,, : "Ես եմ լոյս՝ յաշխարհ եկի. զի ամենայն որ հաւատայ յիս, 'ի խաւարի մի մնասցէ ,, Յովհ. Գ. 19 . Ը. 12: ԺԲ. 46 :

‘‘Այն Հօր ինքն իսկ է և բազում միածինն Քրիստոս․ և նովաւ լուսաւորեցան ամենայն եղեալք․ որ ՚ի սկզբանէ էր բանն, և բանն էր առ Աստուած, և Աստուած էր բանն․ որ ամենայն ինչ նովաւ եղև և նովաւ հաստատեցան ամենայն․ որ ինչ յերկինս, և որ ինչ յերկրի․ հարկ էր զի նովին սրբեսցին որոց եղենն և հաստատեցան և նովաւ լուսաւորեսցին„ ոսկէբ․ Գրէք․ լու․ յԱւետարանդ :

‘‘Լոյս է (Քրիստոս), որ լուսաւոր առնէ զամենայն մարդ․ որ կամի ՚ի խաւարային մեղաց ՚ի սուրբ լոյսն„ ՚ի Յոհան․ ճառ Ճ :

‘‘Որ զանհերեւոյթն երեւելիօքս եցոյց կամաւոր խաչելութեամբն, հաշտեցուցանել զարարիչն ընդ արարածս : Նա լուսաւոր վարդապետութեամբն ստուգեաց ճշմարիտ հաւատս յամենասուրբ Երրորդութիւնն„ անփ․ ճառ ԺԶ :

‘‘Տես զմեծութեան պատիւ․ զի զիւրականն անուն՝ ըստ բնութեան, մարդկան դնէ հողեղինաց․ քանզի որ երբեմն զանձնէ ասէր, ես եմ լոյս աշխարհի, և ես լոյս յաշխարհ եկի, այժմ առ աշակերտսն ասէ, դուք էք լոյս աշխարհի : Զի զորօրինակ՝ ՚ի լուսոյ Հօրէ Որդի, լոյս ծագեցաւ աշխարհի․ նոյնպէս և սոքա ՚ի լոյս Որդւոյ՝ լոյս եղեալք և անուանեալ, առաքեցան լինել լուսաւորք տիեզերաց„ Նեղոսէ ճնու․ ՚ի Գրք․ Մատթ․ Գլ․ Ե․ 14 :

‘‘Տեսին զերեսս նորա որպէս փայլակն ծագեալ, և հանդերձ նորա սպիտակ որպէս զլոյս․ երկու արեգակն տեսանէին աշակերտքն․ մի յերկինս ըստ սովորութեան երեւէր նոցա և․ ներգործէր զաշխարհի հաստատութիւն, և մի նոցա մի-

այն երեւէր երեսք նորա · իսկ հանդերձ նորա իբրեւ զլոյս եցոյց նոցա, թէ յամենայն մարմնոյ նորա բղխէ փառք Աստուածութեան նորա, եւ յամենայն անդամոց նորա ծագեցաւ լոյս նորա ,, Եփրեմ . ՚ի ճառն այլակերպութեան :

" Նմին լոյս ճշմարիտ, եւ լուսաւորեաց զմեզ եւ հաղորդս արար լուսաւորութեան իւրոյ ,, Ոսկեբերան . ՚ի մեկն . ա . Յովհ . ճառ Է :

" Լոյս ճշմարիտ Քրիստոս արժանաւորեա զհոգի իմ ուրախութեամբ տեսանել զլոյս փառաց քոց ՚ի կոչման աւուրն, եւ հանգչիլ յուսով բարեաց յօթեանս արդարոց մինչեւ յօր մեծի գալստեան քո ,, Ներսէս շնորհ . ՚ի հաւատով :

74. Հինգերորդ՝ Յիսուս Քրիստոս փրկիչն մեր սքանչելի եւ մարդասիրական խոնարհութեամբ եւ մանաւանդ առ ՚ի կատարումն խորհրդոյն մարդեղութեան պատարագեալ կամաւ զանձն իւր ՚ի խաչին վասն փրկութեան ազգի մարդկան՝ անուանեցաւ Գառն Աստուծոյ : " Տէր մատնեաց զնա առ մեղս մեր · եւ նա առ վշտին ոչ բանայ զբերան իւր · իբրեւ զոչխար ՚ի սպանդ վարեցաւ · եւ իբրեւ որոջ առաջի կտրչի անմռունչ կայ · այնպէս ոչ բանայ զբերան իւր ,, Եսայ . ԾԳ . 6 . 7 :

" ՚Ի վաղիւ անդր տեսանէր զՅիսուս զի գայր առ նա, եւ ասէ · ահաւասիկ գառն Աստուծոյ՝ որ բառնայ զմեղս աշխարհի ,, Յովհ . Ա . 29 :

" Արբեցէք ՚ի բաց զհին խմորն , զի եղիջիք նոր զանգուած, որպէս էքդ անխմորք · քանզի զատիկ մեր զենաւ Քրիստոս ,, Ա · Կորնթ . Ե . 7 :

" Նա յետ այսորիկ տեսի , եւ ահա ժողովուրդ բազում, զոր ոչ գոյր թիւ , յամենայն հեթանո-

սոց և յամենայն ազգաց և յամենայն լեզուաց և յամենայն ժողովրդոց, որք կային առաջի աթոռոյն և առաջի գառինն՝ արկեալ զիւրեամբք հանդերձս սպիտակս, և արմաւենիս 'ի ձեռս իւրեանց,, Յայտն. է. 9:

‘‘ Նա յառաջընթաց Կարապետն հրեշտակն առաքեալ Տ՚որ զայ առաջի և աղաղակէ, թէ սա է Որդին Աստուծոյ, սա է գառն Աստուծոյ, սա որ զայ բառնալ զմեղս աշխարհի,, Մ.Գոռնակ:

‘‘ Զի ոչ եթէ զուգընկերեայ մարդ ոք էր, որ եկն մեռաւ վասն մեր, այլ Որդի Աստուծոյ, որ եկն զգեցաւ զմարդկութիւնս: Իսկ արդ որ 'ի ձեռն Մովսիսի գառն զենաւ. բացուստ 'ի բաց հալածէր զառաւելս մահարեր հրեշտակն. իսկ Քրիստոս գառնն՝ որ եկն 'ի բառնալ զմեղս աշխարհի, ոչ առաւելեա ազատէր զմեզ 'ի մեղաց անտի: Իսկ արդ՝ արիւնն անասուն գառինն զփրկութիւն տայր ժողովրդեանն, իսկ միածնին արիւնն ոչ առաւել զփրկութիւն տայ ժողովրդեանն,, Սուրբ Եփրեմ. 'Ի կող. ընծայ. Տեառ ԺՁ:

‘‘Քանզի գառնն անելով զերկասանն զուշակէ, և ոչ ասաց, թէ բառնալոց է զմեղս աշխարհի, այլ առէ բառնայ. այսինքն՝ թէ հանապազ զայս գործէ. և զի ոչ միայն յայնմ ժամանակի եբարձ մահուամբն իւրով, այլ միշտ և հանապազ բառնայ զմեղս ամենեցուն: Ոչ բազում անգամ եղանելով 'ի խաչ. քանզի զայն միանգամ կատարեաց, որով զանձն իւր պատարագ մատոյց փոխանակ մեղաց մերոց. և յամենայն ժամ մի և նոյն պատարագ մաքրէ զամենեսեան. և որպէս վերագոյնն ասացի, եթէ խելքն Բանն կոչեցեալ զանմահութիւն ցուցանէ. և

ինքն Որդին ասացեալ զմեկնութիւն այլոց գուշակէ : Ըստ այսմ և ինքն է գառն · և ինքն Յիսուս ինքն մարգարէ · և ինքն յոյս ճշմարիտ · և ինքն հովիւ քաջ ,, Յովհ· Ոսկեբ· Ի Ճռ· Յովհ· ճառ ԺԷ :

"Գառն ըստ մարմնոյն անբծութեան , և հայր երկնային՝ ըստ անճառ միացելոյն ընդ նմին Աստուածութեանն · քանզի այսպէս երևեցաւ 'ի մէջ մեր՝ մարմնոյն չարչարանօք որպէս գառն ըզմեղս մեր երարձ, և զԱստուածութեանն սէր որպէս զհայր նա մեզ կերակուր և մխիթարութիւն · ըստ այնմ "Որ ուտէ 'ի հացէս՝ որ էջն յերկնից, մի մեռցի ,, Յովհ · Զ · 50 : այսինքն՝ 'ի զխաութենէ սիրոյ , զոր նա ձեզ բերի ,, Ներսէս Լամբ · 'Ի Ճռ· պատար :

"Այսօր 'ի կատարումն Աստուածային ընթրեաց նոր ուխտի ճշմարտութեան քո 'ի վերնատունն տարամերժեալ յուդաս 'ի հօտէ փոքու · ուստի և դու գառն Աստուծոյ զենեալ կամաւ 'ի մահ խաչին առ 'ի բառնալ զմեղս աշխարհի ,, Ի Շարականոցն· Ի Կանոն Աւագ ուրբաթու :

"Դուն դու ընկալցիս զմեր պաղատանս, և յարդարեսցես զմեզ յօթևանս պատուականս ամենայն պատրաստութեամբ 'ի վայելումն ճաշակման երկնաւոր գառինդ , առանց պատժոց դատապարտութեան ընդունիլ զայս անմահացուցիչ կենաց մանանայս նորոյ փրկութեան ,, Նարեկ · ԼԳ :

75· Վեցերորդ՝ Յիսուս Քրիստոս փրկիչ մեր յամենայն խորհուրդս մարդեղութեան իւրում սքանչելի մարդասիրութեամբն և գթառատ խնամածութեամբն յայտնէր միշտ և ներգործէր զփրկութիւն ազգի մարդկան պէսպէս առակօք նմա

նութեամբ . ըստ այնմ " Բացից առակաւ զբերան իմ, խօսեցայց զառակս 'ի սկզբանէ „ Սաղմ. ՀԷ. 2:
" Եւ ամենայն ժողովուրդն կայր առ ծովեզերբն . և խօսէր ընդ նոսա բազում առակօք „ Մատթ. ԺԳ. 3: Մարկ. Դ. 2: Ղուկ. Ը. 4: Յովհ. Ժ. 6:
Յաղագս որոյ տեսեալ փրկչին մերոյ զմարդկայինս բնութիւն մատնեցեալ 'ի յետին անզգայութիւն իբրև զօշխար մոլորեալ յուղիղ ճանապարհէ ճշմարիտ Աստուածպաշտութեան, և տարամերժեալ յիւրոյ ամենացանկալի գաւթէն երկնից արքայութեան, գթացաւ. և առ 'ի դառնել զնա և վերածել յամենացանկալի վայելչութիւնս երկնային փառաց՝ անուանեցաւ Ճշմարիտ Հովիւ Քաջ և Բարի, անձնադիր լինելով 'ի վերայ բանաւոր հօտից իւրոց :
"Տէր հովուեսցէ զիս, և ինձ ինչ ոչ պակասեսցի „ Սաղմ. ԻԲ. 1 :
" Ահաւասիկ Տէր Տէր գայ զօրութեամբ և բազուկն տէրութեամբ իւրով . ահաւասիկ վարձք իւր ընդ իւր , և գործք առաջի նորա . իբրև հովիւ մի հովուեսցէ զխաշինս իւր . և բազկաւ իւրով ժողովեսցէ զգառինս , և 'ի ծոց իւր կրեսցէ զնոսա „ Եսայ . Խ . 10 . 11 :
" Եւ դու բեթղեհէմ տուն Եփրաթայ սակաւաւոր՝ իցես լինել 'ի հազարաւորս Յուդայ . 'ի քէն ելցէ ինձ լինել իշխան Իսրայէլի , և ելք նորա 'ի սկզբանէ աւուրց աշխարհի ... Եւ կացցէ և տեսցէ և հովուեսցէ հօտի իւրոյ զօրութեամբ Տեառն,, Միքիա . Ե . 2—4 :
" Ես եմ հովիւն քաջ . հովիւ քաջ զանձն իւր դնէ 'ի վերայ ոչխարաց .... Ես եմ հովիւն քաջ . և ճանաչեմ զիմսն, և ճանաչիմ յիմոցն ,, Յովհ . Ժ . 11 . 13 :

"Քանզի էիք իբրև զոչխարս մոլորեալս․ այլ այժմ դարձարուք առ հովիւն և տեսուչ ոգւոց ձերոց,, Ա․ Պետ․ Բ․ 25 ։

"Ահաւասիկ վարձք հաւատացմանն ընդ իւր անձնային նա է հաւատացանօղ և զգործս իւրաքանչիւր առաջի նորա․ ըստ այնմ 'ի միտ առնու զամենայն գործս նոցա․ իբրև հովիւ մի հովուեսցէ զխաշինս իւր, որ և 'ի մէջ իսկ անցեալ կենարարն ասէ, ես եմ հովիւն քաջ, հովիւ քաջ զանձն իւր դնէ 'ի վերայ ոչխարաց,, Գրիգոր Լուս․ յԱգաթանգ ։

"Քանզի հովիւ այնպիսի ունիմք, որ այնքան սիրէ զմեզ մինչ զանձն իւր դնէ 'ի վերայ մեր ։ Իսկ յորժամ հովիւն մեր խնամակալ հզօր է, զի՞նչ իցէ՝ որ խափանէ զմեզ ապրել, և ոչինչ․ եթէ ոչ մեք 'ի բաց կայցուք 'ի նմանէ,, Ոսկ․ 'ի Մեկն․ Յովհ․ Ճառ ԾԴ ։

"Ո՜, հովիւն քաջ, որ եդ զանձն իւր 'ի վերայ ոչխարացն, ոչ արար իբրև զվարձկանն, որ 'ի գալ գայլոցն եթող զոչխարսն և փախեաւ, այլ եդ զանձն իւր, և զամենեսեան ժողովեաց զօրութեամբն իւրով յերկնային փարախ,, Կիւրղ․ Աղեքս․ 'ի Մեկն․ Յովհ․ Ճառք․ Գլխ․ ։

"Ամենայն գիրք հոգելից մարգարէիցն զՏէր մեր՝ հովիւ անուանեն, և զմարդկային բնութիւնս՝ ոչխար․ որպէս և Աստուածարանն 'ի մարգարէսն ասէ․ իբրև հովիւ մի հովուեսցէ զխաշինս իւր, և բազկաւ իւրով ժողովեսցէ զգառինսն․ և 'ի ծոց իւր կրեսցէ զնոսա, և մխիթարեսցէ զյղիսն ։ Նա Միքիաս մարգարէ հովուեսցէ, ասէ, հօտին իւրոյ մեծաւ խնամատածութեամբ․․․․ Իսկ նինքնին Տէր մեր

բանիւք իւրովք նզէ 'ի վերայ այսոցիկ, և զանձն իւր՝ հովիւ քաջ անուանէ . և զամենայն մարդկային բնութիւն՝ ոչխար։ Ոչխարք իմ, ասէ, ձայնի իմում լսիցեն, և եկեսցեն զհետ իմ,, Սուրբ Աւետարան . 'ի Յովհ . Ժ . Պետր . Թղթ Ա . Բ . 25 ։

" Որ խոնարհեցար 'ի բարձանց հովուել քաջ Թողեալ յերկինս զհօտ քո անմոլար, վասն մոլորեալ ոչխարին,, 'ի Շարական ։

" Իսկ երկին առակն որ առ ես՝ որ ոչխարին տրուսն տարագուցիւ, որ յիւրն անզգայութեան էր մատնեցեալ՝ մոլորեալ, և 'ի լերինս՝ ուր ոչ է այցելութիւն, ընդ զազանականացն դիւաց՝ և կորուստ վայրենութեան Թափառեալ, ոչ մերձաւոր զոլ սակաւ մի հօտին . ոչ բան ունէր, որով և զըառոյն աղէտ պատմէր . ոչ ձեռն ձգողական, որ համբուն է աղաղական ։ Իսկ դու միայն զգեցեալ յերկրաբանիցդ յաւիտենից և յարգի Ծնելոցս, զտեալ բառ մաղթանաց կոչման երգողին՝ զիս զմոլորեցեալս յանհնչելի մոլորութեան, խնամօրէն տեսչութեամբ կամաց՝ հովիւ կոչեցար . և ոչ միայն հոգացար, այլ և խնդրեցեր . և ոչ միայն գտեր հրաշագործ, այլ անճառելի բարութեամբ սիրոյ 'ի կենդանարարդ քո յուս բարձեր, և ընդ երկնային զօրուն դասեցեր 'ի հայրենիդ քո ժառանգութիւն,, Նարեկ . ԺԵ ։

76 . Եօթնևորդ՝ Յիսուս փրկիչ մեր մարդասիրական կամօք իւրովք հաճեցաւ հաստատել զ չորրորդ զօրանշելի խորհուրդն սուրբ եկեղեցւոյն իւրոյ . այսէ՝ զփրկարար և զկենդանարար խորհուրդն հաղորդութեան . յորում տեսակաւ հացի և գինւոյ՝ խոստովանիմք զկենդանարար մարմին և զարիւն

նոյն ինքն Յիսուսի Քրիստոսի , հաւատացեալ ճշմարտապէս փոխարկումն նորա ներգործութեամբ սրբոյ Հոգւոյն . ուստի և առ այս կենդանարար սքանչելի խորհուրդ անուանեցաւ Յիսուս Հաց կենաց էջեալ 'ի յերկնից : "Ամէն ամէն ասեմ ձեզ . զի որ հաւատայ յիս՝ ընդունի զկեանսն յաւիտենականս : Ես եմ հացն կենաց : Հարքն ձեր կերան զմանանայն յանապատին՝ և մեռան : Այս է հացն, որ յերկնից իջեալ է . զի որ ուտիցէ ոք 'ի սմանէ՝ մի՛ մեռանիցի . ես եմ հացն կենդանի , որ յերկնից իջեալ . եթէ ոք ուտիցէ 'ի հացէ յայսմանէ՝ կեցցէ յաւիտեան , և հացն զոր ես տաց՝ մարմին իմ է , զոր ես տաց վասն կենաց աշխարհի,, Յովհ . Զ . 47—52 :

"Իբրև ընդ իմաստունս խօսիմ . ընտրեցէք ձեզէն զոր ասեմս : Բաժակն օրհնութեան զոր օրհնեմք՝ ոչ ապաքէն հաղորդութիւն է արեանն Քրիստոսի . հացն զոր բեկանեմք , ոչ ապաքէն հաղորդութիւն է մարմնոյն Քրիստոսի,, Ա. Կորնթ. Ժ . 15 . 16 :

"Զի ես ընկալայ 'ի Տեառնէ, զոր և ձեզն աւանդեցի, եթէ Տէր Յիսուս 'ի գիշերին յորում մատնէր, առ հաց . գոհացաւ . եբեկ և ասէ . առէք կերայք , այս է մարմին իմ , որ վասն ձեր բաշխի . զայս արարէք առ իմոյ յիշատակի : Քանիցս անգամ եթէ ուտիցէք զհացս զայս՝ և զբաժակս ըմպիցէք, զմահ Տեառն պատմեցէք, մինչև եկեսցէ նա : Այսուհետև որ ուտիցէ զհացս, կամ ըմպիցէ զբաժակս Տեառն անարժանութեամբ , պարտական եղիցի մարմնոյ և արեան Տեառն,, Ա. Կոր. ԺԱ . 23—28 :

“Ճաշակեցէք՝ զի քաղցր է Տէր,, Ա. Պետ. Բ. 3։

“Եկա՛յք կերա՛յք 'ի հացէ իմմէ, և արբէք զգինի իմ զոր խառնեցի ձեզ։ Թողէք զանզգամութիւն և կեցջիք. խնդրեցէք զիմաստութիւն զի ապրեսջիք. և ուղղեցէք գիտութեամբ զհանճար,, Առակ. Թ. 5. 6։

“Մաքրագոյն սնդոյն՝ սփռեալն յԱստուածեղէն պատարագին՝ Արիմաթեացւոյն է սպասաւորութիւն Յովսէփայ։ Զի որպէս նա (այսինքն՝ Յովսէփ) զմարմին պատեալ Տեառն՝ եդ 'ի սնդոնի, և 'ի գերեզման յուղարկէր, յոյր ձեռն ամենայն ազգի մարդկան յարութիւն պարգևեաց, այնպէս և մեք 'ի վերայ սնդոնի կտաւոյն զհացն առաջադրութեան, և զբաժակն օրհնութեամբ սրբելով՝ ճըշմարտապէս զնա մարմին և արիւն տեառն՝ առանց յերկուանալոյ ճաշակեմք հաւատով. և նա մեզ անապականութիւն շնորհէ,, սուրբն Գերմանոս Կոստանդնուպօլսեցի 'ի Մեկնութեան առ Պատարագն։

“Նշանակաւ հացին տուեալ լինի քեզ մարմին. և նշանակաւ գինւոյ տուեալ լինի քեզ արիւն. որպէս զի յընդունել քո զմարմին և զարիւն Քրիստոսի՝ մարմնակից և արիւնակից նմին լինիցիս. զի այսպէս Քրիստոսակիրք եւս լինիմք բաշխելով յանդամս մեր մարմնոյ և արեան նորա, և ըստ երանելոյն Պետրոսի Աստուածեղէն բնութեան լինիմք հաղորդակիցք,, սուրբն Կիւրեղ Երուսաղէմի. յաղագս մարմնոյ և արեան. Ճառ Դ։

“Նշանակաւ հացին տուեալ լինի քեզ մարմին, և նշանակաւ գինւոյն տուեալ լինի քեզ արիւն,, Ոսկ. 'ի Ճառն Է։

“Այսոն որոյ զմիտս և զզգայարանս պարապեալ էք

պատրաստել յամենայն Զգաստակար իրաց սպասաւորքդ որքոյ խորհրդոյ յամենայն ժամանակի , առաւել յայնմ աւուր՝ յորում յԱստուած մերձենալ հան-դերձեալ իցէք ։ Զի թէ Մովսէսի ասացաւ յԱս-տուծոյ՝ ոչ կոխել մեռեալ մորթովք զտեղին՝ ուր երեւեցաւ հուր Աստուածութեան , որքան մեզ ար-ժան է լուծանել նախ զմեռելութիւն մեղաց 'ի մէնջ , և ապա յԱստուածային մերձենալ խորհուրդ-դն ոչ միայն խօսել ընդ Աստուծոյ ըստ Մովսէսի կայ մեր առաջի , և կամ տեսանել զյետոյսն Աս-տուծոյ , այլ և ձեռօք շօշափել զանշօշափելին ։ և շրթամբք համբուրել զնէրն , և բերանով ճա-շակել զկերակրիչն ամենայնի , և 'ի սիրտ ընդու-նել , և հոգւով միանալ ընդ նմին , և լինել Աստ-ուած շնորհօք ընդ Աստուծոյ միաւորելովն ,, Ներ-սէս շնորհ . առ ստոր ընդհանրայէց ։

“ Եթէ որք արժանաւորապէս ճաշակեն զհացն յերկնից իջեալ՝ զտուօղն կենաց աշխարհի , և ըմ-պեն զարիւնն անմահացուցիչ՝ կենդանւոյն Աստու-ծոյ փոխանակ կաթին , որքան քաղցրութեամբ լնուն , և Աստուածատեսակք եղեալ , և յԱստուած միա-ցեալ ճանաչեն՝ զի քաղցր է Տէր ,, Սարգիս շնորհ . 'ի Կթղ . ա . Պետր . ճառ . է . 3 ։

“ Եւ զի ինքն կոչեաց զնա մարմին իւր՝ ով իցէ , որ հակառակի և ոչ հաւատայ ։ Արդ երկին պարտ է մեզ ստանալ՝ մարմնոյ և հոգւոյ , զի աչօք մարմ-նոյ տեսանեմք զհացն 'ի ձեռս քահանային և սար-կաւագաց . իսկ աչօք հոգւոյ տեսանեմք զնոյն հաց դարձեալ ճշմարտապէս 'ի մարմին և 'ի հոգի և միտք բանին Աստուծոյ ըստ այնմ . որպէս միացոյց ընդ Աստուածութիւն իւր զ'ի կուսէն առեալ մար-

մին , նոյնպէս և ընդ մեզ միաւորելոց է 'ի ձեռն ճաշակման մարմնոյ իւրոյ զԱստուածութիւն իւր և զՀօրն և զՀոգւոյն․ այսպէս հաւատայ և վասն գինւոյն՝ զոր կոչեաց արիւն իւր ,, Տեառն Ներսէսի․ Դ․-ին․ Մաշ․ ճզ․ 23 ․ 24 ։

“ Հաւատամ հզօրիդ բանի, ուստի վկայեմ․ լնուլ լաւութեան սրտիս՝ Տէր Յիսուս , որ հնչումն է առ քեզ մեծութեան ձայնի երկար գոչելոյ ։ Որ մարմնակիցն և պատկերակից մեր եղեալ , քահանայապետապէս անօրինակդ՝ զօրինակին խորտակեալ զ լուծ, ընդ զենման մահու անասնոցն՝ բարեբանեալ մարմնոյդ նուիրմամբ, անմահապէս միշտ մատուցանիս ․ և աննուազաբար քաւութիւն շնորհես,, Նար․ Ծգ։

“ Նոյն (Քրիստոս) բարձրաբարբառ 'ի ժողովուրդն՝ յուսուցանելն 'ի կափառնայում․ որ ոչ ուտէ զմարմին իմ և ըմպէ զարիւն իմ, ոչ ունի կեանս յանձինս․ զմարմին իմ տաց , և ոչ զօրինակ մարմնոյն ․․․․ Յետ որոյ զբանիւ տացեալն՝ գործով կատարեաց ։ Զի առ, ասէ, հաց․ գոհացաւ՝ օրհնեաց՝ սրբեաց՝ և ետ աշակերտացն , և ասէ ․ առէք կերէք 'ի սմանէ , այս է մարմին իմ և ոչ օրինակ նորին ․ նոյնպէս և զբաժակն արեան անուանեաց , և ոչ օրինակ արեան ։ Զոր ճաշակօղքն աղաղակէին , Արիւն Յիսուսի սրբէ զմեզ 'ի մեղաց ․ և որ ուտէ և ըմպէ զնա անարժանութեամբ , ոչ թէ զօրինակն խաբէ , այլ զմարմին Տեառն ։ Քանզի օրինակ է մարմնոյ գծագիրն պատկեր ․․․ Արդ որպէս գծագրեալ պատկերն ոչ է կենդանի և ոչ կենդանացուցանել ունի զօրութիւն․ այսպէս և սա թէ օրինակ էր ոչ ինքն կենդանի էր․ և ոչ զայլս սրբէր ․․․․ Օրինակ անուանի զադափար գոյին ունի և ոչ զօրութիւն ․․․․ Իսկ մար-

դոյ ոչ օրինակ այլ մահարձնութիւն կոչի ։ Նմա-պէս և սա համարնութիւն է Աստուծոյ, և ոչ օրինակ. վասն այսորիկ ունի զօրութիւն զմեղս սրբելոյ որպէս զԱստուծոյ,, Հեբրայեց լսմէ. կ ժգ. պատասխանի ։

77. Ութերորդ՝ Յիսուս Քրիստոս փրկիչն մեր բազմատեսակ և սքանչելի անուամբ ցուցանէր և աւետարանէր զիւր մարդասիրական և զփրկարար տնօրէնութեանն զանազան շնորհս. իսկ կամելով յայտնել զյաւերժականն իւր անբաժանելի սէր՝ կայր մնայր անմեկնելի ՚ի բարոյական անդամոց իւրոց, այսինքն՝ յառաքելոց սրբոց և յուղղափառ ճշմարիտ հաւատացելոց իւրոց. վասն որոյ հաճեցաւ իբրև հաստատուն առհաւատչեայ ընդունել սքանչելի խոնարհութեամբ զայս խորհրդական անուն որթ ։

“Ես եմ որթ և դուք ուռ. որ հաստատեալ է յիս՝ և ես ՚ի նա, նա բերէ զպտուղ յոյժ. զի առանց իմ ոչինչ կարէք առնել,, Յովհ. ժե. 5 ։

Ո՜նչքան զայս առաւել երջանկութիւն բարոյական անդամոցն Քրիստոսի ճշմարիտ հաւատացելոց՝ հաստիլ ՚ի նա հաւատով յուսով և սիրով, իբրև ուռն յիւր իսկական և կենդանարարն որթ. քանզի ամենազօրական ներգործութեամբն նորա ունին աճել և պտղաբերել. և սքանչելի խնամօք Հօր Աստուծոյ զարդանալ և բեղմնաւորիլ ։

“Կացէք յիս՝ և ես ՚ի ձեզ. որպէս ուռն ոչ կարէ պտուղ բերել յանձնէ իւրմէ, եթէ ոչ հաստատեալ իցէ յորթն, նոյնպէս և դուք՝ եթէ ոչ յիս հաստատեալ իցէք,, Յովհ. ժե. 4 ։

“Իսկ որ պահիցէ զբան նորա, արդարև ՚ի նմա

է կատարեալ սէրն Աստուծոյ. այսուիկ ճանաչեմք՝ եթէ ՚ի նմա եմք ։ Որ ասիցէ ՚ի նմա բնակել, այնպէս պարտի գնալ որպէս նայն գնաց ,, Ա. Յովհ. Բ. 5. 6 ։

Ահա սրբազան առաքեալն Պօղոս զժողովուրդս եկեղեցւոյն Կողոսացւոց տեսանելով հաստատեալ ՚ի Քրիստոս Յիսուս հաւատով և սիրով, ուրախութեամբ սրտի գրէ առ նոսա ։

" Թէպէտ մարմնով հեռի եմ, այլ հոգւով ընդ ձեզ եմ. խնդամ՝ իբրև տեսանեմ զկարգն ձեր, և զհաստատութիւն հաւատոց ձերոց, որ ՚ի Քրիստոս Յիսուս։ Արդ՝ որպէս ընկալայք զՔրիստոս Յիսուս զՏէր, նովին գնասջիք, արմատացեալք՝ և շինեալք ՚ի նա, և հաստատեալք ՚ի հաւատս, որպէս յուսայք՝ առաւելեալք ՚ի նմին գոհութեամբ,, Կող. Բ. 5—7 ։

" Հայր իմ մշակ է ։ Արդ՝ զի՞նչ ազգման կարօտ է Որդի, ՚ի բաց տար . վասն զի օրինակս այս ոչ այսպէս առնէ յայտնի, և տես՝ որքան հաւատեօք գայ ՚ի վերայ առակին ։ Քանզի ոչ արմատոյն է, ասէ, վայելել ՚ի խնամատարութենէ մշակին, այլ ուռոյն ։ Իսկ արմատն զիա՞րդ . առ ոչինչ համարեալ լինի աստանօր . ոչ այլ զի ուսցին, թէ՝ առանց նորա զօրութեանն ոչի՞նչ հնար է գործել . զոր օրինակ՝ ուռոյն, ամենայն ուռ՝ որ յիս է, և ոչ բերէ պտուղ, կտրէ զնա Հայր իմ . յայսմ վայրի նշանակէ ցուցանելով, թէ՝ առանց գործոց ոչ է լինել ՚ի նմա, և ամենայն որ բերէ զպտուղ, սրբէ զնա . այսինքն՝ ՚ի բազում հոգատարութենէ տայ վայելել նմա . և արմատն պէտս ունի հոգատականաց առ ուռոյն բերել շուրջանակի և մեր-

կացնիլ ։ Բայց ասա ոչինչ ասէ վասն նորա , այլ զամենայն յաղագս ուրոյն · ցուցանելով , թէ նա ինքեամբ շատանայ · իսկ աշակերտքն կարօտ գոն բազում օգնականութեան , որ 'ի մշակէն · թէպէտ և յոյժ առաքինիք իցեն ։ Սակս այսորիկ ասէ , թէ որ բերէ զպտուղ , սրբէ զնա · վասն զի որ անպտուղն է , նա և յայգւոջ ոչ կարէ լինել · իսկ որ պտուղ բերէ՝ զնա շահեկանագոյն ևս յարդարէ ,,
ոսկէբն Յով · Ժ · ՃԺԵ · Ցուց · Ճառ Հ ։

" Նա արմատացեալ խարսխեալ պնդեալ զնա բազկի բարձրելոյն , և 'ի ձեռն ձեռին Նորին մշակեալ , և կենդանի հոգւովն նորոգեալ ։ Նա որ և բանին Աստուծոյ բարբառ նախաժամանեալ՝ ճշմարտապէս գլխաւորեցաւ յասելն առ գովեալ գունդ աշակերտացն, ես ընտրեալ տնկեցի զձեզ , և եդի կազմեցի 'ի մի և նոյն հիմն զովելի , զի դուք յառաջեալ պտղաբերեսջիք ։ Նա դարձեալ՝ եթէ ես որթ արմատաւոր , և դուք ուռ սաղարթաբեր , և անպարտադիրն Հայր՝ հանդերձիչ կազմիչ երկրագործ ,,
Նաշէկ · Ն Ներբող ոսկէբ Յովհանու Ծմբեայ Հայրապետին ։

78· Իններորդ՝ Յիսուս Քրիստոս անսահման մարդասիրութեամբն, Աստուածախառն մարմնով յանձն էառ 'ի խաչին պատարագիլ առ 'ի փրկել զմեզ 'ի դատապարտութենէ մեղաց մերոց , և սրբութեան իւրում հաղորդս կացուցանել զհոգիս մեր · վասն որոյ անուանեցաւ Նշխարաց տօնակատարութիւն ՃԷ ։

79· Նախ՝ ՃԷ ասացաք · քանզի զերազանցութիւն երկնաւոր քահանայապետին մերոյ Յիսուսի մեծ է քան զԱհարոն և զյաջորդս նորին · որք արեամբ զուարակին ոչ տային նոցին սրբութիւն և

փրկութիւն հոգւոց , այլ միայն յԱստուածպաշտութեան անդ իւրեանց հանդիսացուցանէին զփառաւորութիւնս առ Աստուած․ իսկ սրբարար և փրկագործ պատարագն Յիսուսի ոչ այնպէս կատարեցաւ արեամբ ցլուց և նոխազաց , այլ իւրեան իսկ Աստուածախառն մարմնով և կենդանարար արեամբն ոչ վասն միոյ ազգի փրկութեան, այլ անխտիր վասն ամենայն ազգաց ճշմարիտ հաւատացելոց։

Դարձեալ՝ Մելքիսեդեկ այն քահանայ անուանեալ բարձրելոյն Աստուծոյ օրինակ էր ճշմարտութեան իսկական մեծի քահանայապետին Յիսուսի Քրիստոսի․ քանզի մինչ ընդ առաջ ելեալ Աբրահամու ՚ի քաջալերութիւն արիութեանն և յաղթութեան նորա՝ օրհնեաց զնա, և եհան առաջի նորա հաց և գինի (Ծննդ․ ԺԴ․ 15) , նշանակէր զճշմարիտ և զկենդանարար մարմին և արիւն փրկագործ պատարագին մեծի երկնաւոր քահանայապետին Յիսուսի ։

80․ Երկրորդ՝ ՄԾ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏ անուանի Յիսուս․ վասն զի միածին Որդի Աստուծոյ է, և յաւիտենական ունի թագաւորութիւն և զօրութիւն ՚ի վերայ ամենայնի ըստ աւետեաց հրեշտակին առ կոյսն Մարիամ։ Ղուկ․ Ա․ 32 ։

81․ Երրորդ՝ ՄԾ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏ խոստովանիմք Յիսուս․ վասն զի մեծամեծ շնորհաց , սքանչելեաց և փառաց է Տէր և պարգևիչ արժանաւորաց ։ Յովհ․ Ա․ 50 ։ Է․ 20 ։

82․ Չորրորդ՝ ՄԾ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏ եղև մեզ Յիսուս․ վասն զի մեծամեծ և պատուական աւետիս շնորհեցաւ մեզ ՚ի նմանէ , ոչ միայն ներգործելով ՚ի մեզ զփրկութիւն , այլ և Աստուածային և ան-

ճառելի փառաց խորոց երկնից արքայութեան ըղ- ձեզ հաղորդս առնել խոստացաւ ։ Դ—է․ Ը․ 10։ Ը․ Պետր․ Ա․ 4։

“ Եւ չիք արարած աներևոյթ յերեսաց նորա ․ այլ ամենայն ինչ մերկապարանոց կայ առաջի ա- չաց նորա՝ զորմէ մեր բանքս են ։ Ունիմք այսու- հետև քահանայապետ մեծ՝ անցեալ ընդ երկինս, զՅիսուս զՈրդին Աստուծոյ ․ պինդ կալցուք զխոստովանութիւնն ։ Քանզի ոչ եթէ ունիմք քա- հանայապետ, որ չիցէ կարօղ չարչարակից լինել տկարութեան մերոյ , այլ փորձ է ամենայնիւ ըստ նմանութեան առանց մեղաց ,, Եբր․ Դ․ 13—15։

“ Ոչ եթէ անձամբ ոք առնու զպատիւ ․ այլ կո- չեցեալն յԱստուծոյ՝ որպէս և Ահարոն ։ Նոյն- պէս և Քրիստոս ոչ եթէ անձին ինչ շուք եդ լի- նել քահանայապետ ․ այլ որ խօսեցաւն առ նա , թէ՝ որդի իմ ես դու , և ես այսօր ծնայ զքեզ․ որպէս և ՚ի միւսումն ասէ ․ դու ես քահանայ յա- ւիտեան ըստ կարգին Մելքիսեդեկի ,, Անդ․ Ե․ 4—6։

“ Զքահանայապետն ճշմարիտ ըստ կարգին Մել- քիսեդեկի, ՚ի յիշատակի քահանայապետացս Աստ- ուածայնոյ քահանայք հոգևոր երգով օրհնեցէք ,, ՚ի Շարականէ ։

“ Վասն անչափ բարերարութեանդ քո՝ անպա- րագրելի բանդ Հօր եղեր մարդ և քահանայապետ մեր երևեցար ։ Եւ իբր Տէր ամենեցուն՝ յայսմ սպասաւորութեան և անարիւն զենման զքահա- նայութիւն աւանդեցեր մեզ ․․․ Նաւր մեզ զՈր- դիդ քո միածին պարտական և պարտս, զենումն և օծեալ, գառն և երկնաւոր հաց, քահանայապետ և

պատարագ . վասն զի ինքն է բաշխող , և նոյն ինքն բաշխի 'ի մէջ մերում միշտ անծախապէս ,, 'Ի Խորհրդատետրէ :

" Զի պատարագ քահանայագործեաց վասն մեղաց մեր ոչ զօտար արիւն , այլ զիւրն անարատ և անապական ,, Ներսէս . Լամբր . 'Ի Մեկն . պատարագին :

"Որ մարմնակից և պատկերակից մեր եղեալ , և քահանայապետապէս անօրինակդ զօրինակին խորտակեալ զ լուծ , ընդ զնման մահու անասնոցն բարեբանեալ մարմնոյդ նուիրմամբ , անմահապէս միշտ մատուցանիս . և աննուազաբար քաւութիւն շնորհես , ոչ սակաւամեղեցն միայն , այլ և որոց հատեալ է անհնարութիւն առ նս կենաց ,, Ներսէս . Ճժ :

83. Տանուտէրդ՝ Յիսուս Քրիստոս մարմնաւին փրկագործ տնօրէնութեամբն սահմանեաց յանձին իւրում զ գերագոյն իշխանութիւն դատողութեան 'ի վերջին ընդհանրական դատաստանի՝ առ 'ի դատել զ կենդանիս և զմեռեալս , և հատուցանել իւրաքանչիւրոց ըստ գործոց իւրոց . յոյր սակս և անուանի դատաւոր ասի :

" Եւ ոչ եթէ Հայր դատի զոք , այլ զամենայն դատաստան ետ Որդւոյ իւրոյ ,, Յովհ . Ե . 22 :

Զի որպէս ինքն փրկագործ տնօրէնութեամբն փրկիչ եղև ազգի մարդկան , սոյնպէս և իրաւամբ դատաւոր նստցի յաթոռ փառաց իւրոց առ 'ի դատել զազգ մարդկան արդարութեամբ :

" Յայնժամ ցնծասցեն ամենայն ծառք անտառի յերեսաց Տեառն զի գայ , և գայ նա 'ի դատել զերկիր : դատի զաշխարհս իրաւամբ , և զժողովուրդս ամենայն ճշմարտութեամբ իւրով ,, Սաղմ . Ղե . 12 . 13 :

"Զի գալոց է Որդի մարդոյ փառօք Հօր իւրոյ՝ հանդերձ հրեշտակօք իւրովք, և յայնժամ հատուսցէ իւրաքանչիւր ըստ գործս իւր,, Մատթ. ԺԶ. 27:

"Նա պատուիրեաց մեզ քարոզել ժողովրդեանն, և վկայութիւն դնել, թէ նա է սահմանեալն յԱստուծոյ դատաւոր կենդանեաց և մեռելոց,, Գործ. Ժ. 42:

"Քանզի ամենեցուն մեզ յանդիման լինել կայ առաջի ատենին Քրիստոսի. զի ընկալցի իւրաքանչիւր իւրով մարմնովն, զոր ինչ գործեաց յառաջ՝ եթէ բարի, և եթէ չար,, Բ. Կորնթ. Ե. 10:

"Որ տայցեն պատասխանի այնմ որ ՚ի պատրաստի ունի դատել զկենդանիս և զմեռեալս. զի ՚ի այն իսկ և մեռելոց խոստացեալ է, զի դատեսցին ըստ մարդկան մարմնով, և կենդանի լինիցին ըստ Աստուծոյ հոգւով,, Ա. Պետր. Դ. 5. 6:

"Գալոց է նովին մարմնովն և փառօք Հօր ՚ի դատել զկենդանիս և զմեռեալս, որոյ թագաւորութեանն ոչ գոյ վախճան,, ՚Ի Հանգ. Հաւատոյ:

"Միւսանգամ ՚ի նորոգումն եղծանելոյ բնութեանս մերում և նոյն ինքն փառօք Հօր գայ, աչաւոր և զարհուրելի և չքնաղագեղ զմարդկութիւնն զայն ցուցանելով. քանզի ոչ ՚ի փոխութիւն ըստ այժմուս, այլ ՚ի դատաստանն բնութեան գայ վասն արդարոց և մեղաւորաց,, Լուս. ՚Ի Վրդն. Հանգան:

"Ոչ եթէ յԵրիքովէ գալոց է, այլ յերկնից. և ոչ ՚ի վերայ յաւանակի նստեալ, այլ ՚ի կառս հողմոց բազմեալ. ըստ այնմ, շրջի նա ՚ի վերայ թևոց հողմոց. և թէ հողմք երիվարք նորա. և ոչ թէ ՚ի վերայ հանդերձից և ոստոց ձիթենեաց և արմա-

ւննեաց ընթացեալ, այլ 'ի վերայ ամպոց արշա-ւեալ․ զի եդ, ասէ, զամպս 'ի գնացս իւր․ և թէ ամպք փոշի ոտից նորա„ Յհն․ Ոսկեբեր․ 'Ի Մկն․ Սաղմ․ Գլ․ ժա․ 7։

"Եւ ապա յայնժամ մեղաւորքն՝ վասն զի ըստ մարմնոյն անկարգ բերմանց շրջեցան յաշխարհի, զայնպիսի ընդունելին զպատուհասն՝ ըստ մարմնոյ տանջեալք։ Իսկ արդարքն՝ վասն զի հոգեւորք էին, և արդարութեան շաւղօք շրջեցան, և զկենդա-նութիւնն Աստուծոյ 'ի մահկանացու մարմինս իւր-եանց ընկալան․ նմին իրի կենդանի լինին ըստ Աս-տուծոյ հոգւով„ Սարգսի Շնորհ․ 'Ի Մկն․ ա․ Պետր․ Ճառ Ը։

" Հրեշտակք յառաջ ընթանային,
հրեշտակապետք պարփակին․
սուրբ զօրութեանցն դաս կարգին,
և պետութեանցն գումարին։
Իշխանութիւնքն զարհուրին,
և տէրութիւնքն սարսափին․
սերովբէքն թեւաքօղին,
մինչ 'ի խոնարհ զգլուխ ունին։
Եւ քերովբէք աթոռ կարգին,
զի զԹագաւորդ ընդունիցին․
Իսկ Թագաւորդ 'ի մեծ բեմին,
նստիս յաթոռ դատաստանին։
Ով Տէր չգտանէ զքեզ երկրածին,
այլ քեզ միայն ես, Միածին․
հովուիդ հանդէպ զան ժողովին,
հօտից նման, ազգ երկրածին։
Ողէքն յաջեայ դասս կարգին,
ուլքն 'ի ձախմէ քումմէ դասին․

անդ թագաւորք ոչ երեւին ,
եւ ոչ իշխանք պատուեսցին ։
Ոչ մեծամեծք հպարտասցին ,
եւ ոչ հզօրք բարձրասցին ․
զի միայնակ միայն լինին ,
առանց զօրաց զոր այժմ ունին ։
Եւ տեսանեն զոր ոչ տեսին ,
եւ ճանաչեն զի ստուեր էին ․
աղքատք հոգւով թագաւորեն ,
եւ բարեգործք մեծասցին ․
քաղցեալք կենաց հացիւ լցցին ,
եւ մեծատունք ունայնասցին ։
Եղուկ ճարտարք անդ համբասցին ,
եւ հայհոյիչքն կարկեսցին ․
զի ոչ ունին զպատասխանին ,
առ քո արդար դատաստանին ,, Ներսէս Շնորհ․
՚ի Յիսուս որդի ։
" Յուցանեն զաղտնիք մարդկան ,
իւրաքանչիւր որք գործեցան ․
բարեաց գործողքն պսակին ,
չարեացն ՚ի հուր անշէջ մատնին ․
յայնժամ յիշեն զորա բարին՝
գործք մեղացն ջնջեսցին ,, Շարակ․ Հանգստեան ։

"Դատաւոր արդար՝ յորժամ գաս փառօք Տր ՚ի դատել զկենդանիս եւ զմեռեալս , մի՛ մտաներ ՚ի դատաստան ընդ ծառայի քում ․ այլ փրկեա զիս ՚ի յաւիտենական հրոյն ․ եւ լսելի՛ արա ինձ զերանաւէտ կոչումն արդարոց յերկնից արքայութիւնդ ,, ՚ի Ժամագրոց Խորհրդատետրէն ։

# ԳԼՈՒԽ Ը.

## Զանազան գործին Յիսուսի Քրիստոսի համբարձմանէ նորա 'ի յերկինս:

84. Ժ. Յիսուս Քրիստոս զկնի փրկարար և սոսկալի չարչարանաց իւրոց կատարեալ խոնարհութեան և ինքնիշխան յարութեան համբառնալով յերկինս 'ի փառս իւր, զի՞նչ գերագոյն զօրութիւնս իշխանութեան յայտնեաց երկնաւորացն և երկրաւորացս :

Պ. Խոստովանիմք՝ եթէ Յիսուս Քրիստոս Աստուածային զօրութեամբն իւրով յանդիման սրբազան Առաքելոցն Աստուածախառն մարմնովն համբառնալով և մտանելով յերկնային անճառելի փառսն՝ յայտնի քարոզեցաւ զոր էակից, համակից, և աթոռակից Հօր Աստուծոյ և սուրբ Հոգւոյն, ինքնակալ յաւիտենական Թագաւոր փառաց, և ամենակալ Տէր զօրութեանց :

"Համբարձէք իշխանք զդրունս ձեր 'ի վեր, համբարձցին դրունք յաւիտենից և մտցէ Թագաւոր փառաց։ Ո՞վ է սա Թագաւոր փառաց, տէր զօրութեանց, սա ինքն է Թագաւոր փառաց ,, : "Համբարձաւ Աստուած օրհնութեամբ, և Տէր ձայնիւ փողոյ ,, Սաղմ. ԻԳ. 10. 11 : ԽԶ. 6 :

"Եւ ինքն Տէր Յիսուս յետ խօսելոյն ընդ նոսա՝ համբարձաւ յերկինս, և նստաւ ընդ աջմէ Հօր ,, Մարկ. ԺԶ. 19 :

"Եւ եղև յօրհնելն նորա զնոսա, մեկնեցաւ 'ի նոցանէ, և վերանայր յերկինս ,, Ղուկ. ԻԴ. 51 :

"Իսկ արդ՝ եթէ տեսանիցէք զՈրդի մարդոյ՝ զի ելանիցէ ուր էր զառաջինն ,, Յովհ. Զ. 63 :

“Զի յարոյց զնա 'ի մեռելոց , և նստոյց ընդ աջմէ իւրմէ յերկնաւորս , և 'ի վերոյ ամենայն իշխանութեան, և պետութեան, և զօրութեան, և տէրութեան, և ամենայն անուան անուանելոյ ոչ միայն յաշխարհիս յայսմիկ , այլ և 'ի հանդերձելումն : Եւ զամենայն ինչ հնազանդ արար 'ի ներքոյ ոտից նորա „ Եփես . Ա . 20 . 21 :

“Որ է ընդ աջմէ Աստուծոյ երթեալ յերկինս, 'ի հնազանդել նմա հրեշտակաց և իշխանութեանց և զօրութեանց ,, Ա . Պետր . Գ . 22 :

“Եղեալ յերկինս նովին մարմնովն նստաւ ընդ աջմէ Հօր ,, 'ի Հանգ . Հաւատոյ :

“Որ համբարձաւն այսօր Աստուածային իշխանութեամբ 'ի Հայրական 'ի կառս , սպասաւորելով 'ի հրեշտակական դասուցն՝ որք նուագէին ասելով , Համբարձէք իշխանք զդրունս 'ի վեր , և մտցէ Թագաւոր փառաց ,, 'ի Շար . 'ի կանոն համբարձման :

“Եւ յետ քառասնօրեայ աւուրց վերացաւ յերկինս առ Հայր նովին մարմնովն յանդիման առաքելոցն . և նստաւ ընդ աջմէ մեծութեանն Հօր 'ի բարձունս ըստ առաքելոյ , գալոց է միով մարմնովն որ համբարձաւ . դատել զկենդանիս և զմեռեալս արդարութեամբ . և հատուցանել իւրաքանչիւր զգործս ,, Ներսէս Շնորհ . Ընդհանր :

“Եւ աւարտեալ զանօրինականացն զփրկանաւոր զանտանելութիւն , Աստուածապէս վերակենդանացուցեալ . և կատարեալ 'ի թեւս հողմոց՝ ելեալ 'ի քրովբէս ամպով անքննութեան ծածկեցաւ . համբարձեալ գեր 'ի վերոյ ամենայն երկնի , նստաւ ճոխութեամբ յաթոռն իւրական սկզբնաժառանգ Հօրն հաւա-

տարութեան , յորմէ և բնաւ իսկ ոչ մեկուսացաւ, անկորուստ առեցելոյն , և նուազ սակաւականօքն,,

՛Նաւեէն · ԼԷ :

“ Եղիայի վերանալն յերկինս գրեալ է . ահա, ասէ, կառք հրեղէնք և երիվարք հրեղէնք և յափշտակեցին զԵղիա և վերանայր շարժմամբ յերկինս : Իսկ աստ և ոչ մի ինչ ցուցեալ է յայսպիսեաց . և կարի ես պատշաճ և ըստ կարգին էին սոքա· քանզի գոլով եղեւ մարդ սոսկ և բնաանի՝ իւրով բնութեամբն վերանայր ոչ ունէր . ուստի պէտք էին նմա յայլմէ բերեալ լինել : Իսկ նա՝ որ կրէ զամենայն բանիւ զօրութեան իւրոյ, բարձողի ոչ կարօտանայ , այլ ինքն իշխանութեամբ վերանայր ելանել առ Հայր : Ոչ թէ և աստ երեւեցան հրեշտակք , սակայն յուղարկաւորք եղեն և ոչ բարձօղք · ըստ այնմ . Համբարձաւ Աստուած օրհնութեամբ· և Տէր մեր ձայնիւ փողոյ : Եւ զարձեալ՝ սպասաւորութիւն հարկանելով առաջի մանկոյ նորա յերկինս , աղաղակէին առ վերակայսն, Համբարձէք իշխանք զդրունս ձեր ՚ի վեր . և մտցէ Թագաւոր փառաց : Այն այս իշխանութեամբ գնալն ՚ի վեր՝ ազանչացոյց զվերինսն ամենայն· վասն որոյ ասեն · իսկ այս ո՞վ է որ զինեալ գայ յԵդովմայ · կարմրութիւն ձորձոց իւրոց ՚ի բոսորոյ · գեղեցիկ պատմուճանաւ և բուռն զօրութեամբ : Բուռն զօրութեամբ ասեն · վասն զի մարմին տեսին իբրև զանմարմին ՚ի վեր երթեալ , և զխանն նորա զի մարմինք ծանունք են և վայրաբերք, և միշտ բնութեամբ ՚ի խոնարհ ձգին : Իսկ նա մեծաւ զօրութեամբ ըստ երագութեան անմարմնոցն անցանէ ընդ ամենայն գերաշխարհիկ զօրութեանցն · և մտանէ

'ի բուն իսկ յերկինս 'ի ներքին կողմն վարագուրին, ուր ոչ բնաւ ներուտ ծառայական բնութիւն „ Իգնատիոս 'ի Թղթ. Պօղ. գլ. էջ. 48:

" Սուրբք որ նստիս ընդ աջմէ Հօր .... ընդ աջմէ Հօր անեղումն՝ զօրգխական պատիւն յայտ առնէ. զի Որդի նստի ընդ աջմէ Հօր, և Հոգի ընդ աջմէ Որդւոյ 'ի փառս փառաւորելոյ՝ որ յառաջ է քան զյաւիտեանս: Զի նստիլն զմշտնջենաւորութիւնն յայտ առնէ և զՏէրութիւն փառացն հայրենի: Նա զի Որդի նստի ընդ աջմէ Հօր՝ և առաքեալն վկայէ. որ էրն, ասէ, 'ի վերայ քան զամենայն իշխանութիւնս և զպետութիւնս. և նստաւ ընդ աջմէ մեծութեանն 'ի բարձունս: Զսոյն և Դաւիթ ես յայտնագոյն ցուցանէ. ասաց Տէր ցՏէր իմ՝ նիստ ընդ աջմէ իմմէ, մինչև եղից զթշնամիս քո պատուանդան ոտից քոց „ Խոսրով 'ի Մեկն. Ժամագրքի:

" Վասն եղեալ զրեալ է, թէ՝ իջին կառք և երիվարք հրեղէնք, և այնու համբարձաւ. վասն զի մարդ էր: Իսկ ասա ոչ այնպէս, այլ ինքնին վերացեալ համբառնայր, զօրծակցի ոչ կարօտացեալ, և թէ հրեշտակք մերձ էին, ասա որպէս յուղարկաւորք և պատուորք էին և ոչ որպէս օգնականք: Ուստի զուշէին առ վերագոյնսն, Համբարձէք իշխանք զդրունս ձեր 'ի վեր: Նա զի այսպէս բարձրացեալ գնայր առանց օգնականի, զքանչացոյց զվերինսն ամենայն. վասն որոյ ասէին բաղձացեալ. Իսկ այս ո՞վ է որ դիմեալ գայ յերկրէ բուռն զօրութեամբ, զի զգեստին նորա՝ եթէ մարմինքն վայրաբերք են. իսկ նա իբրև զանմարմին մեծաւ զօ-

րութեամբ անցանէր ընդ ամենայն դասս անմարմ-
նոցն , և մտանէր 'ի բուն իսկ յերկինս երկնից
'ի ներքին կողմն երկրորդ վարագուրին՝ ուր ոչ բնաւ
եմուտ մինչ ցայժմ ծառայական բնութիւն ,, Տօն
Համբարձ. 'ի Գիշ. Մաշ :

" Նա 'ի յերկինս վերացեալ,
վերայ թևոց հողմոց նստեալ.
նովին մարմնովն համբարձեալ,
որով մեռաւ և յարուցեալ :
Նստոյց ընդ աջմէ Հօրն փառաց ,
զընութիւնս անկեալ կոխան դիւաց .
երկրպագեալ 'ի հրեշտակաց ,
և յամենայն երկնաւորաց .
մինչև ներքոյ գարշապարաց
նորա դիցեն հայք թշնամեաց ,, Ներսէս Շնորհ. 'ի
Յիսուս որդի :

85. Հ. Յիսուս Քրիստոս համբառնալով յերկինս և նստելով ընդ աջմէ Հօր Աստուծոյ , զի՞նչ զերագոյն շնորհս պարգևեաց եկեղեցւոյ իւրոյ , ըստ որում սրբազան առաքեալն Պետրոս ընդհանրապէս քարոզէ . եթէ՝ " Որ կոչեաց զմեզ յիւր փառսն և վայելչութիւն , որով մեծամեծք և պատուականք աւետիք պարգևեալք են մեզ . զի նոքիմբք Աստուածեղէն բնութեանն հաւատոյն լինիցիմք հաղորդակիցք ,, Բ. Պետր. Ա. 3. 4.

Պ. Նախ՝ որպէս Յիսուս Քրիստոս անսուտ բանիւն խոստացեալ էր , եղեն ճշմարիտ հաստատեալք բարոյական անդամք նորին , և հաստատեցան 'ի նա անբաժանելի միութեամբ իբրև 'ի կենդանարար գլուխ իւրեանց :

" Նա զամենայն ինչ հնազանդ արար 'ի ներքոյ

ոտից նորա. և զնա եդ գլուխ 'ի վերայ ամենայն իրիք եկեղեցւոյ, որ է մարմին նորա, լրումն՝ որ զամենայն յամենայնի լնու,, Եփես. Ա. 22:

" Եւ նա է գլուխ մարմնոյ եկեղեցւոյ. որ է սկիզբն, անդրանիկ 'ի մեռելոց. զի եղիցի ինքն յամենայնի յառաջնով,, Կողոս. Ա. 18:

Եւ արդարև ուր գլուխն է, անդր և վայելչանայ մարմին. քանզի նոյն ինքն Յիսուս Քրիստոս ուսուցանելոց մեզ. " Եթէ ոք զիս պաշտիցէ, զհետ իմ եկեսցէ. և ուր եմ ես, անդ և պաշտօնեայն իմ եղիցի. եթէ ոք զիս պաշտիցէ, պատուեսցէ զնա Հայրն իմ,, Յովհ. ԺԲ. 26:

" Մի խռովեսցին սիրտք ձեր. այլ հաւատացէք յԱստուած, և յիս հաւատացէք. 'ի տան Հօր իմոյ օթևանք բազում են. ապա թէ ոչ՝ ասացեալ էր իմ ձեզ, եթէ երթամ և պատրաստեմ ձեզ տեղի: Եւ եթէ երթամ և պատրաստեմ ձեզ տեղի, դարձեալ գամ և առնում զձեզ առ իս. զի ուր եսն իցեմ, անդ և դուք իցէք,, անդ. ԺԴ. 1—3

" Այլ Աստուած որ մեծն է ողորմութեամբ, վասն բազում սիրոյն իւրոյ զոր սիրեաց զմեզ. մինչդեռ մեռեալն էաք 'ի մեղս մեր, և կենդանիս արար զմեզ 'ի Քրիստոս Յիսուս. քանզի շնորհօք ապրեցայք. ընդ նմին յարոյց, և ընդ նմին նստոյց յերկնաւորս 'ի Քրիստոս Յիսուս: Զի ցուցցէ 'ի յաւիտեանսն որ գալոց են՝ զառաւել մեծութիւն շնորհացն իւրոց՝ քաղցրութեամբ 'ի մեզ 'ի Քրիստոս Յիսուս: Զի շնորհօք նորա էք փրկեալք 'ի ձեռն հաւատոյն. և այս՝ ոչ 'ի ձէնջ, այլ Աստուծոյ պարգև է,, Եփես. Բ. 4—8:

" Բայց հրաւիրեն միայն զիրք խոստմամբ զար-

քաջութիւնն հաստատեցեր , և յուսով յորդորեն զողջախոհսն՝ թէ որ զերկինս և զերկիր եդ լրի- ւրով 'ի սնունդ ամենայն բարեօքն վասն և ոչ մի ինչ լաւութեան մերոյ · ապա 'ի սոցանէ յայտ է անսուտ խոստմունքն 'ի բարերար Տեառնէն սի- րողաց իւրոց ։ Նա զի ոչ կարեն ճառել սիրողքն Աստուծոյ զհամբերձեալսն , այլ 'ի բանէն Տեառն գիտեն որ ասէ . Ծագեսցեն արդարքն որպէս զարե- գակն յարքայութեանն Աստուծոյ „ Աւետարանէն Մատթէ- ոսի ԺԳ · 'ի գլուխ · համար ԽԳ ։

“ Եկն և եղև Որդի մարդոյ , զի էր նա և բուն Որդի Աստուծոյ , զի զՈրդիս մարդկան յորդե- գրութիւնն Աստուածութեան կոչեսցէ · զի բարձրն ընդ խոնարհին իբրև զիջանէր , նիքն ոչ յիւրոց փառաց անտի պակասեցաւ · բայց զնա 'ի բազում խոնարհութենէ անտի , 'ի մեծամեծ բարձունս վե- րացոյց · զայն նիքն եկն Տէր մեր և արար · զի զիւր բնակութիւնն առ մերում խոնարհութեան անդ ոչինչ պակասեցոյց , ընդ մեզ զիջանելովն ։ Բայց զմեզ՝ որք մեղօք յանարգութեան խաւարին նստէաք , 'ի փառս անճառս բարձրացոյց „ Ոսէ · Ե գլխ · Յովէլ · համար Ա ։

“ Արդ՝ հնազանդեսցուք և մեք· երկրպագեսցուք , անկցուք , և լացցուք առաջի Տեառն արարչին մե- րոյ ։ Փառաւորեսցուք և օրհնեսցուք զարարիչն մեր և զպարգևատուն ։ Երախտահատոյցք լիցուք երախտաւորին մերոյ և Աստուծոյ · զի եթէ երկ- նային զօրութիւնքն տեսանելով զմեր փրկութիւնն՝ հնազանդին , օրհնեն և փառաւորեն , և տօն զե- րաշխարհիկ տօնեն , և անդադար երկրպագանեն գլխոյն մերոյ և Աստուծոյ · Ո՞րչափ ևս առաւել մեք պարտիմք գոհանալ և օրհնել և փառաւորել ,

որ 'ի շնորհսն վայելեցաք ։ Որ զերկնաւոր բարիսն ճաշակեցաք . որ զգլուխն մերով ընդ աջմէ Հօր նստաք ։ Ապա պարտական եմք ոչ միայն փառաւորել, այլ և հնազանդիլ և տիրապէս հնազանդիլ, և յայնժամ հնազանդիմք գլխոյն մերոյ անդամքս, յորժամ ոչ բաժանիմք 'ի նմանէ, յորժամ զխոնարհութեան նորա ճանապարհն գնամք, յորժամ զպատուիրանս նորա կատարեմք, յորժամ զլուծն նորա բառնամք, յորժամ հեզութեան նորա և մարդասիրութեան նմանիմք, յորժամ զաղքատութիւն նորա և զանշքութիւն նորա յանձինս մեր ստանամք ։ Նա արդ՝ եթէ մարմինք եմք 'ի մարմնոյ նորա՝ որպէս խոստմունքն են, և տիրապէս հաւատացաք նմա, մի' ապա աղտեղեսցուք զանդամս Քրիստոսի 'ի շարաւս մեղաց և 'ի ճենճերս անօրէնութեան ։ Նա մի' ապականեսցուք զմարմինս նորա 'ի կաւ և 'ի տիղմ զազրութեան մեղաց, և մի' փշրեսցուք խստիւ իւիք անկարգութեամբ զոսկերս մեր . Վասն զի տաճար Աստուծոյ եմք կենդանւոյ, և հոգի նորա սուրբ բնակեալ է 'ի մեզ 'ի ձեռն շնորհացն Քրիստոսի ։ Արդ՝ որ զտաճար Աստուծոյ ապականէ, ապականեսցէ զնա Աստուած, զի տաճար Աստուծոյ սուրբ է՝ որ էք դուք ,, Առաք. Կորնթ. Ա. Թղթ. Գ. Պեր. ժզ. ժէ. ։

86. Երկրորդ՝ զերագոյն պարգև շնորհաց ներգործեաց Յիսուս Քրիստոս 'ի հրաշագործ համբարձման իւրոյ թէ առ դասս սրբազան Առաքելոց և թէ առ ճշմարիտ հաւատացեալս իւր ամբառնալով զԱստուածային ձեռն իւր և օրհնելով զնոսա . "Եւ եհան զնոսա մինչև 'ի բեթանիա . և ամբարձեալ զձեռս իւր օրհնեաց զնոսա . և եղև յօրհնելն նորա զնոսա, մեկնեցաւ 'ի նոցանէ, և վերանայր յերկինս ,, Ղուկ. ԻԴ. 50 . 51 ։

Քանզի ըստ որոյն Յովհաննու Ոսկեբերանի կրկին ունէր զզօրութիւնս օրհնութիւն Աստուածային ձեռացն Յիսուսի. առաջին՝ օրհնել զաշակերտս իւր՝ եւ նոցա զԱստուածային շնորհս ամենայն հոգեւորական աստիճանաց եկեղեցական պաշտաման՝ տալով նոցա իշխանութիւն ձեռնադրելոյ զարժանաւորսն հոգեւորական կոչման. երկրորդ՝ Աստուածեղէն ձեռացն օրհնութիւն առհաւատչեայ անդ հանդերձանայր մերձելոյ ՚ի համբառնալոյ անձինն Աստուածային երկնական ձեռաց. վասն որոյ աւետարանիչն զշնորհս օրհնութեան երկիցս յիշատակէ յանկին. նախ ամբարձեալ զձեռս իւր եւ օրհնեաց զնոսա, եւ ապա՝ եւ եղեւ յօրհնելն նորա զնոսա վերանայր յերկինս. Յով. Ոսկ. ՚ի ճառն Համբարձման:

‘‘Աստուած ողորմեա մեզ եւ օրհնեա զմեզ, երեւեցո զերեսս քո ՚ի մեզ՝ եւ ողորմեա մեզ: Աստուած մեր օրհնեսցէ զմեզ, եւ ՚ի նմանէ երկիցեն ամենայն ծագք երկրի,, Սաղմ. կզ. 1. 8:

‘‘Շնորհք ընդ ձեզ եւ խաղաղութիւն յԱստուծոյ Հօրէ մերմէ եւ ՚ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ. օրհնեալ է Աստուած եւ Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. որ օրհնեաց զմեզ ամենայն հոգեւոր օրհնութեամբ յերկինաւորս ՚ի Քրիստոս: Որպէս ընտրեաց զմեզ նովաւ յառաջ քան զլինելն աշխարհի, լինել մեզ սուրբս եւ անարատս առաջի նորա՝ սիրով,, Եփես. ա. 2—4:

‘‘Եւ ամբարձեալ զձեռս իւր օրհնեաց զնոսա. եւ ընդ օրհնելն վերացաւ յերկինս, ասէ աւետարանագիրն. զի կատարեսցի երգ սաղմոսարանին, թէ համբարձաւ Աստուած մեր օրհնութեամբ: Որոց

հրաման տուեալ, թէ՝ Նստարո՛ւք, և նա առաքե-
ցից զաւետիս Հօր իմոյ 'ի ձեզ. որում եկեալ 'ի
վախճանն ամենափրկական բարբառն, թէ որ չինէ յեր-
կինս զհամբառնալ իւր, և զաւետիս իւր յերկիր
հաստատեաց „ Մ.Ճ.Ա.Բ.Ն.Զ.:

“ Օրհնեալ Տէր Յիսուս ընդ Հօր 'ի կամս հա-
ճութեան Հոգւոյդ քո սրբոյ. և օրհնեալք ամե-
նայն որ 'ի յօրհնելոյդ օրհնեցան. օրհնեալ միայն
Որդի օրհնելոյ, չէք իմ Թագաւոր իշխեցող
շնչոյս բաց 'ի քէն՝ Քրիստոս „ Նարեկ. ճը:

“ Յետ խօսելոյն ընդ նոսա, նախ՝ եհան զնոսա
մինչև 'ի Բեթանիա. որպէս ասէ Ղուկաս, և ամ-
բարձեալ զձեռս իւր՝ օրհնեաց զնոսա, յայտ է թէ՝
զերկու ձեռսն և ոչ զմին, և ապա մեկնեցաւ 'ի
նոցանէ և վերանայր յերկինս .... Իսկ գիտելի է,
զի մեծ և բարձրագոյնք են քան զպատմութիւն
բանից. և յայտ է թէ՝ եպիսկոպոսունս արար
զնոսա այժմ. զի յորժամ եպիսկոպոս օրհնէ, զան-
գէս զայս բանն յաւետարանն և 'ի վերայ գլխոյն
տարածէն: Իսկ յորժամ ետ նոցա իշխանութիւն
զդևս հանել և զբորոտս սրբել, սարկաւագունս
արար զնոսա, և յայտ յայնմանէ է. զի սարկա-
ւագունքն մաքրիչք են: Իսկ յետ յարութեանն՝
յորժամ փչեաց 'ի նոսա, և ասաց, եթէ ումեք թո-
ղուցուք զմեղս՝ թողեալ լիցին, և եթէ զուրուք
ունիցիք՝ կալեալ լիցի, քահանայս արար զնոսա:
Իսկ ապա մեկնեցաւ 'ի նոցանէ, և վերանայր յեր-
կինս. որպէս և աստ ասէ Մարկոս: Իսկ ինքն
Տէր Յիսուս յետ խօսելոյն ընդ նոսա, և զոր ինչ
պարտ և արժան էր, և յետ ձեռնադրելոյն զնոսա
վարդապետս, և քարոզս տիեզերաց, համբարձաւ

յերկինս,, Տօն Ընծայեալ. ՚ի Ճշն. Մաշտ. Ժղ. 19։
՚՚ Ո՜վ անչափ բարձրութեանն և մեծի օրհնութեանն և երանելի շնորհին, որում արժանացան դասք ձկնորսացն և մաքսաւորացն։ Եհան զնոսա ՚ի գլուխ լերինն որպէս զմովսէսն զայն, յորժամ կամեցաւ զնա օրինադիր առնել ազգաց որդւոցն իսրայէլի։ Ըստ նմին և սոա բարձրացուցանէ լերամբն նշանակաւ ոգւոցն բարձրութեան։ Եւ ամբարձեալ զձեռս իւր Աստուածեղէնս՝ օրհնեաց զնոսա, տալով նոցա զամենայն շնորհ Աստուածայինս և զամենայն աստիճանաց բարձրութիւնս, զի այնպէս ունիցին և նոքա տալ որոց յետ նոցա փոխանորդութեամբ լինին զնոյն պաշտօն,, ―Սրբոյն Իգնատիոս ՚ի Ճշն. Պօղ. Գլ. Է. 49։
՚՚ ՚Ի պարտիզէն՝ ուր կապեցաւն նախատանօք, անտի սաւառնեալ շքեղացեալ, ճանապարհ առնէր ընդ ամպս զարշապարօք։ ՚Ի ձորն՝ ուստի փախեան ՚ի նմանէ առաքեալքն վշտօք, անդանօր ժողովեալ օրհնեցան յամենօրհնեալ Աջոյն պանծանօք .... ՚Ի կեդրոնեան ձորոյն՝ ուստի տարան զնա ՚ի խաչ սուսերօք, ՚ի նմանէ ամբարձաւ ՚ի կառս քրովբէից նուրբ հողմոցն թեւօք .... Զայսոսիկ Մայրն Աստուծոյ զկնի ելից Որդւոյն հնչելով զառնայր ապա ՚ի դասս առաքելոցն, հաղորդս կոչելով ՚ի ցնծութիւն սրտին զնոսա։ Ո՜վ պետրէ. ընդէր լռես. ահա հրեշտակք ակումբ առեալ եղանակեն շուրջ զվարդապետաւն քո գործնութիւնս. ստուգդունդս քո, և խառնեա՛ ՚ի պարս նոցա, երգակցեա՛, տալով օրհնութիւն այնմ՝ որ օրհնեաց զերկիր զալստեամբ իւրով, և պայծառացոյց զերկինս ընթացիւք իւրովք։ Թագաւոր մեծ ՚ի վերայ

ամենայն երկրի ակնարկեմք զվերացեալն 'ի յերկրէ զԱստուած . շարժեցէք զլեզուս ընդ բանակս զուարթնոց զօրաց , սաղմոսելով նմա զօրհնութիւն ։ Դաւիթ այժմ զԱստուած տեսեալ համբարձեալ օրհնութեամբ և զՏէր ձեր ձայնիւ փողոյ , հրեշտակաց խրախոյս տայ ձեզ սաղմոսել նմա քաղցրաձայն , և ահա անփոյթ արարեալ հրամանին պակուցեալ պշուցեալ ընդ գնացմն նայիք ։ Օդդ ահա արտափայլէ 'ի փառաց նորա . և երկինք խոնարհի ընդ ոտիւք նորա . և բարապանք նորա բանան զդրունս մտից նորա . դուք մինչև ցո՞ր վայր պշուցեալ , կամիք տեսանել զընթացս նորա „ Ներսէս Լամբ . 'ի ճառն համբարձման ։

87 . Երրորդ՝ Յիսուս Քրիստոս մինչ համբարձեալ նստաւ ընդ աջմէ Հօր Աստուծոյ փառակցի և էակցի իւրոյ՝ էր և եղև յաւիտենական քահանայապետ մեր ընդունօղ զղջման և ապաշխարութեան . և ինքնիշխան Աստուածային զօրութեամբն խնամօղ և պաշտպան հաւատացելոց և պարգևիչ թողութեան յանցանաց . որով խոստովանիմք զնա միջնորդ և բարեխօս առ Հայրն ամենակալ ։

“Ոչ ասէ ցնոսա , թէ այսպէս պարտ էր չարչարել Քրիստոսի , և յառնել 'ի մեռելոց յաւուր երրորդի . և քարոզել յանուն նորա ապաշխարութիւն և թողութիւն մեղաց յամենայն ազգս՝ սկսեալ յԵրուսաղեմէ . և դուք էք վկայք այսոցիկ „ Ղուկ . իդ . 46 . 47 ։

“Ո՞վ իցէ որ մեղադիր լինիցի ընտրելոց Աստուծոյ . Աստուած է որ արդարացուցանէ , իսկ արդ՝ ո՞վ է որ դատապարտ առնիցէ ։ Քրիստոս Յիսուս՝

որ մեռաւն, մանաւանդ թէ յարուցեալ իսկ է. և է ընդ աջմէ Աստուծոյ, որ և բարեխօս իսկ է վասն մեր„ Հռովմ. Ը. 33. 34։

“Որդեակք իմ, զայս գրեմ ձեզ՝ զի մի մեղիջէք. և եթէ մեղիցէ ոք, ունիմք բարեխօս առ Աստուած զՅիսուս Քրիստոս՝ զարդարն և զանարատն։ Եւ նա է քաւութիւն մեղաց մերոց. և ոչ եթէ մերոցն միայն՝ այլ և ամենայն աշխարհի. և յայսմիկ գիտեմք՝ եթէ ծանեաք զնա, եթէ զպատուիրանս նորա պահիցեմք։ Որ ասիցէ՝ եթէ ծանեայ զնա, և զպատուիրանս նորա ոչ պահիցէ, սուտ է, և ճշմարտութիւն ՚ի նմա ոչ գոյ„ Ա. Յովհ. Բ. 1—4։

“Օգնական ճգանց՝ վկայս առնելով առ Աստուած, և մեծամեծութեամբ օրհնել զտուօղ ամենայն բարութեանց, և գոհանալով փառաւորել զնա։ Որպէս և Տէրն ինքն զիւր երախտիսն վկայս ունի իւրոյ սիրոյն և բարութեանցն, առ ընտրեալսն և կատարեալսն և երախտացեալսն հոգւով, որ զեղու ՚ի նոսա զշնորհսն, այլ և զարձելոց յապաշխարութիւն խոստովանութեամբ՝ ներէ և խնամէ և բժշկէ ողորմութեամբ, և թողու զմեղս նոցա ըստ բազում գթութեան իւրում։ Իսկ զամբարիշտն և զանիրաւն և զամբարտաւանեալսն չարութեամբ, որոց խաւարացեալք են միտք և օտարացեալք ՚ի կենաց սրբոց, և առ նոսա երկայնամտէ, զի դարձցին ՚ի զղջումն։ Ապա թէ ոչ այնպէս, բարկութիւն և սրտմտութիւն կայ ՚ի վերայ ամենեցուն յամենեցունց Արարչէն ըստ բանի առաքելոյն„ Յաճախ. Ճառ Է։

“Ապա թէ մարդիկ գոլով և ՚ի մէջ որոգայթից շրջելով մեղիցէ ոք ՚ի մէնջ, մի՛ վհատեալ անյոյս

կործանեցի. վասն զի ունիմք բարեխօս զՅիսուս Քրիստոս զարդարն և զանարատն : Եւ այս նուաստութեան ինչ իցէ, որպէս թէ 'ի գուճս անկեալ աղաչիցէ-մն անդր քան լիցի, այլ համարձակութեան և հաւատարմութեան : Եւ զնոյն զայս ասէ : Զի որպէս զայլ ամենայն կիրս մարդկութեանն կամայանձին իւրում կրեաց զեւս խոնարհագոյնս, զի զմեզ փրկեսցէ և սրբեսցէ 'ի մեղաց անտի. և այսպէս և բարեխօսն լինել : Զոր և Պօղոս գեղեցկապէս զպատուոյն խօսի նախ, և ապա զբարեխօսն լինելոյ. նստաւ, ասէ, ընդ աջմէ Հօր, որ և բարեխօս իսկ է վասն մեր : Տեսանես, զի նախ համապատուութիւն է և փառակցի և ոչ խոնարհագունի : Եւ եթէ մեղիցէ ոք, ասէ, 'ի ձեռն 'ի յափշտակութենէ մտաց կամ այլ ինչ պատճառանաց, ունիմք բարեխօս առ Աստուած՝ զո՞, զմարդն Յիսուս Քրիստոս, զմիջնորդն Աստուծոյ և մարդկան, զբնութիւնն՝ զոր 'ի մէնջ ընկալաւ Աստուծոյ բանն. որպէս զի նմանեաւն զնմանն սրբեսցէ և արդարացուսցէ„ Ոսկեբեր. ճառ. Ն. մեկն. Ա. Յովհ. հատ. Է. գլ. Է. 1 :

88. Չորրորդ՝ 'ի համբառնալն Յիսուսի շնորհեցաւ 'ի Հօրէն ամենակալէ պարգեւն կատարելու և աւետեալն ճշմարտութեան մխիթարիչն Հոգին սուրբ. որպէս և խոստացեալ էր նոյն ինքն Փրկիչն մեր աշակերտաց իւրոց :

"Իսկ մխիթարիչն Հոգին սուրբ, զոր առաքեսցէ Հայր յանուն իմ, նա ուսուսցէ ձեզ զամենայն, և յիշեցուսցէ զամենայն զոր ինչ ասացի ձեզ : Բայց յորժամ եկեսցէ մխիթարիչն, զոր ես առաքեցից ձեզ 'ի Հօրէ, զՀոգին ճշմարտութեան որ 'ի Հօրէ

ելանէ, նա վկայեսցէ վասն իմ,, ։ Եւ թէ՝ "Դու ես զճշմարիտն ասեմ ձեզ. լաւ է ձեզ եթէ ես երթամ. զի եթէ ես ոչ երթայց՝ մխիթարիչն ոչ եկեսցէ առ ձեզ. ապա եթէ երթամ, առաքեցից զնա առ ձեզ,, Յովհ. ԺԵ. 26 ։ ԺԴ. 26 ։ ԺԶ. 7 ։

"Ընտրեալ մեզ այսուհետեւ 'ի վախճան աւացելոցս, ծառս 'ի մէջ առնուլ զՔրիստոսապատուամ աւետեացն խոստացելոց՝ վասն մխիթարութեան աղբեր Հոգւոյն սրբոյ. մանաւանդ զի առ նա թերեւս ունիցիմք զզիւրահասոյն քաջալերիչ զերանելին Պօղոս, որ իրազէտ եւ միջամուխ էր Քրիստոսագործ իրացն կատարելոց,, Ա. Կոր. Բ. ։

"Զիր առատ հնչեալ այսօր յերկրի. մաղթեացուք նշուլից նորա ծառագայթել 'ի հայեցուածս մտաց մերոց, եւ առաջնորդել ընդ շաւիղս Աստուածայնոց բանից հետեւիլ ։ Ով սքանչելեացս, զոր ցանկային ընդ աղօտ ակնարկութեամբ նկատել հրեշտակք, այսօր շնորհօք իջեալ 'ի սորին զաւառ սփռեցաւ ։ Եւ ով ոք ոչ յուսասցի՝ հաւատով 'ի պարգեւս նորա վայելել ։ Հոգին սուրբ որում բերանաբաց կոչով 'ի փափագման զասք սերովբէից եւ քերովբէից՝ զորքանութիւն նորա ոչ կարացին նկատել. յայսմ աւուր իջեալ յագեցոյց զմարդիկ 'ի գիտութիւն անճառ խորհրդոց իւրոց .... Եւ ո՞ այսր շնորհի միջնորդ եւ մատակարար, ո՞վ այլ ոք, բայց եթէ Տէր մեր Յիսուս Քրիստոս, կեանքն, լոյսն՝ ճանապարհն՝ դուռն՝ հովիւն՝ քահանայապետն՝ միջնորդն՝ յոյսն՝ բարեխօսն՝ եւ կարապետն ։ Որ անց ընդ երկինս երկնից ինքնիշխան զօրութեամբ, եւ եմուտ հրաշափառապէս 'ի ներքին կողմն վարագուրին անճառելի հայ-

մամբ, և եդ յանդիման Աստուծոյ Հօր զառհա-ւաչեայն 'ի մարդկանէ բարեխօս վասն մեր. ուս-տի առեալ փոխարէն զձիր առատ՝ տարածեաց 'ի յերկիր: Յորմէ զմայլեալ արբեցաք, և զերկունս տրամութեան նախամօրն յաւէտ մոռացաք,, Ներ-սէս Լամբ. 'ի Ճառ Գալստեան Հոգւոյն սրբոյ:

“ Իսկ զպարգևսն կատարեալս ասել՝ այն է, որ Աստուածատուր շնորհաց՝ և տնօրէնութեանցն Քրիստոսի կատարումն՝ զալուստ սրբոյ Հոգւոյն եղև, որով մաքրեաց զմեզ յաղտոյ մեղաց. և մկրտութեամբն լուաց, և քան զձիւն սպիտակեցոյց, և որդեգրութեան արժանացոյց: Որով և համար-ձակութեամբ ասեմք Աբբա Հայր. վասն զի Հո-գին վկայէ Հոգւոյս մերում՝ եթէ եմք որդիք, եթէ որդիք, ապա և ժառանգք. եթէ ժառանգք Աս-տուծոյ, և ժառանգակիցք Քրիստոսի,, Մագք. Ճոռն. 'ի Հին. Յովհ. Ճառ. Է. Գլ. Ա. 17:

# ԴԼՈՒԽ Թ։

## Զանազան նմանութեանց Հոգւոյն սրբոյ։ Հոգին սուրբ ելանէ ՚ի Հօրէ, և է Հոգի Հօր Աստուծոյ և Որդւոյն Միածնի։

89. Հ. Վասն էր սուրբ Հոգին Աստուած զանազան օրինակաւ յայտնէր, ՚ի յօրդանան՝ իբրև զաղաւնի(1)։ "Եւ իբրև մկրտեցաւ Յիսուս, ել վաղվաղակի ՚ի ջրոյ անտի. և ահա բացան նմա երկինք. և ետես զՀոգին Աստուծոյ՝ զի իջանէր իբրև զաղաւնի և գայր ՚ի վերայ նորա" Մատթ. Գ. 16։ ՚Ի լեառն Թաբոր ՚ի պայծառակերպութեանն Քրիստոսի՝ իբրև ամպ լուսաւոր (2)։ "Եւ մինչդեռ նա խօսէր, ահա ամպ լուսաւոր՝ հովանի եղև ՚ի վերայ նոցա" Մատթ. ԺԷ. 5։ և ՚ի սուրբ սիօն վերնատան ՚ի դասս երանելի առաքելոցն՝ իբրև զհրեղէն լեզուս (3)։ "Եւ երևեցան նոցա բաժանեալ լեզուք իբրև ՚ի հրոյ, և նստաւ իւրաքանչիւր ՚ի վերայ նոցա. և լցան ամենեքեան Հոգւով սրբով" Գործ. Բ. 3. 4։

Պ. (1)։ Սուրբ Հոգին Աստուած զանազան տեսլեամբ և նմանութեամբ երևելով ցուցանէր, ասէ սուրբն Յովհան Ոսկեբերան, զքանչելի ներգործութիւնս պէսպէս շնորհաց և պարգևաց. քանզի և Պօղոս վկայէ. "Թէպէտ և բաժինք շնորհաց են՝ այլ Հոգի նոյն է։ Եթէ բաժինք պաշտամանց են, այլ Տէր նոյն է։ Եթէ բաժինք յաջողութեանց են, այլ Աստուած նոյն է՝ որ ՚յաջողէ զամենայն յամենայնի։ Բայց իւրաքանչիւր ումեք տուեալ է յայտնութիւն Հոգւոյն՝ առ՚ի իւրաքանչիւր օգուտ։

Ումեմն ՚ի Հոգւոյն տուեալ է բան իմաստութեան. այլում բան գիտութեան ըստ նմին Հոգւոյ. միւսումն հաւատք՝ նովին Հոգւով. այլում շնորհք բժշկութեան նովին Հոգւով. այլում յաջողութիւնք զօրութեանց. այլում մարգարէութիւն. այլում ընտրութիւն հոգւոյ. այլում ազգք լեզուաց. այլում թարգմանութիւն լեզուաց. այլ զայս ամենայն յաջողէ մի և նոյն Հոգի, և բաժանէ իւրաքանչիւր որպէս և կամի,, Ա. Կորնթ. ԺԲ. 4—11:

"Իւրաքանչիւր ոք որպէս և ընկալաւ շնորհս ինչ՝ ՚ի միմեանս զնոյն մատակարարել, իբրև զբարւոք ՚հազարապետս պէսպէս շնորհաց Աստուծոյ,, Ա. Պետր. Դ. 10:

"Եւ Հոգին ՚ի վերայ նորա իջեալ ՚ի նմանութիւն աղաւնւոյ. իսկ ընդէր ՚ի նմանութիւն աղաւնւոյ երևի Հոգին սուրբ Աստուծոյ. վասն զի ուսուսցէ աշակերտացն, թէ ոչ այլ ինչ է հնար մատչել առ Աստուածորդին՝ թէ ոչ անմեղութեամբ և սրբութեամբ. յաղաւնակերպ նմանութենէ անտի առեալ կերպարանս յանձինս իւրեանց .... Վասն այսորիկ՝ Հոգին սուրբ աղաւնակերպ իջանէ. զի ուսուսցէ աշակերտացն՝ սրբամաքրով առ Աստուածորդին մերձենալ, և զշնորհս բարերարութեան Հոգւոյն ընդունիլ, և Հօր հաճոյ լինել,, յՍ. Եփրեմ:

"Եւ վասն էր ՚ի նմանութիւն աղաւնւոյ, զի զգօն է թռչունն և հանդարտ, ըստ որում Հոգին՝ Հոգի ասի հեզութեան. և դարձեալ՝ զհին օրինակն յիշեցուցանէ՝ զի յորժամ եհաս համօրէն աշխարհի աղէկոծութիւնն, յայնժամ նոյն թռչուն երբ զաւետիս հանդարտելոյ ջրհեղեղին՝ ունելով առհաւատչեայ կենաց զտերևն ձիթենւոյ ՚ի բերան, որ ունէր զնմանութիւն Աստուածայնոյս այսմ

աղաւնւոյ, որ փոխանակ ձիթենւոյ տերևոյ զխաղա-
ղութիւն երկր ազգի մարդկան, և զորդեգրութիւն
առ 'ի Հօրէն օծմամբ Հոգւոյն սրբութեան . ըստ
որում պատմէ աւետարանիչն „Ներսէս Շնորհ . Է
Քէն . Մատթ . Գ . 16 :
Զաղաւնակերպ երևումն սուրբ Հոգւոյն Աստու-
ծոյ 'ի նշան եօթնարփեան շնորհացն անդստին և
մարգարէն Եսայի յայտնէ :
" Եւ բղխեսցէ գաւազան յարմատոյն Յեսսեայ . և
ելցէ ծաղիկ յարմատոյ անտի : Եւ հանգիցէ 'ի վե-
րայ նորա Հոգի Աստուծոյ . Հոգի իմաստութեան
և հանճարոյ . Հոգի խորհրդոյ և զօրութեան .
Հոգի գիտութեան և Աստուածպաշտութեան . և
լցցէ զնա Հոգի երկիւղի Աստուծոյ ,, Եսայ . ԺԱ.
1—3 :
90. Ահա եօթնեակ պարգևաց Հոգւոյն սրբոյ համե-
մատին եօթն յատկութիւնք աղաւնւոյ . քանզի և
բնաւորինք եօթն յատկութիւնս տան նմա :
Նախ՝ զի մերձ ջրոյ նստի աղաւնին. և 'ի ջուրն
դիտէ զգալուստ թշնամւոյն իւրոյ բազէին . և յոր-
ժամ տեսանէ զնա անդ՝ 'ի փախուստ խուճապէ :
Այսու նշանակի պարգևն իմաստութեան սուրբ
Հոգւոյն :
Երկրորդ՝ աղաւնին ընտրեալ զհունդս 'ի խառնանց՝
ապա ուտէ զնոսա : Այսու նշանակի պարգևն գի-
տութեան :
Երրորդ՝ աղաւնին զձագս այլոց որբացեալս իբրև
զիւր ձագունս սնուցանէ և խնամարկէ. ահա պար-
գևն խորհրդոյ :
Չորրորդ՝ աղաւնին ոչ երբէք վշտացուցանէ զձագս
իւր , այլ զգուշով զարմանէ . ահա պարգևն
հանճարոյ :

Հինգերորդ՝ աղաւնին ոչ ունի զլեղի դառնութեան 'ի լեարդն իւր · ահա պտուղն Ժուժկալութեան :

Վեցերորդ՝ աղաւնին դնէ զձուն իւր 'ի ծերպս վիմաց · ահա պտուղն Հեզութեան :

Եօթներորդ՝ աղաւնին փոխանակ երգոց գիտէ սակայն հեծեծել մնչել ողբում ձայնիւ · և ահա պտուղն [illegible] :

91· (2)· Ի Թաբոր լերին յաւուր պայծառակերպութեանն Յիսուսի յայտնեցաւ Հոգին սուրբ 'ի նմանութիւն լուսեղէն ամպոյ, 'ի ցուցանել՝ եթէ նոյն ինքն էր, որ 'ի հնումն ամպով առաջնորդէր ժողովրդեանն իսրայէլի 'ի յանապատին :

" Նա առաջնորդէր նոցա ցերեկն՝ սեամբ ամպոյ, ցուցանել նոցա զճանապարհն · և զգիշերն՝ սեամբ հրոյ լուսատու լինել 'ի գնալն ,, Ելից · ԺԳ · 21 :

" Առաջնորդեաց նոցա ամպով 'ի տուէ, և զամենայն գիշերն 'ի լոյս հրոյ ,, Սաղմ · ՀԷ · 16 :

Նոյն ինքն էր, որ յամպս երևեցաւ Մովսիսի և Ահարոնի յանապատին Սինայ: " Մինչդեռ խօսէր Ահարոն ընդ ամենայն ժողովրդեան իսրայէլի, դարձան յանապատն· և ահա փառք Տեառն երևեցան ամպով ,, Ելից · ԺԶ · 10 :

Նոյն ինքն էր, որ երևեցաւ նոցա յամպս 'ի վերայ տապանակին քաւութեան : " Ամպով երևեցայց 'ի վերայ քաւութեան ,, Ղևտաց· ԺԶ· 2 :

Նոյն ինքն էր, որ 'ի նուիրել Սողոմոնի առ ինքն զշինութիւն տաճարին՝ յայտնէր ամպով զիւրն ընդ նա հաճութիւն, և փառաւորէր զնա: " Նա տունն լցաւ ամպով փառաց Տեառն· և ոչ կարէին

քահանայք կալ 'ի պաշտաման յերեսաց ամպոյն. վասն զի լցին փառքն զտունն Աստուծոյ,, Բ. Մնաց. Ե. 13. 14:
'Ի վերջոյ՝ նոյն ինքն էր, որ խօսէր ամպով ընդ երանելւոյն Յօբայ: "Ապա Տէր ցՅօբ 'ի միջէ և յամպոյն. ո՞վ է դա, որ թաքուցանէ յինէն զխորհուրդ,,: Իսկ թէ՝ "Դարձեալ կրկնեալ Տեառն յամպոյն՝ ասէ ցՅօբ. ոչ այդպէս, այլ պնդեա իբրև զայր զմէջ քո. հարցից ես՝ և դու տուր ինձ պատասխանի,, Յոբ. ԼԸ. 1: Խ. 1:
92. Դարձեալ գիտելի է. զի որպէս ամպն անձրևաբեր է 'ի պտղաբերումն երկրի և յաճեցումն սերմանց, այսպէս և շնորհ սուրբ Հոգւոյն Աստուծոյ իբրև ամպ ցօղաբեր հեղեալ 'ի հոգիս մեր, տայ մեզ արգասաւորել պտուղս զանազան առաքինութեանց, և բազմացուցանել զհունձս բարեգործութեան:
"Զի այսպէս ասաց ցիս Տէր. զգուշութիւն եղիցի յիմում քաղաքի՝ իբրև զլոյս տօթագին միջօրէի, և իբրև զամպ ցօղաբեր յաւուրս ամարայնոյ,, Եսայ. ԺԸ. 4:
"Գեղեցկագոյն է ողորմութիւնն Աստուծոյ 'ի ժամանակի նեղութեան՝ իբրև ամպ անձրևաց 'ի ժամանակի երաշտութեան,, Սիրաք. ԼԵ. 26:
Դարձեալ՝ ամպն բարձրացուցանէ զառ ինքն ձգեալ առ ինքն զարս առաքինիս, բարձրացուցանէ 'ի փառս իւր:
"Ընդ որ կողմն դիմէր ամպն և հողմն, երթային գազանքն՝ և անիւքն ընդ նոսին վերանային. զի ոգի կենդանի գոյր 'ի յանիւսն,, Եզեկ. Ա. 20:
"Ապա և մեք որ կենդանւոյն մնացեալ իցեմք՝

նոքօք հանդերձ յափշտակեսցուք ամպովք ընդ առաջ Տեառն յօդս · և այնպէս յամենայն ժամ ընդ Տեառն լինիցիմք „ Ա · Թես · Դ · 16 ։

« Բայց թէ ընդէ՞ր ամպովք երևէր, և զի՞նչ լուսաւոր ամպն ։ Սովորութիւն է Աստուծոյ ամենայն ուրեք ամպովք երևիլ · ըստ այնմ՝ ամպ և մէգ շուրջ է զնովաւ, և եդ յամպս զգնացս իւր, և նստեալ ՚ի վերայ թեթև ամպոյ, և ամպ մեծ ՚ի կառս եւս Եզեկիէլ, և Որդի մարդոյ գայ ընդ ամպս երկնից, եթէ յաղագս անճառութեանն և թէ վասն ծննդական սննդական զօրոյն, և զիմանալի անձրև իբրև զցօղ բժշկական շնորհելոյ, և եթէ յաղագս երագութեանն ամենայն ուրեք ժամանելոյ · իսկ աստ լուսաւոր, զի յորժամ սպառնալիս ինչ բարբառէր՝ խաւարային ամպովք երևէր, ըստ Դաւթի՝ խաւարային ջուրք մինչև յամպս օդոց · և եմուտ Մովսէս յամպն և ՚ի մէգն · այլ աստ ոչ երկեցուցանել կամէր, այլ ուսուցանել · վասն այսորիկ ամպն լուսաւոր՝ և ձայն ոչ սպառնական, այլ հեշտական ։ Եւ դարձեալ՝ ամպ լուսաւոր, որպէս ասացի, զՀոգին սուրբ նշանակէ առ ՚ի լուսաւորել զմիտս նոցա, և ծանուցանել, թէ՝ նա է լոյսն ճշմարիտ՝ որ լուսաւորէ ամենայն մարդ՝ որ գալոց է յաշխարհ · կամ զմարմին Տեառն ամպ լուսաւոր պայծառացեալ Աստուածութեանն լուսով, ըստ երգոյն թէ՝ առ մաշկեան մեր հովանաւոր · որ հանգոյց և զովացոյց ՚ի տապոյ մեղաց և ՚ի ծանրութեանց բեռանց՝ որ կան յօրէնս և ՚ի մարգարէս և յաւետարանս „ Յոհան Ոսկեբեր · ՚ի Մեկ · Մատթ · ԾԷ · Ն ։

93 · (3) · Երևեցաւ սուրբ Հոգին Աստուած յաւուր

մեծի տօնի պենտեկոստէի 'ի սուրբ սիոն վերնատան, և հանգեաւ 'ի դասս սրբազան առաքելոցն 'ի նմանութիւն հրեղէն լեզուաց, յապացոյց հեղանելոյ և լուսաւորելոյ զնոսա 'ի լոյս աստուածական ճշմարտութեան : Եւ արդարև լցեալ 'ի բազմադիմի շնորհաց անտի սուրբ Հոգւոյն վառեցան բորբոքեցան յանվեհեր քարոզութիւնս բանին կենաց 'ի հիացումն և 'ի զարմացումն լսողաց :

" Եւ 'ի կատարել աւուրցն պենտեկոստէից, էին ամենեքեան միաբան 'ի միասին : Եւ եղև յանկարծակի հնչումն յերկնից՝ եկեալ իբրև սաստիկ հողմոյ . և ելից զամենայն տունն յորում նստէին : Եւ երևեցան նոցա բաժանեալ լեզուք իբրև 'ի հրոյ, և նստաւ իւրաքանչիւր 'ի վերայ նոցա : Եւ լցան ամենեքեան Հոգւով սրբով, և սկսան խօսել յայլ և այլ լեզուս՝ որպէս և Հոգին տայր բարբառել նոցա .... Սքանչանային ամենեքեան, և զարմանային՝ և ասէին ընդ միմեանս. ոչ ահաւասիկ ամենեքեան սոքա, որք խօսին, Գալիլեացիք են . և զիա՞րդ լսեմք մեք յիւրաքանչիւր բարբառս մեր, յորում ծնեալ եմք ,, Գործ . Բ . 1—8 :

Արդարև սքանչելահրաշ այս նոր յայտ յանդիման առնէ զամենակարող զօրութիւնն Հոգւոյն սրբոյ Աստուծոյ, որպէս երբեմն երևեցաւ Մովսիսի 'ի լեառն Քորեբ 'ի խորհրդական մորենին :

" Եւ երևեցաւ նմա հրեշտակ Տեառն բոցով հրոյ 'ի միջոյ մորենւոյն. և տեսանէր. զի մորենին վառեալ էր հրով, և ոչ այրէր մորենին ,, Ելից. Գ. 2 : Գործ . Է . 30 :

94: Հոգին սուրբ 'ի տեսութիւն հրոյ յայտնեցաւ. զի հուրն զօրէ և մաքրէ հրահալելեաց , առէ սուրն

Ալւրեղ ՚ի գիրս գանձուց, զի զորօրինակ ոսկին ՚ի բովս զտի հրով. և երկաթ ժանգալից մաքրի և նորոգի ՚ի հուր. սոյն օրինակ շնորհ սրբոյ Հոգւոյն առ որս հասանէ, ՚ի պէսպէս չար խորհրդոց զտէ, մաքրէ, և նորոգէ։

“Եւ խաղասցի ՚ի վերայ քո Հոգի Տեառն, և մարգարէասցիս և դու ընդ նոսա. և դարձցիս յայր այլ: Եւ եղիցի յորժամ գայցեն նշանքս այսոքիկ ՚ի վերայ քո, արասցես զամենայն ինչ, զոր գտանիցէ ձեռն քո՝ զի Աստուած ընդ քեզ է,, Ա. Թագ. Ժ. 6. 7։

“Եւ տաց նոցա սիրտ այլ. և ոգի նոր պարգեւեցից նոցա. և հանից զսիրտն քարեղէն ՚ի մարմնոյ նոցա, և տաց նոցա զսիրտ մարմնեղէն։ Զի ըստ հրամանաց իմոց գնասցեն, և զիրաւունս իմ պահեսցեն, և արասցեն զնոսա. և եղիցին ինձ ՚ի ժողովուրդ՝ և ես եղէց նոցա յԱստուած,, Եզեկ. ԺԱ. 19. 20։

“Առաքես զոգի քո՝ և ստանաս զնոսա, և նորոգես զերեսս երկրի,, Սաղմ. ՃԳ. 30։

“Որպէս զարրին զապականեալ անօթս նոր առնէ փքովք և կայծակամբք, նոյնպէս և Հոգին սուրբ զապականեալ ազգ մարդկան նորս արար և առնէ,, Գրիգոր Լուսաւորիչ. ՚Ի Ճառ. Եղիայ։

Յայս միտս խրատէ զմեզ սրբազան առաքեալն Պօղոս. զի մի երբէք լիցի մեզ զկենդանին հուր շնորհաց սրբոյ Հոգւոյն անմաքուր վարուք մերովք շիջուցանել և կորուսանել. վասն որոյ ասէ. “Զ Հոգին մի շիջուցանէք. զմարգարէութիւնս մի արհամարհէք. զամենայն ինչ փորձեցէք, զբարիս ընկալարուք, յամենայն իրաց չարաց ՚ի բաց կացէք,, Ա. Թես. Ե. 19։

Ըստ Ոսկեբերանին՝ « Հուր և ճրագ հակառակ են մթանց , և շիջանին ջրով , հողմով , կամ պակասմամբ արծարծիչ նիւթոյն ․ նոյնպէս պարգևք շնորհաց Հոգւոյն սրբոյ շիջանին կամ խափանին հակառակ ներգործութեամբք մերովք » Է Ճեն․ Է հատոռ՝ պնոզին Ճ՝ Լնէլոցանէս ։

Այս բան սրբազան առաքելոյն հիմնեալ է յաւետարանական բան Յիսուսի Քրիստոսի ։ « Հուր եկի արկանել յերկիր․ և զի՞նչ․ կամիմ թէ արդէն բոց բորբոքէր » Ղուկ․ ԺԲ․ 49 ։

« Զգօրութիւն աւետարանին պէսպէս օրինակօք նմանեցուցանէ․ որպէս հնար է զօրինակն գտել․ որով ճշմարտութիւնն նշանակեալ լինի , զի երբեմն խմորոյ նմանեցուցանէ՝ վասն ձգիչ զօրութեանն․ և զարձեալ մանանխոյ՝ վասն տարածելոյն ։ Նաև զանձի՝ վասն փարթամացուցիչ և պատուական բնութեանն․ իսկ աստ հրոյ՝ վասն ջեռուցանող՝ սրբիչ և լուսաւոր բնութեանն ։ Վասն որոյ պէտք են այնոցիկ՝ որ յայժմ պարապին տիրապէս բնորութեանն՝ զ կողմն օրինակին, որ անպատշաճ է ճշմարտութեանն, 'ի բաց քերել 'ի բանէն , և այնու՝ որով ունի զմիտս խորհրդոյն՝ վարել բանիւն ։ Հուր, ասէ, եկի արկանել յերկիր ․ Հրոյ զօրութիւնն այն է , զի զանպիտան աղտ և ժանկ խառնեալ ընդ ոսկւոյ և արծաթոյ և զնա տգեղացուցեալ՝ սրբել և յառաջին պայծառութիւնն ածել 'ի ձեռն արուեստի ոսկեգործաց ։ Այսպէս և բնութիւնս մեր ոսկեղէն ոմն էր՝ անարատ Աստուածային բնութեանն նմանութեամբ փայլեալ , ապա 'ի գժրանաց չարին աղտեղացաւ ։ Եկն Յիսուս արուեստաւորն բնութեանս , հրով Հոգւոյն

վերստին ձուլել, զի յառաջին պայծառակերպութիւնն հասցէ, ըստ այսմ զոր Յովհաննէս ասէր․ նա մկրտեսցէ զձեզ Հոգւով սրբով և հրով։ Արդ այսպէս զօրութիւնն աւետարանին քաղցրութեան ջեռոյց զայնոսիկ, որ լուան զբանն Աստուծոյ, և շնորհք Հոգւոյն՝ աւազանաւն իբր հրով ծախեաց զախտ գարշութեան մեղացն, և մաքրեալ պայծառացոյց զբնութիւնս, և յառաջին անարատ պայծառութիւնն փոխեաց։ Եւ այս է զոր ասէ․ կամիմ թէ արդէն իսկ բորբոքէր, զի այսպէս ամենքեան ջեռուցեալք ՚ի սէրն Աստուծոյ բանին իմաստիւք վերաբերեալ զանձինս յերկրաւոր ցանկութեանց աստի յանախտ և Աստուածային կենացն եղեն բաղձանս, բանիւ և զխաւարն անգիտութեան, և լուսով Հոգւոյն ճառագայթիւք զախեգերս երբև բորբոքեալ հրով,, Ռուֆէն Իփինափիոս․ ՚ի Ճռ․ Գլու․ Ճէ․ 49։

Եւ սուրբն Գրիգոր Նարեկացի զայս մաղթանս ուղղէ առ Հոգին սուրբ Աստուած։

" Աղաչեմք և աղերսեմք արտասուալից հառաչմամբ յամենայն անձնէ զփառաւորեալ արարչութիւնդ, անեղծ և անստեղծ՝ անժամանակ Հոգւոյդ զթածի, որ բարեխօսդ ես վասն մեր յանմռունչ հեծութիւնս առ ողորմածդ Հայր՝ որ զսուրբսն պահես, և զմեղուցեալսն մաքրես, և տաճարս կազմես կենդանի և կեցուցիչ կամաց բարձրելոյդ Հօր։ Արդ՝ ազատեա զմեզ յամենայն անմաքուր գործոց, որ ոչ է հաճոյ քումդ բնակութեան, և մի՛ շիջցի առ ՚ի մէնջ՝ լուսոյդ շնորհաց փայլմունք՝ ՚ի տեսականաց աչաց իմաստից․ վասն զի զքեզ ուսաք մնալ ՚ի մեզ ՚ի ձեռն

աղօթից և ընտիր վարուց խնկելոց „ Նարէկ. Լէ:

“ Այսօր հուր սքանչելի՝ երկնաւոր բոցաճաճանչ նշուլիւք արտափայլեալ 'ի յերկնից՝ այլայլութեամբ արծարծեալ կիզեաց 'ի մարդկանէ զփուշն և զսատակիչ պատիժս պատուհասի մեղացն անիծից „ Ներս. Լամբ. 'ի ճառն գալստեան Հոգւոյն Սրբոյ :

Դարձեալ՝ որպէս հուրն հաղորդէ զներգործութիւնս իւր , սոյնպէս սուրբ Հոգին Աստուած պարգևէ հաղորդէ մեզ զիւրն զանազան շնորհաց ազդեցութիւնս ըստ իւրաքանչիւր անձանց արժանաւորութեան և օգտի հոգւոց նոցա :

“ Թէպէտ և բաժինք շնորհաց են՝ այլ Հոգի նոյն է . եթէ բաժինք պաշտամանց են , այլ Տէր նոյն է . եթէ բաժինք յաջողութեանց են , այլ Աստուած նոյն է որ յաջողէ զամենայն յամենայնի : Բայց իւրաքանչիւր ումեք տուեալ է յայտնութիւն Հոգւոյն՝ առ իւրաքանչիւր օգուտ : Ումեմն 'ի Հոգւոյն տուեալ է բան իմաստութեան . այլում բան գիտութեան ըստ նմին Հոգւոյ . միւսումն հաւատք՝ նովին Հոգւով . այլում շնորհս բժշկութեան նովին Հոգւով . այլում յաջողութիւնք զօրութեանց . այլում մարգարէութիւն . այլում ընտրութիւն հոգւոյ . այլում ազգք լեզուաց . այլում թարգմանութիւն լեզուաց . այլ զայս ամենայն յաջողէ մի և նոյն Հոգի . և բաժանէ իւրաքանչիւր , որպէս և կամի „ Ա . Կորնթ . ԺԲ . 4—11 :

Դարձեալ՝ ըստ Դիոնեսիոսի , որպէս հուրն մերժող ցրտութեան և ջեռուցանող ցրտացեալ մարմնոյ , այսպէս և սուրբ Հոգին Աստուած սփռելով 'ի հոգիս հաւատացելոց զկենդանութեան հուր անսահման սիրոյն . մերժեցաւ ցրտութիւն աղա-

ղութեան մեղաց , և ջերմութիւն անսահման սիրոյն Աստուծոյ ներգործեցաւ 'ի մեզ , որ է դրաւական հաշտութեան Աստուծոյ ընդ մարդկան : Ուստի ամենացանկալի պարգև է մեզ այս սէր Աստուածային , յորում եթէ հաստատեալ կացեմք յուսով , ունիցիմք համարձակութիւն առ Աստուած ասել ըստ սրբազան առաքելոյն Պօղոսի . " Յոյս ոչ երէք ամաչեցուցանէ . զի սէրն Աստուծոյ սփռեալ է 'ի սիրտս մեր 'ի ձեռն Հոգւոյն սրբոյ , որ տուաւ մեզ ,, Հռովմ . Ե . 5 :

" Զհաւատի հատուցումն հանդերձեալ փառաց ներկայիւքս հաւաստարմացուցանել , զի ետ մեզ Աստուած զսէր իւր , պարգևելովն զՀոգին սուրբ՝ որ է գերազանցն 'ի պարգևս , ոչ առ սակաւ սակաւ պատուեաց զմեզ , այլ զաղբիւրն ետ միանգամայն : Իսկ եթէ ոչ կամէր պահել զվաստակն մեր , զիա՞րդ յառաջ քան զվաստակն շնորհէր զայնպիսի բարիս . վասն որոյ և թէ չիցեն դեռ արժանի մի՛ անյոյս լինիցուք . զի մեր առ դատաւոր անդր կայ ջատագովքս . այսինքն՝ Տէր նորա ,, Ոսկ . 'ի ճառէ Ի :

" Եթէ զՀոգին սուրբ պարգևեաց մեզ , և զի 'ի մեղաց սրբեաց և արդարացոյց զմեզ , և զի մարմնակից և հաղորդս Որդւոյ իւրոյ արար զմեզ , և զի որդիս և ժառանգս արքայութեան իւրոյ կացոյց զմեզ ,, Սարգ . Շնորհ . 'ի Մեկն . Ա . Ընդհ . Յովհ . ճառ Է :

95 . Հ . Զի՞նչ խորհրդական իմաստ պարունակի յայս աւետարանական բան Յիսուսի Քրիստոսի , որ ասաց աշակերտացն իւրոց . " Յորժամ եկեսցէ նա Հոգին ճշմարտութեան , առաջնորդեսցէ ձեզ զամենայն ճշմարտութեամբ . զի ոչ եթէ յանձնէ խօս

խօսիցի , այլ զոր լսիցէ խօսեսցի , և զգալոցն պատ-
մեսցէ ձեզ ։ Նա զիս փառաւորեսցէ , զի յիմմէ
անտի առնուցու՝ և պատմեսցէ ձեզ ,, Յովհ․ ժզ․
13 ․ 14 ։

Գ․ Նոյն բանից Յիսուսի նկէին տայ բացատրու-
թիւնս սուրբն Յովհան Ոսկեբերան․ նախ՝ այսպէս
մեկնելով " յիմոցն առցէ ,, ․ այսինքն՝ զորս ա-
սացի ես, զնոյնս ասասցէ և նա ․ իսկ յորժամ ա-
սէ, թէ՝ (յանձնէ ոչինչ խօսեսցի), ոչինչ հակառակ
և ոչ առանձին ինչ քան զիմն ․ որպէս զի ոչ
յաղագս ինքեան՝ զոր և ոչ ես ասեմ յանձնէ ։
Զայս ասէ, զի ոչ է արտաքոյ Հօր ․ և ոչ առան-
ձին ինչ քան զնա և օտար ․ այսպէս և Հոգին
սուրբ ․ և երկրորդ՝ յիմոց անտի առնուցու ․ ես
զիտեմ յիմմէ գիտութենէ , զի մի է իմ և Հօր
գիտութիւնն ,, Ոսկ․ Ն ․ Մեկ․ Յովհ․ Ճառ․ ՂԷ ։
Զխորհրդական այս մեկնաբանութիւն Ոսկեբերա-
նին հաստատեն և հետևեալ բանք Յիսուսի Քրիս-
տոսի ․ " Իսկ մխիթարիչն Հոգին սուրբ՝ զոր ա-
ռաքեսցէ Հայր յանուն իմ, նա ուսուսցէ ձեզ
զամենայն , և յիշեցուսցէ ձեզ զամենայն , որ ինչ
ասացի ձեզ ,, Յովհ․ ժդ․ 26 ։
" Եւս բազում ինչ ունիմ ասել ձեզ, այլ ոչ կա-
րէք համբառնալ այժմիկ ․ յորժամ եկեսցէ նա
Հոգին ճշմարտութեան , առաջնորդեսցէ ձեզ ա-
մենայն ճշմարտութեամբ ․ զի ոչ եթէ յանձնէ ինչ
խօսիցի, այլ զոր լսիցէ խօսեսցի, և զգալոցն պատ-
մեսցէ ձեզ ,, անդ ․ ժզ․ 12 ․ 13 ։
Իսկ երկրորդ մեկնութիւնն Յովհաննու Ոսկեբե-
րանի հայի ուղղակի յայս բան Փրկչին մերոյ,
եթէ " Զամենայն զոր ինչ ունի Հայր՝ իմ է ․

վասն այնորիկ ասացի ձեզ, թէ յիմմէ անտի առ-
նուցու և պատմեսցէ ձեզ" Յովհ. ԺԶ. 15։

Նոյն հաստատութիւն բերեմք զբացայայտ քարոզու-
թիւն լուսաւորչին մերոյ սրբոյն Գրիգորի. "Որ-
պէս և Որդին եկեալ մատուցանէ առ Հօրն զգի-
տութիւն, թէ եկի ոչ զիմ կամս կատարել, այլ
զկամս Հօր իմոյ՝ որ առաքեացն զիս. որ յոր-
դւոյն նշանակելով ՚ի վարդապետելն իւրում զփառս
Հօր բարձրացուցանէ. յայտ արարեալ զմիաբանա-
կան կամացն, թէ զբանն՝ զոր ես խօսիմ ընդ ձեզ՝
ոչ եթէ յանձնէ ինչ խօսիմ, այլ Հայրն՝ որ յիս
բնակեալ է, նա գործէ զգործսն ։ Նոյնպէս և
վասն Հոգւոյն սրբոյ, թէ Հոգին ճշմարտութեան
առաջնորդեսցէ ամենայն ճշմարտութեամբ. զի ոչ
եթէ յանձնէ ինչ խօսի, այլ զոր լուիցէ խօսիցի, և
զգալոցն պատմեսցէ ձեզ. նա զիս փառաւորեսցէ,
զի յիմմէ անտի առնուցու և պատմեսցէ ձեզ.
զամենայն ինչ զոր ունի Հայր՝ իմ է. վասն այ-
նորիկ ասացի թէ յիմմէ անտի առնուցու և պատ-
մեսցէ ձեզ" յՅաճախապատումն։

Այս ողջամիտ և բացայայտ վարդապետութիւնս
հաստատուն մնացին հոգեկիր սուրբ հարք ուղ-
ղափառ եկեղեցւոյն Քրիստոսի. որպէս երգէ Ներ-
սէս շնորհ. սուրբ Հայրապետն մեր ։

" Նոյն և նման Հօր և Որդւոյ
Հոգիդ անեղ և համագոյ,
բղխումն Հօր անքննաբար,
առօղ յՈրդւոյ անճառաբար.
՚ի վերնատունն այսօր իջեր,
զՀոգիդ շնորհաց քոյ արբուցեր ,, ՚ի Շարակ. ՚ի
կանոն Հոգեգալստեան ։

"Թուն թարգմանէ մեզ տիրաբար
զՀոգւոյն բղխումն անքննաբար ·
Թէ 'ի Հօրէ է յառաջաբար ,
առնու յՈրդւոյ անճառաբար :
Խորին խորհուրդ անծին անուն պարփակեցան ,
և Որդւոյ ծնելութիւն ոչ ճառեցան :
Ի Հօրէ բղխումն Հոգւոյդ ոչ քննեցան
և հոման Որդւոյ առումն ոչ պատմեցան ,, 'ի Յի-
սուս որդի :

Եւ երանելի սուրբ վարդապետն մեր ձնն Ներսէս ·
"Առանձին է Հօր անծին և անսկիզբն գոլ , իսկ Որդւոյ ծնունդ և սկսանիլ 'ի Հօրէ անժամանակաբար , և Հոգւոյն սրբոյ բղխումն 'ի Հօրէ , և երևումն յՈրդւոյ անհատաբար և անժամանակաբար ,, 'ի [illegible] Մ[illegible] :

Եւ սուրբն Աթանաս 'ի բանս զալստեան սուրբ Հոգւոյն· "Որդի ասէ , զոր լուայ 'ի Հօրէ՝ զայս և յաշխարհի խօսիմ , իսկ Հոգի յՈրդւոյ առնու , յիմմէ անտի առնուցու և պատմեսցէ ձեզ :

96· Ըստ ուրեմն հայելով յայս բան կենարարին մերոյ Յիսուսի , որ յաղագս Հոգւոյն սրբոյ՝ "յիմմէ անտի առնուցու և պատմեսցէ ձեզ ,, [illegible] Հոգին ելանէ 'ի Հօրէ և յՈրդւոյ , որ հակառակ է վարդապետութեան հարց սրբոց , և [illegible] 'մեկնութիւն բանիցն Յիսուսի :

"Բայց յորժամ եկեսցէ մխիթարիչն , զոր ես առաքեցից առ ձեզ 'ի Հօրէ , զՀոգին ճշմարտութեան որ 'ի Հօրէ ելանէ , նա վկայեսցէ վասն իմ ,, Յովհ · ժե · 26 :

" Միածին Որդին (Հայր) ծնունդ Աստուածու-

թեան քո, և Հոգիդ սուրբ որ 'ի քէն բղխէ,, :
Նա թէ " Հաւատամք և 'ի սուրբ Հոգին Աստուածեղէն Հոգի սուրբ Աստուած կատարեալ՝ առանց ամենայն, բղխումն միշտնջենաւոր առ 'ի Հօրէ,, յԱթանասէ :

" Ասեն՝ թէ Հոգի յառաջ եկեալ 'ի Հօրէ, զորպէսն մի հարցանել,, ասացէ Գրիգորի Աստուածաբանի. Ճառ Է. յաղագս հոգւոյ :

" Գիտեմ՝ զի զՈրդին ծնաւ (Հայր), և եթէ զիարդ՝ անգիտանամ գիտել. զի Հոգին 'ի նմանէ է. բայց եթէ որպէս 'ի նա ոչ գիտեմ,, Յովհ. Ոսկ. 'ի ճառս յաղագս անհասանելւոյն :

" Այսօր զՀոգին ճշմարտութեան զաւանեցին սուրբ հայրապետք, ծագումն առ 'ի Հօրէ յառաջ բղխեալ անհատապար,, 'ի Շարականէ :

" Որ զանձնաւոր զէութիւն բղխեցելոյն 'ի Հօրէ Հոգւոյն սրբոյ զաւանեցին, և նոյնագոյ բնութեամբ Հօր և Որդւոյ հաւասարեալ անորոշ բաժանմամբ համագոյ միութեամբ,, 'ի Շարականէ :

Նա թէ զիարդ հոգեկիր սուրբ հարք ուղղափառ եկեղեցւոյս Հայաստանեայց ոչ բնաւ յաւելին 'ի հանգանակն հաւատոյ զմասնիկն և յՈրդւոյ, տես 'ի գիրս վահան հաւատոյ հայր Միքայէլ վարդապետի Չամչեան :

" Այլ մեք մի առ մի 'ի քննին 'մատուսցուք երկայնմտութեամբ զերեսին զիմաստութիւնս հակառակս հակառակորդաց՝ մերոց, զոր արդ յիշեցաք : Վասն առաջնոյն ասելի է, թէ որպէս հակառակորդք մեր նշան մոլորութեանն համարին զոչ աւելն Հայոց 'ի հանգանակն հաւատոյ զմասնիկն և յՈրդւոյ. ապա ըստ կարծեաց նոցա զնոյն

նշան ունէր և սուրբ եկեղեցին Հռոմայ յաւուրց անտի առաքելոց 'ի բազում դարս՝ գրեթէ մինչև 'ի դարն երեքտասաներորդ, յորս չգոյր գործածութիւն այդր մասնկան առ Հռոմայեցիս. որպէս և ինքեանք հաւաստեաւ գիտեն և վկայեն։

Նոյն առաւել մեծ նշան համարելի էր առ հակառակորդս արարուած սրբոյ քահանայապետին Լևոնի Գ, որ ոչ եթող դնել Հռոմայեցւոց 'ի հանգանակին զայն մասնիկ, որպէս եդեալ էին առանց հրամանի սրբոյ գահին այլ և ոմանք Եւրոպացւոց։

Արդ՝ որք չիշխեն նախատել զգործ սրբոյ հովուապետին, այլ մանաւանդ հարկին գովել իբր գլխահական տնտեսութիւն, նոյնպէս և ոչ պարտին դատել և զեկեղեցին Հայոց, որ յամենայնի ընդդագոյնս պահէ զհնութիւն. վասն զի որպէս պապն յայն ասկս չէառ յանձն զգրութիւն այսր մասնկան. զի մի նորոգութեամբ իւրով խռովումն լիցի բազմաց, և կամ ծագեսցի գայթակղութիւն առ այլս ասել, թէ Հռովմայեցիք ըստ հաճոյս այլայլեն զհին աւանդս և այլն։

Այնպէս և Հայք, որք 'ի կիր առնուն զՆիկիական հանգանակն՝ յորում ոչ գոյ անդ մասնիկ, և ոչ իսկ յիշատակութիւն ելողութեան Հոգւոյն, չառին յանձն զայն մուծանել 'ի յետին դարս. քանզի դժուարին լինէր համոզել զազգն ողջոյն, ունել ինչ փոփոխութիւն և 'ի հին աւանդս հանգանակ իւրեանց։

97. Հ. Եթէ սուրբ Հոգին ոչ բղխի և յՈրդւոյ, վասն էր սուրբ գիրք քարոզեն մեզ զսուրբ Հոգին, Հոգի Յիսուսի Քրիստոսի։

“ Թեւակոխէին երթալ 'ի բեթանիա, և ոչ համարձակեաց նոցա Հոգին Յիսուսի ,, Գործ. ժզ. 7.
“ Զի գիտեմ եթէ այս պատահի ինձ 'ի փրկութիւն 'ի ձերոց խնդրուածոց, և 'ի պարգևաց Հոգւոյն Յիսուսի Քրիստոսի „ Փիլիպ. ա. 19:
“ Քննէին՝ յորում և յորպիսի ժամանակի գուշակէր 'ի նոսա Հոգին Քրիստոսի ,, ա. Պետր. ա. 11:

Գ. Զսուրբ Հոգին Աստուած խոստովանիմք ոչ միայն Հոգի Հօր Աստուծոյ, այլ և Հոգի Որդւոյն Աստուծոյ Յիսուսի Քրիստոսի. վասն զի սուրբ Հոգին Աստուած է համազօր, համափառ, համաբուն և համակամ Հօր և Որդւոյ:
“ Զի հաւատով ճշմարտեսցուք 'ի մի Աստուած Հայր և Տէր արարիչ ամենայնի. և 'ի միածին Որդին որ է 'ի Հօրէ, և առ Հօր, և ընդ Հօր. և 'ի սուրբ Հոգին՝ որ 'ի նորին էութենէ, և նովաւ արար զամենայն արարածս: Որ է մի տէրութիւն, մի զօրութիւն, մի իշխանութիւն, մի մեծութիւն, մի գիտութիւն, մի խորհուրդ, մի պետութիւն, մի անսկզբնական զօրութիւն, երեք կատարեալ անձինք, մի կատարեալ կամք, անպատում անքննելի միութիւն երրորդութեան, մի բնութիւն, մի էութիւն, մի Աստուածութիւն, Հայր է, և Որդի է, և Հոգի է, երեք անձինք, մի զօրութիւն Աստուածութեան: Հայր յանձնէ. Որդին 'ի Հօրէ. և Հոգին 'ի նոցուն 'ի նոսին: Իսկութեամբն, էութեամբն, Աստուածութեամբն հարթ և հաւասար հաստատին 'ի խորութիւնս, 'ի բարձրութիւնս, 'ի լայնութիւնս, յերկայնութիւնս. մի էութիւն բնութեան. մի պսակ Երրորդութեան.

և լի են երկինք և երկիր փառօք նորա ,, յԺամ- րանգէշում ։

« Ո՛չ Տէր խոստովանէր ( մակեդոն ) զՀոգին սուրբ , և ոչ երկրպագելի և ոչ փառաւորելի ընդ Հօր և Որդւոյ , այլ՝ օտար յԱստուծոյ բնութենէն , և ստացական և ծառայ և պաշտօնեայ , և ազդումն ինչ և ոչ էութիւն անձնաւոր ,, Խու- չէն . ՚ի պատմ . Հայ . Ճ . ԼԶ ։

« Երկրպագեմք միշտ և օրհնեմք ընդ Որդւոյ և ընդ Հօր՝ և զՀոգի էութեան նոցին , ամենազօր , ճշմարիտ , կատարեալ և սուրբ . որ յանէից գոյացոյց զբոլոր եղեալքս ամենայն . ինքնագործ համիշխան երկուցն և ընդ նմին անեղծ և անսահման թագաւորութեան . որ ինչ պատճառն առաջին , և բանն ահաւոր նորին ինքնութեան , նոյն ինքն և Հոգին բարձրացեալ ,, Նոյէկ . ԼԶ ։

« Հաւատամք և ՚ի սուրբ Հոգին , որպէս ՚ի Հայր և յՈրդի . զի միանական է և զեղու աղբերաբար , և ելանէ յԱստուծոյ Հօրէ , և բաշխի արարածոց ՚ի ձեռն Որդւոյ . որպէս և փչեաց յառաքեալսն ասելով՝ առէք Հոգի սուրբ ։ Վասն որոյ նմանապէս յԱստուծոյ Հօրէ և Աստուած է Հոգին սուրբ , և նորին ինքեան ոչ օտար յէութենէ իսկութեանն Հօր և Որդւոյ , և այս իսկ է անմոլար դաւանութիւն հարց սրբոց ,, Ներսէս Լամբր . ՚ի Մեկն . Հանգ ։

« Զ Հոգին՝ Քրիստոսի ասեմք . ոչ եթէ ՚ի նմանէ յառաջ եկեալ առեալ և բղխեալ՝ որ է հաւասար նմին և համափառ բղխումն , այլ ՚ի Հօրէ . . . Հոգի՝ Քրիստոսի ասեմք իբր անօրինաբար առեալ ՚ի Հօրէ , և ոչ եթէ ՚ի նմանէ բղխեալ ,, Անդ ։

“ Հոգին Քրիստոսի ունել այն է, զոր Պօղոս միտս Քրիստոսի ասէ: Եւ դարձեալ թէ, որ զՀոգին Քրիստոսի ոչ ունի, սա չէ նորա: Զայս ասելով ոգւոյ եւ խոստովանելով, զմխիթարութիւնն եւ զնոյն էութիւնն եւ զբնութիւն եւ զԱստուածութիւնն նշանակեն: Զի զՀոգին Քրիստոսի ունել ոչ ՚ի նմանէ ասէ իբր ՚ի պատճառէ, զի պատճառ Հայր միայն է որպէս Որդւոյ, նմանապէս եւ Հոգւոյն. միոյն՝ ծննդեամբ, եւ միւսոյն՝ ելողութեամբ ըստ անսուտ Տեառն ձայնին: Նա, ասէ, Հոգին ճշմարտութեան որ ՚ի Հօրէ ելանէ: Իսկ զիւրն առ Հոգին զհամակամութիւնն եւ զհաւասարութիւնն երեւելապէս խոստովանի: Երբեմն զիւրն դնելով զիշխանութիւնն առաջի՝ ասէ, յիմմէ անտի առնուցու՝ եւ պատմեսցէ ձեզ: Եւ դարձեալ եթէ ես ոչ երթայց, մխիթարիչն ոչ եկեսցէ առ ձեզ. այլ երթայց եւ առաքեցից զնա առ ձեզ: Արդ զի մի զայս ասելով թերի ոք եւ կրտսեր վարկանիցի զՀոգին քան զՈրդին, զնորա իշխանութիւնն անն յայտնի ցուցանէ: Յորժամ եկեսցէ, ասէ, նա Հոգին ճշմարտութեան, ուսուսցէ ձեզ զամենայն, եւ յիշեցուսցէ ձեզ զամենայն, զոր այժմէն ոչ համբարէք լսել: Եւ դարձեալ, նա եկեալ յանդիմանեսցէ զաշխարհս: Արդ՝ այսուօրինակաւ զՀոգին Քրիստոսի ունել եւ խոստովանել, յարմար է եւ նման. իսկ այլ ազգ՝ ոչ,, Սարգիս շնորհ. ՚ի Յհն. ա. Պետր. ճառ Ե. ա. 11:

Արդ՝ ՚ի վերջոյ սկսեալ բանից մերոյ գրչութեան աւարտեսցուք զաղաչանս մեր երկրպագութեամբ համ-

դիրձ առ սուրբ Հոգին Աստուած, ձայնակից լինելով հոգեկիր և հրեշտակակրօն վարդապետին մերոյ սրբոյն Գրիգորի Նարեկացւոյն, աղաղակելով "Զանձ լուսոյ փառակից Որդւոյ անճառ զօրութիւն, ահեղ մեծութիւն, անբաւ բնութիւն, լոյս 'ի լուսոյ, ողի բարձրելոյ, պատկեր անփոփոխ, պարզ անզննելի, հաստիչ հոգւոյ, հանդերձիչ մարմնոյ, անուն պաշտելի, ճշմարիտ բարի անեղծանելի, էակից ընդ Հօր և Տէր բոլորից: Նա ընկալցի զերկրպագութիւն քում զաւանողացս քեզ հաճութիւն. աղաչեմք „ Նէջէ · Գալլա · Հոգոյն ուէրայ :

# ՎԵՐԱՏԵՍՈՒԹԻՒՆ:

Յաւարտ բանիցս խնդրեմք 'ի բարեմիտ ընթերցասիրաց սիրելի Եղբարս, 'ի հոգեւորականաց ասեմ 'ի հաւատարիմ պաշտօնէիցն Քրիստոսի, 'ի ժողովրդականացն բարեպաշտից 'ի ճառագայթս երկնաձիր իմաստութեան լուսափայլեաց. մի 'ի թերութիւնս այսր գրչութեան միայն նկատեալ՝ խոտան ինչ համարել զսա, այլ դիտել ներողամիտ հոգւով, զի ըստ կարի փոյթ կալաք կատարել զպարտաւորութիւն պահանջման հոգեւոր պաշտօնի մերոյ և արգիւնաւորել զքանքար Աւետարանական բանին Աստուծոյ՝ մատակարարեալ զնոյն և քարոզեալ զլով ողջամիտ և ջերմեռանդն ժողովրդոց ուղղափառ սուրբ եկեղեցւոյս. զի յանաչառ ատենի անդ արդար դատաւորին Աստուծոյ փոխանակ վարձուցն հատուցման՝ որում արժանաւորեցան ազնիւ և բարի ծառայքն, մի լիցի և ինձ զարժանին ընդունել զքանքարաթաղից և զանպիտան ծառային այնմիկ զդատապարտութիւն, զոր դիտել մեզ ուսոյց առակաւ ճշմարիտ վարդապետն մեր ՅիսուսՔրիստոս. Մատթ. ԻԵ. 15: Ղուկ. ԺԹ. 13: Քանզի և յաղագս այս օրինակ անժխտելի պարտաւորութեան հոգեւոր պաշտօնէիցս՝ յորդորանօք գրէ սրբազան առաքեալն Պօղոս. “ Որ բարւոք վերակացու լինին երիցունք, կրկին պատուոյ արժանի եղիցին. մանաւանդ՝ որ աշխատեցին բանիւ և վարդապետութեամբ ,, Ա. Տիմ. Ե. 17:

Սակայն ոչ անհնարութիւն զօլնոտից մարդկան և պատուոյ շարժեաց զիս յայս դուզնաքեայ գրաւոր վաստակ. այլ հարկ 'ի վերայ իմ կայր ըստ իմով-

սանն փոյթ ունել մատակարարել եթէ բանիւ և եթէ գրով՝ ճշմարիտ հոգեւորաց զբանն կենաց աւետարանական ճշմարտութեան, ճանաչելով զանձն իմ իբրև զմի որ 'ի յետին պաշտօնէից բարւոք հազարապետաց շնորհացն Աստուծոյ ծառայելով անխոնջ աշխատանօք բարեկամ կամաց նորին Աստուածութեան պարգևօղին անսպառելի շնորհաց և անրաւ բարութեանց։ Քանզի և սրբազան առաքեալն Պետրոս 'ի յորդոր պաշտօնէից Քրիստոսի մատակարար և հազարապետ Աստուածային խորհրդոց և շնորհացն անուանելոց գրէ յընդհանուրս զամենազգս զայս բան, եթէ՝ "Իւրաքանչիւր որպէս և ընկալաւ շնորհս ինչ՝ 'ի միմեանս զնոյն մատակարարել, իբրև զբարւոք հազարապետս պէսպէս շնորհացն Աստուծոյ։ Եթէ ոք խօսեսցի՝ իբրև զԱստուծոյ պատգամս. եթէ ոք մատակարարեսցէ իբրև 'ի զօրութենէ՝ զոր շնորհէ Աստուած. զի յամենայնի փառաւորեսցի Աստուած 'ի ձեռն Յիսուսի Քրիստոսի, որում փառք և զօրութիւն յաւիտեանս ամէն,, Ա. Պետր. Դ. 10. 11.

Ա·

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

## ԻՄԱՍՏԻՑ ՄԱՏԵՆԻՍ:

Երես

1· Աստուածաբանութիւնն է բան զԱստուծոյ և զԱստուածայնոց, և է գերբնական գիտութիւն: 1

2· Տեսակք Աստուածաբանութեան բաժանին 'ի հինգ · այսինքն է՝ 'ի բնական, 'ի գերբնական, յուսումնական, յերանական և 'ի բարոյական : 3

3· Բնական Աստուածաբանութիւնն է բնականապէս յայտնեալ երևելի արարածովք : 3

4· Գերբնական Աստուածաբանութիւնն է շնորհ Աստուածայայտնութեան հեղեալ յԱստուածուստ առ արժանաւորս առանց հետևելոյ մարդկային ուսման : 4

5· Ուսումնական կամ դրական Աստուածաբանութիւնն է՝ որ ճառէ զճշմարտութիւնս Աստուծոյ, զմարդասիրական խնամս և զտնօրէնութեանց նորին, զորոց ընդարձակ ճառեն և մեկնաբանեն սուրբ Հարք, յորս երևելի հանդիսացան սուրբն Կիւրեղ, սուրբն Դիոնեսիոս և այլ, և այլ : 5

6· Գիտութիւն մի և ճանաչողութիւն յաղագս Աստուծոյ և Աստուածայնոց անկատար է, որչափ կեմք յաստի կեանս · բայց 'ի հանդերձեալն ունիմք ստանալ զգերագոյն գիտութիւնս և զայս յանդիման գիտութիւնս զԱստուծոյ և զԱստուածայնոց · այս ևս է Աստուածաբանութիւնն Երանական : 6

7· Բարոյական Աստուածաբանութիւնն է ուղղել մարդկային վարուց յԱստուածահաճոյ գործս բարեպաշտութեան · ևայս լինի հաստատուն և

բեղմնաւոր Աստուածաբանական առաքինութեամբք · այսինքն է՝ հաւատով, յուսով և սիրով ։ 8

8· Ներգործութիւնք Աստուածաբանական առաքինութեանց հաւատոյ, յուսոյ և սիրոյ յոյժ կարևորք են մեզ 'ի փրկութիւն ։ 9

9· Տեղիք Աստուածաբանութեան են Աստուածաշունչ սուրբ գիրք · Աւանդութիւն · Եկեղեցի· ընդհանրական սուրբ ժողովք և բանք սրբոց հարց ։ 13

10· Ի նոր կտակարանի հինն լրացեալ բովանդակի, և 'ի հնումն յայտնի գանձեալ տեսանի նոր կտակարանն · որք են գանձք անսպառելիք Աստուածաբան վարդապետաց ։ 13

11· Բացատրութիւնք սուրբ գրոց և մեկնութիւնք լինին չորս եղանակաւ · որք են՝ նկարագրական, խորհրդական, այլաբանական և բարոյական ։ 14

12· Աստուածաշունչ ասին սրբազան մատեանք · վասն զի անմիջապէս յԱստուծոյ են ազդեցեալ և ներշնչեալ և գրեալ 'ի ձեռն մարգարէից և առաքելոց, որով որոշի 'ի մարդկային գրոց թէ և ուղղափառաց ։ 15

13· Աստուած է անտեսանելի, սակայն և երևեցաւ ասի 'ի սուրբ գիրս՝ նահապետաց և մարգարէից, բայց ոչ ըստ անտահման էութեանն, այլ զանազան տեսլեամբք ։ 17

14· Աւանդութիւնն է բան Աստուծոյ անգիր կենդանի ձայնիւ աւանդեալ 'ի ձեռն մարգարէից և առաքելոց · որոյ է հաւատարիմ աւանդապահ եկեղեցին Քրիստոսի, և առաջին հեղինակ նորա է Քրիստոս · ըստ որում 'ի սուրբ եկեղեցին հաստատեալ պահին աւանդութիւնք · որ-

պիսիք են՝ նուիրեալ խորհրդական նշխարն սուրբ պատարագին հարկ է լինել յալիւրէ ցորենոյ, և բաժակն յանապակ գինւոյ որթոյ և այլն, և այլն ։ 20

15. Եկեղեցի անունն է բառ յունական, և ստուգաբանի կոչումն կամ հրաւիրումն միակամ խորհրդով ժողովեալ բազմութեան առ երեւելի համախմբութիւն ինչ. ուստի եկեղեցին Քրիստոսի սահմանի այսպէս. եկեղեցին է ջերմեռանդն ժողով ուղղափառ հաւատացելոց. և այլն ։ 23

16. Իսրայէլացիք յառաջ քան զգալուստն Քրիստոսի անուանէին հին եկեղեցի. սակայն ՚ի մերժել նոցա զվարդապետութիւնս Քրիստոսի՝ բարձաւ ՚ի նոցանէ անունս եկեղեցի. ուստի ուղղափառ քրիստոնեայք միայն անուանին յայս կոչումն ։ 26

17. Օրինաւոր ժողովն է համախմբութիւն հոգևոր հովուաց Քրիստոսական սուրբ եկեղեցւոյ ՚ի խնդիրս, վերաբերեալս ուղղափառ հաւատոյ և բարեկարգութեան վարուց, ըստ վճռոյ սուրբ գրոց և վարդապետութեանց սրբազան հարց ։ 31

18. Թեմական կամ քաղաքական ժողովն է գումարեալ յեկեղեցականաց նոյն թեմի կամ քաղաքի առ ՚ի պաշտպանել զսահմանադրեալ կանոնս եկեղեցւոյ ։ 35

19. Ազգային ժողովն է գումարեալ ՚ի քահանայից և յեպիսկոպոսաց եկեղեցւոյ միոյ ազգի ՚ի ներկայութեան օրինաւոր Պատրիարգի կամ Կաթուղիկոսի, և սահմանք նորին զօրաւոր են քան զ թեմականին ։ 35

20. Տիեզերական կամ ընդհանրական ժողովն է

գումարեալ յերիցանց, յԵպիսկոպոսաց, յՔոր-
եպիսկոպոսաց և 'ի Պատրիարգաց կամ 'ի Կա-
թուղիկոսաց ամենայն ուղղափառ ազգաց, սահ-
մանադրութիւնք և վճիռք սորին տարածեալ
են յընդհանուր ազգս քրիստոնէից ։ 35

21․ Ի տիեզերական սուրբ ժողովս գլուխ է անե-
րեւութապէս Յիսուս Քրիստոս, և ոչ այս կամ
այն եկեղեցական ։ 36

22․ Առաջին տիեզերական ժողովն սրբազան առա-
քելոց գումարեցաւ վասն ընտրութեան Մատա-
թեայ 'ի տեղի Յուդայի ։ 40

23․ Երկրորդ տիեզերական ժողովն սրբազան առա-
քելոց գումարեցաւ յաղագս ձեռնադրութեան
եօթն սարկաւագաց 'ի վերակացութիւն և 'ի
հոգաբարձութիւն որբոց և այրեաց եկեղեցւոյն
Քրիստոսի ։ 40

24․ Երրորդ ընդհանրական ժողովն սրբազան առա-
քելոց եղև վասն խրատական օրինաց Մովսէ-
սի և թլփատութեան ։ 41

25․ Ընդհանրական ժողովք են Նիկիական և Կոս-
տանդնուպոլսոյն և Եփեսոսին, և սոցին սահ-
մանադրութեանց ազգային և թեմական օրինա-
ւոր ժողովքն հետևեցան ։ 42

26․ Առաջին և տիեզերական ժողովն Նիկիոյ հաս-
տատեաց զհամագոյութեան հաւատս ընդդէմ
արիանոսաց ․ անդ էր Արիստակէս որդին Լու-
սաւորչին մերոյ ։ 43

27․ Երկրորդ տիեզերական ժողովն Կոստանդնու-
պոլսոյ եղև ընդդէմ հոգեմարտից ․ անդ էր
սուրբն Ներսէս Հայրապետն մեր ։ 43

28․ Երրորդ տիեզերական ժողովն եղև ընդդէմ Նես-

տորի Պատրիարգի Կոստանդնուպօլսոյ, որ ո՛չ Աստուածածին դաւանէր զսուրբ կոյսն, և ո՛չ զՔրիստոս յերկուց բնութեանց միաւորեալ, այլ շարադրութեամբ յարակցեալ. զսուրբ ժողովս ընկալաւ Հայրապետն Հայոց մեծն Սահակ : 43

29· Նախնի նահապետաց և մարգարէից բանք՝ էին աւանդութիւնք Աստուածային հին օրինաց և պէսպէս ազդարարութիւնք 'ի կողմանէ Աստուծոյ առ ժողովուրդն, և գուշակութիւնք շնորհական և աւետարանական նոր օրինաց. իսկ 'ի նոր օրէնս քրիստոնէութեան են տեղիք Աստուածաբանութեան սրբազան վարդապետք Քրիստոսական սուրբ եկեղեցւոյ : 45

30· Առաջին պարտաւորութիւն Աստուածաբանից է ուսուցանել բանիւք սուրբ գրոց և յայտնի օրինակօք և փաստիւք հաւատոյ ճշմարտութեան, թէ՝ գոյ Աստուած անեղ բնութիւն, ամենակարող արարիչ ամենայն արարածոց, և համոզել զմիտս ունկնդրաց 'ի կատարեալն յԱստուածգիտութիւն և յԱստուածպաշտութիւն : 47

31· Աստուած մարդասիրութեամբն իւրով 'ի կողմանէ իւրմէ հաճեալ է միշտ, և կամի յամենեցուն միտս ներգործել զաննղական լոյսն՝ շնորհաց Աստուածգիտութեան : 50

32· Արժանաւոր գտանիմք Աստուածային նախախնամական գթութեանց, շնորհաց և փառաց, յորժամ ծառայեմք առաքինական գործովք բարերար կամաց նորա : 52

33· Աստուածային անուանք ստորոգեալք նմա 'ի

սուրբ գիրս ոչ վերահասու առնեն զմեզ զան-
քննելի էութենէ և զանսահմանելի բնութենէն
Աստուծոյ , այլ միայն զամենակարող զօրու-
թենէ , զմարդասիրական խնամակալութենէ ,
զբարերարութենէ կամաց և զանվախճան Տէ-
րութենէ նորա ։ 57

34. Աստուածային զանազան անուանք , զորս յայտ-
նեն մեզ սուրբ գիրք , ունին զանազան խորհր-
դաւոր նշանակութիւն . նախ՝ անուանի Աստ-
ուած , որ ստուգաբանի առ էած զմեզ , այ-
սինքն՝ ստեղծօղ ամենայնի ։ 59

35. Հրեշտակք անուանին Աստուածք . զի կա-
տարեն զպաշտօն Աստուածային հրամանի ։ 60

36. Մարդիկ ևս անուանին Աստուածք . քանզի
ունին յԱստուածուստ պարգևեալ հաղորդու-
թիւն ինչ իշխանութեանն Աստուծոյ . այսինքն՝
Աստուածային սրբութեան , գիտութեան , ար-
դարութեան և շնորհաց , որպիսիք էին մար-
գարէք և արդարք ։ 60

37. Միայն Աստուածային անունս Ոչէն տայ մեզ
իմանալ զԱստուծոյ ինքնագոյ , մշտնջենաւոր
և անփոփոխ յաւիտենական էութիւնն . և է
Աստուածուստ անուն . զի նոյն ինքն Աստ-
ուած յայտնեաց Մովսիսի ։ 62

38. Ամենակալ Տէր անուանեմք զԱստուած . վասն
զի ընդ ամենակարող իշխանութեամբ և զօրու-
թեամբ իւրով ունի զամենայն արարածս , զերկ-
նաւորս և զերկրաւորս . և զամենայն խնամէ և
պահպանէ , և ամենեցուն հատուցումն տանէ
ըստ գործոց իւրեանց ։ 63

39. Հայր անուանեմք զառաջին անձն միանական

սուրբ Երրորդութեան · քանզի Հայր է բնութեամբ միածնի Որդւոյ իւրոյ ։ 65

40· Մեծ ասի Հայր , զի ծնող է Որդւոյն · ապա թէ ոչ՝ ըստ էութեան և ըստ բնութեան հաւասարակից և համագոյ է Որդւոյն միածնի և Հոգւոյն սրբոյ ։ 67

41· Հայր Աստուած՝ Հայր անուանի և մեզ ըստ զանազան մարդասիրական շնորհաց և ողորմութեանց իւրոց ։ 68

42· Արարիչ անուանեմք զԱստուած · վասն զի զարարածս երկնի և երկրի յոչէից արարչագործեաց ամենակարող հրամանաւ և ամենաբաւական կամօք իւրովք ։ 71

43· Աստուած ոչ միայն է ճշմարիտ ստորասաբար, այլ և գերազանցաբար ճշմարտութիւն յաւիտենական · զի զոր ինչ մարդասիրական խնամօք խոստանայ , անվրէպ կատարէ ։ 72

44· Աստուած է ամենատես · վասն զի յամենահայեաց տեսութենէ իւրմէ ոչինչ կարէ թագուն լինել երբէք, և կամ ծածկեալ թէ խորհուրդք իցեն սրտից և կամաց մարդկան և թէ գործողութիւնք բարեաց և չարեաց ։ 73

45· Աստուած է գերագոյն դատաւոր արդար ։ 75

46· ,, հզօր ։ 76

47· ,, երկայնամիտ ։ 77

48· Աստուածային անուանք եթէ ստորասաբար և եթէ գերազանցաբար ոչ տան մեզ ճանաչել զԱստուածային անճառելի և անեղ բնութիւնն, այլ զքանչելի զօրութիւնն և զմարդասիրական բարերարութիւնն · ըստ որում Աստուած է ըստ էութեանն և ըստ բնութեանն անճառելի

և անսահմանելի · վասն որոյ չկարեմք տալ Աստուծոյ էական սահման ինչ տրամաբանօրէն · քանզի սահմանն է բան բացայայտիչ բնութեան իրին · այլ միայն ստորոգեմք արարիչ, հզօր, բարի և այլն · և գերագանցաբար՝ ամենաբարի, ամենիմաստ : 80

49· Թէպէտ Աստուած է բնութեամբ և էութեամբ անպարագրելի, բայց ուր յայտնեն ներգործութիւնք զօրութեան, փառաց և շնորհաց նորին, անդ է Աստուած սքանչելապէս : 83

50· Մարդ կարէ լինել բարի, բայց ո՛չ աղբիւր բարութեան · որպէս Աստուած · այս է յասելն Յիսուսի· "չէք ոք բարի, բայց մի Աստուած,,: 86

51· Աստուած է յաւիտենական սրբութիւն և միայն սուրբ· որ տայ արժանաւորաց զիւր սրբութեան շնորհս : 90

52· Սրբութիւն մարդկան և հրեշտակաց ստացական է և եկամուտ· այլ ո՛չ բնդաբոյս և բնական : 91

53· Տալ սուրբ գրոց զգայարանս՝ Աստուածային սքանչելի ներգործութեանց՝ այլաբանական մտօք է և ո՛չ նկարագրական, ըստ որում հոգի է Աստուած : 93

54· Այլաբանութեամբ առեալ ձեռք Աստուծոյ անուանեն սուրբ գիրք զնախախնամութիւնն Աստուծոյ, ևս և զզօրութիւնն, զկարողութիւնն և զվրէժխնդրութիւնն : 94

55· Քրիստոնէական ճշմարիտ հաւատք մեր հիմնաւորեալ է գլխաւորաբար յերկու խորհուրդս · յուղղափառ դաւանութիւն հաւատոյ յամենասուրբ Երրորդութիւնն և 'ի մարդեղութիւն Յիսուսի Քրիստոսի · 98

56. Ի հին օրէնս ընդ աղօտ և իբրև ընդ քօղով ծածկեալ լինէր յայտնութիւն ամենասուրբ Երրորդութեան. իսկ 'ի Նորումն բացայայտ տեսլեամբ և անպատրուակ քարոզեալ: 100

57. Խորհուրդն մարդեղութեան զանազան նշանակօք և օրինակօք Թաքուն իմն երևէր, և քարոզեալ լինէր 'ի մարգարէից 'ի հին օրէնս. իսկ 'ի Նորումն յայտնի ծանուցաւ և քարոզեցաւ ընդ ամենայն աշխարհ: 106

58. Ճշմարտութիւն հաւատոյ առ սուրբ Երրորդութիւնն պահանջէ ունիլ զայս ուղղափառ դաւանութիւն, եթէ յամենասուրբ Երրորդութեան երեք են անձինք. և երեքին մի են բնութեամբ և Աստուածութեամբ. առաջին անձն կոչի Հայր Աստուած. երկրորդն՝ միածին Որդի Աստուծոյ Հօր և Բան. և երրորդն՝ բղխումն 'ի Հօրէ սուրբ Հոգի: 113

59. Բաւական 'ի համոզել զմիտս մեր գտանին օրինակք բացայայտիչք համագոյ և միասնական սուրբ Երրորդութեան. որպէս արեգակն, լոյս, ճառագայթ, աղբիւր և այլն: 115

60. Փառաբանեմք զմիասնական սուրբ Երրորդութիւնն, խոստովանելով ամենակարող զօրութիւն, անչափ և անսահման մեծութիւն, զուգափառ և համազօր միութիւն: 118

61. Զարմանալի տնօրէնութեան Յիսուսի Քրիստոսի գլխաւոր շարժառիթ եղև փրկութիւն ազգի մարդկան 'ի դատապարտութենէ սկզբնական մեղաց: 121

62. Հայր Աստուած յանսահման մարդասիրութենէ իւրմէ ստիպեալ հաճեցաւ առաքել զԲանն Աստուած 'ի փրկարար տնօրէնութիւն: 122

63. Աստուածային իմաստութիւնն պահանջէր տնօրէնութեամբ հաճեցաւ, զի մարդկային ազգ առ ժամանակ ինչ 'ի բնական և 'ի գրաւոր օրէնս դաստիարակեսցի և զարգասցի. և յետոյ 'ի հասանել ժամանակին լիցի վերահասու և ընդունակ բարձրագոյն խորհրդոյ մարդեղութեանն Յիսուսի : 125
64. Հայր Աստուած և Հոգին սուրբ համագործ և համակամ եղեն մարմնաւորիկ տնօրէնութեան Յիսուսի. քանզի Աստուածային գործողութիւնք ամենասուրբ Երրորդութեան՝ կրկին են. առաջինն է ծագող և ներքին, որ յատկապէս վերաբերի միոյ անձին. ըստ որում Հայր Աստուած՝ է ծնող միածնի Որդւոյն, և բղխող սուրբ Հոգւոյն : 129
65. Երկրորդն Աստուածային առնելութեան է անցանող և արտաքին, որ վերաբերի արձակ և անխտիր Աստուածային երից անձանց սրբոյ Երրորդութեան : 130
Որպիսիք են.
66. Տեսութիւն արարչագործութեան : 130
67. Տեսութիւն փրկագործ տնօրէնութեան : 131
68. Տեսութիւն ներգործութեան Աստուածային խնամոց : 132
69. Զանազան անուանք նուիրեալք Աստուածորդւոյն Յիսուսի ոչ թէ միայն զինչութիւն Աստուածային անձին, այլ և զպաշտօնական ներգործութիւնս շնորհաց մարմնաւորիկ տնօրէնութեան յայտնեն մեզ : 133
70. Նախ՝ խոստովանիմք զՅիսուս Քրիստոս իսկապէս և ճշմարիտ միածին Որդի Հօր Աս-

 Երես

տուծոյ . Աստուած յԱստուծոյ , լոյս 'ի լու-
սոյ , Աստուած ճշմարիտ , յԱստուծոյ ճշմար-
տէ ծնունդ՝ այլ ոչ արարած ։ 133
71. Երկրորդ՝ ճշմարիտ բան Հօր Աստուծոյ ։ 136
72. Երրորդ՝ միածին Որդին բանն Աստուած ան-
ուանեցաւ 'ի մարդեղութեանն Յիսուս Քրիս-
տոս ։ 138
73. Չորրորդ՝ Յիսուս Քրիստոս է իմանալի և
անստուեր լոյս ճշմարիտ , որով մերժեցաւ խա-
ւարն կռապաշտութեան, և ընդհանուր տարա-
ծեցաւ 'ի հոգիս հաւատացելոց լոյս աւետա-
րանական ճշմարտութեան ։ 140
74. Հինգերորդ՝ վասն փրկութեան ազգի մարդկան
պատարագեալ 'ի խաչին անուանեցաւ գառն
Աստուծոյ ։ 143
75. Վեցերորդ՝ վասն գտանելոյ զմարդկայինս բնու-
թիւն՝ որ մոլորեալն էր իբրև ոչխար 'ի ճա-
նապարհէն ճշմարիտ Աստուածպաշտութեան,
և տարամերժեալ 'ի գթէ յերկնից արքայու-
թեան , և վասն վերածելոյ զնա 'ի վայելչու-
թիւնս երկնային փառաց՝ անուանեցաւ հովիւ
քաջ և բարի , անձնադիր լինելով 'ի վերայ
բանաւոր հօտից իւրոց ։ 145
76. Եօթներորդ՝ հաստատելով զխորհուրդն հա-
ղորդութեան , յորում տուեալ հացի և գի-
նւոյ զկենդանարար մարմին և զարիւն իւրոյ
Աստուածութեան՝ անուանեցաւ հաց կենաց
իջեալ յերկնից ։ 148
77. Ութերորդ՝ կամելով յայտնել զանբաժանելի
սէր իւր , որով էր անմեկնելի 'ի բարոյական
անդամոց իւրոց , այսինքն՝ յառաքելոց սրբոց

և յուղղափառ հաւատացելոց, զայս վարդապետեաց· « Ես եմ որթ՝ և դուք ուռ ,, : 153

78· Իններորդ՝ առ ՚ի փրկել զմեզ ՚ի մեղաց, և սրբութեան խորհուրդ հաղորդս կացուցանել զհոգիս մեր, ՚ի խաչին պատարագեալ՝ անուանեցաւ երկնաւոր Քահանայապետ մեծ : 155

79· Յիսուս Քրիստոս մեծ քահանայապետ ասի· նախ՝ քանզի ոչ երբէ զԱհարոն և ոչ երբէ զյաջորդս նորին արեամբ զուարակաց և նոխազաց մատոյց պատարագս, այլ զԱստուածախառն մարմին իւր և զկենդանարար արիւն իւր վասն փրկութեան ամենայն ազգաց հաւատացելոց : 155

80· Երկրորդ՝ վասն զի է միածին Որդի Աստուծոյ, և յաւիտենական ունի թագաւորութիւն և զօրութիւն ՚ի վերայ ամենայնի : 156

81· Երրորդ՝ վասն զի մեծամեծ շնորհաց և փառաց Տէր է և պարգևիչ արժանաւորաց : 156

82· Չորրորդ՝ վասն զի մեծամեծ աւետիս շնորհեցաւ մեզ ՚ի նմանէ վասն մերոյ փրկութեան և հաղորդութեան, և մեծամեծ անճառելի փառաց և արքայութեան : 156

83· Տասներորդ՝ Յիսուս Քրիստոս մարմնաւոր անօրէնութեամբն սեպհականեաց զգերագոյն իշխանութիւն դատողութեան, առ ՚ի դատել ըզկենդանիս և զմեռեալս ՚ի վերջին ընդհանրական դատաստանի, և ՚ի հատուցանել իւրաքանչիւրոց ըստ գործոց : 158

84· Յիսուս Քրիստոս համբառնալով յերկինս, քարոզեցաւ գոլ էակից, փառակից և արարչակից Հօր Աստուծոյ և սրբոյ Հոգւոյն, նոյնազօր յաւիտենական թագաւոր փառաց և ամենակալ Տէր զօրութեանց : 162

85. Դարձեալ համբառնալով Յիսուսի 'ի յերկինս,
նախ՝ որպէս անսուտ բանիւն խոստացեալ էր,
եղեն ճշմարիտ հաւատացեալք բարոյական ան-
դամք նորին, և հաստատեցան 'ի նա անբաժա-
նելի միութեամբ իբրև 'ի կենդանարար գլուխ
իւրեանց ։ 166

86. Երկրորդ՝ 'ի համբառնալն ամբարձմամբ Աստ-
ուածային ձեռացն օրհնելով զդասս առաքե-
լոց, նա նոցա շնորհս եկեղեցական աստիճա-
նաց և իշխանութիւն ձեռնադրելոյ զարժանա-
ւորսն հոգևորական կոչման . ես և Աստուա-
ծային ձեռացն օրհնութիւն առհաւատչեայ էր
մերժելոյ 'ի հաւատացելոց անիծից Ադամային
սկզբնական մեղաց ։ 169

87. Երրորդ՝ էր և եղև յաւիտենական քահա-
նայապետ մեր ընդունօղ զզջման և ապաշխա-
րութեան, խնամօղ և պաշտպան հաւատացե-
լոց, պարգևիչ թողութեան մեղաց, միջնորդ և
բարեխօս առ Հայրն ամենակալ ։ 173

88. Չորրորդ՝ շնորհեցաւ 'ի Հօրէն ամենակալէ
մխիթարիչն Հոգին սուրբ ։ 175

89. Երեւումն Հոգւոյն սրբոյ զանազան նմանու-
թեամբ նշան էր եօթնարփեան շնորհաց ։ 178

90. Եօթնարփեան շնորհաց Հոգւոյն սրբոյ համե-
մատին եօթն յատկութիւնք աղաւնւոյ ։ 180

91. Յայտնիլ և 'ի Թաբօր լերին յաւուր պայծա-
ռակերպութեան Յիսուսի 'ի նմանութիւն լու-
սեղէն ամպոյ ապացուցանէր, եթէ նոյն ինքն էր,
որ 'ի հնումն 'ի տեսիլ ամպոյ պաշտպանէր
ժողովրդեանն իսրայէլի ։ 181

92. Զանազան շնորհք Հոգւոյն սրբոյ բացատրին
նմանութեամբ ամպոյ ։ 182

93. Նշանի և յաւուր Պենտեկոստէի 'ի նմանութիւն հրեղէն լեզուաց յայտացոյց հրաշէնելոյ զառաքեալսն 'ի լոյս աւետարանական ճշմարտութեան : 183
94. Զանազան շնորհք Հոգւոյն սրբոյ բացատրին նմանութեամբ հրոյ : 184
95. Զաւետարանական բարբառ Յիսուսի Քրիստոսի վասն Հոգւոյն սրբոյ, եթէ " յիմմէ անտի առնուցու և պատմեսցէ ձեզ ,, այսպէս մեկնէ սուրբն Յօհան Ոսկեբ. առելով նախ՝ զորս ասացի ես, զնոյնս ասասցէ և նա և այլն,, և երկրորդ՝ հայեցեալ ուղղակի յայս բան փրկչին մերոյ, եթէ " զամենայն զոր ինչ ունի Հայր՝ իմ է, վասն այսորիկ ասացի ձեզ, թէ յիմմէ անտի առնուցու և պատմեսցէ ձեզ : 189
96. Այս բան Յիսուսի Քրիստոսի, եթէ " յիմմէ անտի առնուցու ,, ոչ հաստատէ բղխումն սրբոյ Հոգւոյն և յՈրդւոյ : 192
97. Զսուրբ Հոգին Աստուած խոստովանիմք ոչ միայն Հոգի Հօր Աստուծոյ, այլ և Հոգի Որդւոյն Աստուծոյ Յիսուսի Քրիստոսի. վասն զի սուրբ Հոգին Աստուած է համազօր, համափառ, համաբուն և համակամ Հօր և Որդւոյ : 194

| Էջ · | Տող · | Սխալանք · | Ուղղելիք · |
|---|---|---|---|
| 3 · | 7 · | Աստուածա-բանութեան | Աստուածաբանու-թեամբ |
| 14 · | 25 · | 52 | 52 : |
| 17 · | 20 · | ւէ̃ · | Լէ̃ · |
| 21 · | 22 · | գգործս | գգործս |
| 33 · | 1 · | ընդ | ընդ |
| ,, | 12 · | յառաջադոյն | յառաջագոյն |
| 40 · | 15 · | յուդայի | յուդայի |
| 48 · | 11 · | ահախաւար | ահա խաւար |
| 52 · | | 32 | 52 |
| 62 · | 18 · | ∸ | ∸ · |
| 63 · | 1 · | Աւետարան , | Աւետարան : |
| 66 · | 19 · | որգի | որդի |
| 68 · | 31 · | Ով հայր | “ Ով հայր |
| 78 · | 23 · | ընդէր | ընդէ՞ր |
| 84 · | 9 · | յո | յո՞ |
| ,, | 18 · | 24 · | 24 : |
| 92 · | 1 · | կանաց | սրբութեան |
| 98 · | 23 · | Նա 'ի մարգարէից | Նա ի մարգարէից |
| 99 · | 26 · | յազգաց | յազգաց |
| 103 · | 31 · | նորա : | նորա ,,: |
| 106 · | 22 · | է · | է̃ . |
| 114 · | 15 · | գոյութենէ | գոյութենէ |
| ,, | 20 · | բղխող | բղխող |
| 117 · | 30 · | բնութեամբ | բնութեամբ |
| 136 · | 23 · | 1 · | 1 : |
| 146 · | 7 · | անզգայութիւն | անզգայութիւն |
| ,, | 30 · | ,ի | 'ի |
| 167 · | 19 · | 3 | 3 : |
| 179 · | 11 · | ի | 'ի |

| Էջ. | Տող. | Վրիպակք. | Ուղղեալ։ |
|---|---|---|---|
| 184. | 30. | 94 ։ | 94 . |
| 192. | 19. | ձեզ ։ | ձեզ ,, ։ |
| 195. | 11. | Յիսուսն | Յիսուսի |
| 200. | 9. | պաշտօնէից Քրիստոսի | պաշտօնէից եկեղեցւոյն Քրիստոսի |
| Ն. | 13. | անսապռելիք | անսպառելիք |
| ,, | ,, | Աստուածա- բան | Աստուածաբան |

ՀՀ Ազգային գրադարան
NL0332641